Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաաություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1151

Եղիեկյան Հ.

Աշխարհագրություն

91(075)
Ե-28

1928

91(075)
Ե 30

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ—ՍՈՑ. ԴԱՍՏ. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Հ. ԵՂԻԲԵԿՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսություն
Աշխարհի գլխավոր յերկրները
Գլխավոր յերկրների կապը յեվ քաղաքական փոխհարաբերությունները

Ուսման ՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐՎԱ դասընթաց

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 805.
ՅԵՐԵՎԱՆ—1928.

10 NOV 2011

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ—ՍՈՑ. ԴԱՍՏ. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

91(075)
5-28

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համաշխարհային տնտեսություն
2. Աշխարհի գլխավոր յերկրները
3. Գլխավոր յերկրների կապը յեվ քաղաքական փոխհարաբերությունները

Ուսման ՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐՎԱ դասընթաց

Կազմեց Հ. ԵՂԻԲԵԿՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 805.
ՅԵՐԵՎԱՆ—1928.

15.04.2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-...ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

27932-60գ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ա. ս ձեռնարկը կազմված ե II աստիճանի դպրոցի VII-րդ խմբի համար։ Նա բաղկացած ե հետևյալ յերեք գլուխներից.

I Համաշխարհային տնտեսություն.

II Աշխարհի գլխավոր յերկրները և

III Աշխարհի գլխավոր յերկրների կապը և քաղաքական փոխհարաբերությունները։

Առաջին գլխի մեջ խոսվում ե այն ֆակտորների մասին, վորոնք մարդու տնտեսական գործունեյության հիմքն են կազմում, ինչպես որինակ՝ կլիմայական պայմանները, հողը, բուսականությունը, հանքային հարստությունները, յերկրի աշխարհագրական դիրքը և այլն։ Միաժամանակ շեշտվում ե և այն հանգամանքը, վոր «բնական պայմանները թե արդյունաբերության և թե առևտրի ու տրանսպորտի համար միայն հարաբերական նշանակություն ունեն, այսինքն՝ նրանց դրական կամ բացասական ազդեցությունը կախված ե տեխնիկայի զարգացումից»։

Խոսելով բարիքների, այսինքն՝ սննդամթերքի, տեքստիլային հում նյութի և հանքային հարստությունների մասին, քարտեզի վրա ցույց են տրվում այն յերկրները, վորոնք առանձնապես աչքի յեն ընկնում այս կամ այն բարիքի արտադրությամբ, ինչպես և այն յերկրները, վորոնք այդ բարիքների կարիքն ունեն։ Այսպիսով աշակերտը գաղափար ե կազմում գլխավոր յերկրագործական, անասնապահական, պլանտացիոն և արդյունագործական յերկրների մասին։ Դրանից հետո դարձյալ քարտեզի ոգնությամբ անցնում են գլխավոր յերկրները և նրանց գաղութները։

Յերկրորդ գլուխը համեմատաբար ընդարձակ ե։ Այստեղ խոսվում ե իմպերիալիստական, կիսագաղութային և գաղութային յերկրների մասին. բայց հասկանալի յե, ի հարկե, վոր բոլոր յերկրները մի տարվա մեջ հնարավոր չե մանրամասն անցնել։ Կարևոր ե կանգ առնել այն յերկրների վրա, վորոնք առանձնապես կապված են համաշխարհային տնտեսական և քաղաքական խնդիրների հետ։ Այս տեսակետից բավական մանրամասն խոսվում ե իմպերիալիստական յերկրների—Անգլիայի, Միաց. Նահանգների, Յապոնիայի և Ֆրանսիայի, ինչպես և կիսագաղութային Չինաստանի, գաղութ Հնդկաստանի և մի քանի այլ յերկրների մասին։ Կանադան, Ավստրալիան, Ալժիրը, Մարոկկոն և այլն անցնվում են համապատասխան մետրոպոլիաների հետ։

Չափազանց կարևոր ե, վոր աշակերտը բացի այս ձեռնարկից ձեռքի տակ ունենա նաև

ա) Աշխարհագրական տետրը, գործնական պարապմունքների համար,

բ) Աշխարհագրական ատլասը,

գ) «Աշխարհի շուրջը» ժողովածուն և Խորրաբինի «Ուրվագիծ պատմատնտեսական աշխարհագրության» գիրքը:

Վորևե իմպերիալիստական յերկիր անցնելուց հետո դասարանում կարդացվում ե Խորրաբինի գրքի համապատասխան գլուխը և վերլուծվում, այսպիսով աշակերտը ամբողջացնում ե յուր ստացած տեղեկությունները այդ յերկրի մասին և պարզում այն հիմնական խնդիրները, վոր բխում ե տվյալ յերկրի տնտեսական-քաղաքական վիճակից:

Յուրաքանչյուր յերկիր անպայման ցույց ե տրվում քարտեզի վրա և ապա տետրի համր քարտեզի վրա կատարվում ե համապատասխան աշխատանքը:

Այսպիսով դասագիրքը, տետրը, ատլասը և ընթերցանության գիրքը լրացնում են իրար և կազմում անհրաժեշտություն աշակերտի համար:

Վերջապես յերրորդ գլխի մեջ աշակերտը գաղափար ե կազմում համաշխարհային առևտրի, ծովային նավատորմի և յերկաթուղային գծերի մասին: Անցնվում են գլխավոր յերկրների քաղաքական խմբավորումները, նրանց շահերի ընդհարումները և այն համաշխարհային պրոբլեմները, վորոնց լուծումը իմպերիալիզմի համար հերթական ե դարձել:

Նկատենք և այն, վոր նյութը բավական մեծ ե: Դրա պատճառը մասամբ այն ե, վոր բավական մանրամասն կանգ ենք առել յուրաքանչյուր յերկրի բնական պայմանների վրա, վորովհետև ծրագրների փոփոխության հետևանքով մեր այս տարվա 7-րդ խումբը հնարավորություն չի ունեցել համապատասխան նյութ ձեռք բերել: Ուսուցիչն անշուշտ նկատի կունենա տեղական դպրոցի պայմանները և համապատասխան կրճատումներ կանի, բայց այնպես, վոր գրքի յերեք գլուխներն ել անցնվեն:

Այս ձեռնարկը կազմելիս ոգտվել ենք հետևյալ գրքերից՝

1. Вольф и Мебус—„Очерки эконом. географии иностр. государств.“
2. Тимофеев—„Очерк. экономич. географии важнейших стран мира.“
3. Лесгафт—„География внеевроп. стран“.
4. Бернштейн-Коган—„Очерки по экономич. географии“.
5. Синицкий—География Европы.
6. Баранский—Краткий курс экон.. географии.
7. Александров—Рабочая книга по географии և ուրիշները:

I ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. ԶՈՆԱՅԻՆ ՅԵՎ ՎՈՉ ԶՈՆԱՅԻՆ ՖԱԿՏՈՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք հասարակածը, խեցգետնի և այծեղջեր արևադարձները, հյուսիսային բևեռային և հարավային բևեռային շրջանները, հյուսիսային և հարավային բևեռները (Աշխարհագր. ատլաս, կիսագնդեր):

Ինչ ե նշանակում աշխարհագրական լայնություն յեվ յերկայնություն: Աշխարհագրական լայնությունը վորտեղից են հաշվում, իսկ յերկայնությունը:

Գտեք Ցեյլոն և Նոր Յերկիր կղզիները: Դրանցից վորի աշխարհագրական լայնությունն ե մեծ. այսինքն վորն ե հասարակածից ավելի հեռու գտնվում:

Քարտեզի ոգնությամբ գտեք Յերևանի, Խարկովի, Մոսկվայի, Լենինգրադի, Արխանգելսկի աշխարհագրական լայնությունը (Յեվրոպա, աշխ. ատլաս): Լայնությունը ցույց տվող թվերը գրվում են քարտեզի աջ և ձախ կողմը, իսկ յերկայնությունը ցույց տվողները՝ քարտեզի վերին և ստորին յեզրերում:

Գտեք Յերևանի, Մոսկվայի, Փարիզի, Լոնդոնի աշխարհագրական լայնությունը և յերկայնությունը:

Կ լ ի մ ա: Կլիման վորևե յերկրի տնտեսական կյանքի վրա մեծ ազդեցություն ունի: Մշակովի բույսերից վոմանք սիրում են տաք կլիմա, վոմանք՝ բարեխառն: Բույսեր կան, վոր կարողանում են աճել միայն խոնավ տեղերում, կան և այնպիսիները, վոր այդչափ խոնավությունը տանել չեն կարողանում: Նույնը կարելի յե ասել և կենդանիների նկատմամբ:

Յերկրագնդի վրա պատահում են զանազան կլիմաներ: Բարձր սարի գագաթի կլիման լինում ե ցուրտ, հասարակածի մոտ՝ տաք, ծովափերին խոնավ և այլն: Կլիման կախված ե շատ պատճառներից. դրանցից ամենագլխավորը տեղի աշխարհագրական լայնությունն ե: Վորքան մի յերկիր հասարակածից հեռու յե գտնվում, նրա կլիման այնքան ավելի ցուրտ ե լինում: Դա բացատրվում ե նրանով, վոր յերկիրը արևի ճառագայթներից հավասարապես չի տաքանում: Յերկրի կլորության պատճառով արևի ճառագայթները խեցգետնի և այծեղջեր արևադարձների միջև համարյա ուղղահայաց են ընկնում, իսկ մնացած տեղերում՝ թեք: Յեվ վորովհետև ուղղահայաց ընկնող ճառագայթներն ավելի շատ են տաքացնում, քան թեք ընկնողները, այդ պատճառով արևադարձների միջև ընկած յերկրները տարվա ընթացքում ավելի շատ տաքություն են ստանում, քան արևադարձներից դեպի բևեռները ձգվող տարածությունը: Այն գոտին (զոնան), վորը գտնվում ե արևադարձների միջև, կոչվում ե կլիմայական տաք գոտի (զոնա): Տաք գո-

տում տարվա յեղանակների փոփոխությունները համարյա չեն նկատվում, ջերմության տարվա միջին աստիճանը 20-ից չի իջնում:

Տաք գոտուց դեպի հյուսիս և հարավ, վորտեղ արևի ճառագայթները թեք են ընկնում և արեգակն յերբեք մարդու գլխին չի գտնվում, տարածվում են յերկու բարեխառն գոտի: Հյուս. բարեխառն գոտին տարածվում



Նկ. 1. Յերկրագունդը արևի ճառագայթներից հավասարապես չի տաքանում:

և խեցգետնի արևադարձից մինչև հյուսիսային բևեռային շրջանը, իսկ հարավային բարեխառն գոտին՝ այծեղջյուր արևադարձից մինչև հարավային բևեռային շրջանը: Բարեխառն գոտում տարվա միջին բարեխառնությունը 0°-ից ցած և 20°-ից բարձր չի լինում: Տարվա յեղանակները կանոնավոր կերպով հաջորդում են իրար:

Բևեռային շրջաններից մինչև հյուս. և հարավային բևեռները տարածվում են հյուսիսային և հարավային ցուրտ գոտիները: Ցուրտ գոտում տարվա միջին բարեխառնությունը 0°-ից ցած ե լինում. ամառը 2 ամսից ավել չի տևում, իսկ ձմեռն իշխում ե 9 ամսից ավել: Բևեռային շրջանների մոտ տարվա ընթացքում արևը մեկ որ բոլորովին չի ծագում (հյուս. կիսագնդի համար դեկտեմբերի 20-ին), մեկ որ ել՝ բոլորովին մայր չի մտնում (հունիսի 21-ին): Բևեռային շրջաններից դեպի բևեռները գիշերն ու ցերեկն ավելի յերկարատև յեն լինում: Նոր Յերկրի հյուսիսային մասում տարվա ընթացքում արևը մի քանի ամիս շարունակ մնում ե հորիզոնի վրա (ամառը), մի քանի ամիս ել չի ծագում (ձմեռը), իսկ բևեռներում 6 ամիս լինում ե ցերեկ, 6 ամիս գիշեր:

Կիսագնդերի քարտեզի վրա ցույց տվեք կլիմայական 5 գոտիները:

Ասիան քանի գոտում ե գտնվում:

Ասիայի հարավային կողմը գտնվում են մի շարք կղզիներ (Ցեյլոն, Սեչելյան, Զագոս, Զունդյան և այլն). դրանք վոր գոտում են գտնվում:

Յեվրոպայից և Ասիայից հյուսիս գտնվում են Նոր Յերկիր, Շպիցբերգեն, Ֆրանց Հովսեփի յերկիր, Նոր Սիբիր և այլն. դրանք վոր գոտում են գտնվում:

Ամերիկան քանի գոտում ե գտնվում: Յեվրոպայի վորևե մասը գտնվում ե տաք գոտում:

Աշխատանք: Տարբեր գույներով ներկեցեք կլիմայական գոտիները:

Կլիմայի կախումը զանազան պատճառներից:

Հնում կարծում եյին, թե կլիման միմիայն տեղի աշխարհագրական լայնությունից ե կախված. ճիշտ ե, այդ ազդակը կարևոր նշանակություն ունի, բայց միայն դրանով յերբեք չի կարելի բացատրել կլիմայի այն բազմազանությունը, վոր մենք տեսնում ենք յերկրագնդի վրա: Կլիման միայն աշխարհագրական լայնությունից կախված կլիներ այն դեպ-



I Հուլիսի միջին բարեխառնությունը II Հունվարի միջին բարեխառնությունը

Նկ. 2. Բարեխառնության տատանումները տարբեր տեղերում,

քում, յեթե յերկրի մակերևույթը բաղկացած լիներ նույն նյութից և յերկրագունդն ել անշարժ լիներ:

Պարզվում է, որ կլիման կախված է շատ պատճառներից։

1. Ինչպես տեսանք, կլիման կախված է աշխարհագրական լայնությունից։ Յեթե մի յերկիր մոտ է հասարակածին, այն դեպքում նրա կլիման տաք է լինում, իսկ յեթե յերկիրը հասարակածից հեռու յե գտնվում, այն դեպքում նա ցուրտ կլիմա է ունենում։

2. Բայց, ինչպես ասացինք, կլիման միայն աշխարհագրական լայնությունից չի կախված։ Կարելի յե ցույց տալ յերկու կամ շատ քաղաքներ, վորոնք հավասարապես հեռու լինեն հասարակածից, բայց ունենան միանգամայն տարբեր կլիմա։ Իբրև օրինակ վերցնենք Սարատովը և Լոնդոնը։ Յերկուսն էլ ունեն 52° հյուս. լայնություն, բայց Սարատովը գտնվում է ովկիանոսներից հեռու, ցամաքի ներսը, իսկ Լոնդոնը՝ ծովափին։ Հենց այդ պատճառով էլ նրանք տարբեր կլիմա ունեն։

Ցամաքն արևից ավելի շուտ է տաքանում, քան ջուրը, բայց շուտ էլ սառչում է։ Ցամաքի ներսը ամառները շոգ է լինում, իսկ ձմեռները՝ ցուրտ։ Ծովափնյա յերկրներում ամառը շոգ չի լինում, իսկ ձմեռն էլ՝ ցուրտ։ Բացի դրանից՝ ծովափնյա յերկիրն ավելի շատ խոնավություն կստանա, քան ցամաքի ներսը գտնվողը։ Դրանով է բացատրվում այն, որ Սարատովն ունի չոր-ցամաքային կլիմա, իսկ Լոնդոնը՝ խոնավ-ծովային։ Ուրեմն ց . . յին կլիմա ունեցող յերկրներում օդը լինում է չոր, մթնոլորտային տեղումները սակավ են, ամառը շոգն է իշխում, իսկ ձմեռը՝ ցուրտը։ Ցամաքային կլիմայի համար շատ բնորոշ է մանավանդ ամառվա և ձմեռվա բարեխառնությունների տատանումները։ Ծովային կլիման խոնավ է և մեղմ, ամառվա և ձմեռվա բարեխառնությունները մեծ տատանումներ չեն տալիս։

БАРЕХАРНОՒԹЯАН ТАРЕКАН ТАТАНОՒМНЕРЕ

Աշխարհ. լայնություն	Քաղաք	Ամառ (հուլիս)	Ձմեռ (հունվար)	Բարեխառնության տատանումները		
52°	Լոնդոն	+17,9°	+3,5°	14,4°	ծովային	կլիմա
52°	Սարատով	+22°	—10,8°	32,8°	ցամաքային	»
52°	Օրենբուրգ	+21,6°	- 15,4°	37,0°	»	»
$67^1/_2$°	Վերխոյանսկ	+15,5°	—50,5°	70°	»	»

Ձնայելով որ Բաթումը, Թիֆլիսը և Յերևանը համեմատաբար այնքան մոտ են իրար, այնուամենայնիվ նրանք տարբեր կլիմար ունեն։

	Հուլիս	Հունվար	Բարեխառնության տարեկան տատանում	Մթնոլորտ. տեղումներ
Բաթում	+23,2°	+6,1°	17,1°	2529 միլլիմետր
Թիֆլիս	+24,5°	+0,2°	24,3°	496 »
Յերևան	+25°	—6,4°	31,4°	318 »

Ինչու Յերևանի կլիման ավելի չոր է, քան թե Բաթումինը։

3. Կլիմայի վրա մեծ ազդեցություն ունեն նաև ծովային հոսանքները։ Անգլիան և Լաբրադոր թերակղզին (վերջինս—Հյուս. Ամերիկայում) գտնվում են ովկիանոսի մոտ և ունեն նույն աշխարհագրական լայնությունը, բայց Լաբրադորի կլիման Անգլիայի կլիմայից ցուրտ է։ Դա բացատրվում է նրանով, որ Լաբրադորի մոտով անցնում է ցուրտ Լաբրադորական հոսանքը, որը սկիզբն է առնում Հյուսիսային Բևեռային ծովից (նախկին Հյուս. Սառ. Ովկիանոս) և հոսում է դեպի հարավ։ Անգլիայի մոտով անցնում է Գոլֆշտրոմ տաք հոսանքը, որն սկսվում է Մեքսիկայի ծոցում և հոսում է դեպի Հյուս. Բևեռային ծովը.

4. Միևնույն յերկրի բարձր ու ցածր տեղերը նույնպես տարբեր կլիմա ունեն։ Վորքան մի յերկիր ծովի մակերևույթից բարձր է լինում, այնքան ավելի ցուրտ կլիմա է ունենում։ Իբրև օրինակ վերցնենք Յերևանը և Յելենովկան։

	Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը մետրերով	Հուլիսի միջին բարեխառնությունը	Հունվարի միջին բարեխառնությունը	Տարվա միջին բարեխառնությունը
Յերևան	994	25°	—6,4°	11,4°
Յելենովկա	1940	16°	—8,2°	5°

5. Քամիների բնույթը և ուղղությունը նույնպես ազդում են կլիմայի վրա։ Այդ բանը նկատելի յե, մանավանդ, այն յերկրներում, վորտեղ



Նկ. 3. Մուսսոններ։

քամիներն իրենց ուղղությունը տարվա ընթացքում կանոնավոր կերպով փոփոխում են։ Օրինակ, Հնդկաստանում ամառը քամիները ծովի կողմից են փչում, իսկ ձմեռը՝ ցամաքի։ Ամառային մուսսոններից յերկիրը խոնավություն ու տաքություն է ստանում, իսկ ձմեռային մուսսոններից՝ շոգեր, չորություն ու փոշի։ Յերկրագործի հացահատիկների բերքն ամբողջապես ամառային մուսսոններից է կախված։

Վերջապես կլիման կախված է նաև մարդու գործունեությունից, լեռների ուղղությունից, յերկրի բուսական ծածկոցից և այլն։

Կլիման ինչի՞ց է կախված։ Վո՞ր կլիման է համարվում ցամաքային և վո՞րը՝ ծովային։
Կլիման ի՞նչ ազդեցություն ունի գյուղատնտեսության վրա։
Ի՞նչ պայմաններ են ազդում Արարատյան դաշտի կլիմայի վրա։
Ինչու Անդրկովկասն ավելի տաք է, քան Հյուս. Կովկասը։

Հող։ Կլիմայից հետո կարևոր նշանակություն ունի հողը։ Հող ասելով հասկանում ենք յերկրի վերին շերտը, վորը գոյացել է արևի տաքության, ջրի, օդի, բույսերի և կենդանիների ազդեցությունից։

Ամեն մի հողի մեջ անպայմանորեն գտնվում է ավել կամ պակաս չափով հումուս, այսինքն՝ քայքայված որգանական նյութեր։ Հողի գույնը կախված է հումուսի քանակից. վորքան հումուսը շատ է, հողն այնքան ավելի մուգ գույն է ունենում։ Սևահողը հարուստ է հումուսով։

Բացի հումուսից՝ հողի մեջ գտնվում են նաև հանքային նյութեր և փխրուն լեռնային տեսակ։ Վերջինս գոյանում է այն մայր լեռնային տեսակից, վորը գտնվում է հողի տակ։

Հողերը, կախված լինելով կլիմայից, յերկրագնդի վրա նույնպես զոնաներով (գոտիներով) են դասավորված։

Տաք գոտում տարածված են գլխավորապես աղյուսագույն—կարմիր հողեր, վորոնք կոչվում են լատերիտներ։ Առատ տաքության և խոնավության պատճառով որգանական նյութերը տաք գոտում համարյա բոլորովին քայքայվում են և գոյացնում ածխաթթու, ազոտաթթու և այլն։ Հենց դրանով է բացատրվում այն, վոր լատերիտները հումուսով աղքատ են, թեև ընդհանրապես արգավանդ են։

Մերձարևադարձային այն շրջաններում, վորտեղ մթնոլորտային տեղումներն առատ են և ամառը շոգ, տարածված է կարմրահողը։ Յեվրոպայում կարմրահողը գտնվում է Միջերկրական ծովի շրջանում, Ասիայում՝ Սև ծովի յեզերքին (Բաթում), Չինաստանում և Հար. Ճապոնիայում։

Բարեխառն գոտու այն տափաստաններում, վորոնք չափավոր-խոնավ, ցամաքային կլիմա ունեն, գոյանում են սևահողեր։ Դրանք սովորաբար 6—10% քաղցր հումուս են պարունակում և լայն շերտով ձգվում են արևելքից դեպի արևմուտք։

Բարեխառն գոտու ցուրտ մասերում, վորտեղ փշատերև անտառներ են ձգվում, տարածված է մոխրահողը։ Հումուսը գտնվում է մոխրահողի վերին բարակ շերտի մեջ և կազմում է հազիվ 2—3%, իսկ այդ շերտի տակ տարածվում է ավազ, վորը մոխրի գույն ունի. դրանից էլ ամբողջ հողն ստացել է յուր անունը։

Վերջապես տունդրաներում ջերմության ցածր աստիճանների և առատ

խոնավության տակ բուսական մնացորդները շատ քիչ են քայքայվում և գոյացնում են մուգ գույնի, թթու, տորֆանման հողեր, վորոնք սովորաբար կոչվում են տունդրային հողեր։

Այսպիսով հողը յերկրագնդի վրա նույնպես զոնաներով է դասավորված։ Կլիմայական զոնայի փոխվելու հետ, փոխվում է և հողային զոնան։

Մյուս կողմից՝ մենք տեսանք, վոր կլիման փոխվում է վոչ միայն հասարակածից դեպի բևեռ, այլ և ծովի մակերևույթից դեպի վեր։ Բարձրանալով սարի ստորոտից դեպի գագաթը, կարելի յե հանդիպել տարբեր հողերի։

Հողն ինչի՞ց է առաջանում։ Հողային գլխավոր զոնաները վորո՞նք են։
Ինչու հողը յերկրագնդի վրա զոնաներով է դասավորված։
Ինչու բարձր ու ցածր տեղերը նույնպես տարբեր հողեր ունեն։
ԽՍՀՄ-ի քարտեզագրամի վրա ցույց տվեք Խ. Միության հողային զոնաները (Աշխատույա)։
Ի՞նչպիսի հողային զոնայում են գտնվում 1. Նոր Ներկիրը. Նոր Սիբիրը, Օրդորսկը. 2. Մինսկը, Մոսկվան, Յակուտսկը. 3. Կիևը, Սարատովը, Ոմսկը։

Բուսականություն յեվ կենդանական աշխարհ։ Բույսերի և կենդանիների նշանակությունը մարդու տնտեսության համար շատ մեծ է։ Բույսերն ու կենդանիները մարդուն տալիս են սնունդ (հացահատիկներ, արմատապտուղներ, միրգ, կաթ, յուղ, միս), հագուստ (բամբակ, վուշ, կաշի, բուրդ, մուշտակ), բնակարան (փայտեղեն)։ Բացի այդ՝ կենդա-



Նկ. 4. Բուսականության տարածումը յերկրագնդի վրա.

նիները մեզ համար կատարում են զանազան աշխատանքներ, հողերը պարարտացնելու համար տալիս են աղբ և այլն։

Բույսերի տարածումը յերկրագնդի վրա կախված է կլիմայից (տաքությունից, խոնավությունից, լույսից) և հողից։ Կլիմայական պայմանների փոխվելու հետ, փոխվում է և բուսականությունը։

1. Արևադարձային գոտու տաք և խոնավ տեղերը ծածկված են կուսական խիտ անտառներով, որոնք բաղկացած են մշտադալար ծառերից և աչքի յեն ընկնում իրենց փարթամությամբ ու տեսակների բազմազանությամբ։

Այս գոտու ամենաբնորոշ բույսերն են կոկոսյան, սագոյան և փյունիկյան արմավենիները, բամբակը, կաուչուկի ծառը, քինայի ծառը, բանանները, սուրճը, կակաոն, շաքարեղեգը, բրինձը և այլն։

Արևադարձային ընդարձակ անտառներ գտնվում են Հնդկաստանում, Հնդկաչինում, Մալայան Արշիպելագում (Ասիա), Ավստրալիայի հյուս. մասում, Բրազիլիայում (Հար. Ամերիկա) և Կոնգոյի ավազանում (Աֆրիկա)։

Նկ. 5. Արեվադարձային անտառ։

2. Տաք գոտու չոր տեղերում անտառների փոխարեն տարածված են սավաններ։ Սավանները ծածկված են խոտով, որի մեջ տեղ-տեղ բարձրանում են ծառեր։

3. Յերկու կիսագնդերի բարեխառն գոտիների այն շրջաններում, որտեղ կլիման խոնավ է, տարածված են անտառներ, ավելի չոր տեղերում՝ տափաստաններ, իսկ այնտեղ, որտեղ մթնոլորտային տեղումները շատ սակավ են՝ անապատներ։ Այսպիսով կլիմայի չորանալու հետ, անտառը փոխվում տափաստանի, իսկ տափաստանն՝ անապատի։

Տափաստանները և անապատները գտնվում են գլխավորապես բարեխառն գոտիների մերձարևադարձային շրջաններում մինչև 35—40° հյուսիսային և հարավային լայնությունը։

Հյուսիսային կիսագնդում անապատները կազմում են մի գոտի, որը վորոշ ընդմիջումներով Ատլանտյան ովկիանոսի ափերից Աֆրիկայի վրայով տարածվում է մինչև Կենտրոնական Ասիա (Սահարա, Արաբական անապատ, Իրանի և Թուրանի անապատներ, Գոբի կամ Շամո)։ Հյուս. Ամերիկայում անապատներն ընկած են Կորդիլերների շղթաների միջև։ Հարավային կիսագնդում անապատային բնույթ ունին Կալահարին (Հար. Աֆրիկա) և արևմտյան Ավստրալիան։ Տափաստանները ձգվում են Հին Աշխարհի անապատային գոտու հյուսիսային և հարավային կողմերով։ Նրանք ընդարձակ



Նկ. 6. Սահարայում։

տարածություն են բռնում մանավանդ Հյուսիս. Ամերիկայում (պրերներ-Միսսիսիպիից դեպի արևմուտք) և Հար. Ամերիկայում (պամպաներ-Պարանայի հովտում)։

Մշակովի բույսերից տափաստանային զոնայում տարածված են ցորենը և յեգիպտացորենը։

4. Տափաստանային զոնայից դեպի հյուսիս (հյուս. կիսագնդում) ձգվում են ընդարձակ անտառներ, որոնք հյուսիսային Յեվրոպայի, հյուսիսային Ասիայի (Սիբիրի) վրայով անցնում են Ամերիկա (Կանադա)։

Անտառային զոնայի ցուրտ մասերում տարածված են փշատերև ծառեր (յեղևնի, սոճի, մայրի և այլն), իսկ համեմատաբար տաք մասերում՝ սաղարթավոր ծառեր—կաղնի, լորենի, հացենի, հաճարի և այլն, որոնք ձմեռը տերևաթափ են լինում։

Սակայն պետք է նկատել, որ անտառների մի խոշոր մասն այժմ կտրտված է և նրանց փոխարեն տարածվում են հացահատիկների, տեխնիկական բույսերի (վուշ, կանեփ, ճակնդեղ և այլն) ցանքսեր և պտղատու ծառերի այգիներ։

5. Կլիմայական ցուրտ գոտում տարածվում է տունդրային բուսականությունը, որը բաղկացած է գլխավորապես մամուռներից, քոսերից և հաստա-

պտուղ տվող թփուկներից։ Ամառվա կարճատևության և հողի սառած լինելու պատճառով յերկրագործությունը այստեղ հնարավոր չէ։

6. Արևադարձային և բարեխառն գոտիների բուսական զոնաների մեջ գտնվում է մի առանձին զոնա, վոր կոչվում է **մերձարևադարձային բուսականության զոնա**։ Այս զոնայում գտնվում են այնպիսի բույսեր, վորոնք

Նկ. 7. Բրինձ, թեյ, բամբակ։

ձմեռը տերևաթափ են լինում, և այնպիսիները, վորոնք մշտադալար են։ Մշտադալար բույսերից բնորոշ են մրտենին, դափնին, ձիթենին, մագնոլիան, կիտրոնը, նարինջը և այլն։ Մշակվում են--կիտրոն, նարինջ, խաղող բամբակ, թեյ, բրինձ և այլն։

Մերձարևադարձային բուսական զոնան անցնում է Միջերկրական և Սև ծովի յեզերքներով, հարավ. Ջինաստանով դեպի Ամերիկա (Ֆլորիդա,

Նկ. 8. Հյուս. անտառների և տունդրաների կենդանիներ։

Կալիֆորնիա)։ Հարավային կիսագնդում մերձարևադարձային բուսականություն ունեն հար. Աֆրիկան, հար. Ավստրալիան, Նոր Զելանդիան և այլն։

Այսպիսով բույսերը, յերկրագնդի վրա կլիմայի և հողի նման տարածված են զոնաներով։

Կենդանիներն ընդհանրապես տեղական պայմաններից ավելի քիչ կախում ունեն, քան թե բույսերը։ Դա բացատրվում է նրանով, վոր կենդանիներն ընդունակ են տեղափոխվելու մի տեղից մի ուրիշը։ Յերբ վորևէ տեղ սնունդը պակասում է նրանք չվում են մի ուրիշ տեղ, իսկ բույսերն այդ չեն կարող անել։ Բայց և այնպես կենդանիները ևս վորոշ չափով կապված են այս կամ այն կլիմայական գոտու հետ, օրինակ, փիղը, կապիկը կարող է ապրել միայն տաք գոտում, իսկ սպիտակ արջը՝ ցուրտ գոտում և այլն։

Նկ. 9. Կյանքը տայգայում։

ԽՍՀՄ-ի քարտոգրամի վրա ցույց տվեք Խ. Միության բուսական զոնաները (Աշխ. ատլաս)

Թվեցեք յերկրագնդի բոլոր բուսական զոնաները հյուսիսից դեպի հարավ։
Յուրաքանչյուր բուսական զոնայի մեջ ինչ բույսեր են մշակում։
Ինչու տունդրաներում մեծ ծառեր չեն կարողանում աճել։
Մշակովի բույսերից վորո՞նք են տաք կլիմա ունեցող յերկրներում աճում։
Աշխատանք։ Բուսական գոտիները ներկեցեք տարբեր գույներով։

Զոնային ֆակտորների ազդեցությունը ազգաբնակության տնտեսական գործունեության վրա։

Կլիմայի, հողի, կենդանիների և բույսերի զոնային դասավորությունը ազդում է ազգաբնակության տնտեսական գործունեության վրա, այսինքն տնտեսական կյանքի մեջ նույնպես նկատվում է վորոշ զոնականություն։ Յեթե հյուսիսային բևեռից տեղափոխվելու լինենք դեպի հարավ, կտեսնենք հետևյալ տնտեսական զոնաները։

1. **Բևեռային զոնա**։ Անմարդաբնակ է կամ ունի չափազանց նոսր ազգաբնակություն, վորն զբաղվում է գլխավորապես վորսորդությամբ և ձկնորսությամբ, տեղ-տեղ էլ յեղջերվապահությամբ։ Բացի յեղջերվից նշանակություն ունի և լծկան շունը։

2. **Հյուսիսային անտառների զոնա**։ Սակավաբնակ է։ Բացի վորսորդությունից կարևոր նշանակություն ունեն անտառահատությունը, կաթնատնտեսությունը և մի քանի բույսերի (գարու և վարսակի) մշակությունը։



Նկ. 10. Հյուս. Բևեռային ծովի կենդանիներ սպիտակ արջ, ծովացուլ, փոկ:

3. Հացահատիկների գոտի: Այս գոնայի մեջ մտնում են սաղարթավոր անտառների շրջանը և տափաստանային գոնայի մի մասը: Մի քանի տեղերում (Արևմտյան Եվրոպա) հացահատիկները խոնավության առատությունից են վնասվում, իսկ մի քանի տեղերում էլ՝ խոնավության սակավությունից (ԽՍՀՄ-ի Եվրոպական մասի հարավ-արևելյան անկյունը՝ Կասպից ծովից հյուսիս, Միացյալ Նահանգների արևմտյան մասը): Բացի հացահատիկներից այս գոնայում մշակում են տեխնիկական բույսեր, տնկում են այգիներ, պահում են մեծ քանակությամբ անասուններ և այլն, իսկ հարավային տաք մասերում՝ հանդիպում է և բրինձ:

4. Մերձարևադարձային գոնան բաժանվում է հետևյալ գոտիների.

Նկ. 11. Կյանքը ցուրտ գոտում. սամոեդներ:

ա) Բուն մերձարևադարձային գոնա: Միջերկրականի ծովեզրերը, որտեղ մշակում են ձիթենի և նարինջ:

բ) Մերձարևադարձային անապատներ: Սահարա, Արաբիա: Փյունիկյան արմավենին այս գոնայի ամենակարևոր բույսն է: Երկրագործությունը հնարավոր է ջրովի տեղերում և օազիսներում:

Նկ. 12 Տունդրան ձմեռը: Եղջերուներ լծկան:

27932-60
1.004
18098

գ) Խոնավ մերձարևադարձային գոնան բռնում է Յապոնիայի և Չինաստանի հարավային մասերը, Հնդկաստանի մի խոշոր մասը, Միաց. Նահանգների հարավային մասը, Բրազիլիան, Արգենտինայի հյուս. մասը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի մի մասը: Մշակվում են բրինձ, շաքարեղեգ, թեյ, բամբակ, թթենի:

5. Արևադարձային գոնա, որը բաժանվում է հետևյալ երկու գոնայի.

ա) Արտաքին արևադարձային գոնա: Նկատվում է տարվա եղանակների տարբերություն, այդ պատճառով մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում հավասարապես չեն թափվում: Նա բռնում է Վեստ Ինդիան, Պանամայի պարանոցը, Բրազիլիայի հարավ-արևելյան մասը, Ֆիլիպպյան կղզիները, հյուսիսային Ավստրալիան: Հացահատիկներից տարածված են դուրրո և սորգո (կորեկի տեսակներից են):

Ժողովրդական սննդի համար կարևոր դեր են կատարում յամսը, մանյոկը, բանանները և մասամբ հացի ծառը: Բանանն արտահանվում է: Մեծ չափով տարածված են սուրճի և տեխնիկական բույսերից բամբակի, ջուտի մշակությունը: Այստեղ է գոյանում պտղատու հայրենիքը: Ծառերից մի շ նշանակություն ունի քինայի ծառը:

ը) Ներքին արեվադարձային զոնա։ Գտնվում է հասարակածի անմիջապես յերկու կողմը, ունի համաչափ բարձր բարեխառնություն և ստանում է մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումներ։ Իսկական արևադարձային անտառները գտնվում են հենց այդ շրջանում։

Բույսերից այստեղ տնտեսական նշանակություն ունեն կոկոսյան արմավենին, կակաո, կաուչուկի ծառը և այլն։

Վո՞ր ֆակտորներն են կոչվում զոնային։
Հիշեցեք այդ ֆակտորների զոնային դասավորությունը։

Վոչ զոնային ֆակտորներ։

Վոչ զոնային ֆակտորներ են յերկրի աշխարհագրական դիրքը, ռելյեֆը (մակերևույթի կազմությունը), ներքին ջրերը, հանքային հարստությունները։ Այս ֆակտորները վոչ զոնային են կոչվում այն պատճառով, վոր յերկրագնդի վրա տարածված են վոչ թե զոնաներով, այլ ցրված են բոլորովին անկանոն, պատահական կերպով։

Ռելյեֆ։

Դիտելով կիսագնդերի քարտեզը, մենք տեսնում ենք, վոր յերկրագնդի մակերևույթը չափազանց բազմազան ձևեր ունի։ Ընդարձակ հարթությունները կտրտվում են բարձր լեռնաշղթաներով, վորոնց միջև տեղ-տեղ ձգվում են բարձրավանդակներ։

Նկ. 13. Ասիայի ռելյեֆը։

Այն հարթությունը, վորի բարձրությունը ծովի մակերույթից հաշված 200 մետրից չի անցնում, կոչվում է **դաշտավայր**, իսկ յեթե հարթության բարձրությունը ծովի մակերևույթից բարձր է ավելի քան 200 մետր, այն դեպքում այդ հարթությունը կոչվում է **բարձրավանդակ**։

Ֆիզիկական գունատիպ քարտեզների վրա դաշտավայրը սովորաբար նշանակում են կանաչ, իսկ բարձրավանդակը՝ բաց դարչինագույն։

Ասիայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Սիբիրի, Թուրանի (Արալյան ծովի շուրջը), Չինական, Հնդկական (Ինդոսի և Գանգեսի հովիտները) և Միջագետքի դաշտավայրերը (Աշխարհ. ատլաս)։

Առաջադրանք։ Ասիայի համր քարտեզի վրա այդ դաշտավայրերը ներկեցեք կանաչ գույնով։

Ցույց տվեք Յեվրոպայի դաշտավայրերը—Ռուսական, Մերձբալտյան, Գերմանական և Ֆրանսիական։

Առաջադրանք։ Յեվրոպայի համր քարտեզի վրա դաշտավայրերը ներկեցեք կանաչ գույնով։

Ցույց տվեք Միսսիսիպիի և Ամազոնի դաշտավայրերը (Ամերիկայում)։

Ընդարձակ բարձրավանդակներ գտնվում են Ասիայում, վորտեղ նրանք, ձգվելով արևմուտքից դեպի արևելք, կազմում են բարձրավանդակների մի շարք։ Այդ բարձրավանդակներից ամենաբարձրը Տիբեթն է, վորի միջին բարձրությունը կազմում է մոտ 4000 մետր։

Ասիայի քարտեզի վրա ցույց տվեք Փոքր Ասիայի, Արաբիայի, Իրանի, կենտրոնական Ասիայի (Տիբեթի, Մոնղոլիայի և Արևել. Թուրքեստանի) բարձրավանդակները (Աշխ. ատլաս, Ասիա—ֆիզիկական)։

Առաջադրանք։ Ասիայի համր քարտեզի վրա բարձրավանդակները ներկեցեք դարչնագույն։

Աֆրիկայի մակերևույթը ներկայացնում է մի միապաղաղ հարթություն, վորի միջին բարձրությունն է 500—1000 մետր։ Բարձրավանդակները մեծ տեղ են բռնում նաև Ավստրալիայում։ Յեվրոպայում և Ամերիկայում նրանք գտնվում են գլխավորապես լեռնաշղթաների մոտ, յերբեմն էլ այդ շղթաների միջև։

Յերկրագնդի ամենաբարձր լեռնաշղթաները գտնվում են Ասիայում։ Հիմալայան լեռնաշղթայի գագաթներից վոմանք ունեն մոտ $8\frac{1}{2}$ կիլոմետր բարձրություն։ Բարձր լեռներ գտնվում են նաև Ամերիկայում, վորտեղ հյուսիսից հարավ ձգվում է յերկրագնդի ամենայերկար շղթան՝ Կորդիլերները։ Կորդիլերյան լեռների գագաթներից վոմանք ունեն մոտ 7 կիլոմետր բարձրություն։ Յեվրոպայի ամենաբարձր լեռնաշղթան Ալպերն են, վորոնց գագաթներից նշանավոր է Մոն-Բլանը (4,8 կիլոմետր բարձրություն)։

Ասիայում ցույց տվեք Կովկասյան, Էլբրուս, Հինդուկուշ, Տյան-Շան, Ալտայան, Սայանյան, Հիմալայան, Կուէն-Լուն և Խինգան լեռնաշղթաները։

Իրանը և կենտրոնական Ասիան ինչ լեռներով են շրջապատված։

Յեվրոպայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Սկանդինավյան, Պիրենեյան, Ալպյան, Ապեննինյան, Բալկանյան, Կարպատյան և Ուրալյան լեռները։

Ամերիկայի քարտեզի վրա ցույց տվեք Կորդիլերները և նրա ճյուղերը (Ժայռոտ, Կասկադյան, Սիերրա-Նեվադա)։ Ցույց տվեք Ալլեգանները (Հյուս. Ամերիկայում) և Բրազիլյական լեռները (Հար. Ամերիկայում)։

Առաջադրանք։ Ասիայի համր քարտեզի վրա գտեք գլխավոր լեռները, գրեցեք նրանց անունները և ապա շղթաները վորևէ գույնով ներկեցեք։

Առաջադրանք։ Յեվրոպայի համր քարտեզի վրա գտեք գլխավոր լեռները, անունները նշանակեցեք և ապա այդ լեռները վորևէ գույնով ներկեցեք։

Ռելյեֆը մեծ ազդեցություն ունի յերկրի տնտեսական և քաղաքական կյանքի վրա։ Հարթ տարածություններն ավելի հեշտ է մշակել, քան լեռնոտ շրջանները։ Բարձր լեռնաշղթաները բաժանում են յերկրի տարբեր մասերն իրարից թե տնտեսապես և թե քաղաքականապես։ Չնայելով, վոր

ժամանակակից տեխնիկան բավական զարգացած է, այնուամենայնիվ մարդիկ դեռ չեն կարողացել շատ լեռներ կտրել յերկաթուղային գծերով, որինակ այն լեռները, վորոնք անցնում են ԽՍՀՄ-ի պարսկական, տաճկական սահմաններով. յերկաթուղային գծով կտրված չեն նաև Կովկասը, Հիմալայը և այլն:

Լեռնաշղթաները կարևոր դեր են կատարում յերկրի պաշտպանության գործում: Մեր հարավային սահմանների մեծ մասն անցնում է լեռների վրայով:

Նկատի ունենալով ֆիզիկական քարտեզների պայմանական նշանները, նկարագրեցեք բոլոր աշխարհամասերի ռելյեֆը: Ցույց տվեք լեռների, բարձրավանդակների և դաշտավայրերի տարածումը (Աշխարհ. ատլաս):

Աշխարհագրական դիրքը: Վոչ փոքր նշանակություն ունի, աշխարհագրական դիրքը: Այն յերկրները, վորոնք շրջապատված են ծովերով, կարող են զարգացնել ծովային առևտուր, հարաբերության մեջ մտնել յերկրագնդի ամենահեռավոր անկյունների հետ: Անգլիան այժմ յուր ծովային առևտրով առաջին յերկիրն է և ունի առևտրական հսկայական նավատորմ: Այդ բանին անշուշտ մեծ չափով նպաստել է նրա դիրքը ծովերի նկատմամբ: Անգլիայի ներսը չկա մի այնպիսի կետ, վոր ծովափից հեռու լինի ավելի քան 120 կիլոմետր:

Այն յերկրները, վորտեղ ծովային սահմանը յերկրի կենտրոնական վայրերից շատ հեռու յե ընկնում, ծովային հարաբերությունները բավական դժվար են, որինակ, ԽՍՀՄ:

Հասկանալի յե, ինարկե, վոր ամեն ծով չի կարող նպաստել նավագնացության զարգացմանը: Այստեղ պետք է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ, որինակ, սառչո՞ւմ է այդ ծովը, թե վոչ, և յեթե սառչում է, ապա վո՞րքան ժամանակով. ունի՞ այդ ծովն ազատ յելք դեպի ովկիանոս, թե վոչ. չսառչող հարմար նավահանգիստներ ունի՞, թե վոչ և այլն:

Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Անգլիան (Յեվրոպայում), Ճապոնիան (Ասիայում), Միացյալ Նահանգները (Ամերիկայում): Դրանց աշխարհագրական դիրքը ինչո՞վ է նպաստավոր:

Ցույց տվեք ԽՍՀՄ-ի սահմանները: Գտեք յերկրի այն կետերը, վորոնք ծովափից շատ են հեռու: Նույն համաշխ. քարտեզի վրա ցույց տվեք Մոնղոլիան և Աֆղանիստանը (Ասիայում): Նրանք կարո՞ղ են ծովային առևտուրը զարգացնել:

Ցույց տվեք Բալտիկ, Միջերկրական և Սև ծովերը (Յեվրոպայում). Կարմիր ծովը, Պարսից ծոցը, Արևելյան-Չինական, Ճապոնական, Բերինգյան ծովերն (Ասիայում). Մեքսիկայի, Ս. Լավրենտիոսի և Հուդզոնի ծոցերը (Ամերիկայում)—Աշխարհ. ատլաս—Ասիա, Ամերիկա և Յեվրոպա:

Ներքին ջրեր: Գետերն ու լճերը ազդում են ժողովրդական տնտեսության վրա: Նրանց վրայով յերկրի ներքին մասերը կարող են կապվել թե իրար հետ և թե շրջապատող ծովերի հետ: Նավագնաց գետերի ափերին և գետաբերաններում գոյանում են վաճառաշահ քա-

ղաքներ: Մյուս կողմից գետերն ու լճերը պարունակում են բազմազան ձկներ, վորոնցով սնվում են մարդիկ. բացի այդ՝ գետերի ոգնությամբ կարելի յե աշխատեցնել զանազան մեքենաներ, վոռոգել վարելահողերը, ստանալ ելեկտրական հոսանք և այլն:

Լճերը բռնում են մոտ 2,5 միլիոն քառ. կիլոմետր տարածություն, վոր կազմում է յերկրագնդի ամբողջ մակարդակի 1,8%-ը: Ամենամեծ լիճը Կասպից ծովն է, վորի մակերևույթի մեծությունը կազմում է մոտ 438,000 քառ. կիլոմետր: Մեծ լճեր գտնվում են Ամերիկայում (Վերին, Միչիգան, Հուրոն և այլն), Ասիայում (Արալյան ծով, Բալխաշ, Բայկալ), Յեվրոպայում (Լադոգա, Ոնեգա և այլն):

Յերկրագնդի նշանավոր գետերի մասին գաղափար է տալիս հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ № 1.

ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՏԵՐԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

	Յերկարությունը	Ավազանի մակարդակը
Ամերիկայում		
Միսսիսիպի (Միսսուրի)	6730 կիլոմետր	3250 հազար քառ. կիլոմետր
Ամազոն	5570 »	7000 » » »
Աֆրիկայում		
Նեղոս	6500 »	2800 » » »
Կոնգո	4640 »	3690 » » »
Նիգեր	4180 »	2500 » » »
Ասիայում		
Յենիսեյ	6220 »	2710 » » »
Օբ	5300 »	3000 » » »
Յան-Ցե-Կիանգ	5300 »	1900 » » »
Լենա	4600 »	2320 » » »
Ամուր	4480 »	2000 » » »
Հուան-հո	4150 »	1200 » » »
Յեվրոպայում		
Վոլգա	3600 »	1460 » » »
Դանուբ	2860 »	817 » » »
Դնեպր	2150 »	520 » » »
Հռենոս	1225 »	193 » » »
Ելբա	1165 »	144 » » »

Գետերի ուղղությունն ինչի՞ց է կախված:

Ի՞նչպես է կոչվում այն բարձրությունը, վորով մի գետի ավազան բաժանվում է մյուսից:

Ասիայի ֆիզիկական քարտեզի վրա առանձին քարտագրամով ցույց է տրված գետային գլխավոր շրջանները, բացատրեցեք:

Ցույց տվեք տեքստի մեջ հիշված բոլոր գլխավոր գետերը և ասացեք՝ ո՞ւր են թափվում նրանք:

Աշխատանք: Ասիայի համր քարտեզի վրա գրեցեք գլխավոր գետերի անունները:

Աշխատանք: Յեվրոպայի համր քարտեզի վրա գրեցեք գլխավոր գետերի անունները:

Հանքային հարստությունները:

Մեր նյութական կուլտուրան զգալի չափով կախված է քարածխից, նավթից և յերկաթից. առանց այդ հանքերի՝ տեխնիկան յերբեք չեր կարող հասնել յուր զարգացման այն աստիճանին, վոր մենք այսօր տեսնում ենք: Այդ հանքերի ոգնությամբ կանեփի պարանի փոխարեն գործ են ածում յերկաթե պարաններ, փայտի փոխարեն՝ յերկաթ, բուսական յուղերի փոխարեն լուսավորության մեջ գործ են ածում նավթ, բուսական ներկերի փոխարեն այժմ տարածվում են անիլինի ներկերը, վորոնք ստացվում են քարածխից և այլն: Զանազան մեքենաներ շինում են յերկաթից, աերոպլանի և ավտոմոբիլների շարժիչներն աշխատում են բենզինով (ստացվում է նավթից), շոգեմեքենաները՝ քարածխով և այլն:

Բայց այդ հանքերը յերկրագնդի վրա հավասարապես չեն տարածված: Կան յերկրներ, վորոնք հարուստ են այս կամ այն հանքով, յերկրներ էլ կան, վոր այդ հանքերից համարյա զուրկ են և իրենց արդյունագործության կարիքների համար ներմուծում են դրսից: Անգլիայի, Միաց. Նահանգների և Գերմանիայի արդյունագործության փայլուն վիճակը բացատրվում է քարածխի և յերկաթի այն հարուստ հանքերով, վորոնք գտնվում են իրար շատ մոտ և կազմում են ժողովրդի տնտեսության կարևոր կենտրոնը: Հենց այդ շրջաններում էլ խտանում է ազգաբնակությունը:

Յերկաթ:

Թե վորքան կարևոր նշանակություն ունի յերկաթը արդյունագործության և ընդհանրապես կուլտուրական ժողովուրդների կյանքում, այդ բոլորիս հայտնի յե: Բավական է յիշել այն հանգամանքը, վոր յերկաթից շինում են վոչ միայն հասարակ գործիքներ ու բարդ մեքենաներ, կամուրջներ ու զրահակիր նավեր, այլ և տների կմախքներ: Յերկաթի գյուտը մարդու քաղաքակրթության պատմության մեջ նոր դարաշրջան բացեց:

Յերկաթը մետաղների մեջ վոչ միայն ամենակարևորն է, այլ և ամենատարածվածը: Բայց նա բնության մեջ, բացի մետեորիտներից, ազատ վիճակում չի գտնվում: Յերկաթահանքի գլխավոր տեսակներն են մագնիսական յերկաթաքարը, կարմիր յերկաթաքարը, գորշ յերկաթաքարը և այլն, վորոնցից յերկաթն անջատելու համար պատրաստում են հալոցներ: Յերկաթահանքն ու քարածուխն ածում են հալոցների մեջ, հալում և ստանում չուգուն, ապա պողպատ: Յերկաթահանքով հարուստ յերկրների մեջ աչքի յեն ընկնում Միաց. Նահանգները, Բրազիլիան, Ֆրանսիան, Նյու-Ֆաունդլենդը, ԽՍՀՄ, Չինաստանը և այլն: Յերկաթահանքի հայտնի պաշարի 80%-ը գտնվում է Բրազիլիայում, Միաց. Նահանգներում, Ֆրանսիայում, Նյու-Ֆաունդլենդում և Կուբայում:

Նկարի ոգնությամբ ցույց տվեք յերկաթահանքով հարուստ յերկրները: Դրանց մեջ առաջին տեղը վոր յերկիրն է բռնում:

ԽՍՀՄ-ում յերկաթի վորքան պաշար կա. նա վորերորդ տեղն է բռնում:

Քարածուխ:

Քարածուխը համաշխարհային տնտեսության մեջ գործ է ածվում գլխավորապես վորպես շարժիչ ույժ շոգեմեքենաների համար և մեկ էլ յերկաթի արդյունաբերության մեջ յերկաթահանքը հալելու և նրանից յերկաթը զատելու համար: Թեև այժմ ելեկտրականությունը, վոր ջրային եներգիայով բավական հեշտ է ստանալ, և նավթը ավելի ու ավելի յեն տարածվում արդյունագործության մեջ վորպես շարժիչ ույժ, բայց և այնպես քարածուխը դեռ յերկար ժամանակ կկազմի արդյունագործության և հաղորդակցության ճանապարհների հիմքը:

Քարածխի հայտնի պաշարն ամբողջ յերկրագնդի վրա հաշվում են մոտ $7^1/_2$ տրիլլիոն տոնն, վորի խոշոր մասը գտնվում է Հյուս. Ամերիկայում:



Նկ. 14. Յերկաթի համաշխարհային պաշարի աշխարհագրական տարածումը:

Աղյուսակ № 2

ՔԱՐԱԾԽԻ ՊԱՇԱՐՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐՈՒՄ

Հյուս. Ամերիկա	5.073.431 միլիոն տոնն	Յեվրոպա	784.190 մլ. տ.
Հար. Ամերիկա	32097 » »	Ավստրալիա	170.410 » »
Ասիա	1.550.000 » »	Աֆրիկա	57.839 » »

Աղյուսակ № 3

ՔԱՐԱԾԽԻ ՊԱՇԱՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Միացյալ Նահանգներ	3838 միլիարդ տոնն
Կանադա	1235 » »
Չինաստան	996 » »
ԽՍՀՄ	486 » »

Անգլիա	189	»	»
Գերմանիա	423	»	»
Ֆրանսիա	50	»	»
Բելգիա	11	»	«
Լեհաստան	23	»	»

Քարածուխն ինչու համար է գործածվում։

Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք քարածխով հարուստ երկրները։

Վո՞ր շրջանում են գտնվում ԽՍՀՄ-ի մեծաքանակ քարածուխի հանքերը։

Աշխատանք: *Գծեցեք քարածխով հարուստ երկրների քարածխի պաշարի համեմատական դիագրամը։*



Նկ. 15. Քարածխի համաշխարհային պաշարի աշխարհագրական տարածումը։

Նավթ: *Նավթի ընդհանուր պաշարը հաշվում են մոտ $7^1/_2$ միլիարդ տոնն, որի $^1/_3$-ից ավելին գտնվում է ԽՍՀՄ-ում։*

Աղյուսակ № 4

НАВТИ...

ՆԱՎԹԻ ՊԱՇԱՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

ԽՍՀՄ	2874	միլիոն	տոնն
Հար. Ամերիկա	1230	»	»
Միաց. Նահանգներ	930	»	»
Պարսկաստան և Միջագետք . . .	775	»	»
Մեքսիկա	602	»	»
Մալայան Արշիպելագ	400	»	»

Նավթի պաշարով առաջին տեղը վո՞ր երկիրն է բռնում։

Ցույց տվեք նավթով հարուստ երկրները։

Աշխատանք: *Համաշխարհային համր քարտեզի վրա գունավոր շրջանների օգնությամբ նշանակեցեք երկաթահանքի, քարածխի և նավթի պաշարները, այնպես ինչպես քարտոգրամների վրա են նշանակված։*

Կարդացեք Խորրաբինի «Ուրվագիծ պատմա-տնտեսական աշխարհագրության» գրքի երկրորդ և երրորդ գլուխները, 32—62 եր.

Նավթի գործածությունը ավտոմոբիլային և օդային տրանսպորտի մեջ, արդյունագործության և երկաթուղային հաղորդակցության մեջ այնպիսի չափերի է հասել, որ ներկայումս իմպերիալիստական երկրներից ամեն մեկն աշխատում է ապահովել իրեն այդ հանքով։ Ուժեղ պայքար այս խնդրում նկատվում է, մանավանդ, Միաց. Նահանգների և Անգլիայի միջև։ Վերջինս Միաց. Նահանգների արտոնյալ դրությունը խախտելու համար, ճիգեր է գործ դնում, որ յուր ձեռքն առնի բոլոր աշխարհամասերի նավթային հարստությունները։ Ամերիկական միլիոներների նավթային ընկերությունը—«Ստանդարտ—Օյլ—Կոմպանի» պաշտպանում է Միաց. Նահանգների, անգլիական «Րոյալ-Դետչ-Շելլ»-ը Անգլիայի շահերը։



Նկ. 16. Նավթի համաշխարհային պաշարի աշխարհագրական տարածումը։

Մարդը չեվ աշխարհագրական միջավայրը

Մենք տեսանք, որ տնտեսական կյանքի զարգացման համար անհրաժեշտ են որոշ աշխարհագրական պայմաններ։ Ցույց տվինք, որ եթե Անգլիան և Միաց. Նահանգներն այսօր ունեն մեծ չափով զարգացած արդյունագործություն և առևտուր, այդ բանում նրանք զգալի չափով պարտական են բնական պայմաններին, այսինքն, ոչ տնտեսական կամ ոչ գոնային նպաստավոր ֆակտորներին։

Հասկանալի է, ի հարկե, որ Անգլիայի աշխարհագրական հարմար դիրքը, բարեխառն կլիման, արգավանդ հողն ու հանքային հարստություն-

ները առաջ էլ կային, առաջ էլ Անգլիայում ազգաբնակություն կար, բայց նրա տնտեսական կյանքը միայն XIX-րդ դարում սկսեց խոշոր քայլերով առաջադիմել: Այստեղից յերևում է, որ աշխարհագրական միջավայրը միայնակ, անմիջապես չի կարող ազդել տնտեսական կյանքի վրա: Վորպեսզի տնտեսությունը զարգանա, անհրաժեշտ է տնտեսական վորոշ կառուցվածք, տեխնիկայի և արտադրողական ույժերի զարգացման բարձր մակարդակ:

Առանց մեքենաների, առանց պրոլետարիատի, վորը յուր գոյությունը պահպանելու համար ստիպված է յուր միկանային ույժը վաճառել, Անգլիայում քարածխի և մետաղների արտադրությունը յերբեք չեր կարող հսկայական չափերի հասնել:

Հյուս. Ամերիկայի արգավանդ տափաստաններում, նախքան յեվրոպացիների գալը, ապրում եյին հնդիկ ցեղեր, վորոնց գլխավոր պարապմունքը վորսորդությունն եր: Նետ ու աղեղի, նիզակի և քարե կացնի ոգնությամբ նրանք պաշտպանում եյին իրենց գոյությունը: Մի քանի ցեղեր էլ սուր փայտով փորում եյին գետինը և ցանում յեգիպտացորեն, դդում, ծխախոտ: Քարածխի, յերկաթի, վոսկու հսկայական պաշարները մնում եյին յերկրի ծոցում վորպես «մեռած կապիտալ»: Բայց ահա յերևաց բարձր կուլտուրայի տեր յեվրոպացին և սկսեց յուր մեքենաներով մշակել տափաստանների հողը, շահագործել բնական հարստությունները: Ամերիկական հսկայական նավերն այժմ յերթևեկում են ովկիանոսների վրայով և ցրում գործարանային ապրանքներն ու հացը ամբողջ յերկրագնդի վրա:

Այսպիսով պետք է միանգամայն պարզ լինի այն, վոր «բնական պայմանները թե արդյունաբերության և թե առևտրի ու տրանսպորտի համար միայն հարաբերական նշանակություն ունին, այսինքն նրանց դրական կամ բացասական ազդեցությունը կախված է մարդու կուլտուրական մակարդակից: Այն ժամանակ յերբ բնական պայմանները մշտական ու անփոփոխ են, *) մարդու կուլտուրական մակարդակն, ընդհակառակը, շարունակ փոփոխվում է և միայն այդ յերկու ֆակտորների փոխադարձ ազդեցությամբ է, վոր զարգանում է տնտեսական կյանքը»: Յերբ մարդիկ կուլտուրական ցածր մակարդակի վրա եյին գտնվում, ծովը պաշտպանում եր այս կամ այն յերկիրը արտաքին թշնամուց, բայց երբ մարդը կուլտուրապես բարձրացավ ծովը արդեն վոչ թե յերկրները բաժանող մի ֆակտոր է, այլ ընդհակառակը՝ միացնող:

*) այսինքն, բնական պայմանները մնում են անփոփոխ. հսկայական դարաշրջանների ընթացքում, վորոնք իրենց յերկարատևությամբ գերազանցում են մարդկային պատմության վորևե շրջանից:

Յերկրագնդի ազգաբնակությունը

Յերկրագնդի ամբողջ ազգաբնակության թիվը 1924 թվի տեղեկությունների համաձայն կազմում է մոտ 1.855.000.000: Ըստ առանձին աշխարհամասերի այդ ազգաբնակությունը բաժանվում է այսպես.

Աղյուսակ № 5

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ

Ասիա	1.014.000.000	մարդ
Յեվրոպա	479.000.000	»
Հյուս. Ամերիկա	152.000.000	»
Աֆրիկա	136.000.000	»
Հար. Ամերիկա	66.000.000	»
Ավստրալիա և Պոլինեզիա	8.500.000	»
Անտարկտիդա	—	»

Ազգաբնակության մեծությամբ առաջին տեղը վո՞ր աշխարհամասն է բռնում:

Այսպիսով ազգաբնակության մեծությամբ առաջին տեղը բռնում է Ասիան, իսկ յերկրորդ տեղը՝ Յեվրոպան: Միևնույն աշխարհամասի տարբեր մասերը հավասարապես չեն բնակված. դա կախված է վոչ միայն բնական, այլ և կուլտուր-պատմական պայմաններից:

Յերկրագնդի վրա չորս շրջան առանձնապես աչքի յեն ընկնում իրենց սակավ ազգաբնակությամբ: Այդ շրջաններն են.

1. Հյուսիս. բևեռ. գոտի—Հյուս. Ամերիկայի, Յեվրոպայի և Ասիայի հյուսիսային մասերը:
2. Անապատների և չոր տափաստանների գոտի (Հյուս. կիսագնդում)—Սահարա, Արաբիա, Իրան, Կենտրոնական Ասիա (Ասիայում) և Մեծ Աղի լճի ավազան (Հյուս. Ամերիկայում):
3. Անապատներ և չոր տափաստաններ հարավային կիսագնդում—Արևմտ. Ավստրալիա, Կալահարի (Հար. Աֆրիկայում) և Պամպաներ (Հար. Ամերիկայում):
4. Արևադարձային կուսական անտառներ—Ամազոնի, Կոնգոյի ավազանները, Ասիայի և Ավստրալիայի արևադարձային կղզիները:

Այս չորս գոտիներում, վոր բռնում են մոտ 100 միլիոն քառ. կիլոմետր, յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա միջին հաշվով ապրում է մեկ մարդուց էլ պակաս. կան և բոլորովին անմարդաբնակ ընդարձակ տարածություններ:

Չորս սակավաբնակ գոտիների դիմաց գտնվում են չորս խիտ բնակված շրջաններ, վորոնք տարածված են այսպես.

1. Յեվրոպական շրջան—Արևմտյան Յեվրոպա (Անգլիա, Գերմանիա, Բելգիա և այլն):
2. Արևելյան-Ասիական շրջան—Չինաստան, Յապոնիա:
3. Հար.-Ասիական շրջան—Հնդկաստան, Յավա:

4. Ամերիկական շրջան—Հյուս. Ամերիկայի դեպի Ատլանտյան օվկիանոսը դարձած նահանգները։

Այս չորս շրջաններում, վորոնց մակերեսն ընդամենը 16 միլիոն քառ. կիլոմետր է, ապրում է ամբողջ յերկրագնդի ազգաբնակության $^{2}/_{3}$-ը։ Միջին հաշվով այս շրջանների մի քառ. կիլոմետրի վրա ապրում է մոտ 70 մարդ։

Առանձին աշխարհամասերից խիտ ազգաբնակություն ունեն Յեվրոպան և Ասիան։

Աղյուսակ № 6

ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհամասեր	Միլիոն քառ. կիլոմետր	Միլիոն բնակիչ	Բնակիչների թիվը մեկ քառ. կիլոմետրի վրա
Յեվրոպա	9,7	455	47
Ասիա	44,2	1033	23
Հյուս. Ամերիկա	24,0	152	6,3
Աֆրիկա	29,8	139	4,8
Հար. Ամերիկա	18,2	66	3,6
Ավստրալիա	8,9	8,6	0,95
Անտարկտիդա	14	—	—

Աշխարհամասերից վորն ավելի խիտ ազգաբնակություն ունի։

Քարտեզի վրա ցույց տվեք յերկրագնդի ամենախիտ ազգաբնակություն ունեցող տեղերը։

Յերկրագնդի վոր մասերում ազգաբնակություն չկա։

Ազգաբնակության անհավասար տարածումն ինչով է բացատրվում։

Արտագաղթ: Մի քանի շրջաններում ազգաբնակության խտությունը կարող է այնպիսի չափերի հասնել, վոր դրանից առանձին անհատի կենսական պայմանները կդժվարանան և ընդհանրապես գոյության կռիվը սուր բնույթ կստանա։ Դրա հետևանքը կլինի այն, վոր ազգաբնակության մի մասը կթողնի յուր հայրենիքն ու կգաղթի այնպիսի շրջաններ, վորտեղ ազգաբնակությունն ավելի նոսր է։ Մեծ արտագաղթ են տալիս Արևմտյան Յեվրոպայի և Արևելյան Ասիայի խիտ ազգաբնակություն ունեցող յերկրները։

Արևելյան Ասիայում սկզբում չինացիները, իսկ հետագայում նաև ճապոնացիները գաղթեցին Խաղաղ օվկիանոսի յեզերքով ընկած յերկրները («դեղին վտանգ»)։ Մանավանդ մեծ արտագաղթ տվեց Ճապոնիան։ Վերջին չորս դարի ընթացքում յեվրոպացիները գրավեցին համարյա ամբողջ Ամերիկան և Ավստրալիան, վորոնց ազգաբնակության խոշոր մասը սպիտակներն են կազմում։

Մարդկային ցեղեր: Յերկրագնդի զանազան շրջաններում ապրող ազգաբնակությունն իրարից տարբերվում են մի քանի արտաքին հատկանիշներով, այն է՝ կաշվի գույնով, դիմագծերով, գլխի ձևով, հասակով, մազերի կազմությամբ և այլն։ Այդ հատկանիշների հիման վրա յերկրագնդի ամբողջ

Նկ. 17. Դեղին ցեղ—մոնղոլ և չինացի

ազգաբնակությունը բաժանվում է յերեք ցեղի—սպիտակ, դեղին և սև։

Սպիտակ ցեղին պատկանում են համարյա ամբողջ Յեվրոպայի ազգաբնակությունը—գերմանացիները, անգլիացիները, ֆրանսիացիները, ռուսները, ուկրաինացիները և այլն, Ասիայում—արաբները (Արաբիայում) և

Նկ. 18. Դեղին ցեղ-ամերիկական հնդիկ և մալայացի

հնդիկները (Հնդկաստանում), պարսիկները (Իրանում), հայերը, վրացիները, քյուրդերը և այլն, Հյուս. Աֆրիկայում—բերբերները, ֆելլահները։ Բացի դրանից սպիտակ ցեղին են պատկանում նաև Ամերիկայի և Ավստրալիայի ազգաբնակության մեծ մասը, վոր գաղթել է Յեվրոպայից։

Դեղին ցեղին պատկանող ժողովուրդների մեծ մասն ապրում է Ասիայում—չինացիները, մոնղոլները, յապոնացիները, թուրքերը, թաթարները, ուզբեկները, թուրքմենները, տաճիկները և այլն: Դեղին ցեղի ժողովուրդներից են նաև ֆինները, սամոյեդները, տունգուսները և այլն, ինչպես և Ամերիկայի հնդիկներն ու էսկիմոսները:

Նկ. 19. Սև ցեղ—նեգր և հոտտենտոտ:

Սև ցեղը տարածվում է գլխավորապես Աֆրիկայում (նեգրեր): Այդ ցեղին են պատկանում նաև Ավստրալիայի բնիկները:

Համաշխարհային քաղ. քարտեզի կողքին գտնվում է մարդկային ցեղերի տարածումը ցույց տվող մի քարտոգրամ:

Ցույց տվեք սպիտակ ցեղերի տարածումը. նրանք վո՞ր աշխարհամասերում են ապրում:

Ի՞նչ ժողովուրդներ են ապրում Ասիայում, Յեվրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում, Ավստրալիայում: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը վո՞ր ցեղին է պատկանում:

Աշխարհի բոլոր մասերի մեջ յեղած տնտեսական փոխադարձ կախվածությունը:

«Յերբ համեմատում ենք աշխարհի ժամանակակից վիճակը նրա զարգացման նախկին շրջաններից վորևէ մեկի հետ, առաջին բանը, վոր մեր աչքին է ընկնում, դա յերկրագնդի բոլոր մասերի մեջ յեղած փոխադարձ կախվածությունն է:

Այդ բոլոր մասերը շատ կամ քիչ չափով սերտորեն իրար հետ կապված են յերկաթուղիներով կամ ծովային ճանապարհներով. այդ մասերից յուրաքանչյուրը ավել կամ պակաս չափով կախված է մյուս մասերից, վորովհետև այդ մասերը նրան վորևէ բան են տալիս. յեթե կերակուր չմատակարարեն, գոնե հում նյութ են տալիս, (Խորրաբին): Ժամանակակից արդյունագործական վորևէ քաղաք, որինակ Մանչեստերը, յուր բամբակե գործվածքների արտադրության համար հում նյութն ստանում է Միաց. Նահանգներից, Յեգիպտոսից և Բրիտանական Հնդկաստանից, հետևապես նա

այդ յերկրներից է կախված: «Անգլիական բանվորի նախաճաշի մեջ (յեթե ի հարկե այդ բանվորը աշխատանք ունի) կարող է մտնել Ամերիկայում բուսած ցորենից պատրաստված հաց, դանիական կամ սիբիրական յուղ, չինական կամ հնդկական թեյ»: Չինացու հագին կարող է լինել Անգլիայի գործարաններում պատրաստված բամբակե շոր, ԽՍՀՄ-ի ավտոմոբիլային տրանսպորտի մեջ աշխատող ավտոմոբիլը կարող է շինված լինել Ամերիկայի Դետրոյտ քաղաքում և այլն:

Տնտեսական այդ փոխադարձ կախվածությունը հիմնված է հետևյալ յերկու հանգամանքների վրա:

1. Հում նյութերի յեվ բերրի հողերի աշխարհագրական բաշխման վրա:

2. Ծովային և ցամաքային տրանսպորտի յեվ հաղորդակցության ճանապարհների վիթխարի զարգացման վրա, վոր տեղի ունեցավ վերջին մի քանի դարի ընթացքում:

Տնտեսական զոնաների բնական տարբերության, ինչպես և ազգաբնակության կուլտուրական մակարդակների տարբերության պատճառով տարբեր յերկրներ տարբեր պրոդուկտներ են արտադրում: Որինակ՝ սուրճը, կակաո, կաուչուկը կարելի յե ստանալ միայն տաք յերկրներում (Բրազիլիա, Կենտրոնական Ամերիկա, Կենտր. Աֆրիկա և այլն): Ջուտը արտահանվում է համարյա բացառապես Հնդկաստանից, ցորենը՝ ԽՍՀՄ-ից, Միաց. Նահանգներից, Կանադայից և այլն: Ստացված այս կամ այն պրոդուկտը յերբեմն այնքան շատ է լինում, վոր այդ յերկրի ազգաբնակությունը չի կարողանում սպառել և մնում է ավելցուկ: Մի յերկրում մնում է հացի ավելցուկ, մի ուրիշ յերկրում նավթի կամ քարածխի ավելցուկ, յերրորդ տեղը, գործվածքներ կամ մեքենաներ և այլն: Առևտրի և տրանսպորտի ոգնությամբ յերկրագնդի տարբեր ծայրերում ընկած յերկրներ փոխանակում են իրենց ապրանքները:

Ապրանքների այս փոխանակության վրա յե հիմնված աշխարհի տնտեսական սիստեմը: Դժվար թե այժմ աշխարհի մեջ մի շրջան գտնվի, վորը կարողանար բոլորովին կղզիացած, առանձնացած կյանք ունենալ, առանց յուր տնտեսական բարորությունը վորոշ չափով պակասեցնելու:

Այսպիսով տնտեսական փոխադարձ կախվածությունը աշխարհի բոլոր մասերի մեջ անկասկածելի փաստ է*):

2. ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Շտեմարաններ: Բազմաթիվ բույսերի մեջ, վորոնցով սնվում են մարդիկ, առաջին տեղը բռնում են հացահատիկները: Նրանց մշակությունը տա-

*) Խորրաբին

րածված է թե հյուսիսային և թե հարավային կիսագնդերում, բոլոր այն վայրերում, որտեղ կլիման ու հողը նպաստում են։ Նրանք չեն մշակվում միայն բևեռային յերկրներում, մերձարևադարձային չափազանց չոր վայրերում և լեռնային շրջաններում։

Գարին, վարսակը և հաճարը բնորոշ են բարեխառն-ցուրտ գոտիների համար, իսկ ցորենը, յեգիպտացորենը և բրինձը տարածվում են բարեխառն-տաք և մերձարևադարձային յերկրներում։ Բայց կլիմայական գոտիներով դժվար է ճիշտ կերպով դրանց սահմանները գծել, որովհետև ցորենը կարող է աճել և բարեխառն-ցուրտ յերկրներում, գարին՝ բարեխառն-տաք յերկրներում, բրինձը և յեգիպտացորենը՝ արևադարձային գոտում։

Ամբողջ յերկրագնդի վրա կան մի քանի շրջաններ, վորոնք առանձնապես աչքի յեն ընկնում հինգ գլխավոր հացահատիկների արտադրությամբ։ Հացի պակասություն ունեցող համարյա բոլոր յերկրները կախված են այդ շրջաններից, կամ ինչպես ասում են, շտեմարաններից։ Այդ շտեմարաններն են.



Նկ. 20. Հացահատիկների գլխավոր շրջանները և տեղափոխության ճանապարհները։

1. Սեվծովյան շտեմարան—ԽՍՀՄ, Ռումանիա և Բուլգարիա։
2. Միջին-ռուսական շտեմարան—Մերձվոլգյան շրջան։
3. Հյուս.-Ամերիկյան շտեմարան—Միաց. Նահանգներ և Կանադա։
4. Հարավ-Ամերիկյան շտեմարան—Արգենտինա։
5. Ավստրալիական շտեմարան—Ավստրալիա։
6. Հնդկական շտեմարան—Հնդկաստան։

Այսպիսով համաշխարհային շուկային հաց մատակարարող գլխավոր յերկրներն են—ԽՍՀՄ, Միաց. Նահանգները, Ռումանիան, Բուլգարիան, Կանադան, Արգենտինան, Ավստրալիան և Հնդկաստանը։



Նկ. 21. Ցորենի կլիմայի շրջանները և տեղափոխության ճանապարհները

Աղյուսակ № 7

ՀԻՆԳ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ ՅԵՎ ՀԵՏՈ (միլիոն կվինտալներով հաշված)

	1909—13	1923	1924	1925	1926
Ռուսաստան	108	—	—	—	—
ԽՍՀՄ	—	19	14	12	22
Դանուբյան յերկներ *) .	59	30	28	33	44
Միաց. Նահանգներ . . .	40	61	77	54	63
Կանադա	27	88	84	87	93
Արգենտինա	62	73	101	63	78
Ավստրալիա	13	17	28	33	19
Հնդկաստան . . .	16	9	14	8	2
Մյուս յերկրները . . .	6	31	24	29	24
Ընդամենը .	381	322	350	300	345

Համաշխարհային քարտեզի վրա ցույց տվեք հաց արտահանող գլխավոր յերկրները։

Ցույց տվեք ցորենի արտահանության կենտրոնները և գլխավոր ուղիները։

Բացատրեցեք հացահատիկների մշակության քարտեզը։

Աշխատանք: Համաշխարհային համր քարտեզի վրա գունավոր շրջանակներով նշանակեցեք գլխավոր հացահատիկների արտահանության կենտրոնները և մոտը գրեցեք համապատասխան անունները։

Աղյուսակ № 8.

ՀԻՆԳ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1926 Թ.

(միլիոն կվինտալներով հաշված)

Յերկրներ	ցորեն	հաճար	վարսակ	գարի	Յեգիպտացորեն	ընդամենը
ԽՍՀՄ	220	229	133	57	37	676
Միաց. Նահանգներ . . .	227	10	182	42	672	1133
Կանադա	110	3	62	23	2	200
Գերմանիա	26	64	63	25	—	178
Ֆրանսիա	63	8	58	12	3	149
Բրիտ. Հնդկաստան .	88	—	—	29	23	140
Արգենտինա	60	1	10	4	75	150
Լեհաստան	13	50	31	16	1	111
Իտալիա	60	2	6	3	30	100
Ռումինիա	30	3	12	17	57	119
Իսպանիա	43	7	6	21	4	81
Հար. Սլավիա	19	2	4	4	38	67
Վենգրիա	19	8	3	5	20	55
Անգլիա	15	—	26	11	—	52
Չեխո-Սլովակիա . . .	10	13	13	11	3	50
Ավստրալիա	45	—	3	1	2	45
Բուլգարիա	11	2	31	3	7	24
Յապոնիա	8	—	2	17	1	28

*) Ռումինիա, Բուլգարիա, Հար. Սլավիա։

Այս աղյուսակը գաղափար է տալիս հացահատիկների համաշխարհային արտադրության մասին։ Ինչպես տեսնում եք, Գերմանիան ավելի շատ հացահատիկ է արտադրում, քան Արգենտինան, բայց նա հացահատիկ չի արտահանում, իսկ Արգենտինան արտահանում է։ Դրա պատճառն, իհարկե, ազգաբնակության մեծությունն է։ Արգենտինայում յուրաքանչյուր շնչին ավելի շատ հացահատիկ է ընկնում, քան Գերմանիայում։

Բացի հինգ գլխավոր հացահատիկներից վորպես սնունդ կարևոր նշանակություն ունի նաև բրինձը, վորի մշակությունը տարածված է գլխավորապես մուսսոնային յերկրներում (Հնդկաչին, Հնդկաստան, Մալայան Արշիպելագ, Յապոնիա և այլն)։ Բրնձի արտահանությամբ առաջին տեղը բռնում է Հնդկաչինը։

Աղյուսակ № 9.

ԲՐՆՁԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (միլիոն կվինտալներով հաշված)

Յերկրները	1909—13	1925
Բրիտ. Հնդկաստան . . .	448	547
Յապոնիա	101	108
Յավա և Մադուրա . . .	57	49
Հնդկաչին	54	58
Կորեա	13	27
Ֆիլիպպիններ	9	13
Ֆորմոզա	6	12
Բրազիլիա	—	8
Միաց. Նահանգներ . .	5	7
Մադագասկար	—	10
Իտալիա	5	6
Ցեյլոն	—	—
Յեգիպտոս	4	3
Աս. Ռուսաստան	3	4
Իսպանիա	2	3

Ցույց տվեք բրինձ արտադրող գլխավոր յերկրները։ Բրնձի արտադրությամբ առաջին տեղը վո՞ր յերկիրն է բռնում։ Հնդկաչինը Հնդկաստանից քիչ բրինձ է արտադրում, բայց Հնդկաչինը արտահանությամբ առաջինն է. ինչո՞վ կարելի յե բացատրել։

Հացահատիկ ներմուծող յերկրներ:

Յեվրոպական յերկրները (բացի իհարկե հացահատիկ արտահանողներից) դրսից կլանում են ահագին քանակությամբ հաց։ Ներմուծվող հացահատիկի բացարձակ քանակությամբ առաջին տեղը բռնում են խիտ ազգաբնակություն ունեցող արդյունաբերական յերկրները (Անգլիան, Գերմանիան, Բելգիան, Ֆրանսիան և այլն)։ յերկրորդ խումբը կազմում են Յեվրոպայի հյուսիսային յերկրները, վորտեղ կլիմայական պայմանները չեն նպաստում հացահատիկների արտադրության (Նորվեգիա, Շվեցիա, Ֆինլանդիա)։ յերրորդ խմբի մեջ մտնում են Միջերկրականի յերկրները (Իտալիան, Իսպա-

նիան), վորտեղ հացահատիկների փոխարեն գերադասում են խաղող և հարավային պտուղներ (նարինջ, ձիթենի, կիտրոն և այլն) մշակել։

Ցույց տվեք հաց ներմուծող յերկրները։

Անգլիան վորտեղից կարող է ստանալ բրինձ, ցորեն և հաճար։

3. ԳԼԽԱՎՈՐ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ

Մարդիկ կերակրվում են վոչ միայն հացով, այլև մսով, ճարպով, կաթով և պանրով։ Այդ պատճառով յերկրագնդի բոլոր յերկրները պահում են մսացու և կաթնատու անասուններ։ Բացի սննդամթերքներից անասնապահությունը տալիս է նաև հում նյութ, որինակ, կաշի և բուրդ, վորոնք կարևոր դեր են կատարում գործարանային արդյունաբերության մեջ։ Բայց շատ յերկրներ սեփական անասուններով չեն կարողանում բավարարել ազգաբնակության կարիքներին և ստիպված են դրսից ներմուծել թե կաթնամթերք և թե կաշի ու բուրդ։ Այսպիսով անասունները, միսը, կաթնամթերքը և բուրդը հանդիսանում են համաշխարհային առևտրի առարկա։

Անասնապահությունը Յեվրոպայում: Պատերազմից առաջ Յեվրոպայում ամեն 1000 մարդուն ընկնում եր մոտ 300 գլուխ խոշոր յեղջ. անասուն, 170 խոզ և 380 վոչխար։ Հասկանալի յե, ի հարկե, վոր տարբեր յերկրներում նկատվում եյին շեղումներ այս ու այն կողմը, նայած բնական պայմաններին և ժողովրդի տնտեսական դրության։

Բոլորովին բացառիկ դրություն ունեն Դանիան, Նորվեգիան և Շվեդիան, վորտեղ 1000 բնակչին ավելի շատ անասուն է ընկնում, քան Յեվրոպայի վերը հիշած միջին թիվը։ Դա բացատրվում է նրանով, վոր այդ յերկրները հացահատիկների մշակության համար հարմար չեն և այդ պատճառով իրենց տրամադրության տակ ունեն ընդարձակ արոտատեղեր։ Շվեյցարիան, Ֆրանսիան, Ռումանիան, Հոլլանդիան, ԽՍՀՄ, Գերմանիան և Անգլիան մոտենում են հիշած միջին թվերին։ Իսկ Իտալիան և Իսպանիան, ամառային յերաշտների հետևանքով, յեղջյուրավոր անասուններով ամենաաղքատն են։

Աղյուսակ № *10*

ԹԱՐՄ ՅԵՎ ՊԱՂԱԾՈ ՄՍԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԳԼԽԱՎԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ 1919 Թ.

(հազար տոններով հաշված)

Ավստրալիա	1146
Միաց. Նահանգներ	965
Արգենտինա	621
Նոր Զելանդիա	203
Կանադա	178
Ուրուգվայ	134
Բրազիլիա	85
Հոլլանդիա	31

Աղյուսակ № *11*

ՄՍԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ 1919 Թ.

(հազար տոններով հաշված)

Անգլիա	1300
Ֆրանսիա	465
Իտալիա	207
Գերմանիա	170
Հոլլանդիա	48
Շվեդիա	39
Նորվեգիա	28
Յեգիպտոս	12

Յեվրոպայի առանձին յերկրներում գործածվող մսի քանակը կախված է վոչ միայն այդ յերկրների ազգաբնակության մեծությունից, այլ և միս գործածելու սովորությունից։ Անգլիացիները և գերմանացիները յեվրոպացիների մեջ ամենաշատ միս գործածողներն են. պատերազմից առաջ (1913 թ) յուրաքանչյուր անգլիացի մեկ տարվա ընթացքում գործ եր ածում 60 կիլոգրամ միս, իսկ գերմանացին՝ 50 կիլոգրամ, մինչդեռ իսպանացին, ռուսը և իտալացին ընդամենը 20—25 կիլոգրամ։

Արևմտյան Յեվրոպայի բոլոր յերկրները (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Շվեյցարիա) ներմուծում են միս, իսկ Դանիան, ընդհակառակը, միս արտահանող կարևոր յերկրներից մեկն է։ Վորոշ չափով միս արտահանում են նաև Հոլլանդիան և Շվեդիան։ Միս ներմուծող յերկրների մեջ առաջին տեղը բռնում է Անգլիան։

Իսպանիան և Ռումանիան բավարարվում են սեփական մսով։

Համաշխարհային քարտեզի վրա ցույց տվեք միս արտահանող և միս ներմուծող գլխավոր յերկրները։

Անասնապահության արտաեվրոպական խոշոր կենտրոնները: Յեվրոպայի մսի և անասնապահական պրոդուկտների պակասորդն ստացվում է Հյուս. Ամերիկայից, Լա-Պլատյան յերկրներից (Արգենտինա, Ուրուգվայ), Հարավ-Աֆրիկյան Միությունից և Ավստրալիայից։

Յեվրոպային միս մատակարարող յերկրների մեջ առաջին տեղը բռնում են Միաց. Նահանգները, վորոնք արտահանում են ահագին քանակությամբ մսի կոնսերվներ, խոզի և տավարի միս, ապուխտ, ճարպ և այլն։ Միաց. Նահանգների հետ մրցում է Կանադան, վորն արտահանում է մսեղեն և ճարպային պրոդուկտներ։ Ուրուգվայը արտահանում է յուր անասնապահության արտադրանքի (պրոդուկցիայի) 90%-ը։ Արգենտինայում պատերազմի ժամանակ անասնապահական պրոդուկտների արտահանությունն ավելի մեծ արժեք եր տալիս քան թե հացահատիկները։ Ավստրալիան և Նոր Զելան-

դիան մատակարարում են վոչխարի միս և ճեղջյուրավոր անասունների պրոդուկտներ:

Այդ յերկրների արտահանությունը մեծ չափերի հասավ մանավանդ այն ժամանակ, յերբ սկսեցին միսը սառեցնել: Շնորհիվ այս հանգամանքի հնարավոր յեղավ միսը փոխադրել հեռավոր յերկրներ, նույն իսկ հասարակածի վրայով:

Ցույց տվեք միս արտահանող գլխավոր յերկրները:
Գտեք այն ճանապարհները վորով տեղափոխում են միսն ու մսեղենը:

Կաթնամթերքներ: Յուղի արտադրությամբ առաջին տեղը բռնում է Դանիան. այնուհետև գալիս են Ավստրալիան, Նոր Զելանդիան, Հոլլանդիան, Շվեդիան, Ֆինլանդիան և Արգենտինան, վորոնց արտահանությունը տարեց-տարի աճում է: Մեծ քանակությամբ յուղ արտահանվում է և Արևմտյան Սիբիրից, վորի յուղը հայտնի յե «սիբիրական յուղ» անունով: Համաշխարհային շուկային պանիր մատակարարող յերկրների մեջ առաջին տեղը բռնում են Հոլլանդյան, Նոր Զելանդիան և Կանադան. վերջինս պանրի արտահանությանը մեծ արժեք է տալիս: Յեվրոպական յերկրների մեջ Շվեյցարիան և Հոլլանդիան պանրի արտահանությամբ բռնում են առաջին տեղը:

Կաթնամթերքների ամենամեծ սպառողը Անգլիան է, այնուհետև գալիս է Գերմանիան, ապա մյուս յերկրները:

Աղյուսակ № 12

ԿԱԹԻ ՅԵՎ ՍԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ 1925 Թ.
(Հազար տոններով հաշված)

Յերկրներ	Թարմ	Պահածո
Հոլլանդիա	32,5	118,7
Շվեյցարիա	17,0	30,6
Դանիա	1,8	26,7
Անգլիա	0,0	6,6
Չեխո-Սլովակիա	49,2	0,5
Միացյալ Նահանգներ	3	67,0
Կանադա	381	18,4
Ավստրալիա	—	13,2
Նոր Զելանդիա	—	5,7

Աղյուսակ № 13

ԿԱԹԻ ՅԵՎ ՍԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ 1925 Թ.
(Հազար տոններով հաշված)

Յերկրներ	Թարմ	Պահածո
Գերմանիա	56,3	12,9
Անգլիա	7,0	115,6
Ավստրիա	43,1	0,3
ԽՍՀՄ	0,0	0,0
Ֆրանսիա	11,9	0,0
Դանիա	0,0	0,0
Միացյալ Նահանգներ	477	2,1
Յապոնիա		4,1

Աղյուսակ № 14

ՅՈՒՂԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ 1926 Թ.
(Հազար տոններով հաշված)

Դանիա	132,5
ԽՍՀՄ	27,2
Հոլլանդիա	45,6
Շվեդիա	15,1
Ֆինլանդիա	13,2
Արգենտինա	28,1
Ավստրալիա	37,7
Նոր Զելանդիա	56,3

Աղյուսակ № 15

ՅՈՒՂԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ 1926 Թ.
(Հազար տոններով հաշված)

Անգլիա	295,6
Գերմանիա	97,8
Ֆրանսիա	6,8
Բելգիա	2,3
Շվեյցարիա	7,1
Միացյալ Նահանգներ	3,6

Աղյուսակ № 16

ՊԱՆՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ 1926 Թ.
(Հազար տոններով հաշված)

Հոլլանդիա	84,2
Շվեյցարիա	28,1

Իտալիա	33,1
Ֆրանսիա	14,3
Դանիա	7,0
Կանադա	61,0
Նոր Զելանդիա	74,3

Աղյուսակ № 17

ԴԱՆՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ 1926 Թ.

(հազար տոններով հաշված)

Անգլիա	153,1
Ֆրանսիա	15,7
Գերմանիա	64,1
Բելգիա	23,1
Ավստրիա	2,7
Միաց. Նահանգներ	35,6
Յեգիպտոս	3,1

Բուրդ: Բացի մսից և կաթնամթերքից անասնապահությունը տալիս է նաև կաշի, աղիք, յեղջյուր, վոսկոր, մազ և բուրդ, վորոնց մեջ յուր նշանակությամբ առաջին տեղը բռնում է վոչխարի բուրդը: Բրդի համաշխարհային կարիքը ծածկվում է ավելի քան կես միլիարդ վոչխարով:

Վոչխարների քանակով առաջին տեղը բռնում է Ավստրալիան, վորը 1924 թ. տեղեկությունների համաձայն ուներ 88 միլիոն վոչխար, իսկ Նոր Զելանդիայի հետ 100 միլլիոնից էլ ավել. այնուհետև աչքի յեն ընկնում Արգենտինան (30 միլիոն) և Հար. Աֆրիկյան Միությունը (31 միլիոն):

Բրդի արտադրությունը 1923 թ. կազմում էր 1,3 միլ. տոնն, վորի $^1/_3$-ը ավել է Ավստրալիան, մոտ $^1/_6$-ը Արգենտինան և Ուրուգվայը. այնուհետև գալիս են՝ Միաց. Նահանգները, Հար. Աֆրիկան, ԽՍՀՄ, Անգլիան և Իսպանիան: Բայց համաշխարհային շուկայի համար, վորպես բուրդ արտահանող յերկրներ կարևոր դեր կատարում են միայն Ավստրալիան, Արգենտինան, Հար. Աֆրիկան և Ուրուգվայը (տես նկ. 22.):

Բուրդը ներմուծում են արևմտյան Յեվրոպայի արդյունաբերական յերկրները, մանավանդ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Բելգիան:

Աղյուսակ № 18

ԲՐԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ 1925 Թ.

(տոններով հաշված)

Ավստրալիա	333.000
Միաց. Նահանգներ	147.000
Արգենտինա	125.000
ԽՍՀՄ (Յեվր. մասը)	87.000
Բրիտ. Հար. Աֆրիկա	82.000
Նոր Զելանդիա	77.000
Անգլիա	50.000
Ուրուգվայ	50.000
Իսպանիա	43.000
Ընդ. ամբողջ յերկրագնդի վրա	1.330.000

Անասնապահական գլխավոր յերկրները վորո՞նք են: Ի՞նչ են նրանք արտահանում: Ասացեք, վո՞ր յերկրներն են շատ միս, յուղ, պանիր կամ բուրդ արտահանում: Անասնապահակ. պրոդուկտներն ու՞ր են արտահանվում:

Աղյուսակ № 19

ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

(Հազարներով հաշված)

Յերկրներ	Տարի	Ձի	Էշ և Ջորի	Խոշ. յեղջ. անասուն	Վոչխար	Այծ	Խոզ	Ընդամենը խոշոր յեղջ. անասուններով հաշված*)
Հնդկաստան	1922	1684	1444	145000	22085	27383	—	153195
ԽՍՀՄ	1925	26800	—	58900	10102	100	17700	113735
Միաց. Նահանգներ	1925	17589	5411	64928	39134	—	54234	111489
Արգենտինա	1922	9400	—	37065	30672	—	1437	54591
Բրազիլիա	1920	5254	1865	34271	7933	5087	16168	48429
Գերմանիա	1925	3915	30	17183	4742	3792	16160	27964
Ավստրալ. Միություն	1924	2292	17	13306	88979	230	986	26080
Ֆրանսիա	1925	2880	461	14373	10537	1378	5793	21563
Կանադա	1925	3551	8	9307	3	676	4426	16116
Հար. Աֆր. Միութ.	1923	922	918	9607	31418	8324	914	15652 [1]
Լեհաստան	1922	3201	—	7895	2178	—	5171	14208
Անգլիա	1925	1442	9	8034	23577	49	2910	13291
Ռումինիա	1925	1875	12	5219	12950	494	3088	10917
Իտալիա	1918	804	1254	6186	11752	3083	2337	10087
Ուրուգվայ	1916	584		7802	11484		304	9900
Իսպանիա	1924	634	2147	3436	18469	3804	4160	8727 [2]
Հոլ. Հնդկաստան	1921	702	—	6934	954	1954	2902	8504
Հար. Սլավիա	1925	1106	110	3795	7907	1811	2802	7181
Նոր Զելանդիա	1925	327	—	3504	24548	19	440	6565
Պարագվայ	1918	490	38	5500	600	93	87	6345
Չեխո-Սլովակիա	1921	591	—	4377	986	1221	2053	5997
Թյուրքիա	1923	350	411	3551	13524		—	5634 [3]
Շվեդիա	1920	728	—	2736	1568	113	1011	4249
Դանիա	1925	538	—	2756	265	27	2546	4229
Վենգրիա	1925	876	7	1920	1891	60	2633	4091
Բուլղարիա	1920	399	182	1877	8923	1332	1090	3864
Ճապոնիա	1921	1511	—	1437	10	142	499	3844
Մեքսիկա	1924	391	323	2188	1728	2866	1760	3835
Հոլլանդիա	1921	364	—	2063	668	272	1519	3083
Ավստրիա	1923	282	—	2163	597	382	1473	3052
Չիլի	1925	324	67	1918	4094	357	247	2944
Ֆինլանդիա	1924	403	—	1864	1485	12	376	2812
Բելգիա	1923	243	—	1603	126	32	1176	2277
Հունաստան	1921	177	371	689	5789	3717	494	2192

*) Մեկ խոշոր յեղջ. անասունը = $^2/_3$ ձիու = 2 էշի կամ ջորու = 4 խոզի = 10 վոչխարի կամ այծի:

[1]) Բացի դրանից 241 հազար ջայլամ:

[2]) Բացի դրանից 4 հազար ուղտ:

[3]) Բացի դրանից 52 հազար ուղտ:



Նկ. 22. Բրդի արտադրության գլխ. շրջանները և տեղափոխության ճանապարհները:

4. ՑԵՐԿՐԱԳՆԴԻ ՊԼԱՆՏԱՑԻՈՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Արեվադարձային յեվ մերձարեվադարձային գյուղատնտեսության պրոդուկտները:

Մի շարք սնունդ կամ հում նյութ տվող բույսեր, վորոնք կուլտուրական աշխարհում ամենօրյա գործածության առարկա յեն դարձել, կարող են մըշակվել միմիայն տաք յերկրներում: Այդպիսի պրոդուկտներից են սուրճը, կակաոն, թեյը, շաքարը, ծխախոտը, բամբակը, կաուչուկը և բուսական յուղերը: Այդ պրոդուկտները տվող բույսերից մի քանիսը շատ վաղուց մշակվում են տեղացիների ձեռքով, օրինակ շատ հին ժամանակներից սկսած թեյը մշակվում է Չինաստանում, բամբակը՝ Հնդկաստանում: Բայց դրանց մեծ մասը, օրինակ, այն բույսերը, վորոնք տալիս են կակաո, ծխախոտ, կաուչուկ և արմավենու յուղ, առաջին անգամ սկսեցին մշակել յեվրոպացիները: Համարյա բոլոր այն տնկարանները, վորոնց նպատակն է համաշխարհային շուկա հանել արևադարձային և մերձարևադարձային գյուղատնտեսության պրոդուկտները, գտնվում են յեվրոպացի կապիտալիստների ձեռքում: Բայց այդ տնկարանները գտնվում են այնպիսի յերկրներում, վորոնց կլիման յեվրոպացին չի կարողանում տանել, այդ պատճառով յեվրոպացի կապիտալիստը յուր տնկարաններում աշխատեցնում է նեգրերին կամ դեղին ցեղին պատկանող չինացիներին, մալայացիներին և այլն: Հիշած պրոդուկտներից յերկուսը, ճակնդեղի շաքարը և ծխախոտը ստացվում են նաև բարեխառն յերկրներում:

Սուրճ:

Սա կուլտուրական ժողովուրդների մեջ ամենատարածված խմիչքներից մեկն է: Հայրենիքը Աֆրիկան է: Սուրճի համաշխարհային բերքը մեկ միլիոն տոննից անց է: Այդ քանակի 92%-ը ստացվում է Ամերիկայում. միայն Բրազիլիան տալիս է ավելի քան 70%: Բրազիլիայի Սանտոս և Րիո-դե-Ժանեյրո նավահանգիստները, վորոնց վրայով արտահանվում է սուրճը, համաշխարհային նշանակություն ունեն: Սուրճի արտադրությամբ Բրազիլիայից հետո յերկրորդ տեղը բռնում է Կոլումբիան. այնուհետև աչքի յեն ընկնում Մեքսիկան, Կենտր. Ամերիկայի հանրապետությունները և Հայիտին: Վորակով առաջին տեղը բռնում է Արաբիայի, ապա Յավայի (Մալայան արշիպելագ) և Կենտր. Ամերիկայի սուրճը:

Աղյուսակ № 20

ՍՈՒՐՃԻ ԲԵՐՔԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ 1926 Թ.

(հազար տոններով հաշված)

Բրազիլիա	847
Կոլումբիա	120
Վենեցուելա	53,6

Գվատեմալա	38,1
Հայիտի	30,0
Սալվադոր	46,0
Հոլլանդ. Հնդկաստան	70,0
Ցամայկա	33,7
Համաշխ. բերքը	1349,6

Շատ սուրճ գործ է ածվում Հոլլանդիայում (մեկ բնակչին 5,6 կիլոգրամ), Միաց. նահանգներում (մեկ բնակչին 5 կիլոգրամ) և Բելգիայում (5 կիլոգրամ), շատ քիչ են գործածում անգլիացիները (0,3)։

Կակաո

Կակաոն յեվրոպացիներին հայտնի դարձավ 16-րդ դարում։ Մեքսիկայի բնակիչները ջրի և զանազան քաղցրեղենների խառնուրդից պատրաստում եյին մի տեսակ խմիչք, վորին նրանք տալիս եյին «շոկոլատլ» անունը, այստեղից էլ առաջ է յեկել շոկոլադ բառը։

Կակաոյի արտադրությամբ առաջին տեղը բռնում է Աֆրիկան (Գվինեյի ծովափը — Տոգո, Նիգերիա, Կամերուն), իսկ յերկրորդ տեղը՝ արևադարձային Ամերիկան (Բրազիլիա, Եկուադոր)։ Ասիայում բավականաչափ կակաո արտադրում են Ցեյլոնը և Հոլլանդական Հնդկաստանը։

Համաշխարհային շուկա արտահանվող կակաոյի գլխավոր սպառողը Միաց. նահանգներն են, վորոնք ձեռք են բերում ամբողջ բերքի $^1/_3$-ը։ Յերկրորդ տեղը բռնում են Գերմանիան և Անգլիան։

Կակաոն վո՞ր յերկրներում են մշակում։
Կակաոյի գործածությամբ վո՞ր յերկրներն են աչքի ընկնում։
Ցույց տվեք կակաո արտադրող և սպառող գլխավոր յերկրները։

Թեյ։

Թեյը մշակվում է գլխավորապես մուսսոնների յերկրներում — Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում և Ցավայում. հենց այս յերկրներն էլ արտադրում են համաշխարհային շուկայի համարյա ամբողջ թեյը։ Թեյի արտահանությամբ առաջին տեղը բռնում է Հնդկաստանը (առաջ Չինաստանն էր)։

Աղյուսակ № 21

ԹԵՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ 1925 Թ.

(հազար տոններով հաշված)

Չինաստան	48
Հնդկաստան	152
Ճապոնիա	22
Ցեյլոն	95
Հոլ. Հնդկաստան	50
Մնաց. յերկրները	1
Ընդամենը	368

Թեյ սպառող յերկրների մեջ աչքի յեն ընկնում Անգլիան, Կանադան և Ավստրալիան։ Լոնդոնը թեյի գլխավոր շուկան է։ Մեծ քանակությամբ թեյ ներմուծում է նաև ԽՍՀՄ։

Ծխախոտ։

Ծխախոտը յեվրոպացիներին հայտնի դարձավ Ամերիկայի գյուտից հետո և կարճ ժամանակում գրավեց ամբողջ աշխարհը։ Ծխախոտի ամենալավ տեսակներն աճում են տաք գոտում. Վեստ-Ինդիայի (Ամերիկայում) և Ոստ-Ինդիայի (Ասիայում) կղզիները տալիս են ամենալավ ծխախոտը։ Կուբայի ծխախոտը առաջինն է այս տեսակետից։

Ծխախոտի արտադրությամբ առաջին տեղը բռնում են Միաց. Նահանգները, վորոնք տալիս են համաշխարհային բերքի մոտ $^1/_3$-ը։ Կենտրոնական Ամերիկայում բացի Մեքսիկայից մեծ նշանակություն ունի նաև Պորտո-րիկո կղզին, իսկ Հար. Ամերիկայում մեծ բերք տալիս է Բրազիլիան։ Ծխախոտի մեծ բերք ստացվում է նաև Հնդկաստանում, վորը ծխախոտի արտադրությամբ յերկրորդ տեղն է բռնում, բայց համարյա ամբողջ ծխախոտը ծխվում է յերկրի ներսը։ Մալայան արշիպելագի կղզիներից ընտիր ծխախոտ արտադրում են Սումատրան և Ցավան։ Յեվրոպայում ծխախոտ մշակում են հարավային ԽՍՀՄ-ում, Վենգրիայում և Բալկանյան թերակղզում։

Ծխախոտի արտադրությամբ հայտնի յե նաև փոքր Ասիան։ Կուլտուրական ժողովրդների մեջ մեծ քանակությամբ ծխախոտ ծխում են ամերիկացիները, ապա բելգիացիները և գերմանացիները։

Բամբակ։

Բամբակը թելատու բույսերի մեջ առաջինն է։ Գործվածքների մեծ մասը պատրաստվում է բամբակից, այդ պատճառով բամբակ արտադրող յերկրները կովախնձոր են հանդիսանում իմպերիալիստական յերկրների համար։

Աղյուսակ № 22

ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (1925/26 թ)

Միաց. Նահանգներ	3,492	հազար տոնն
Հնդկաստան	1.018	» »
Յեգիպտոս	353	» »
ԽՍՀՄ	160	» »
Բրազիլիա	130	» »
Մնացած յերկրները	365	» »
Ամբողջ յերկրագնդի վրա	5.961	հազար տոնն

Բամբակի արտադրությամբ առաջին տեղը բռնում են Միաց. Նահանգները, վորոնք տալիս են համաշխարհային բերքի մոտ $^3/_5$-ը։ Գալվեստոնը և Նոր Օրլեանը (Մեքսիկայի ծոցի յեզերքին) բամբակի արտահանության ամենակարևոր նավահանգիստներն են։



Նկ. 23. Բամբակի արտադրության գլխ. շրջանները և տեղափոխության ճանապարհները:

Բրիտանական Հնդկաստանը արտադրում է համաշխարհային բերքի $^{1}/_{5}$-ը և կարևոր նշանակություն ունի Անգլիայի համար: Արտահանությունը կատարվում է Բոմբեյի վրայով:

Եգիպտոսը Աֆրիկայի բամբակի ամենահին շրջանն է: Նա գտնվում է Նեղոսի հովտում և ունի բամբակի մշակության համար ամենալավ հողը ամբողջ աշխարհում: Բամբակի բոլոր տեսակներից ամենաընտիրը համարվում է յեգիպտականը: Անգլիացիները հետզհետե ընդարձակեցին բամբակի ցանքսերը, այնպես վոր այժմ Եգիպտոսի բոլոր ցանքսերի $^{1}/_{4}$-ը բռնված է բամբակով:

Բամբակի արտադրությամբ մեծ նշանակություն ունեն նաև Չինաստանը, Ուզբեկստանը (ԽՍՀՄ) և Արեվելյան Բրազիլյան:



Նկ. 24. Անտառի գլխավոր շրջանները և տեղափոխության ճանապարհները*):

Համարյա բոլոր յեվրոպական յերկրները բամբակ են ներմուծում բայց վերջերս բամբակի համաշխարհային արդյունագործության մեջ տեղի ունեցան մի շարք այնպիսի փոփոխություններ, վորոնք դժվարացրին այդ կարևոր հում նյութի ներմուծման գործը: Բանը նրանումն է, վոր բամբակ արտադրող արտայեվրոպական յերկրներն սկսել են ուժեղացնել տեղական տեքստիլ արդյունագործությունը: 1910—11 թվականներին Միաց. Նա-

*) Անտառների պայմ. նշանները սխալմամբ հակառակ են դրված:

հանգների ներսում մնացել է սեփական բամբակի ամբողջ բերքի 1/3-ը, իսկ 1915—20 թվականներին արդեն կեսը։ Չինաստանը 1916—21 թվականների ընթացքում յուր իլիկների թիվը քառապատկեց, իսկ Հնդկաստանը վերամշակեց յուր բամբակի բերքի կեսից ավելին։ Դրանով է բացատրվում այն, վոր Անգլիան, Ֆրանսիան աշխատում են բամբակի մշակությունը զարգացնել իրենց գաղութներում, իսկ Գերմանիայի համար գաղութների խնդիրը դառնում է կենսական։

Բամբակի մշակության վրա մեծ ուշադրություն է դարձնում նաև ԽՍՀՄ, վորտեղ բամբակի բերքը տարեց տարի մեծանում է։

5. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հանքային արդյունաբերություն ասելով հասկանում ենք նախ յերկրից զանազան հանքեր հանելը, արտադրելը և յերկրորդ՝ զանազան հանքերից հալման միջոցով այս կամ այն մետաղը յուր միացություններից զատելը (որինակ յերկաթը, պղինձը)։

Կասկած չկա, վոր հանքային արդյունաբերությունը խոշոր դեր է կատարում ժամանակակից տնտեսության մեջ։ Նա կազմում է արդյունագործության բոլոր ճյուղերի հիմքը, վորովհետև տալիս է անհրաժեշտ նյութ զանազան մեքենաներ և շենքեր պատրաստելու համար, սկսած կամուրջներից, շոգենավերից և վերջացրած դանակով, ասեղով։ Բայց վորովհետև հանքեր ստանալն ու նրանց մշակելը պահանջում է մի կողմից բարձր տեխնիկա, գիտություն, իսկ մյուս կողմից՝ խոշոր կապիտալ ու մեծ քանակությամբ բանվորներ, այդ պատճառով հանքային արդյունաբերությունը զարգանում է այն յերկրներում, վորտեղ ազգաբնակությունը բավական խիտ է և կուլտուրապես առաջադեմ։

Զանազան հանքային հարստությունների մեջ ժամանակակից խոշոր արդյունագործության համար առանձնապես կարևոր նշանակություն ունեն քարածուխը, յերկաթը և նավթը։

Քարածուխ։ Մինչև XIX-րդ դարի 90-ական թվականները քարածխի արտադրությամբ առաջին տեղը բռնում եր Անգլիան, իսկ այժմ առաջնությունը պատկանում է Միաց. Նահանգներին, վորոնք 1925 թ. տվին քարածխի համաշխարհային արտադրության 39%-ը։

Քարածխի արտադրությունը առանձին յերկրներում հետևյալ պատկերն ունի։

Աղյուսակ № 23

ՔԱՐԱԾԽԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Միլիոն տոններով հաշված)

Յերկրներ	1875	1900	1913	1924	1925	1926
Միաց. նահանգներ . . .	48	245	517	506	531	602
Անգլիա	135	229	292	275	248	127
Գերմանիա	49	150	277	243	113	285
Ֆրանսիա	17	33	71	45	48	53
ԽՍՀՄ	1	16	36	15	24	26
Բելգիա	15	23	23	23	23	25
Մնացած յերկրները . .	20	71	156	270	186	—
Ընդամենը	285	767	1442	1478	1375	—

Այստեղ կարևոր է շեշտել մի հանգամանք։ Աղյուսակը ցույց է տալիս, վոր ԽՍՀՄ-ում քարածխի արտադրությունը 1924, 1925, 1826 թվականներին թեև դանդաղորեն, բայց և այնպես հառաջադիմել է։ Այդ առաջադիմությունը ավելի աչքի կընկներ, յեթե Դոնբասի քարածխի արդյունաբերության մեջ բույն չդներ ինժիներներից և տեխնիկներից կազմված մի հակահեղափոխական կազմակերպություն, վորը նպատակ եր դրել քայքայել ածխի արդյունաբերությունը և ինտերվենցիայի համար հող պատրաստել (Շախտինսկի գործը)։ Այդ ինժիներները և տեխնիկները իրենց կործանարար աշխատանքի համար արտասահմանյան ռուս և օտար կապիտալիստներից դրամական մեծ գումարներ եյին ստանում։

1875 և 1925 թվականներին քարածխի համաշխարհային պրոդուկցիան վո՞րքան եր։ 50 տարվա ընթացքում քարածխի պրոդուկցիան քանի՞ անգամ է մեծացել. ինչո՞վ բացատրել քարածխի արտադրության այդ խոշոր աճումը։

Քարածխի արտադրությամբ առաջին տեղը վո՞ր յերկիրն է բռնում։

Ցույց տվեք քարածուխով հարուստ յերկրները (Աշխ. Ատլաս, Համաշխ. քաղաք. քարտեզ)։

ԽՍՀՄ քարածխի համաշխ. արտադրության վո՞ր տոկոսն է տալիս։ Քարածուխը ԽՍՀՄ-ի վո՞ր մասերում է տարածված. ցույց տվեք։

Աշխատանք։ Գծեցեք 1926 թ. քարածխի համաշխ. արտադրության դիագրամը. թվերը վերցրեք վերը բերած աղյուսակից։

Ստացվող քարածխի մեծ մասը գործ է ածվում հենց արտադրող յերկրի ներսում։ Քարածխով աղքատ, կամ բոլորովին քարածուխ չունեցող յերկրներին քարածուխ մատակարարողների մեջ առաջին տեղը Անգլիան է բռնում։ Դա բացատրվում է նրանով, վոր այդպիսի ծանր բեռների փոխա-



Նկ. 25. Քարածխի արտադրության աճումը պատերազմից առաջ։

գրությունը կարելի յե կատարել միմիայն ջրային ճանապարհներով։ Այս տեսակետից Անգլիայի քարածխի հանքատեղերը բացառիկ հարմար դիրք ունեն. նրանց համարյա մեծ մասը գտնվում է ծովափերին։ Յերբեմն էլ քարածուխը բալլաստի դեր է կատարում. դա լինում է այն դեպքում, յերբ նավը փոխադրում է թանգարժեք ապրանք (որինակ, կարի ասեղներ), բայց բավականաչափ ծանրաբեռնված չէ.



Նկ. 26. Քարածխի արտադրության գլխ. կենտրոնները և տեղափոխության ճանապարհները։

Նավթ։ Նավթը գործ է ածվում լուսավորության, տաքացման և մեքենաների մասերը յուղելու համար։ Նա բացառիկ նշանակություն ստացավ մանավանդ այն ժամանակ, երբ սկսեցին նրան գործածել շոգենավերի և ավտոմոբիլային ու օդային տրանսպորտի մեջ։ Այս հանգամանքը խոշոր ազդեցություն ունեցավ նավթի արտադրության վրա, որը 1900 թվականից մինչև 1923 թ. մեծացավ ավելի քան վեց անգամ։

Աղյուսակ № 24.

НАВТИ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (միլիոն մետր. տոններով)

Երկրներ	1900		1913		1922		1925		1926
	Բաց.	%	Բաց.	%	Բաց.	%	Բաց.	%	Բացարձակ
Ռուսաստ. (ԽՍՀՄ)	10,3	52,1	9,1	17,4	4,5	3,9	7,5	5,1	8,8
Միաց. Նահանգ.	8,3	41,9	33,1	63,2	75,9	65,2	103,5	70,4	105,2
Մեքսիկա . . .	—	—	3,7	7,1	24,8	21,2	16,9	11,5	13,5
Պարսկաստան . .	—	—	—	—	3,0	2,6	4,7	3,2	4,7
Հոլլանդ. Հնդկաստ.	0,2	1,0	1,5	3,0	2,3	1,9	3,1	2,1	3,1
Ռումանիա . . .	0,2	1,0	1,9	3,6	1,4	1,2	2,3	1,6	3,2
Վենեցվելա . . .	—	—	—	—	0,3	—	3,1	—	5,3
Մնաց. երկրները	0,8	4,0	3,0	5,7	4,6	4,0	9,0	6,1	7,1
Ընդամենը .	19,8	100	52,3	100	119,6	100	148,8	100	150,9

Նավթի արտադրությունը գլխավորապես ո՞ր երկրներում է կենտրոնացած։
1900 թ. ո՞րքան նավթ է ստացվել ամբողջ աշխարհում, իսկ 1925 թվականին։
Այժմ նավթի արտադրությամբ առաջին երկիրը ո՞րն է։
1900 թվականին Ռուսաստանը ո՞րերորդ տեղն էր բռնում։
Ցույց տվեք նավթ արտադրող երկրներից գլխավորները (Աշխ. ատլաս, քարտեզ)։
ԽՍՀՄ-ի քարտեզրամի օգնությամբ գտեք Խ. Միության այն վայրերը, որտեղ նավթ է ստացվում (Աշխ. ատլաս, ԽՍՀՄ—հանքային հարստությունները)։
Աշխատանք: Կազմեցեք 1925 թ. ընթացքում արտադրված նավթի դիագրամը։

Երկաթ։ Մենք ասացինք, որ երկաթը բոլոր մետաղներից ամենակարևորն է։ Առօրյա կյանքում գործածվող գործիքները (դանակը, ասեղը, կացինը և այլն), գործարանային հսկայական մեքենաները, ծովային շոգենավերը, երկաթուղու ռելսերը, շոգեկառքը և այլն երկաթից են պատրաստվում։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ երկաթի արտադրությունը վերջերս հսկայական չափերի յեհասել։

Աղյուսակ № 25.

ՅԵՐԿԱԹԱՀԱՆՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (միլիոն տոններով հաշված)

	1900 թ.	1913 թ.	1924 թ.	1925 թ.
Միաց. Նահանգներ	14,0	62,9	54,8	62,9
Գերմանիա	8,5	28,6	5,1	5,9
Ֆրանսիա	2,7	21,5	29,0	35,7
Անգլիա	9,1	16,2	11,0	10,3
Իսպանիա	0,2	9,8	3,4	4,4
ԽՍՀՄ	2,9	9,2	0,9	2,2
Շվեդիա	0,5	7,4	6,4	8,2



Նկ. 27։ Քարածխի, երկաթի և նավթի արտադրության գլխավոր կենտրոնները։

Աղյուսակ № 26.

ՉՈՒԳՈՒՆԻ ՅԵՎ ՊՈՂՊԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԼՈՒՄԸ 1926 Թ. (հազար տոններով հաշված)

	Չուգուն	Պողպատ
ԽՍՀՄ	2436	3120
Գերմանիա	9643	12336
Անգլիա *)	2484	3612
Ֆրանսիա	11016	10116
Միաց. Նահանգներ	39696	47892
Համաշխարհ. արտադրությունը . .	78100	92500

Քարտեզի վրա ցույց տվեք երկաթահանք արտադրող գլխավոր երկրները։
Յերկաթահանքի արտադրությամբ առաջին տեղը ո՞ր երկիրն է բռնում։
Ամբողջ երկրագնդի վրա 1925 թ. ո՞րքան չուգուն և պողպատ է հալվել։
Ո՞ր երկրներն են շատ պողպատ և չուգուն հալում։ Դրանց մեջ առաջին տեղը ո՞ր երկիրն է բռնում։
ԽՍՀՄ-ի ո՞ր մասերում են պողպատ ու չուգուն հալում։
Աշխատանք: Գծեցեք պողպատի և երկաթի արտադրության դիագրամը (վերը բերած աղյուսակի հիման վրա)։

*) Անգլիայում 1926 թվականին հանքագործ բանվորները գործադուլ էյին հայտարարել, այդ պատճառով Անգլիայի հանքային արդյունաբերությունը այդ տարին ավելի քիչ պողպատ և երկաթ տվեց, քան նախորդ տարիները։

Մնացած հանքերը։ Յերկրի բազմազան հանքային հարստությունների մեջ կարևոր նշանակություն ունեն նաև մանգանը, վոսկին, արծաթը, պղինձը, պլատինը։

Աղյուսակ № 27.

ՄԱՆԳԱՆԻ ՀԱՆՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1925 Թ.

Հնդկաստան	853	հազար տոնն
Բրազիլիա	327	» »
ԽՍՀՄ	570	» »
Իսպանիա	36	» »
Միաց. Նահանգներ	1.536	» »



Նկ. 28. Չուգունի արտադրության աճումը պատերազմից առաջ։

Աղյուսակ № 28.

ՊՂՆՁԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1926 Թ. (հազար տոններով)

Միաց. Նահանգներ	892,8
Չիլի և Պերու	231,3
Յապոնիա	65,3
Կանադա	33.0
Մեքսիկա	53,3
ԽՍՀՄ	13,1
Մնացած յերկրները	210,2
Ամբողջ յերկրագնդի վրա	1499,0

Աղյուսակ № 29

ՎՈՍԿՈՒ, ԱՐԾԱԹԻ ՅԵՎ ՊԼԱՏԻՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1926 Թ.

(Կիլոգրամներով հաշված)

	Վոսկի	Արծաթ	Պլատին (1925 թ.)
Հարավային Աֆրիկա (Տրանսվաալ, Նատալ և Կապլանդ)	309.880	30.520	—
Միացյալ Նահանգներ	71.168	1.894.763	13
Կանադա	54.380	697.824	67
Մեքսիկա	24.032	3.057.194	—
Ավստրալիա	16.155	330.257	45
ԽՍՀՄ	33.000	9.331	2.563
Պերու	3.612	656.284	—
Կոլումբիա	3.009	93	1.369
Հնդկաստան	12.240	159.648	—
Ամբողջ յերկրագնդի վրա	600.400	7.557.000	4.269

Վո՞ր յերկրներում է կենտրոնացած մանգանի, պղնձի, վոսկու, արծաթի և պլատինի արտադրությունը։

Ցույց տվեք այդ յերկրները քարտեզի վրա։

Այդ յերկրներից վո՞րն է առաջին տեղը բռնում վոսկով, արծաթով, պղնձով։

6. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսության պրոդուկտներից շատ քչերն են միայն, վոր գործ են ածվում այն վիճակում, ինչ վիճակում վոր ստացվում են։ Նրանց մեծ մասը նախ քան գործածելը յենթարկվում է այս կամ այն վերամշակության։ Այդ վերամշակությունն առաջ արհեստի բնույթ ուներ, բայց հետագայում շոգեմեքենայի և այլ մեքենաների գյուտից հետո նա ընդունեց տնտեսական նոր ձևեր։ Առաջ յեկավ խոշոր գործարանային արդյունաբերություն։ Մարդու տնտեսության այս ձևը կոչվում է արդյունագործություն, յերբեմն էլ «մշակողական արդյունաբերություն»։

Արդյունագործությունը վերամշակության համար պետք է հում նյութ ունենա, այդ պատճառով արդյունագործության այս կամ այն ճյուղը զարգանում է այնտեղ, վորտեղ հում նյութ կա։ Այսպես օրինակ, Գերմանիայում, Միացյալ Նահանգներում յերկաթագործությունը և մեքենաներ պատրաստելը զարգացել է հենց այն շրջաններում, վորտեղ շատ յերկաթահանք կա։

Բացի հում նյութից արդյունագործությունը մեքենաներ շարժելու համար պետք է ունենա վորևե էներգիա։ Ժամանակակից խոշոր արդյունագործության մեջ չափազանց մեծ դեր է կատարում շոգեմեքենան, վորն աշխատեցնելու համար քարածուխ է պետք։ Այդ պատճառով այնտեղ, վորտեղ մեծ քանակությամբ քարածուխ է գտնվում, զարգանում են արդյունագործության այս կամ այն ճյուղը։ Քարածուխով ամենահարուստ յերկրներն են, որինակ, Միաց. Նահանգները, Գերմանիան, Անգլիան, Բելգիան և այլն, ունեն խոշոր արդյունագործություն։ Վորպես շարժիչ ույժ մեծ չափով գործ է ածվում նաև ջրային էներգիան, վորի նշանակությունը մեծացավ այն ժամանակ, յերբ տեխնիկան կարողացավ ջրի ոգնությամբ ելեկտրականություն ստանալ և ապա հաղորդիչների միջոցով փոխադրել հեռավոր տեղեր, վորտեղ ավելի նպատակահարմար է նրա գործադրելը։

Զնայելով վոր մեքենաներն այժմ բազմակողմանի գործադրություն ունեն, այնուամենայնիվ ժամանակակից արդյունագործությունը դեռևս մեծ քանակությամբ մարդկային ձեռքերի կարիք ունի։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, վոր սակավ ազգաբնակություն ունեցող յերկրները, չընայելով նպաստավոր պայմաններին, չեն կարողանում զարգացնել սեփական արդյունագործությունը, որինակ, Ավստրալիան, Հարավային Սիբիրը, Բրազիլիան և այլն։ Բայց արդյունագործության համար կարևոր նշանակություն ունի վոչ միայն բանվորների թիվը, այլ և նրանց վորակը։ Այդ պատճառով հավասար պայմաններում արդյունագործությունը միայն այն յերկրներում է ծաղկում, վորտեղ ազգաբնակությունը բարձր կուլտուրայի տեր է։

Հաճախ վորևե հում նյութի արտադրության տեղում չեն գտնվում բոլոր այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են արդյունագործության զարգացման համար։ Այս դեպքում հում նյութը փոխադրում են այնտեղ, վորտեղ պայմաններն ավելի նպաստավոր են արդյունագործության համար։ Առաջ, յերբ հաղորդակցության միջոցները դեռ զարգացած չեյին, հում նյութը մշակվում եր հենց տեղում, բայց հետո շնորհիվ տրանսպորտի զարգացման հնարավոր յեղավ մի նյութ յերկրագնդի մի ծայրից տեղափոխել մի ուրիշը. այսպես, որինակ, Ավստրալիայի բուրդը փոխադրում են Անգլիա, իսկ Անգլիայի քարածուխը՝ Իսպանիա և այլն։

Երկրագնդի գլխավոր արդյունագործական կենտրոնները

Վերը հիշած բոլոր այն պայմանները, վորոնք արդյունագործության հիմքն են կազմում, գտնվում են գլխավորապես հյուսիսային բարեխառն գոտում, մանավանդ այն յերկրներում, վորոնք ընկած են Ատլանտյան ովկիանոսի յերկու կողմերում—մի կողմից Անգլիան և Միջին Յեվրոպան (Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան և այլն), իսկ մյուս կողմից՝ Միացյալ Նահանգները։

Անգլիան և միջին-յեվրոպական յերկրները կազմում են մի խոշոր արդյունագործական կենտրոն, մի հսկայական գործարան, վորը աշխարհի բոլոր ծայրերին հաղորդում է զանազան ֆաբրիկատներ։ Այստեղ վերամշակվում են վոչ միայն տեղական սննդամթերքներն ու հում նյութը, այլ և արևադարձային և մերձարևադարձային յերկրների սննդի և հումի մթերքների մեծ մասը, կաուչուկը, շատ հանքային նյութեր։ Այս արդյունագործական կենտրոնի զարգացումը բացատրվում է տեղական յերկաթի և քարածխի հսկայական պաշարով, հաղորդակցության միջոցների զարգացմամբ և կուլտուրայի բարձր մակարդակ ունեցող ազգաբնակությամբ։

Արդյունագործական յերկրորդ համաշխարհային կենտրոնը կազմում է Անգլո-Սաքսոնական Ամերիկան, այսինքն Միացյալ Նահանգները և Կանադան։ Այստեղ խոշոր չափերի յեն հասել թե գյուղատնտեսությունը և թե արդյունագործությունը, այդ պատճառով նրանք համաշխարհային շուկայեն արտահանում թե գյուղատնտեսական և թե արդյունագործական ապրանքներ։

Վերջերս արագ քայլերով զարգանում է մի յերրորդ կենտրոն ևս, դա Յապոնիան է, վորը յուր արդյունագործական ապրանքները խոշոր առևտրական նավատորմի ոգնությամբ ցրում է Արևել. Ասիայի յերկրներում։

Արդյունագործության գլխավոր ճյուղերը։

Արդյունագործության տարբեր ճյուղերի մեջ ամենակարևորը ներկայումս տեքստիլ արդյունագործությունն ու մետաղագործությունն է։

Արդյունագործության այս յերկու ճյուղերը ֆաբրիկատներ են մատակարարում վոչ միայն ամբողջ կուլտուրական մարդկության, այլև այն ժողովուրդներին, վորոնք դեռևս գտնվում են կուլտուրայի ցածր մակարդակի վրա։ Տեքստիլ արդյունագործության մեջ առաջին տեղը բռնում է բամբակեղենը, իսկ մետաղագործության մեջ՝ յերկաթեղենը։ Բամբակե գործվածքներից պատրաստած շորերը, յերկաթե մեքենաներն ու առօրյա կյանքում գործադրվող բազմաթիվ առարկաներ այնքան են տարածված, վոր մեր դարն իրավամբ կոչվում է «բամբակի և յերկաթի դար»։

Բացի այդ ճյուղերից, բավական մեծ նշանակություն ունեն նաև արդյունագործության հետևյալ ճյուղերը՝ քիմիական արդյունագործություն, շաքարի արդյունագործություն, թղթե, կաշվե, կավե և ապակե ապրանքների արտադրություն, ալրագործություն, ձիթահանություն, ծխախոտի վերամշակություն և գարեջրի արտադրություն։ Արդյունագործության այս բոլոր ճյուղերը զարգացած են գլխավորապես հյուս. բարեխառն գոտում։

Աղյուսակ № 30։

БАМБАКИ...

ԲԱՄԲԱԿԻ ԻԼԻԿՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՄԲՈՂՋ ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ

(Հազարներով)

Երկրները	1910	1914	1921	1924	1925	1926
Անգլիա	53.730	55.971	56.141	56.724	57.116	57.300
Միաց. Նահանգներ	28.000	31.520	36.470	57.740	37.937	37.600
Ֆրանսիա	7.033	7.400	9.600	9.600	9.428	9.500
Գերմանիա	10.058	11.405	9.400	9.200	9.500	10.500
Բրիտ. Հնդկաստան	6.053	6.397	6.763	7.900	8.500	8.500
Ռուսաստան	8.200	9.112	7.100	7.200	7.246	7.260
Իտալիա	4.140	4.600	4.506	4.500	4.771	4.800
Ճապոնիա	1.955	2.415	4.127	4.300	5.292	5.600
Չինաստան	14.242	15 884	1.800	16.933	18.233	22.760
Չեխո-Սլովակիա			3.583			
Իսպանիա			2.200			
Մնացած յերկրները			11.010			
Ընդամենը	133.421	144.704	152.314	157.477	161.363	163.700

Իլիկների թվով առաջին տեղը վոր յերկիրն ե բռնում։

Ցույց տվեք այն յերկրները, վորտեղ զարգացած ե բամբակի արդյունագործությունը։

Առաջադրանք: *Գծեցեք տարբեր յերկրների իլիկների թվի դիագրամը (1926 թ.)։*

Աղյուսակ № 31.

ՇԱՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հազար տոններով)

Շաքարեղեգի շաքար (1925—26 թ.)		Ճակնդեղի շաքար (1926—27 թ.)	
Կուբա	4958	Գերմանիա	1651
Բրազիլիա	904	Չեխո-Սլովակիա	1039
Բրիտ. Հնդկաստան	3024	Ֆրանսիա	688
Ճավա	2317	ԽՍՀՄ	859
Հավայի	716	Իտալիա	310

7. ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերկրագնդի բազմաթիվ յերկրներից համաշխարհ. տնտեսության համար միայն շատ քչերն ունեն կարևոր նշանակություն, այդ պատճառով հետագա գլուխներում մենք կզբաղվենք միայն մի քանի յերկրներով։ Հետևյալ աղյուսակը գաղափար ե տալիս այդ յերկրների ազգաբնակության և մակարդակի մասին։

Աղյուսակ № 32.

ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Պետություններ և յերկրներ	Մակարդակը հազար քառ. կիլոմետրերով	Ազգաբնակությունը հազարներով	Ազգաբնակության խտությունը քառ. կմ-ի վրա
Չինաստան	8.350 *)	438.000	52,5
Հնդկաստան	4.676	319.000	68
ԽՍՀՄ	21.343	147.000	7
Միաց. Նահանգներ	9.369 *)	105.766	13
Ճապոնիա (Կորեայով)	606	79.256	158
Գերմանիա	470,6	63.338	135
Անգլիա	244	44.167	181
Ֆրանսիա	551	40.744	74
Իտալիա	310	42.116	136
Բրազիլիա	8.498	30.635	4
Լեհաստան	388	27.192	70
Ռումանիա	317	17.393	55
Պարսկաստան	1627	10.000	6
Կանադա	9660	8789	1
Արգենտինա	2987	9548	3
Ավստրալ. Միություն	7704	5435	0,7

*) *Հաշվելով և Ալյասկան ու Հավայի կղզ.*
*) *Հաշվելով և Տիբեթը, բայց առանց Մոնղոլիայի։*

Զարգացնելով իրենց արդյունագործությունն ու առևտուրը այդ պետություններից շատերը գրավել են զանազան յերկներ, վորպեսզի հնարավորություն ունենան վաճառել իրենց գործարանային ապրանքները և մյուս կողմից՝ այդ յերկրներից ձեռք բերեն զանազան հում նյութեր։ Յեվրոպական պետությունների տերրիտորիաները արագ տեմպով ընդարձակվում են մանավանդ 1884 թ.-ից մինչև 1900 թվականը։ Այդ ժամանակամիջոցում Անգլիան ձեռք բերեց 3,7 միլիոն քառ. մղոն տարածություն 57 միլիոն ազգաբնակությամբ, Ֆրանսիան՝ 3,6 միլիոն քառ. մղոն 36 միլիոն ազգա-ազգաբնակությամբ, Գերմանիան՝ 1,0 միլիոն քառ. մղոն 14,7 միլիոն բնակչով, Բելգիան՝ 900 հազ. քառ. մղոն 30 միլիոն բնակչով, Պորտուգալիան՝ 800



Նկ. 29. Մեծ պետությունների տերրիտորիան և ազգաբնակությունը (սև քառակուսին մետրոպոլիան է, իսկ գծիկներովը գաղութները)։



Նկ. 30. Աշխարհի բաժանումը մեծ պետությունների միջև 1914 թ.

հազար քառ. մղոն 9 միլիոն բնակչով։ Հետևյալ աղյուսակը գաղափար է տալիս առանձին յերկրների գաղութների մեծության մասին։

Աղյուսակ № 33.

ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Պետություններ	Մետրոպոլիաներ		Գաղութներ		Մետրոպոլիան գաղութներով ընդամենը	
	հազ. քառ. կիլոմ.	հազար բնակչ.	հազ. քառ. կիլոմ.	հազար բնակչ.	հազ. քառ. կիլոմ.	հազար բնակչ.
Բրիտ. կայսրություն . .	244	44.167	34.400	404.800	34.644	448.968
Ֆրանսիա	551	40.744	11.871	60.031	12.422	100.771
Բելգիա	30	7.466	2.406	11.500	2.436	18.966
Պորտուգալիա . .	92	6.033	2.425	9.356	2.517	15.389
Հոլլանդիա	34	6.865	2.042	49.543	2.076	56.408
Իտալիա	310	42.116	2.019	1.893	2.329	44.009
Իսպանիա	498	20.822	342	1.300	840	22.122
Դանիա	43	3.386	89.5	35	133	3.421
Միաց. Նահանգներ . .	9.369	105.766	402	14.934	9.772	120.700
Ճապոնիա (Կորեայի հետ)	606	79.256	77,8	4.939	684	84.195
Ընդամենը .	11.778	356.122	56.076	558.331	67.855	914.953

Յեվրոպացիները Աֆրիկայում։

Կապիտալիստական յերկրները յերկար ժամանակ ուշադրություն չեյին դարձնում Աֆրիկայի վրա։ Աֆրիկայի յեզերքներից յեվրոպացիներն արտահանում եյին ստրուկներ, փղոսկր, ջայլամի փետուր և մի քիչ էլ ոսկի, իսկ յերկրի խորքերը մնում եյին անծանոթ, չուսումնասիրված։ 1880-ական թվականներին սկսվում է Աֆրիկայի բաժան-բաժան անելու տենդային աշխատանքը։ Առաջին ազդանշանը տալիս է Բելգիան, վորը գրավում է Կոնգոյի ավազանը։ Բելգիային հետևում է Գերմանիան։ Պայքարն առանձնապես ուժեղ էր Ֆրանսիայի և Անգլիայի միջև, վորոնք համաձայնության գալով մասամբ իրար հետ, մասամբ Իտալիայի և Իսպանիայի հետ, մասամբ էլ Աֆրիկական բեգերի ու սուլթանների հետ բանի ույժով տիրանում են Աֆրիկայի մեծ մասին, այնպես վոր համարյա ամբողջ Աֆրիկան այժմ պատկանում է յեվրոպական մի քանի պետությունների։

Յերեք անկախ պետություններից Յեգիպտոսը Անգլիայի գերիշխանության տակ է գտնվում, Լիբերիայի տեր ու տնորենը ամերիկական կապիտալն է, իսկ Հաբեշստանի բաժան-բաժան անելը մոտ ապագայի խնդիր է։

Աղյուսակ № 34

АՖՐԻԿԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Պետություններ չեվ գաղութներ	Մակերեսը հազար քառ. կիլոմետրով	Ազգաբնակությունը հազարներով	Ազգաբնակ. խտությունը 1 ք. կմ. վրա
«Անկախ» պետություններ			
Հաբեշստան	906	11500	13
Եգիպտոս	994	14055	14
Լիբերիա	95,4	2000	21
Ընդամենը .	1995,4	27555	14
Եվրոպակ. կալվածներ			
Ֆրանսիական կալվածներ . .	10901	35807	3,3
Անգլիական » . .	9924	50032	5
Բելգիական » . .	2406	11500	7
Պորտուգալական » . .	2401	8315	3
Իտալական » . .	2017	1852	1
Իսպանական » . .	342	1299	3,8
Ընդամենը .	27993	108807	4
Ամբողջ Աֆրիկան	29988,4	136362	5

Ֆրանսիային և Անգլիային Աֆրիկայի մակերեսի մեծության վոր մասն է պատկանում:

Համաշխ. քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Աֆրիկայի այն գաղութները, վոր պատկանում են յեվրոպացիներին:

Եվրոպացիները Ասիայում: Կապիտալիստական պետությունները գրավումներ արել են և Ասիայում: Ամբողջ Հնդկաստանը, Հնդկաչինի մեծ մասը, Մալայան Արշիպելագը, Ֆիլիպպյան կղզիները, Ասորիքը, Միջագետքը և այլն պատկանում են այս կամ այն օտար պետության:

Աղյուսակ № 35

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Գաղութներ	Մակերեսը հազար քառ. կիլոմետրով	Ազգաբնակությունը հազարներով
Ճապոնական գաղութներ . . .	75,3	4885
Մ. Նահանգների » . . .	297,9	10749
Անգլիական » . . .	5514,5	332594
Իտալական » . . .	0,05	10
Պորտուգալական » . . .	23,3	1541
Ֆրանսիական » . . .	856,7	23622
Հոլլանդական » . . .	1484,3	49156
Ընդամենը . . .	8252,1	422087
Ամբողջ Ասիան .	44200	1033000

Այսպիսով ամբողջ Ասիայի մակերեսի $^1/_5$-ը գաղութներ են, իսկ ազգաբնակության $40^0/_0$-ը հպատակ է զանազան յերկրների: Այդ գաղութների ամենախոշոր բաժինն Անգլիային է պատկանում:

ԽՍՀՄ-Ի ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵՄՊԸ ՀԱՄԵՄԱՏԱԾ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ *)

Մինչ այժմ, համաշխարհային տնտեսության վերաբերող մեր մեջ բերած թվական տվյալները ցույց տվին, վոր ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսությունը, ընդհանուր առմամբ, շատ է հետ մնում առաջավոր կապիտալիստական յերկրների տնտեսությունից: Սակայն սխալ գաղափար չկազմելու համար, մեզ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա:

Մինչև 1914 թվի իմպերիալիստական պատերազմը, Ռուսաստանը ըն-
տեսապես չափազանց հետամնաց մի յերկիր եր: Կապիտալիստական տնտե-
սությունը միայն վերջին տասնամյակների ընթացքում եր բավական նշա-
նակալից քայլերով առաջ ընթանում, սակայն նորից խոշոր չափով հետ եր
մնում կապիտալիստական առաջավոր յերկրների տնտեսական զարգացումից:
1914—18 թվի իմպերիալիստական պատերազմը մեծ հարվածներ տվավ Ռու-
սաստանի ժողովրդական տնտեսության: Պատերազմի ընթացքում վոչ մի
յերկիր այնքան չքայքայվեց, վորքան Ռուսաստանը: Յեվ դա հասկանալի յե:
Ռուսաստանի տնտեսապես թույլ որգանիզմը չկարողացավ դիմանալ պատե-
րազմի հրեշային հարվածներին, մինչդեռ առաջավոր կապիտալիստական
յերկրները, թեև նույնպես հսկայական կորուստներ ունեցան, սակայն վերջ-
նական քայքայման չենթարկվեցին:

Այս դեռ քիչ է:

Այն ժամանակ, յերբ պատերազմող իմպերիալիստական յերկրներում
խաղաղություն հաստատվեց 1918 թվին, Ռուսաստանում սկսվեց իր տնտե-
սական հետևանքներով մի նոր ավելի ահռելի պատերազմ՝ քաղաքացիական
պատերազմ: Ամբողջ աշխարհի բուրժուազիան չկարողացավ հաշտվել Ռու-
սաստանի պրոլետարական հեղափոխության փաստի հետ, իր նյութական,
բարոյական և մարդկային միջոցները տրամադրեց ռուսական կալվածատե-
րերին և բուրժուազիային տապալելու համար բանվորա-գյուղացիական իշ-
խանությունը: Քաղաքացիական կռիվները տևեցին մինչև 1821 թվականի
սկիզբները, վորոնք քայքայեցին վերջնականապես և հիմնովին առանց այն
էլ իմպերիալիստական պատերազմի հետևանքով ծայր աստիճանի հասած,
Ռուսաստանի ժողովրդական տնտեսությունը: Յեվ յերբ, 1918 թվից սկսած,

*) Գրքի այս հոդվածը գրել է ընկ. Վ. Ծովյանը:

կապիտալիստական յերկրները, այս կամ այն չափով, հնարավորություն ստացան զբաղվելու պատերազմից առաջացած տնտեսական վերքերի բուժմամբ, մեր Խորհրդային Միությունը այդպիսի հնարավորություն ձեռք բերավ միայն 1921 թվից սկսած, յերբ վերջնականապես ջախջախվեցին հակահեղափոխական ուժերը ռազմի դաշտում: Բացի այդ, ինչպես վերևն ել ասինք, կապիտալիստական յերկրների տնտեսությունն ամբողջապես չկործանվեց, զերոյի չհավասարվեց պատերազմի ընթացքում և այդ պատճառով ել նրանք պատերազմից հետո շարունակեցին յերկրի տնտեսության վերականգնման գործը, մինչդեռ իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմները Ռուսաստանի վողջ ժողովրդական տնտեսությունը (առանձնապես գործարանային արդյունաբերությունը) հիմնահատակ կործանեցին: Այդ պատճառով ել հեղափոխական բանվորները, ձեռնարկելով տնտեսության վերականգնման աշխատանքին, ստիպված յեղան նորից սկսելու. գրեթե զերոյի հավասարված ժողովրդական տնտեսությունից, վերակառուցելու սոցիալիստական արդյունաբերություն:

Ահա խնդրի այս կողմի վրա հարկավոր է դարձնել առանձին ուշադրություն:

Յեվ յերբ մենք վերցնում ենք զանազան յերկրների ժողովրդական տնտեսության վերաբերյալ թվական տվյալները, մեզ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վոչ միայն այդ թվերի բացարձակ. այլ նաև հարաբերական իմաստի վրա:

Այս տեսակետից մոտենալով խնդրին մենք պետք է ծանոթանանք թե պատերազմից հետո ինչ տեմպով է առաջ ընթանում մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը, առանձնապես սոցիալիստական արդյունաբերությունը, համեմատած կապիտալիստական յերկրների հետ:

Այսպես օրինակ, յեթե մենք վերցնենք ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության և արդյունաբերության պրոդուկցիայի զարգացման ընթացքը 1923 մինչև 1927 թիվը հետևյալ պատկերը կստանանք (տես № 36 աղյուսակը):

Այդ թվերը ցույց են տալիս, վոր արդյունաբերությունը (մանր և խոշոր) ավելի արագ է զարգանում քան գյուղատնտեսությունը, այսինքն յերկիրն ընթանում է ինդուստրացման ուղիով, վորն իր հերթին սոցիալիզմի կառուցման հիմնական նախապայման է հանդիսանում:

Թվերը ցույց են տալիս միաժամանակ, վոր վոչ միայն աճում է արդյունաբերությունը ընդհանրապես, այլ ավելի արագ աճում է նրա սոցիալիստական հատվածը՝ այսինքն պետական և կոոպերատիվ արդյունաբերությունը:

Յեթե 1924/25 թվին գյուղատնտեսության ընդհանուր պրոդուկցիան հավասար եր նախապատերազմյան շրջանի 87,3 տոկոսին, իսկ արդյունաբերությունը՝ 63,7 տոկոսին, ապա 1926/27 թվականին գյուղատնտեսության պրոդուկցիան արդեն կազմում եր նախապատերազմյան շրջանի համեմատությամբ 108,3 տոկոս, իսկ արդյունաբերության պրոդուկցիան նույն թվականին՝ 100,9 տոկոս: 1927/28 թվականին գյուղատնտեսության պրոդուկցիան հասնելու յե նախապատերազմյան շրջանի 111,8 տոկոսին, իսկ արդյունաբերությունը՝ 114,4 տոկոսին:

Աղյուսակ № 36

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊՐՈԴՈՒԿՑԻԱՆ

(Չերվոնյան գներով միլիոն ռուբլիներով հաշված)

Արդյուն. ճյուղեր	1923–24	1924–1925 թ.		1925–1926 թ.		1926–1927 թ.	
		Բացարձակ	Աճումը %-ով նախորդ տարվա համեմատ.	Բացարձակ	Աճումը %-ով նախորդ տարվա համեմատ.	Բացարձակ	Աճումը %-ով նախորդ տարվա համեմատ.
Գյուղատնտեսութ. (Արտադրողն. գներով)							
Պետական	1.271	1.685	132	1.851	110	1.954	106
Կոոպերատիվ	72	99	138	124	125	146	118
Մասնավոր	8.316	11.357	136	14.232	125	14.956	105
Ընդամ.	9.659	13.142	136	16.207	123	17.056	105
Արդյունաբերութ.							
Պետական	4.093	5.945	145	8.573	144	9.794	114*)
Կոոպերատիվ	325	504	155	770	153	851	110
Մասնավոր	1.167	1.799	122	2.165	120	2.356	109
Ընդամ.	5.885	8.248	140	11.508		13.001	

1924/25 թ. ԽՍՀՄ ազգային յեկամուտը հավասար եր 15.589 միլիոն չերվոնյան ռուբլու: Իսկ 1925/26 թ. այդ յեկամուտը հավասար եր 20.252 միլ. ռուբլու, այսինքն աճումը մի տարվա ընթացքում հավասար է 29,9 տոկոսի: Իսկ 1926/27 թվի ազգային յեկամուտը կազմում եր 22.560 միլիոն ռուբլի, այսինքն աճում մի տարվա ընթացքում 11,4 տոկոսով: Պետպլանի տվյալներով 1927/28 թվին ԽՍՀՄ ազգային յեկամուտը կազմելու յե 24.208 միլ. ռուբլի, այսինքն աճումը հավասարվելու յե մի տարում 7,3 տոկոսի:

Յեթե նկատի ունենանք, վոր Միացյալ Նահանգների ազգային յեկամուտի աճումը տարեկան 3—4 տոկոսից չի անցնում, իսկ մյուս պետու-

*) Հետագայում պարզվեց, վոր այս թիվը պետք է լինի 121:

թյունների (օրինակ, Անգլիա, Գերմանիա) ազգային յեկամուտի տարեկան աճումը հավասար ե 1—3 տոկոսի, ապա պետք ե ասել, վոր ԽՍՀՄ ազգային յեկամուտի աճման տեմպը ռեկորդային ե համեմատած Յեվրոպայի և Ամերիկայի խոշորագույն կապիտալիստական յերկրների հետ։

Ի՞նչ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության աճման տեմպի խընդիրը ԽՍՀՄ համար։

Ինչու՞ մեր տնտեսությունը համեմատաբար ավելի արագ ե աճում, քան կապիտալիստական յերկրներինը։

Ի՞նչ առավելություններ ունի մեր արդյունաբերությունը, վորից զուրկ ե կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը։

II. ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ

1. ԱՆԳԼԻԱ

Ցույց տվեք Անգլիայի տեղը քարտեզի վրա (Աշխարհ. ատլաս, Յեվրոպա—քաղաքական քարտեզ)։

Գտեք այն ծովերն ու նեղուցները, վորոնք շրջապատում են Անգլիան։

Անգլիայի հարևան պետությունները վորո՞նք են։

Ցույց տվեք Բաթումից Անգլիա (Լոնդոն) տանող ծովային ճանապարհը։

Անգլիան բաղկացած ե Մեծ Բրիտանիայից, Հյուս. Իռլանդիայից *) և մի շարք մանր կղզիներից, վորոնք գտնվում են Մեծ Բրիտանիայից վոչ հեռու (ցույց տվեք)։

Մեծ Բրիտանիայի հյուսիսային մասը կոչվում ե Շոտլանդիա, իսկ հարավայինը՝ բուն Անգլիա: Այս վերջին անունը տարածվել ե և ամբողջ պետության վրա։

Անգլիա ասելով մենք այսուհետև հասկանալու յենք Մեծ Բրիտանիան (մոտակա կղզիներով) և Հյուս. Իռլանդիան միասին վերցրած, իսկ Մեծ Բրիտանիայի հարավային մասի համար գործ կածենք բուն Անգլիա անունը։

Անգլիան յուր բոլոր գաղութներով յերբեմն կոչվում ե նաև Բրիտանական կայսրություն:

Կարդացեք «Անգլիայի աշխարհագրական դիրքը» (Զ. Խորբաբին, Ուրվագիծ պատմա-տնտեսական աշխարհագրության, 29—31 յերես)։

Աշխարհագրական դիրքը:

Յերկրագնդի վրա շատ քիչ կգտնվեն այնպիսի յերկրներ, վորոնք իրենց աշխարհագրական դիրքով կարողանան համեմատվել Անգլիայի հետ։ Նախ, նա գտնվում ե ցամաքային կիսագնդի համարյա կենտրոնում։

Գտեք Անգլիայի տեղը ցամաքային կիսագնդի վրա (Աշխարհ. ատլաս, կիսագնդերի քարտեզ)։

Յերկրորդ՝ նրա մի կողմը գտնվում են Յեվրոպայի կուլտուրական յերկրները—Ֆրանսիան, Բելգիան, Գերմանիան և այլն, իսկ մյուս կողմը հարուստ և արդյունագործական Միաց. Նահանգները, վորոնք Անգլիայի հետ կապ են պահպանում Ատլանտյան օվկիանոսի վրայով։ Գտնվելով կղզիների վրա և դարերի ընթացքում ազատ լինելով արտաքին թշնամու վտանգից, Անգլիան կարողացավ ծովային նավագնացությունը հասցնել այն-

*) Իռլանդիայի հարավային մասը դոմինիոն ե, այսինքն ինքնավար գաղութ ե։

պիսի չափերի, վորպիսին վոչ մի պետություն չունի։ Նավագնացության զարգացմանը մեծ չափերով նպաստեցին Անգլիայի գլխավոր կենտրոնի— Մեծ Բրիտանիայի ափերի կտրտված լինելը, վորով նա կարող է համեմատվել Հունաստանի հետ։ Ծովը բազմաթիվ ծոցերով և խորշերով մտնում է ցամաքի մեջ և գոյացնում հարմար նավահանգիստներ։ Յերկրի ներսը չկա մի այնպիսի տեղ, վոր ծովափից 120 կիլոմետրից ավել հեռու լինի։

Յեվրոպայի համր քարտեզի վրա գտեք Անգլիայի տեղը և վորևէ գույնով ներկեցեք Անգլիայի մասերը։ Գրեցեք կղզիների, ծովերի անունները։

Բնական պայմանները։

Անգլիայի կլիմայի վրա չափազանց մեծ ազդեցություն ունեն Գոլֆշտրոմ տաք հոսանքը և արևմուտքից փչող քամիները։ Դրանց շնորհիվ Անգլիայի կլիման աչքի յե ընկնում յուր տաքությամբ և խոնավությամբ։ Ձմեռն այստեղ այնքան տաք է, վոր մի քանի մերձարևադարձային բույսեր (դափնի, մրտենի և այլն) կարողանում են ձմեռը բացօթյա աճել։ Վորովհետև խոնավ քամիները գլխավորապես արևմուտքից են փչում, այդ պատճառով անգլիական կղզիների արևմտյան յեզերքներն ավելի շատ մթնոլորտային տեղումներ են ստանում, քան թե արևելյանը։ Մեծ Բրիտանիյի կամ Իռլանդիայի արևմտյան ծովափը յուր խոնավությամբ կարող է համեմատվել նույնիսկ արևադարձային յերկրների հետ։

Մեղմ և խոնավ կլիմայի պատճառով Անգլիայում խոտերն աճում են ամբողջ տարին և հասնում են չտեսնված թարմության և խտության, մինչդեռ հացահատիկները առատ խոնավությունից փչանում են։ Ցորենի համեմատաբար լավ բերք ստացվում է Մեծ Բրիտանիայի հարավ-արևելյան շրջանում, Լոնդոնի ավազանում։

Այսպիսով Անգլիայի բնական պայմաններն ավելի նպաստավոր են անասնապահության, քան թե յերկրագործության համար։ Յեվ դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, վոր Անգլիայի ժողովրդական տնտեսության մեջ, մինչև արդյունագործության զարգանալը, անասնապահությունը խոշոր նշանակություն ուներ։

Ինչու Անգլիայի կլիման տարվա ընթացքում բարեխառնության մեծ տատանումներ չի տալիս։
Անգլիայի կլիմայի բնորոշ կողմերը վորոնք են։
Ինչու հացահատիկների մշակությունն Անգլիայում շատ չի տարածված։

Անգլիայի մակարդակի մեծությունը յեվ ազգաբնակությունը։

Անգլիայի մակարդակը կազմում է մոտ 244 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը 44 միլիոն. միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա ապրում է 181 մարդ, իսկ յեթե բուն Անգլիան վերցնենք, այն դեպքում յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածությանը կընկնի 251 մարդ։

Այսպիսով բուն Անգլիան Յեվրոպայի ամենախիտ բնակված յերկրներից մեկն է։ Նա յուր ազգաբնակության խտությամբ կարող է համեմատվել Բելգիայի հետ։

Քաղաքային ազգաբնակության տոկոսով Անգլիան առաջինն է ամբողջ աշխարհում։ Բուն Անգլիայի ազգաբնակության 78%-ը և Շոտլանդիայի ազգաբնակության 75%-ը ապրում է քաղաքներում։ Քաղաքային ազգաբնակության այս մեծ տոկոսի պատճառն այն է, վոր արդյունագործությունն ու առևտուրն Անգլիայում խոշոր չափերի յեն հասել և կազմում են ժողովրդական տնտեսության հիմքը։ Բուն Անգլիայի և Շոտլանդիայի ազգաբնակության $^3/_4$-ը պարապում է արդյունագործությամբ և առևտրով, մինչդեռ գյուղատնտեսությամբ զբաղվում է ազգաբնակության հազիվ $^1/_{10}$-ը։ 1911 թ. տվյալների համաձայն Անգլիայի ազգաբնակությունը (հաշվելով 10 տարեկանից բարձր) ուներ հետևյալ պրոֆեսիոնալ կազմը.

Արդյունագործությամբ պարապում է		10.694.380	մարդ
Առևտրով	»	2.467.496	»
Տնային ծառայությամբ	»	2.328.883	»
Գյուղատնտեսությամբ	»	1.487.587	»
Ազատ պրոֆեսիայով	»	796.296	»
Պետական ծառայության մեջ		347.007	»
Զորքի և նավատորմի	»	205.817	»
Չաշխատող և անորոշ պրոֆեսիայի տեր անձինք		13.882.714	»
Ընդամենը		32.233.790	

Անգլիայի ինքնագործ ազգաբնակչությունը կազմում է 18.250.000 հոգի, վորոնցից.

Աշխատավարձ կամ ռոճիկ ստացողները	16.737.447
Ձեռնարկատերերը կամ անկախ գործադիրները	1.511.197

Վորքան մարդ է պարապում արդյունագործությամբ և առևտրով, և վորքան գյուղատնտեսությամբ։

Քարտեզի ոգնությամբ գտեք թե Անգլիայում ինչ ազգություններ են ապրում։ (Աշխ. Ատլաս, Յեվրոպա-քաղաքական, քարտգրամ)

Անգլիայի ազգաբնակության համար չափազանց բնորոշ է նաև արտագաղթի յերևույթը։ Պատերազմից առաջ Անգլիան արտագաղթ տվող յերկրների մեջ առաջնակարգ տեղերից մեկն եր բռնում։ Գաղթականները գլխավորապես ուղևորվում եյին դեպի Կանադա, Միաց. Նահանգներ, Ավստրալիա և Նոր Զելանդիա։ 1913 թվականին արտագաղթողների թիվը 390 հազարի յեր հասնում։ Պատերազմի ընթացքում այդ թիվը նվազեց, բայց հետո կրկին մեծացավ, հասնելով 1924 թ. 155 հազարի։

Արտագաղթն Անգլիայի համար ցանկալի յերևույթ է, վորովհետև նա ուժեղացնում է մետրոպոլիայի և գաղութների կապը, և մյուս կողմից՝ թուլացնում է գործազրկությունը, ազատելով մետրոպոլիան ավելորդ ազգաբնակությունից։

Ցույց տվեք այն ծովային ճանապարհները, վորոնցով Անգլիայից դուրս յեկող գաղթականները ուղևորվում են Կանադա, Միաց. Նահանգներ, Ավստրալիա, Հար. Աֆրիկա և Նոր Զելանդիա (Աշխ. ատլաս, համաշխարհային քաղ. քարտեզ)։

Գյուղատնտեսություն: Մեծ Բրիտանիայի ամբողջ մակարդակը հաշվում են մոտ 56,4 միլիոն ակր, վորից 45 միլիոնը կամ ամբողջ յերկրի 80%-ը մշակված է: Յեվրոպական վոչ մի ուրիշ յերկրում գյուղատնտեսական մակարդակն այսպիսի չափերի չի հասնում: Բայց Անգլիան մյուս յերկրներից տարբերվում է նրանով, վոր ցանքսերն այստեղ կազմում են գյուղատնտեսական մակարդակի $^1/_3$-ը միայն, մինչդեռ ուրիշ յերկրներում ցանքսերն ավելի մեծ տեղ են բռնում, քան արոտատեղերն ու խոտհարքը: Նկատենք և այն, վոր Անգլիան չափազանց աղքատ է անտառներով:

ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ

Ցանքսեր	25%
Արոտատեղ և խոտհարք	55%
Անտառ	5%
Անպետք հողեր	15%

ԽՍՀՄ-ի հողատեսքերը համեմատեցեք Անգլիայի հողատեսքերի հետ:

Մեզանում գյուղատնտեսական մակարդակը վորքան է. անտառներն ինչ տարածություն են բռնում:

Անգլիան խոշոր հողատերերի յերկիր է: Բուն Անգլիայի և Շոտլանդիայի ամբողջ մակարդակի կեսից ավելին պատկանում է 2000 լորդի, վորոնք հողն անձամբ չեն մշակում, այլ կապալով տալիս են ֆերմերներին: Վերջիններս իրենց տնտեսությունը վարում են վարձու բանվորների ոգնությամբ: Այնպիսի գյուղացիություն, վորպիսին մենք ենք հասկանում, Անգլիան չունի: Սակայն պետք է նկատել, վոր քաղաքային կյանքի զարգացման հետ, գյուղատնտեսությունն էլ սկսում է հարմարվել նոր պայմաններին: Խոշոր կալվածները բաժանվում են մանր հողաբաժինների, վորտեղ քաղաքի ազգաբնակչությանը թարմ կանաչի և միրգ մատակարարելու համար բանջարանոցներ ու այգիներ են գցում: 1885 թ. կար 350000 մանր հողաբաժին, 1913 թ.—500.000, իսկ 1924 թ.—1500000:

Ինչպես ասացինք, Անգլիայի կլիման ավելի հարմար է խոտերի, քան թե հացահատիկների համար: Յեվրոպական վոչ մի ուրիշ յերկիր արոտատեղերով այնքան հարուստ չէ, ինչպես Անգլիան: Մյուս կողմից խոտերի ցանքսերն Անգլիայում խոշոր չափերի յեն հասել: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Մեծ Բրիտանիայի ցանքսերի տեսակներն ըստ մշակույթների (1925 թ. տվյալներով):

	Միլիոն ակրերով	%% ամբողջ ցանքսի նկատմամբ
Հացահատիկներ	6,8	47
Արմատապտուղներ	2,8	19
Ցանովի խոտեր	4,1	30
Վուշ և գայլուկ	0,3	2
Ուրիշ մշակույթներ	0,4	2
Ընդամենը	14,4	100 %

Ինչպես տեսնում եք, արմատապտուղներն ու ցանովի խոտերը բռնում են համարյա ամբողջ ցանքսի կեսը: Դա, ի միջի այլոց, ցույց է տալիս, վոր անասնապահությունը Անգլիայի գյուղատնտեսության մեջ խոշոր դեր է կատարում: Մյուս կողմից՝ արմատապտուղների և խոտերի ցանքսերի այդ հսկայական չափերը ապացույց են, վոր սերմնափոխության սիստեմը խոր արմատներ է գցել Անգլիայի տնտեսության մեջ և դրա շնորհիվ հանգստացող հողերը չնչին տեղ են բռնում:

Պետք է շեշտել և այն, վոր Անգլիայում բերքատվության չափն ավելի բարձր է, քան մեզնում: Այս տեսակետից նա հետ է մնում միայն մի քանի յեվրոպական յերկրներից:

Աղյուսակ № 37

ԳԼԽԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԵՐՔԸ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՑ, ՀԱՇՎԱԾ ԿՎԻՆՏԱԼՆԵՐՈՎ
(1910—14 թ. միջինը)

	Ցորեն	Վարսակ	Գարի
Դանիա	32,6	18,3	22,6
Բելգիա	25,0	23,9	27,3
Հոլլանդիա	24,5	20,6	25,8
Գերմանիա	21,3	19,4	20,5
Անգլիա	21,1	18,2	18,7

Սակայն, չնայելով վոր հողի մշակությունն Անգլիայում որինակելի հիմքերի վրա է դրված, այնուամենայնիվ սեփական հացը չի բավականացնում: Անգլիան ամեն տարի դրսից ներմուծում է մոտ $1^1/_2$ անգամ ավել հացահատիկ, քան ներսն է արտադրվում: Մեծ չափերով ներմուծվում է, մանավանդ, ցորեն: Սեփական ցորենն Անգլիային բավականանում է ընդամենը $1^1/_2$—2 ամիս:

Աղյուսակ № 38

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ
(Մեծ Բրիտանիա և Իռլանդիա), 1919—24 թ. միլիոն կվինտալներով հաշված

	Ներքին արտադրություն	Ներմուծություն
Ցորեն	17,4	58,5
Յեգիպտացորեն	—	20,0
Գարի	13,1	9,9
Վարսակ	30,8	5,1
Ընդամենը	61,3	93,5

ԽՍՀՄ-ում վորքան կվինտալ հացահատիկ է ստացվում. համեմատեցեք Անգլիայի բերքի հետ

Հաշվեցեք շնչին վորքան հացահատիկ է ընկնում Անգլիայում և մեզնում:

Աշխատանք: Դեղին գույնով ներկեցեք Անգլիայի յերկրագործական շրջանները:

Կանաչ գույնով ներկեցեք մարգագետինների շրջանները:

Բնական պայմաններն առանձնապես նպաստավոր են անասնապահության համար, վորի ինտենսիվությամբ Անգլիան առաջինն է ամբողջ աշխարհում: Անգլիայում ուշադրություն են դարձնում անասունների վոչ թե քանակի, այլ վորակի վրա: Վոչ մի տեղ չկան այնպիսի ազնվացեղ ձի, վոչ-

խար և խոզ, ինչպես Անգլիայում։ Անգլիական արագավազ և ծանրաքարշ ձիերը, շորտհորնյան մսատու և կաթնատու անասունները, մսատու և բրդատու վոչխարը, յորքշիրի և բերկշիրի խոզերը հռչակված են ամբողջ յերկրագնդի վրա։ Զանազան յերկրներ իրենց անասունների ցեղն ազնվացնելու համար Անգլիայից արտահանում են մեծ քանակությամբ ցեղային կենդանիներ։ Այսչափ օրինակելի անասնաբուծությունն անգամ յերկրի կարիքներին չի բավարարում: Պատերազմից առաջ ներսը գործածվող մսի 35%-ը, յուղի 60%-ը և պանրի 80%-ը ներմուծվում եր դրսից։ Այսպիսով Անգլիան անասնապահական մթերքների մի խոշոր շուկա է։

Անգլիայի գյուղատնտեսության մյուս ճյուղերից աչքի յեն ընկնում բանջարաբուծությունը, պտղաբուծությունը և թռչնաբուծությունը, վորոնք տարածված են գլխավորապես մեծ քաղաքների շուրջը և քաղաքային ազգաբնակությանը մատակարարում են թարմ բանջարեղեն, միրգ և միս։ Ներմուծման գործը վորքան էլ լավ հիմքերի վրա լինեն դրված, այնուամենայնիվ չորացրած բանջարեղենն ու սառցրած միսը թարմի տեղը չեն կարող բռնել։

Նկատի ունենալով ամբողջ գյուղատնտեսական կյանքը, գալիս ենք այն յեզրակացության, վոր Անգլիան սննդամթերքներով ապահովված չէ յեվ կախված է արտաքին աշխարհից: Սննդամթերքներով տնապահով լինելը Անգլիայի ծանրակշիռ տնտեսական խնդիրներից մեկն է։

Բնական պայմանները գյուղատնտեսության վո՞ր ճյուղի համար նպաստավոր գտնվեցին և վորի՞ համար աննպաստ։

Հողագործությունը եքստենսի՞վ է, թե ինտենսիվ։ Գլխավորապես ի՞նչ հացահատիկներ են մշակվում. այդ հացահատիկների բերքը բավարարո՞ւմ է։ Անգլիան վո՞ր յերկրներից է հաց ներմուծում։

Անասնապահությունն ի՞նչ հիմքերի վրա է դրված։ Անասնապահական սննդամթերքները բավականացնո՞ւմ են։ Միսը, յուղը, պանիրը և այլն վո՞րտեղից են ստանում։

Ձկնորսություն:

Անգլիայի ժողովրդական տնտեսության մեջ կարեվոր դեր է կատարում նաև ձկնորսությունը, վորով նա բռնում է առաջնակարգ տեղերից մեկը։ Ձկնորսության գլխավոր շրջանը կազմում է Հյուսիսային ծովը, բայց ձկնորսական նավերը կարողանում են և ավելի հեռուները գնալ, օրինակ, նրանք հասնում են մինչև Իսլանդիայի ափերը, Մուրմանի ծովը և այլն։ Փոխադրական միջոցներն այնքան զարգացած են, վոր վորսած ձուկը թարմ վիճակում է հասցնվում սպառողին։ 1915 թ. վորսած ձկան քանակը կազմում եր մոտ մեկ միլիոն տոնն, վորից 400 հազար տոնն արտահանվել է։ Նկատենք և այն, վոր ձկնորսությունն Անգլիայում տալիս է ակտիվ բալանս (հաշվեկշիռ), այսինքն արտահանությունն ավելի մեծ արժեք է տալիս, քան ներմուծությունը։

Ցույց տվեք Անգլիայի ձկնորսական շրջանները։

Հիշեցեք ԽՍՀՄ-ի ձկնորսական շրջանները։ Անգլիայում վորսած ձկան քանակը համեմատեցեք ԽՍՀՄ-ում վորսած ձկան քանակի հետ։

Աշխատանք։ Կարմիր գույնով ներկեցեք Անգլիայի ձկնորսական շրջանները։

Հանքային արդյունաբերություն:

Անգլիայի գլխավոր հանքերն են քարածուխը և յերկաթը։

Քարածուխի արտադրությամբ Անգլիան հետ է մնում միայն Միացյալ Նահանգներից։ Քարածխի գլխավոր հանքատեղերը գտնվում են ծովափերին կամ գետափերին։ Այս հանգամանքը բավական նպաստում է քարածխի արտադրությանը։ Պատերազմից առաջ (1913 թ.) Անգլիայում ստացվում եր մոտ 290 միլիոն քարածուխ, վորից 77 միլիոնն արտահանվում եր։ Միայն քարածխի արտահանությունից Անգլիան ստանում է մոտ 500 միլիոն ռուբլի վոսկով։

Անգլիական քարածխի գլխավոր գնողներն են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Հոլլանդիան, Բելգիան, Յեգիպտոսը, Հնդկաստանը և Հարավ-Ամերիկյան յերկրները։

Այսպիսով սեփական քարածուխը վոչ միայն բավարարում է անգլիական խոշոր արդյունագործության կարիքներին, այլեվ բավական մեծ քանակությամբ արտահանվում է:

Քարածխի պաշարով Անգլիան վո՞րերորդ տեղն է բռնում։

Անգլիայի յերկաթահանքի պաշարը հաշվում են մոտ 1300 միլիոն տոնն, վորը կազմում է Յեվրոպայի յերկաթահանքի ամբողջ պաշարի 10%-ը (Ֆրանսիայում գտնվում է 25%-ը)։ Բայց անգլիական յերկաթահանքերը հարմար աշխարհագրական դասավորություն ունեն. նրանք գտնվում են քարածխի հանքերի մոտ։ Այս հանգամանքի շնորհիվ անգլիական յերկաթագործությունն ազատվում է փոխադրական ավելորդ ծախսերից։

Սեփական յերկաթահանքը յերկրի կարիքներին չի բավարարում: Այդ պատճառով Անգլիան բավական մեծ քանակությամբ հանք ստանում է ուրիշ յերկրներից, գլխավորապես Շվեդիայից և Իսպանիայից։

Չուգունի և պողպատի արտադրությամբ Անգլիան մրցակից չուներ ամբողջ XIX-րդ դարի ընթացքում, բայց 90-ական թվականներից հետ է մնում սկսում է հետ մնալ Միաց. Նահանգներից, իսկ 900-ական թվականներին նաև Գերմանիայից։ 1925 թ. չուգունի և յերկաթի արտադրությունը հետևյալ պատկերն ուներ (միլ. տոններով)։

	Չուգուն	Պողպատ
Միաց. Նահանգներ . .	37,0	46,1
Գերմանիա	10,2	12,2
Անգլիա	6,3	7,5
Ֆրանսիա	9,9	7,4

Արտադրած չուգունի քանակությամբ Անգլիան այժմ չորրորդ տեղն

է բռնում (Միաց. Նահանգներ, Գերմանիա և Ֆրանսիա), իսկ պողպատի արտադրությամբ նա հազիվ կարողանում է յերրորդ տեղը պահել (տես աղյուսակը): Անգլիայում ստացվում են նաև գրաֆիտ, աղ, պղինձ, կապար, ցինկ և այլն:

Բացի քարածխից մնացած բոլոր հանքերը ներմուծվում են:

Արդյունագործություն: Անգլիայի արդյունագործության գլխավոր ճյուղը տեքստիլ արդյունագործությունն է, վորը տալիս է արտահանության ամբողջ արժեքի $^1/_3$-ը: Բամբակի, բրդի և վուշի գործվածքներով Անգլիան մրցակից չունի, չնայելով վոր հում նյութը ստանում է դրսից: Տեքստիլ արդյունագործության համար գործածվող հում նյութից բամբակը, մետաքսը, ջուտը և կանեփն ամբողջովին ներմուծվում են արտասահմանից, իսկ սեփական բուրդը և վուշը ստացվում են աննշան քանակությամբ: Այսպիսով Անգլիայի տեքստիլ արդյունագործությունը կախված է արտաքին աշխարհից: Բայց Անգլիան ունի մի շարք այնպիսի առավելություններ, ինչպիսի ուրիշ յերկրները չունեն, այն է՝ բարձր վորակյալ բանվորներ, վորոնք սերնդե սերունդ աշխատում են տեքստիլ արդյունագործության մեջ, խոնավ կլիմա, վորը հնարավորություն է տալիս շատ նուրբ թելեր ստանալ, և վերջապես ընտիր մեքենաներ, վորի արտադրությամբ Անգլիան բռնում է առաջին տեղը: Տեքստիլ արդյունագործության մեջ առաջին տեղը բռնում են բամբակի գործվածքները: 66 միլիոն իլիկից 57 միլիոնը բամբակի արդյունագործությանն է պատկանում:

Բամբակի գործվածքների գլխավոր կենտրոնն է Մանչեստրը, բրդի գործվածքներինը՝ Լիդսը, իսկ վուշի գործվածքներինը՝ Դյունդի յեվ Բելֆաստ:

Անգլիայի արդյունագործության յերկրորդ կարևոր ճյուղը կազմում է մետաղների մշակությունը, մանավանդ մեքենաներ պատրաստելը և նավակառուցումը:

Անգլիան արտահանում է մեծ քանակությամբ լոկոմոտիվներ (շոգեկառք), գյուղատնտեսական մեքենաներ, գոլորշով աշխատող տուրբիններ, կարի մեքենաներ և այլն: Պատերազմից առաջ Անգլիան մեքենաների արտահանությամբ բռնում եր առաջին տեղը, իսկ այժմ նա հետ է մնում Միացյալ Նահանգներից: Մետաղագործության գլխավոր կենտրոններն են Բիրմինգհամը, Շեֆֆիլդը, Գլասգոն յեվ Լիդսը:

Նավաշինության չափով Անգլիան առաջինն է ամբողջ աշխարհում: 1925 թ. Անգլիայում շինվող նավերի ընդհանուր տոննաժն եր 1,1 միլիոն տոնն, վորը կազմում է համաշխարհային նավակառուցման 42 $^0/_0$-ը:

Նավերի կառուցման գլխավոր կենտրոններն են Գլասգոն յեվ Բելֆաստը:

Բացի արդյունագործության հիշյալ ճյուղերից Անգլիայում զարգացած են նաև ելեկտրական և քիմիական պարագաների արդյունաբերությունը, կաշվեգործությունը, կավագործությունը և այլն:

Ցույց տվեք Անգլիայի արդյունագործության կենտրոնները:

Կարդացեք «Սև Անգլիա», «Բամբակի գործվածքների աշխարհը» («Աշխարհի շուրջը», 98—102 յերես):

Հաղորդակցության միջոցները: Ճանապարհները, ինչպես և փոխադրական միջոցներն Անգլիայում չափազանց զարգացած են: Բազմաթիվ յերկաթուղիներն ու խճուղիները, նավագնաց գետերն ու ջրանցքները անցնում են այս ու այն ուղղությամբ և կազմում հարմար ճանապարհների բավական խիտ ցանց:

1926 թ. Անգլիայի յերկաթուղային գիծը կազմում եր 34,042 կիլոմետր: Յերկաթուղային ցանցի խտությամբ Անգլիան հետ է մնում միայն Բելգիայից և Շվեյցարիայից:

Ներքին հաղորդակցության համար չափազանց կարևոր են նաև գետերը, վորոնք սկսվում են յերկրի ներսը և հոսում դեպի արևմուտք և արևելք: Ծովափերին գետերն առաջացնում են լայն գետաբերաններ, վորոնք հնարավորություն են տալիս ծովային նավերին մտնել ցամաքի խորքը: Գետերի նշանակությունը մեծանում է մանավանդ ջրանցքների պատճառով, վորոնք գետերի հետ առաջացնում են ջրային ճանապարհների խիտ ցանց: Ջրանցքների յերկարությունը հավասար է 4.670 կիլոմետրի, մինչդեռ նավագնաց գետերն ունեն ընդամենը 2.670 կիլոմետր յերկարություն: Գետային ջրանցքների խտությամբ Անգլիան առաջինն է ամբողջ աշխարհում:

Սակայն Անգլիայի յերկաթուղիները, գետերն ու ջրանցքները իրենց նշանակությամբ յերբեք չեն կարող համեմատվել ծովային հաղորդակցության հետ: Յերկրի աշխարհագրական դիրքը, բազմաթիվ հարմար նավահանգիստները, հսկայական արտաքին առևտուրը և որինակելի նավաշինությունը դարձրին Անգլիան առաջին ծովային յերկիրը: Ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ այժմ Անգլիան յուր ծովային նավատորմով առաջինն է ամբողջ աշխարհում (տես աղյուսակը):

Անգլիայի այդ հսկայական առևտրական նավատորմը ծառայում է վոչ միայն սեփական, այլ և օտար առևտրի պետքերի համար: Թե վորքան մեծ է Անգլիայի դերը համաշխարհային առևտրի մեջ, այդ յերևում է նրանից, վոր Սուեզի ջրանցքով անցնող բոլոր նավերի տոննաժի $^2/_3$-ը պատկանում եր անգլիական նավերին:

Ցույց տվեք Լոնդոն—Նյու-Յորք, Լոնդոն—Կապշտադտ, Լոնդոն—Սուեզ—Սինգապուր—Հոնգկոնգ և Լոնդոն—Սուեզ—Սիդնեյ (Ավստրալիայում) ճանապարհները (Աշխ. ատլաս, համաշխ. քաղ. քարտեզ):

Արտաքին առևտուրը: Մենք տեսանք, վոր Անգլիան արդյունագործական յերկիր է, մի հսկայական քաղաք-գործարան,

վորը դրսից ներմուծում է ազգաբնակության համար ուտելիք և գործարանների համար հում նյութ (բացի քարածխից): Մյուս կողմից այդ գործարաններում պատրաստված իրերը նա ցրում է յերկրագնդի բոլոր անկյուններում: Այստեղից յերևում է, թե Անգլիան վորքան մեծ կախումն ունի արտաքին շուկայից և թե վորքան մեծ պետք է լինի արտաքին առևտրի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ:

Արտաքին առևտրի մեծությամբ Անգլիան առաջինն է ամբողջ աշխարհում: Այդ առևտրի պատկերը հետևյալն է (տոկոսներով ընդհանուր ներմուծության և արտահանության նկատմամբ):

	Ներմուծություն	արտահանություն
Ուտելիք, խմիչք, ծխախոտ և կենդանիներ	46,4	5,7
Հում նյութ և կիսաֆաբրիկատ	29,6	17,1
Ֆաբրիկատ (գործ. պատրաստի ապրանքներ)	23,4	70,6
Փոստային փոխադրություն	0,6	6,6

Ներմուծվող ապրանքների մեջ առաջին տեղը բռնում են ուտելիքը և հում նյութը (46,4+29,6=76%), իսկ արտահանվող ապրանքների մեջ ֆաբրիկատները (70,6%) և քարածուխը:

Անգլիան ցորենը ներմուծում է Միաց.-Նահանգներից, Հնդկաստանից, Կանադայից, Արգենտինայից, Ավստրալիայից, ԽՍՀՄ-ից և Ռումանիայից. մսեղենը—Միաց. Նահանգներից, Ավստրալիայից, Արգենտինայից, Կանադայից, Նոր-Զելանդիայից և այլն. բամբակը—Յեգիպտոսից, Հնդկաստանից և Միաց. Նահանգներից, բուրդը—Ավստրալիայից, Նոր-Զելանդիայից, Կանադայից և Հար. Աֆրիկայից, փայտը—Կանադայից, Շվեդիայից և ԽՍՀՄ-ից, ճավթը—Միաց. Նահանգներից և Պարսկաստանից, յերկաթահանքը—Իսպանիայից և Շվեդիայից, կաուչուկը—աֆրիկական գաղութներից, Ցեյլոնից, Բրազիլիայից և այլն:

Անգլիայի արտաքին առևտրի մեջ խոշոր դեր են կատարում սեփական գաղութները և Յեվրոպան:

1925 թ. Անգլիայի ներմուծության ամբողջ արժեքի 30%-ը և արտահանության ամբողջ արժեքի 40%-ը տվել են գաղութները:

Սակայն, չնայելով յուր հսկայական առևտրական շրջանառության, Անգլիայի առևտրական հաշվեկշիռը (բալանսը) պասսիվ է, այսինքն ներմուծությունն ավելի մեծ արժեք ունի, քան արտահանությունը: 1925 թ. նա արտահանել է 927 միլիոն ֆունտ ստերլինգի ապրանք, իսկ ներմուծել է 1323 միլիոնի: Այդ թվականին ներմուծությունը արտահանությունից 396 միլիոն ֆունտ ստերլինգով ավելի յե յեղել: Ֆրախտի, կոմիսսիաների և արտասահմանում տեղավորված դրամագլխի տոկոսներով նա վոչ միայն ծածկում է յուր այդ դեֆիցիտը, այլև մի խոշոր մնացորդ էլ մնում է (1923 թ. այդ մնացորդը կազմում էր մոտ մեկ միլլիարդ ռուբլի վոսկով):

Անգլիայի առևտուրը ԽՍՀՄ-ի հետ:

Պատերազմից առաջ Ռուսաստանի արտաքին առևտրի մեջ առաջին տեղը բռնում էր Գերմանիան, իսկ յերկրորդ տեղը՝ Անգլիան: Պատերազմից հետո ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ առաջին տեղը բռնեց Անգլիան:

Հինգ տարվա ընթացքում, 1920 թ. հունիսից մինչև 1925 թ. մարտի 31-ը, Անգլիան ԽՍՀՄ-ից ներմուծել է 400 միլլիոն ռուբլու ապրանք, վորի 29%-ը կազմում էր փայտը, 14%-ը՝ մորթիներ, 14%-ը՝ նավթապրոդուկտներ, 10%-ը՝ հացահատիկ, 5%-ը կովի յուղ: Նույն ժամանակամիջոցում Անգլիան արտահանել է ԽՍՀՄ 444 միլլիոն ռուբլու ապրանք (բամբակ, առևկաշվեղեն, քիմիական ապրանքներ, մեքենաներ, մանվածք և այլն): Առևտրական հարաբերությունները այդ յերկրների միջև տարեց տարի զարգանում էյին, բայց Անգլիայի պահպանողական կառավարությունը 1927 թ. մայիսի 27-ին խզեց ԽՍՀՄ-ի հետ ունեցած դիպլոմատիական կապը և դրանով մեծ հարված հասցրեց ռուս-անգլիական արտաքին առևտրին:

Նորմալ պայմաններում Անգլիան ինչ ապրանքներ կարող էր արտահանել ԽՍՀՄ-ից, իսկ ԽՍՀՄ-ն՝ Անգլիայից:

Անգլիայի և ԽՍՀՄ-ի միջև առևտրական հարաբերությունները վոր ծովերով են կատարվում:

Պետական կազմը:

Անգլիան սահմանադրական միապետություն է:

Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է յերկու խորհրդարանից (պալատից)—վերին կամ պերերի պալատ և համայնքների պալատ: Թագավորն իրավունք ունի հրավիրել կամ արձակել պարլամենտը, նշանակել նոր լորդեր: Բացի այդ՝ այն բոլոր օրենսգծերը, վորոնք ընդունվում են պալատների կողմից, ուղարկվում են թագավորին ի հաստատություն, թեև թագավորը այդ օրենսգծերը յերբեք չի մերժում: Թե՛ պերերի պալատը և թե՛ համայնքների պալատը պաշտպանում են բուրժուազիայի շահերը, վորովհետև նրանք բաղկացած են խոշոր կալվածատերերից, կապիտալիստ-գործարանատերերից, հոգևորականներից և այլն: Հասկանալի յե, իհարկե, վոր գործարանատերը կաշվորականներից... անցկացնել, վոր ուղղված լինեն բանվորի շահերի դեմ:

Համայնքների պալատը բաղկացած է 415 պատգամավորից, վորոնք ընտրվում են ազգաբնակության կողմից 5 տարով, բայց այդ պալատը թագավորի հրամանով կարող է արձակել և ժամանակից առաջ:

Լորդերի կամ պերերի պալատը բաղկացած է 728 լորդից, վորոնք մասնակցում են կամ ժառանգաբար, կամ իրենց վարած պաշտոնի հետևանքով, կամ նշանակվում են թագավորի կողմից:

Կատարողական իշխանությունը ձևականորեն պատկանում է թագավորին, իսկ փաստորեն մինիստրների խորհրդին:

Դասակարգային փոխհարաբերությունները:

Անգլիայում հասարակության յերկու հակադիր դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի բաժանումը այնպիսի չափերի յե հասել, վորպիսին գոյություն չունի աշխարհի և վոչ մի այլ յերկրում: Միջին խավը—գյուղացիությունը, այստեղ շատ քիչ նշանակություն ունի: Պատերազմից առաջ բուրժուազիան իր տիրապետությունը ապահովեց բանվորական արիստոկրատիայի բավական նշանակալից խավի աջակցությամբ: Համաշխարհային տնտեսության կառուցվածքի մեջ պատերազմի մտցրած փոփոխության գաղութների ավելի և ավելի աճող ինդուստրացման հետեվանքով, բանվորական մասսաների բարեկեցության աստիճանը պակասեց և բանվորական արիստոկրատիայի թիվը նվազեց: Այս հանգամանքը պատճառ յեղավ դասակարգային հակամարտությունների սրման: Այդ պատճառով յերկար ժամանակ գոյություն ունեցող դասակարգային գարմոնյան փոխվեց դասակարգային աշխույժ պայքարի:

Բուրժուական կուսակցությունները:

Կոնսերվատիվ կուսակցությունը հետզհետե դառնում է անգլիական խոշոր բուրժուազիայի միակ կուսակցությունը: Խոշոր պաշտոնեության լուրջ աջակցության է արժանանում և դեռ ազդեցություն ունի բանվորական նշանակալից խավերի վրա:

Լիբերալ կուսակցությունը առևտրական բուրժուազիայի, տեքստիլ գործարանատերերի, նավային ընկերությունների, մանր բուրժուազիայի և ինտելլիգենցիայի կուսակցությունն է հանդիսանում: Լիբերալների կուսակցությունը հետզհետե սեղմվում է աջից՝ կոնսերվատիվ, ձախից՝ բանվորական կուսակցության կողմից:

Պրոլետարական կուսակցությունները:

Բանվորական կուսակցությունը հավաքական կուսակցություն է, վորի մեջ մտնում են առանձին արհմիություններ, կուսակցություններ և անհատ անդամներ: 1925 թվին 3.194.399 անդամներ ուներ: Ինչպես արհմիություններում, նույնպես և բանվորական կուսակցության մեջ հետզհետե զարգանում է այսպես կոչված ձախ ոպպոզիցիան: Կուսակցության մեջ տիրապետող է հանդիսանում ռեֆորմիստական վերնախավը:

Անկախ բանվորական կուսակցությունը յուրատեսակ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն է, վորի մեջ մտնում են ինքնավար կազմակերպություններ: 60.000 անդամ ունի: Ամբողջ կուսակցությունը մտնում է բանվորական կուսակցության կազմի մեջ և նրա ղեկավարող բարձրունքներում գլխավոր դեր է խաղում:

Ֆաբյանների ընկերությունը ինտելլիգենտական սոցիալ-ռեֆորմիստական կազմակերպություն է:

Կոմունիստական կուսակցությունը 5000—6000 անդամ ուներ, բայց հանքագործների գործադուլից հետո այդ թիվը բարձրացավ մինչև 11.000-ի:

Կուսակցությունը շատ ավելի խոշոր ազդեցություն ունի արհմիությունների մեջ, քան կարելի յե յեզրակացնել նրա անդամների քանակից: Հանքագործների գործադուլի ժամանակ (1925), ինչպես և բոլոր մարտական մոմենտներում, կուսակցությունը շատ ակտիվ եր:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄԸ (ընտրված 1924 թ.)

	Ընտրություններին ստացած ձայների թիվը	Պարլամենտում ունեցած տեղերի թիվը
Բանվորական կուսակց. . . .	5.487.620	151
Կոնսերվատորներ	7.385.139	402
Լիբերալներ	2.982.563	41

Ներկայումս բանվորական կուսակցության ազդեցությունը շատ ավելի ուժեղ է, քան կոնսերվատորներինը: 1924 թվի ընտրություններից հետո, մի քանի շրջաններում տեղի ունեցած լրացուցիչ ընտրությունների հետևանքները այդ բանն են հաստատում:

Գլխավոր քաղաքները:

Յերկրի մայրաքաղաքը Լոնդոնն է, վորը գտնվում է Տեմզա գետի վրա: Նա յուր բնակիչների թվով (մոտ $7^1/_2$ միլիոն) ամենամեծ քաղաքն է ամբողջ աշխարհում: Միևնույն ժամանակ նա խոշոր նավահանգիստ է, վորի շրջանառությունը 4 միլլիարդ ռուբլու չափ է: Այս տեսակետից Լոնդոնի հետ կարող է մրցել միայն Նյու-Յորքը: Լոնդոնը նշանավոր է նաև վորպես առևտրական և արդյունագործական կենտրոն. համաշխարհային առևտրի բոլոր թելերի ծայրերը Լոնդոնում են գտնվում:

Մեծ Բրիտանիայի յերկրորդ նավահանգիստը Լիվերպուլն է, վորը ջրանցքով միացած է Մանչեստերի հետ: Նրա վրայով արտահանվում են մեքենաներ, իսկ ներմուծում են ուտելիք և հում նյութ: Կարդիֆ—քարածխի արտահանություն: Բիրմինգհամ—յերկաթուղային կենտրոն, յերկաթե իրերի, ավտոմոբիլների, զինամթերքի արտադրություն: Շեֆֆիլդ—Անգլիայի պողպատե արդյունագործության կենտրոն: Գլազգո—նավաշինության կենտրոն, նավահանգիստ է: Լիդս—մեքենաների և լոկոմոտիվների արտադրություն: Մանչեստեր—բամբակե գործվածքների համաշխարհային կենտրոն: Բրիստոլ—խոշոր նավահանգիստ է, վորի վրայով ներմուծվում են հացահատիկ, փայտ, պտուղներ:

Հարցեր: Հանքային արդյունաբերությունն ինչ նշանակություն ունի Անգլիայի ժողովրդական տնտեսության մեջ:

Հանքային արդյունաբերության վո՞ր ճյուղերն են կարևոր:

Քարածխի արտադրությամբ Անգլիան վոր յերկրից է հետ մնում:

Միջին հաշվով մի անգլիացի տարեկան վորքան քարածուխ է ծախսում:

Չուգունի և պողպատի արտադրությամբ Անգլիան վորերորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում:

Մետաղագործության գլխավոր կենտրոնները վորոնք են, ցույց տվեք:

Արդյունագործության գլխավոր ճյուղերը վորոնք են:

Անգլիան հում նյութը վորտեղից է ստանում:

Անգլիայի արտաքին առևտուրը և առևտրական նավատորմը համեմատեցեք գլխավոր յերկրների առևտրի և նավատորմի հետ (տես գրքի վերջին մասի աղյուսակները):

Անգլիայի արտաքին առևտրի բալանսը ակտիվ է, թե պասիվ:

Անգլիան և ԽՍՀՄ-ն իրար հետ ինչ հարաբերության մեջ են:

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Բրիտանական կայսրությունը, այսինքն Անգլիան յուր բոլոր գաղութներով յերկրագնդի ամենամեծ պետությունն է: Ամբողջ պետության մակարդակը կազմում է 34,6 միլիոն քառ. կիլոմետր, վորից մետրոպոլիան բռնում է 244 հազար քառ. կիլոմետր, իսկ գաղութները—34.400 հազար քառ. կիլոմետր: Բնակիչների ընդհանուր թիվն է 448,9 միլիոն, վորից մոտ 44 միլիոնն ապրում է մետրոպոլիայում, իսկ մնացածը՝ գաղութներում: Այսպիսով յերկրագնդի ամբողջ ցամաքի 1/4-ը և ազգաբնակության 1/4-ը պատկանում են Անգլիային:

Գաղութների մակարդակը մետրոպոլիայի մակարդակից քանի անգամ է մեծ:

Գաղութների ազգաբնակությունը մետրոպոլիայի ազգաբնակությունից քանի անգամ է մեծ:

Անգլիայի գաղութները իրենց իրավական դրությամբ բաժանվում են հետևյալ խմբերի.

1. **Պետական գաղութներ**—*այսպես կոչվում են այն գաղութները, վորոնք կառավարվում են մետրոպոլիայի կողմից նշանակված նահանգապետներով:*

2. **Ներկայացուցչական հիմնարկություններ ունեցող գաղութներ:** *Այս գաղութներում որենսդրական իշխանությունը պատկանում է տեղական հիմնարկություններին, իսկ կատարողական իշխանությունը գտնվում է անգլիական նահանգապետի ձեռքում:*

3. **Դոմինիոններ:** *Որենսդրական իշխանությունը պատկանում է տեղական պարլամենտին, իսկ կատարողական իշխանությունը՝ տեղական կառավարության, վորը պատասխանատու յե տեղական պարլամենտի առաջ: Դոմինիոնները համարյա անկախ պետություններ են: Նրանք կարող են ունենալ սեփական զորք ու նավատորմիղ և պարտավոր չեն մասնակցելու այն պատերազմներին, վոր կհայտարարի մետրոպոլիան: Մետրոպոլիայի կնքած դաշնագրերը պարտադիր չեն դոմինիոնների համար: Դոմինիոններ են* **Ազատ Իռլանդական պետությունը** *(Հարավային Իռլանդիան),* **Կանադան, Նոր-Զելանդիան, Ավստրալիան, Հարավ-Աֆրիկական Միությունը** *և* **Նյու-Ֆաունդլենդը:**

4. **Պրոտեկտորատ**—*կոչվում են այն յերկրները, վորտեղ պահպանվել է նախկին (տեղական) կառավարությունը և վորոնք գտնվում են մետրոպոլիայի հովանավորության տակ, բայց փաստորեն նրանք գաղութներ են:*

5. **Մանդատային յերկրներ.**—*Անգլիան կառավարում է այս յերկրները համաձայն այն մանդատի, վոր տվել է նրան Ազգերի Լիգան: Մանդատային յերկրներ են Իրակը, Պաղեստինը և այլն:*

Անգլիայի գաղութները ցրված են բոլոր աշխարհամասերում: Նրանց մակարդակի և ազգաբնակության մեծությունը յերևում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 39

	Հազար քառ. կիլոմետր	Միլիոն բնակիչ
Յեվրոպայում . . .	69,7	3,4
Ասիայում	5514,5	332,6
Աֆրիկայում . . .	9924,5	52,0
Ամերիկայում . .	10388,1	11,2
Ավստրալիայում .	8504,0	7,8

ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱԼՎԱԾՆԵՐԸ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ազատ Իռլանդական պետություն: *Իռլանդական ժողովրդի դարավոր պայքարից հետո վերջապես 1922 թ. անգլիական կառավարությունը ստիպված յեղավ Հարավային Իռլանդիային տալ ազատություն: Այժմ Հար. Իռլանդիան դոմինիոն է և մտնում է Բրիտանական կայսրության մեջ:*

Ազատ Իռլանդական պետության մակարդակը մոտ 69,4 հազար քառ. կիլոմետր է, իսկ բնակիչների թիվը՝ 2,9 միլիոն է: Բնակիչների մեծ մասը իռլանդացիներ են, վորոնց գլխավոր պարապմունքը գյուղատնտեսությունն է: Յերկրի խոնավ կլիման առանձնապես նպաստավոր է անասնապահության համար: Ցանքսերի կեսից ավելին բռնված է խոտաբույսերով, 1/5-ը արմատապտուղներով և միայն 1/4-ը՝ հացահատիկներով: Ազգաբնակությունը սնվում է գլխավորապես կարտոֆիլով:

Արդյունագործությունը թույլ է:

Յերկրի մայրաքաղաքն է **Դուբլինը:**

Ջիբրալտար: *Գտնվում է Ջիբրալտարի նեղուցի յեվրոպական ափին: Առաջնակարգ ամրոց է. գտնվում է Միջերկրական ծովի մուտքի մոտ, դեպի Հնդկաստան տանող ծովային մեծ ճանապարհի վրա: Նրա նավահանգստում է կանգնում Միջերկրական ծովում գտնվող անգլիական նավատորմի մի խոշոր մասը:*

Մալտա: *Կղզի յե Միջերկրական ծովում: Գտնվում է Յեվրոպայից Հնդկաստան տանող ծովային ճանապարհի*

վրա. ունի ստրատեգիական նշանակություն։ Անգլիական ռազմական նավատորմղի կայաններից մեկն է։

Ցույց տվեք Անգլիայի եվրոպական գաղութները (Աշխ. ատլաս, Եվրոպա) Համաշխ. համր քարտեզի վրա վորեւե գույնով ներկեցեք այդ գաղութները և գրեցեք անունները։
Մալտան և Ջիբրալտարը յերկրագնդի վո՞ր անտեսական զոնայում են գտնվում (տես 16 և 17 յերեսները).

ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱԼՎԱԾՆԵՐՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Իրակ (Միջագետք)։

Միջագետք կոչվում է այն դաշտավայրը, վոր ձգվում է Յեփրատ և Տիգրիս գետերի յերկարությամբ մինչև Պարսից ծոցը (ցույց տվեք)։ Գարնանը, յերբ Հայկական լեռնաշխարհի ձյունը հալվում է, այդ գետերը վարարում են և իրենց հունից ՝դուրս գալով պարարտացնում յեզերքներով ձգվող հողերը։ Ազգաբնակությունը գետափերին պարապում է այգեգործությամբ և յերկրագործությամբ։ Մշակում են խաղող, ձիթենի, փյունիկյան արմավենի, ցորեն, բամբակ և այլն։ Գետերից հեռու տարածվում են անապատներ և չոր տափաստաններ, վորտեղ ազգաբնակության գլխավոր պարապմունքը անասնապահությունն է։ Չոր կլիմայի պատճառով արհեստական վոռոգումը յերկրագործության հիմնական պայմաններից մեկն է։ Մեզնից մոտ 4000 տարի առաջ Միջագետքում գտնվում եյին զորեղ յերկու պետություն՝ Բաբելոնը և Ասորեստանը։ Առաջինի մայրաքաքաքն էր Բաբելոնը, վորի բնակիչների թիվը միլիոնից անցնում էր։ Արհեստական ջրանցքների ոգնությամբ Միջագետքի ստորին դաշտերը տալիս եյին ցորենի մեծ բերք, վորը վոչ միայն տեղական ազգաբնակությանն էր բավարարում, այլ և խոշոր չափով արտահանվում էր։ Բայց հետագայում յերկար պատերազմների հետևանքով յերկիրն ավերվեց և այժմ նախկին մշակված դաշտերի տեղ տարածվում են ճահիճներ, լճակներ ու անապատներ։

Միջագետքի ամենամեծ հարստությունը նավթն է, վորը գտնվում է Մոսուլի, Բասրայի և Բաղդադի շրջաններում։ Պատերազմի ընթացքում Անգլիան, յերկյուղ կրելով, վոր այդ հարստությունը կարող է ուրիշ պետության ձեռքն ընկնել, այստեղ պահում էր ուժեղ զորամասեր, զինված տանկերով և աերոպլաններով։ Պատերազմից հետո Ազգերի Լիգան այդ յերկիրը կառավարելու համար մանդատ տվեց Անգլիային։ 1921 թ. ոգոստոսի 23-ին Միջագետքը հայտարարվեց սահմանադրական միապետություն—Իրակ անունով և թագավոր նշանակվեց անգլիասեր Ֆայսալը։ Կատարողական իշխանությունը պատկանում է մինիստրների խորհրդին, վորը նշանակվում է թագավորի կողմից, բայց փաստորեն յերկրի կառավարությունը գտնվում է անգլիական Գերագույն Կոմիսարի ձեռքում։

Իրակի մակարդակն է մոտ 371 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 2,8 միլիոն։ Ազգաբնակության կեսից ավելին արաբներ են, շատ կան նաև քյուրդեր և թյուրքեր։ Գլխավոր քաղաքն է Բաղդադը, վորը գտնվում է Տիգրիսի ափին, Բաղդադի նշանավոր յերկաթուղային գծի վրա և խոշոր առևտրական կենտրոն է։

Բասրա—նավահանգիստ է Պարսից ծոցի ափին։ Մոսուլ—հարուստ է նավթով։ Իրակից արտահանում են արմավ, նավթ, անասուն, կաշի, գորգեր, բուրդ, յուղ և այլն։

Իրակի նշանակությունն Անգլիայի համար։ Մոսուլը—կռվախնձոր։

Մենք տեսանք, վոր Անգլիան հացի և բամբակի կարիք ունի. այդ պատճառով նա առանձնապես ուշադրություն է դարձնում այնպիսի յերկրների վրա, վորոնք կարող են արդյունագործությանը ուտելիք և հում նյութ մատակարարել։ Այս տեսակետից Միջագետքը մեծ ապագա ունի։ Արգավանդ հողը և տաք կլիման ցորենի և բամբակի մշակության համար բավական նպաստավոր են. արհեստական վոռոգումը ուժեղացնելու դեպքում Անգլիան կարող է Միջագետքից արտահանել մեծ քանակությամբ ցորեն ու բամբակ։ Այս ուղղությամբ անգլիական կապիտալն արդեն բավական մեծ քայլեր է արել։ Մյուս կողմից Միջագետքը (Իրակը) կարևոր աշխարհագրական դիրք ունի։ Նա գտնվում է Միջերկրական ծովից դեպի Պարսից ծոցը և Իրանը տանող ճանապարհի վրա։

Բայց Իրակն ավելի մեծ նշանակություն ունի յուր այն նավթային հարստություններով, վորոնք տարածվում են Մոսուլի շուրջը։ Դեռ պատերազմից առաջ Անգլիան ստիպված էր Մոսուլին տիրելու, նավթային հարստությունները յուր ձեռքը ձգելու համար պայքարել Գերմանիայի դեմ։ Գերմանիան, զուրկ լինելով նավթահանքերից, ամեն կերպ աշխատում էր ապահովել իրեն Մոսուլի նավթով։ Հասկանալի է, ի հարկե, վոր Անգլիան Գերմանիային ջարդելուց հետո պետք է պատերազմից հետո աշխատեր հաստատել յուր իշխանությունը Մոսուլում։ 1920 թ. Սան Րեմոյում կայացավ Ֆրանսիայի և Անգլիայի միջև մի համաձայնություն, վորի հիման վրա Ֆրանսիան հրաժարվեց վորևէ պահանջ ունենալ Մուսուլի նավթի նկատմամբ, իսկ դրա փոխարեն Անգլիան զիջեց Ասորիքը Ֆրանսիային և բացի այդ պարտավորվեց նրան տալ նաև Մոսուլից ստացված նավթի 25%-ը։

Բայց դրանով խնդիրը չլուծվեց։ Թյուրքիան յուր հերթին պահանջում էր Մոսուլը իրեն վերադարձնել, պատճառաբանելով վոր այդ քաղաքը գտնվում է թյուրքական տերրիտորիայում։ Լոզանի կոնֆերենցիան խնդիրը լուծեց հոգուտ Անգլիայի։ Մյուս կողմից՝ Մոսուլի նավթով շահագրգռված եյին և Միաց. Նահանգները։ Այստեղ էլ Անգլիան վորոշ զիջում անելով Միաց. Նահանգներին, կարողացավ Մոսուլը յուր ձեռքում պահել։

Ասիայի քարտեզի վրա ցույց տվեք Միջագետքը: Գտեք նրա սահմանները:
Միջագետքը վո՞ր կլիմայական գոնայում է գտնվում:
Բնակիչներն ինչո՞վ են պարապում. ուրեմն Միջագետքը ինչ տիպի յերկիր է:
Միջագետքն ինչ նշանակություն ունի Անգլիայի համար:
Ցույց տվեք Յեփրատը և Տիգրիսը. նրանք ո՞ւր են թափվում:
Աշխատանք: Ասիայի համր քարտեզի վրա ներկեցեք Միջագետքի տեղը: Նշանակեցեք գետերը, սահմանակից յերկրները և քաղաքները:

Պաղեստին:

Պաղեստինի մակերեսը 23.300 քառ. կիլոմետր է, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 757 հազար է: Ազգաբնակությունը հետևյալ ցեղային կազմն ունի.

Արաբներ	660.000	հոգի կամ	87,2%
Հրեաներ	84.000	»	11,1%
Ուրիշ ազգություններ .	13.000	»	1,1%
Ընդամենը	757.000		100%

Պատերազմից առաջ Պաղեստինը պատկանում եր Թյուրքիային: 1917—18 թվականներին Անգլիան գրավեց այդ յերկիրը և նրան կառավարելու համար 1923 թ. Ազգերի Լիգայից ստացավ մանդատ: Այժմ Պաղեստինի կառավարության գլուխ է կանգնած Անգլիական Գերագույն Կոմիսարը, վորին կից գտնվում է առանձին օրենսդրական մարմին:

Յուր բնական պայմաններով Պաղեստինը հիշեցնում է Ասորիքը, Յեգիպտոսը և Միջերկրականի մյուս յերկրները: Նույն ամառային շոգերն ու ձմեռային ցրտերը, նույն մշտադալար բույսերը, և համարյա նույն տնտեսությունը: Բնակիչների գլխավոր պարապմունքը յերկրագործությունը և անասնապահությունն է: Յերկրի տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի մանավանդ այգեգործությունը (նարինջ, կիտրոն, խաղող և այլն):

Բնական հարստությունների մեջ աչքի յե ընկնում նավթը, վոր սակայն դեռ չի մշակվում:

Պաղեստինից արտահանում են գինի, պտուղներ (նարինջ, կիտրոն), յուղ և այլն, իսկ ներմուծում են գլխավորապես գործվածքներ, շաքար և գործարանային այլ ապրանքներ: Առևտուրը գտնվում է անգլիացիների ձեռքում:

Ասիայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Պաղեստինը:
Պաղեստինը յերկրագնդի վո՞ր տնտեսական գոնայում է գտնվում:

Բրիտանական Հնդկաստան:

Բրիտանական Հնդկաստանը Անգլիայի ամենամեծ գաղութներից մեկն է: Նրա մեջ մտնում են Հնդկաստանը, Հնդկաչինի արևմտյան մասը Բիրմայի հետ, Բելուջիստանը, Ադենը և մի շարք կղզիներ—Ցեյլոնը, Պերիմը, Սոկոտրան և այլն:

Բրիտանական Հնդկաստանի կորիզը կազմում է Հնդկաստան թերակղզին, այդ պատճառով մենք կանգ կառնենք միայն այդ թերակղզու վրա:

Հնդկաստանը Ասիայի վո՞ր մասումն է գտնվում (Ասիա-ֆիզիկական):
Ցույց տվեք Հիմալայան լեռները, Բենգալյան և Արաբական ծոցերը, Ինդոս և Գանգես գետերը:
Ցույց տվեք Լոնդոնից Հնդկաստան տանող ճանապարհը:

Հնդկաստանը ըստ մակերևույթի կազմության կարելի յե բաժանել յերեք մասի. 1) Հիմալայներ, 2) Հնդկական դաշտավայր և 3) Դեկանի բարձրավանդակ:

Հիմալայան լեռնաշղթան լայն աղեղով ձգվում է արևմուտքից դեպի արևելք և Հնդկաստանը բաժանում է Տիբեթից: Նրա գագաթներից մի քանիսն ունեն ավելի քան 8000 մետր բարձրություն (Եվերեստ—8840 մետր, Կանչինչինգա—8500 մետր և այլն): Հիմալայն լեռների հարավային լանջերը բավական հարուստ են բուսականությամբ (ինչո՞ւ): Ստորոտներում ձգվում են արևադարձային անտառներ, վորոնք բաղկացած են բանաններից, արմավենիներից, բամբուկներից և այլն. ավելի բարձր աճում են սաղարթավոր և ապա փշատերև անտառները: Բարձրանալով ավելի վեր, մենք տեսնում ենք, վոր անտառները վերանում են և նրանց փոխարեն տարածվում են ալպյան մարգագետիններ, իսկ գագաթներում իշխում է հավերժական ձյունը:

Հնդկական դաշտավայրն առաջացել է Ինդոսի և Գանգեսի բերած տիղմից: Նրա արևմտյան մասը վոռոգվում է Ինդոս գետով, իսկ արևելյանը Գանգեսով:

Հնդկաստանը յերկրագնդի ամենատաք յերկրներից մեկն է: Այնտեղ ձմեռն այնքան տաք է, վորքան հուլիսին Արարատյան դաշտում: Յերկրի համար մեծ նշանակություն ունեն մուսսոնները, վորոնք կես տարի փչում են ծովից դեպի ցամաք, կես տարի էլ՝ հակառակ ուղղությամբ: Հունիսից մինչև հոկտեմբեր քամիները փչում են ծովից և անցնելով յերկրի ներսը՝ գոյացնում են բավականաչափ անձրևներ: Շատ անձրևներ գալիս են մանավանդ Գանգեսի ավազանում, վորտեղ առատ խոնավության պատճառով ճահիճներն ու արևադարձային անտառները ընդարձակ տարածություն են բռնում: Շատ քիչ մթնոլորտային տեղումներ են թափվում Ինդոսի ստորին հոսանքում: Դա բացատրվում է նրանով, վոր մուսսոնները անցնելով տաքացած դաշտավայրի վրայով, բարձրությունների չեն հանդիպում և իրենց միջի խոնավությունը տանում են յերկրի խորքերը: Ինդոսի ստորին հոսանքի դաշտավայրը Հնդկաստանի ամենաչոր տեղն է: Այստեղ է գտնվում Տարր անապատը:

Հնդկաստանը վո՞ր տնտեսական և կլիմայական գոնայում է գտնվում:
Ի՞նչ քամիներ առանձնապես նշանակություն ունեն Հնդկաստանի համար:

Մակերեսը և ազգաբնակությունը:

Հնդկաստանի մակերեսը հավասար է մոտ 4,6 միլիոն քառ. կիլոմետրի, իսկ ազգաբնակության թիվը՝ 319 միլիոնի: Յուրաքանչյուր քառ. կիլոմետրի

վրա միջին հաշվով ապրում է 80 մարդ։ Այսպիսով Հնդկաստանը յերկրագնդի խիտ բնակված յերկրներից մեկն է։ Խիտ ազգաբնակություն ունի մանավանդ Գանգեսի դաշտավայրը, վորտեղ յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է 220 մարդ։ Տարրի շրջանը համարյա զուրկ է ազգաբնակությունից։

Նկ. 35. Հնդիկներ նրանց հագուստը, զարդարանքները և բնակարանը։ Հնդիկի մեջքին բանաններ են. հարուստ հնդիկը վերադառնում է վորսից։

Աղյուսակ № 40.

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Հնդիկներ (սպիտակ ցեղ)	75%
Դրավիդներ (սև ցեղ)	20%
Հնդկաչիններ (դեղին ցեղ)	4%
Յեվրոպացիներ	0,1%
Այլ ժողովուրդներ	0,9%

Անգլիացիների թիվը ընդամենը 300 հազար է։

Գյուղատնտեսություն։ Հնդկաստանը գյուղատնտեսական յերկիր է։ Նրա ազգաբնակության 70%-ից ավելին յերկրագործությամբ է պարապում և ստացած բերքով վոչ միայն բավարարում է յերկրի կարիքներին, այլև արտահանության նյութ է տալիս։ Հնդկաստանի հողն արգավանդ է, իսկ կլիման այնքան տաք, վոր հնդիկը կարողանում է տարեկան 2—3 բերք վերցնել։

Մշակովի հողերը հազիվ յերկրի ամբողջ մակարդակի կեսն են կազ-
մում. մնացած կեսը բռնված է լեռներով, անապատով և ճահիճներով։ Վո-
րովհետև յերկրի մի զգալի մասն ունի չոր կլիմա, այդ պատճառով արհես-
տական վոռոգումը կարևոր նշանակություն ունի Հնդկաստանի համար։
Արհեստական վոռոգումը մեծ նշանակություն ունի մանավանդ Ինդոսի
ավազանի համար, վորտեղ ցանքսերի ¾-ից ավելին ջրովի յեն։
Հնդկաստանի գլխավոր հացահատիկը բրինձն է, վորով բռնված է ցան-
քսերի ¼-ը։ Բրնձի բերքով (տարեկան մոտ 47 միլիոն տոնն) Հնդկաստանը
մրցում է Չինաստանի հետ։ Յերկրորդ կարևոր հացահատիկը ցորենն է, վո-
րի տարեկան բերքը մոտ 9 միլիոն տոնն է։
Ցորենի արտադրությամբ Հնդկաստանը վեցերորդ տեղն է բռնում (տես աղյուսակը)։
Մյուս հացահատիկներից տարածված են կորեկը յեվ գարին։
Հացահատիկներից հետո գալիս են թելատու և յուղատու բույսերը։
Բամբակի բերքով Հնդկաստանը յերկրորդ տեղն է բռնում (Միաց. Նահանգ-
ներ)։ Բամբակի խոշոր մասն այժմ գործ է ածվում յերկրի ներսը, բայց
մի խոշոր մասն էլ (մոտ 800 տոնն) արտահանվում է։
Հնդկաստանի համար ավելի կարևոր է ջուտը, վորի բերքով (մոտ 8
միլիոն կիպ տարեկան) նա մրցակից չունի ամբողջ աշխարհում։ Յուղատու
բույսերից աչքի յեն ընկնում մանանեխը, քունջութը յեվ վուշը։ Վուշի սեր-
մի բերքով Հնդկաստանը բռնում է յերկրորդ տեղը (Արգենտինա)։
Մյուս բույսերից տարածված են շաքարեղեգը յեվ թեյը։ Շաքարեղեգի
շաքարի բերքով Հնդկաստանը բռնում է յերկրորդ տեղը (Կուբա)։ Թեյի
մշակությունը վերջերս խոշոր չափերի յե հասել։ Թեյի համաշխարհային ար-
տահանության ⅔-ից ավելին տալիս են Հնդկաստանը և Ցեյլոնը։
Մեծ բերք են տալիս նաև կակաոն, խինայի ծառը յեվ դարչինը։
Անասունների քանակով Հնդկաստանը բռնում է առաջին տեղը, բայց
անասունների վորակով նա շատ յերկրներից հետ է մնում։

Աղյուսակ № 41.

ԹԵՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՅ ԱՐՏԱԴՐՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ (1925)

Չինաստան	48	հազար տոնն
Բրիտանական Հնդկաստան	152	» »
Ճապոնիա և Ֆորմոզա	22	» »
Ցեյլոն	95	» »
Հոլլանդական Հնդկաստան	50	» »
Մնացած յերկրները	1	» »
Ընդամենը	368	» »

№ 19 աղյուսակից պարզեցեք Հնդկաստանի անասունների թիվը։
Հնդկաստանում վորքան խոշոր յեղջյուրավոր անասուն կա և վորքան վոչխար ու այծ։

Բնական հարստությունները:

Հնդկաստանը հարուստ է զանազան հանքերով, վորոնց մեջ կարևոր են քարածուխը, մանգանը, վոսկին և այլը: Նավթն ստացվում է գլխավորապես Բիրմայում, այսինքն Հնդկաչինում:

Լեռնային արդյունաբերության ամբողջ արժեքի կեսից ավելին տալիս է քարածուխը: Վոսկու արտադրությամբ Հնդկաստանը բռնում է առաջին տեղը ասիական յերկրների մեջ: 1926 թ. ստացվել է 20 միլիոն տոնն քարածուխ, 457 հազար տոնն չուգուն, 250 հազար տոնն պողպատ, 0,8 միլ. տոնն մանգան, 1,1 միլիոն տոնն նավթ, 13 հազ. կիլոգրամ վոսկի:

Նավթի արտադրությամբ Հնդկաստանը վո՞րերորդ տեղն է բռնում. համեմատիր № 24 աղյուսակի մեջ հիշված յերկրների հետ:

Մանգանի արտադրությունը վո՞րքան է և ստացված մանգանի քանակությամբ Հնդկաստանը վո՞րերորդ տեղն է բռնում (աղյուսակ № 27):

Արդյունագործություն:

Հանքային հարստությունները, անասնապահությունից և յերկրագործությունից ստացված հում նյութերի առատ պաշարը և մյուս կողմից աշխատավոր ձեռքերի խոշոր քանակությունը միանգամայն նպաստավոր են խոշոր արդյունագործության զարգացման համար: Բայց անգլիական կապիտալիստները յերկար ժամանակ ձեռնտու չեյին գտնում հնդկական արդյունագործության զարգացումը, վորովհետև այդ դեպքում հնդկական գործարանը կարող եր մրցել մետրոպոլիայի գործարանի հետ: Դրան խանգարում եր և առևտրի ազատությունը. ամեն կողմից Հնդկաստան եյին թափում զանազան եժան ֆաբրիկատներ: Պատերազմի ժամանակ այս հանգամանքից ոգտվեց, մանավանդ, Յապոնիան, վորը հնդկական շուկան վողողեց ապրանքներով և սկսեց դուրս մղել անգլիական ապրանքները: Հասկանալի յե, իհարկե, վոր դրանից անգլիական կապիտալը տուժում եր և անգլիական բուրժուազիան ստիպված յեղավ փոխել յուր քաղաքականությունը: Ներմուծվող ապրանքների վրա մաքս նշանակեցին և արդյունագործությունը զարգացնելու համար գործի մեջ խոշոր կապիտալ դրին: Տեղական արդյունագործությունն սկսեց զարգանալ և կարճ ժամանակամիջոցում առատ արդյունք տվեց, որինակ՝ տեքստիլ արդյունագործությունը յերեք տարվա ընթացքում 350 միլիոն ռուբլիա արդյունք է տվել: Արդյունագործության ճյուղերից կարևոր նշանակություն ունեն բամբակի և ջուտի արդյունագործությունը, մետաղագործությունը, սնընդամթերքների և կաշվեղենի արդյունաբերությունը:

Արդյունագործության զարգացման հետ մեծանում է և գործարանային բանվորության թիվը, վորն այժմ հասնում է մոտ 2,6 միլիոնի:

Ընդհանուր առմամբ ազգաբնակության 70%-ը պարապում է գյուղատնտեսությամբ, իսկ 30%-ը արդյունագործությամբ, տրանսպորտով և այլն:

Արտաքին առևտուրը:

Հնդկաստանը յուր արտաքին առևտրի չափով այժմ բռնում է հինգերորդ տեղը ամբողջ աշխարհում:

Ներմուծվում են՝ բամբակե գործվածքներ, մետաղներ և մեքենաներ, շաքար, մետաքս, քարածուխ, ավտոմոբիլներ, թուղթ:

Արտահանվում են՝ բամբակ, ջուտ և ջուտի գործվածքներ, թեյ, սուրճ և այլ արևադարձային պրոդուկտներ, կաշի, բուրդ, բրինձ և ցորեն:

Արտաքին առևտրի մասին գաղափար է տալիս հետևյալ աղյուսակը.

	Ամբողջ ներմուծություն	Ամբողջ արտահանություն
Ուտելիք	14%	25%
Հում նյութ	8%	51%
Ֆաբրիկատներ	76%	22%
Զանազան ապրանքներ	2%	2%

Հնդկաստանի արտաքին առևտրի մեջ առաջին տեղը բռնում է Անգլիան, ապա գալիս են Միաց. Նահանգները և Յապոնիան:

Հնդկաստանի արտահանության և ներմուծության մեջ առաջին տեղը վո՞ր ապրանքներն են բռնում:

Անգլիան ի՞նչ է արտահանում Հնդկաստանից, և փոխարենն ի՞նչ է ներմուծում:

Պետական կազմը:

Հնդկաստանը գաղութ է: Յերկիրը կառավարում է անգլիական փոխարքան, վորը նշանակվում է մետրոպոլիայի կողմից: Փոխարքայի կից կան յերկու խորհրդարան—պետական խորհուրդ և Որենսդրական ժողով: Բայց փոխարքան կարող է նրանց հաշվի չառնել: Մի շարք շրջաններ կառավարվում են սեփական իշխաններով, վորոնք գտնվում են Անգլիայի հովանավորության տակ:

Գլխավոր քաղաքները:

Կալկաթա—յերկրի ամենամեծ քաղաքն է: Խոշոր արդյունագործական և առևտրական կենտրոն և միևնույն ժամանակ առաջնակարգ նավահանգիստ է: Բոմբեյ—նավահանգիստ է: Բամբակի արդյունագործության կենտրոն: Բենարես—յերկրի կրոնական կենտրոնն է: Դելի—մայրաքաղաք է: Կարաչի—նավահանգիստ, ցորենի արտահանություն: Մադրաս—նավահանգիստ:

Հնդկաստանն ինչպիսի յերկիր է և ինչ զոնային և վոչ զոնային ֆակտորներ են ազդում Հնդկաստանի տնտեսական կյանքի վրա: 3. Գլխավորապես ինչ բույսեր են մշակում: 4. Աշխարհագրական դիրքը արտաքին առևտրի համար նպաստավո՞ր է: 5. Ի՞նչ է արտահանվում: 6. Ինչու Անգլիան աշխատում է ջրանցքներ անցկացնել: 7 Հնդկաստանն ինչ նշանակությունն ունի Անգլիայի համար: 8. Ասիայի համր քարտեզի վրա ներկեցեք Հնդկաստանի տեղը. նշանակեցեք գլխավոր քաղաքները, գետերը:

Անգլիայի մնացած գաղութներից նշանավոր են Սինգապուր յեվ Հոնգկոնգը: Սինգապուր խոշոր նավահանգիստ է, համանուն կղզու վրա: Գտընվելով Հնդկական ովկիանոսից դեպի Խաղաղ ովկիանոսը տանող ճանապարհի վրա, նա ունի կարևոր ստրատեգիական նշանակություն: Խաղաղ ովկիանոսից Բրիտանական Հնդկաստանը կարող է հարձակման յենթար-

կվել Ճապոնիայի կամ Միացյալ Նահանգների կողմից։ Այդ պատճառով Անգլիան աշխատում է Սինգապուրն ամրացնել և դարձնել խոշոր ռազմական բազա։

Հոնգկոնգը կարևոր նավահանգիստ է։ Նա գտնվում է Չինաստանում, Կանտոնի դիմաց մի փոքր կղզու վրա։ Ամբողջ Հարավային Չինաստանի արտաքին առևտուրը կատարվում է Հոնգկոնգի վրայով։ Հոնգկոնգով վերջանում է անգլիական ծովային մեծ ճանապարհներից մեկը՝ Լոնդոն—Ջիբրալտար—Մալտա—Սուեզ—Ադեն—Սինգապուր—Հոնգկոնգ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՆԵՐԸ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Յեգիպտոս։ Յեգիպտոսը գտնվում է Աֆրիկայի հյուսիսարևելյան անկյունում, Նեղոսի ստորին հոսանքի շրջանում։ Նրա մակերեսը հավասար է մոտ 944 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 14 միլիոն է։ Միջին հաշվով յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա ապրում է 14 մարդ։ Ազգաբնակության խոշոր մասը ֆելլահներն են, վորոնք հին յեգիպտացիների ժառանգներն են և պարապում են գլխավորապես յերկրագործությամբ։ Ստորին Յեգիպտոսի քաղաքներում ինչպես և անապատներում ապրում են մեծ քանակությամբ արաբներ։ Թափառական բեդուինների (արաբների) սիրած պարապմունքը անասնապահությունն է։

Յեգիպտոսի համար չափազանց մեծ նշանակություն ունի Նեղոսը։ Ամեն տարի (հունիսից մինչև հոկտեմբեր) նա վարարում է և դուրս գալով յուր ափերից վողողում է յուր հովիտը, մոտ 15 կիլոմետր լայնությամբ։ Նեղոսի վարարման պատճառն այն արևադարձային անձրևներն են, վորոնք առատորեն թափվում են Հաբեշստանում և Նեղոսի ակունքներում։ Այդ վարարումները կանոնավորելու համար անգլիացիները Ասուանում և մի քանի ուրիշ տեղերում շինել են հսկայական պատվարներ։

Յեգիպտոսի ամենամշակված և ամենախիտ բնակված շրջանը կազմում Նեղոսի հովիտը։ Այդ հովտից դեպի արևելք և արևմուտք տարածվում են ընդարձակ անապատներ, վորտեղ յերկրագործությունը հնարավոր է միայն ոազիսներում։

Յեգիպտոսը գյուղատնտեսական յերկիր է։ Նրա ազգաբնակության $^{2}/_{3}$-ից ավելին պարապում է գյուղատնտեսությամբ։ Շնորհիվ տաք կլիմայի և արհեստական ջրանցքների՝ Յեգիպտոսում մի տարվա մեջ 2—3 բերք են վերցնում։

1926 թ. ցանքսերը հետևյալ պատկերն ունեյին

Յեգիպտացորեն	824	հազար	հեկտար
Ցորեն	620	»	»

Գարի	148	»	»
Բրինձ	79	»	»
Կորեկ	97	»	»
Բամբակ	750	»	»
Շաքարեղեգ	23	»	»

Մենք տեսնում ենք, վոր Յեգիպտոսի կարևոր հացահատիկներն են յեգիպտացորենը, ցորենը և գարին։ Միջին հաշվով մեկ հեկտարից ստացվում է 17—18 կվինտալ ցորեն, իսկ յեգիպտացորենը տալիս է նույնիսկ մինչև 25 կվինտալ։ Սեպհական հացը չի բավարարում յերկրի կարիքներին։

Յեգիպտոսի ժողովրդական տնտեսության համար մեծ նշանակություն ունի բամբակը, վորի բերքով Յեգիպտոսը բռնում է չորրորդ տեղը (Միաց. Նահանգներ, Հնդկաստան և Չինաստան)։

Արտահանության գլխավոր առարկաներն են—բամբակը, շաքարը և այլ գյուղատնտեսական ապրանքներ. Ներմուծվում են հացահատիկ, գործվածքներ, մեքենաներ, և այլն։ Արտաքին առևտրի մեջ մեծ նշանակություն ունեն Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան։

ԽՍՀՄ-ն Յեգիպտոսին տալիս է նավթ, փոխարենը ներմուծում է բամբակ։

Յեգիպտոսի նշանակությունն Անգլիայի համար շատ մեծ է։ Անգլիան Յեգիպտոսից արտահանում է բամբակ, վորի բերքն ապագայում ավելի կմեծանա շնորհիվ նոր անցկացնվող ջրանցքների։ Մյուս կողմից Յեգիպտոսը պաշտպանում է Սուեզի ջրանցքն արևմուտքից։

Յեգիպտոսը սահմանադրական միապետություն է և 1922 թվականից համարվում է անկախ պետություն, բայց փաստորեն նա գտնվում է անգլիական հովանավորության տակ։ Անգլիան յուր շահերը պաշտպանելու համար այստեղ զորքեր է պահում։ Գլխավոր քաղաքներն են Ալեքսանդրիան և Կահիրեն։ Առաջինը համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստ է, իսկ յերկրորդը՝ յերկրի մայրաքաղաքն է։

Յեգիպտոսը վորտեղ է գտնվում, ինչպիսի աշխարհ. դիրք ունի։ Նեղոսը ինչ նշանակություն ունի յերկրի համար։ Տնտեսական կյանքն ինչ բնույթ ունի։ Ինչ են արտահանում։ Յեգիպտոսի նշանակությունն Անգլիայի համար ինչումն է կայանում։ Գլխավոր քաղաքները վորոնք են։

Հարավ-Աֆրիկական Միություն։ Հարավ-Աֆրիկական Միությունը Անգլիայի կարևոր դոմինիոններից մեկն է։ Նրա մակերեսը կազմում է մոտ յերկու միլիոն քառակուսի կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 7,2 միլիոն։ Յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա ապրում է 3,6 մարդ։

Բնակիչները բաղկացած են նեգրական ժողովուրդներից (զուլուսներից, բեչուաններից, հոտենտոտներից և բուշմեններից), հոլլանդացիներից, անգլիացիներից և Ասիայից գաղթած մալայացիներից ու հնդիկներից։ Հե-

տեսյալ աղյուսակը ցույց է տալիս այդ ժողովրդների թվական մեծությունը։

Սպիտակներ (անգլիացիներ և հոլլանդացիներ) . .	1.520.000	մարդ կամ	21,9%
Նեգրեր	4.700.000	» »	67,8%
Ասիական ժողովուրդներ	165.700	» »	2,4%
Այլ ժողովուրդներ	545.500	» »	7,9%
Ընդամենը	6.931.200		100%

Այսպիսով յերկրի ազգաբնակության խոշոր մասը նեգրեր են, վորոնք, սակայն, քաղաքացիական իրավունքներից զուրկ են։ Սպիտակներն ամեն կերպ աշխատում են նեգրերին և ասիացիներին հեռու պահել յերկիրը կառավարելու գործից։

Հարավ-Աֆրիկական Միության արևելյան ծովեզերքն ու լեռնալանջերը յերկրի ամենահարուստ մասն են կազմում։ Արևելքից փչող տաք և խոնավ քամիների շնորհիվ յերկրի այս մասը բավական առատ անձրևներ է ստանում։ Մշտադալար բույսերը տեղ-տեղ ընդարձակ տարածություններ են ծածկում։ Կոկոսյան արմավենին, բանանը, շաքարեղեգը, բրինձը, թեյը, նարինջը, կիտրոնը և այլն բավական տարածված են։ Դրակոնյան լեռներից դեպի արևմուտք ընկնում են չոր տափաստաններ, վորոնք ավելի հարմար են անասնապահության համար։ Յերկրագործությունն այստեղ հնարավոր է միայն արհեստական վոռոգման դեպքում։ Հար. Աֆրիկ. Միությունը գյուղատնտեսական յերկիր է։ Գլխավոր մշակույթներն են ցորենը (1927—2,3 միլիոն ցենտներ) և յեգիպտացորենը (1927 թ.—17,4 միլիոն ցենտներ)։ Մեծ չափով մշակվում են նաև ծխախոտ, պտղատու ծառեր և այլն։ Վերջերս առանձին ուշադրություն են դարձնում նաև բամբակի վրա։

Գյուղատնտեսության մյուս կարևոր ճյուղը կազմում է անասնապահությունը։ Բնակիչները մեծ հաջողությամբ բազմացնում են կաթնատու և մսատու անասուններ։ Միսը, կաթնամթերքներն ու բուրդը արտահանվում են։ Արտահանության ամբողջ արժեքի 10%—20%-ը բուրդն է տալիս։ Յուրաքանչյուր 100 բնակչին հասնում է 226 գլուխ խոշոր յեղջ. անասուն։

Հար. Աֆվիկական Միության բնական հարստությունները մեծ են և բազմազան։ Դրանց մեջ կարևոր են վոսկին, քարածուխը և ադամանդը։ Հանքային արդյունաբերության ամբողջ արժեքի 80%-ը կազմում է վոսկին, 10%-ը քարածուխը, իսկ 8%-ը ադամանդը։ Վոսկու համաշխարհային արտադրության կեսից ավելին տալիս է Հար. Աֆրիկական Միությունը։

Արտահանության գլխավոր առարկաներն են վոսկին, ադամանդը, կաշին, յեգիպտացորենը, բուրդը և քարածուխը։ Արտահանող պետությունների մեջ առաջին տեղը բռնում է Անգլիան (արտահանության 75%-ը)։ Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում ելեկտրական պարագաները, մեքենաները և գործվածքները։

Հար. Աֆրիկական Միությունն, ինչպես ասացինք անգլիական դոմինիոն է։ Նա բաղկացած է հետևյալ չորս գաղութներից՝ Բարեհույս հրվանդան, Նատալ, Տրանսվաալ և Ազատ Որանժի պետություն, վորոնք 1909 թ. ֆեդերատիվ կապերով միանալով իրար հետ կազմեցին Հար. Աֆրիկական Միությունը։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է սենատից և պատգամավորների խորհրդարանից։ Անգլիական գեներալ-նահանգապետն իրավունք ունի արձակել այդ պարլամենտը կամ հրավիրել աշխատանքի։

Գլխավոր քաղաքները։

Պրետորիա—մայրաքաղաք. գտնվում է Տրանսվաալում։ Յոհաննեսբուրգ—վոսկու արդյունաբերության կենտրոն։ Կիմբերլեյ—ադամանդի արդյունաբերության կենտրոն։ Կապշտադ—կարևոր նավահանգիստ է։

Հար.-Աֆրիկական Միությունը վորտեղ է գտնվում։ Յերկրի վոր մասն է լավ վոռոգվում և վորը՝ վատ։

Նա ինչպիսի յերկիր է։ Ինչ են արտահանում։ Այդ Միությունն Անգլիայի համար ինչ նշանակություն ունի։ Նրա գլխավոր քաղաքները վորոնք են։

Կարդացեք «Կիմբերլեյ քաղաքը և ադամանդի հանքեր», «Յոհաննեսբուրգ քաղաքը և վոսկու հանքերը», «Զուլուսների ֆերմայում», «Գյուղատնտեսությունը Հար Աֆրիկայում» (Աշխարհի շուրջը—115 յեր.)

Անգլիական մյուս գաղութները Աֆրիկայում

Բացի վերը հիշած գաղութներից Անգլիային պատկանում են նաև հետևյալ գաղութները—Բրիտանական Արևելյան Աֆրիկա, Բրիտանական Հար. Աֆրիկա, Անգլո-Յեգիպտական Սուդան և այլն։ Բրիտանական կալվածները լայն շերտով ձգվում են Յեգիպտոսից մինչև Աֆրիկայի հարավային ծայրը։ Անգլիան յուր իշխանությունը հաստատուն դարձնելու համար անց է կացնում մի հսկայական յերկաթուղի, վորը պետք է Կահիրեն միացնի Կապշտադի հետ։ Այդ գծի խոշոր մասն արդեն պատրաստ է։

Հիշած բոլոր գաղութները գյուղատնտեսական յերկրներն են, վորոնք արտահանում են հում նյութ և ուտելիք, իսկ ներմուծում են գործարանային ապրանքներ։

ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱԼՎԱԾՆԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Կանադա։

Կանադան Անգլիայի ամենամեծ գաղութներից մեկն է։ Նա գտնվում է Հյուսիսային Ամերիկայում և տարածվում է Միաց. Նահանգներից մինչև Հյուս. Բևեռային ծովը, Ատլանտյան ովկիանոսից մինչև Խաղաղ ովկիանոսը։

Ցույց տվեք Կանադայի սահմանները։
Գլխավոր լեռնաշղթաները նրա վոր մասում են գտնվում։
Քարտեզի ոգնությամբ գտեք գլխավոր լճերն ու գետերը։

Կանադան յուր բնական պայմաններով հիշեցնում է Սիբիրը: Հյուս. Բևեռային ծովի յեզերքներին լայն շերտով տարածվում է տունդրան, վորտեղ ապրում են եսկիմոսները: Տունդրաներից հարավ գտնվում են փշատերև անտառները, վորոնք հարուստ են աղվամազ կենդանիներով: Աղվամազ կենդանիների վորսը և մորթու առևտուրը անտառային գոտում ազգաբնակության գլխավոր պարապմունքն են: Ազգաբնակությունը նոսր է, խոշոր քաղաքներ չկան: Անհամեմատ խիտ ազգաբնակություն ունի Կանադայի հարավային մասը, վորտեղ փշատերև անտառների փոխարեն տարածվում են սաղարթավոր անտառներ և տափաստաններ:



Նկ. 31. Անգլիայի (մետրոպոլիայի) և Կանադայի համեմատական մեծությունը:

Բայց Կանադան ունի մի շարք առավելություններ, վորպիսին Սիբիրը չունի: Հյուսիսից ցամաքի ներսն է մտնում Հուդզոնի ծոցը, վորի վրայով նավերն ազատորեն յերթևեկում են 4—5 ամիս: Ատլանտյան ովկիանոսի յեզերքին Կանադան ունի մի քանի չսառչող նավահանգիստներ, վորոնք Յեվրոպային ավելի մոտ են, քան Ամերիկայի մյուս նավահանգիստները (Հալիֆաքս-Լիվերպուլ 7 որվա ճանապարհ է): Խաղաղ ովկիանոսի ափին գտնվող նավահանգիստների վրայով կարելի յե կապ պահպանել Արևել. Ասիայի հետ (Վանկուվերից մինչև Յոկոհամա 12 որվա ճանապարհ է): Բացի այդ՝ Կանադայի վրայով անցնում են մի քանի յերկաթուղային գծեր, վորոնք Ատլանտյան ովկիանոսը միացնում են Խաղաղ ովկիանոսի հետ: Անա այս առավելություններն են պատճառը, վոր Կանադան արագ քայլերով զարգացավ, մինչդեռ Սիբիրը դեռևս հետամնաց յերկրներից մեկն է:

Կանադան Միաց. Նահանգներից մեծ է: Նրա մակերեսը հավասար է մոտ 9,6 միլիոն քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը հազիվ 8 միլիոնի յե հասնում: Այսպիսով յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա միջին հաշվով ապրում է մեկ մարդ:

Ազգաբնակության 55,4%-ը անգլիական ծագում ունի, իսկ 27,9%-ը ֆրանսիական: Բնիկները, այսինքն, ամերիկական հնդիկները, չնչին տոկոս են կազմում:

Կանադայի ժողովրդական տնտեսության մեջ խոշոր դեր է կատարում յերկրագործությունը: Հացահատիկների բերքով Կանադան բռնում է առաջնակարգ տեղերից մեկն ամբողջ աշխարհում: Հացահատիկների առատ բերքի և ազգաբնակության քչության պատճառով նա կարողանում է արտահանել մեծ քանակությամբ ցորեն, ալյուր և վարսակ: Համաշխարհային շուկայում Կանադան Միաց Նահանգների և ԽՍՀՄ-ի լուրջ մրցակիցն է: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս հացահատիկների մշակության զարգացումը XX-րդ դարում:

	Ցանքսերի մակարդակի աճումը հազար ակրերով			
	Ցորեն	Վարսակ	Գարի	Հաճար
1901 թ. . .	4225	5368	872	178
1911 . . .	11101	9631	1522	142
1921 . . .	23361	16950	2796	1842

Խոշոր նշանակություն ունի նաև անտառապահությունը, վորը զարգացած է գլխավորապես արևելյան Կանադայում: Օնտարիո և Կվեբեկ շրջանները յուղագործության և պանրագործության կենտրոնն են: Պանրի արտահանությամբ Կանադան բռնում է առաջնակարգ տեղերից մեկն ամբողջ աշխարհում: Բացի պանրից Կանադայից արտահանվում են նաև յուղ, սառցրած միս և խտացրած կաթ:

Ցուր անտառային հարստությամբ Կանադան հետ է մնում միայն ԽՍՀՄ-ից: Փայտի խոշոր մասն արտահանվում է Միաց. Նահանգներ և Անգլիա:

Կանադայի անտառները հարուստ են աղվամազ կենդանիներով վորոնք տալիս են մեծ քանակությամբ թանկարժեք մորթի: Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսի ծովեզերքում զարգացած է ձկնորսությունը:

Բնական հարստություններից Կանադայում պատահում են քարածուխ, յերկաթ, վոսկի, արծաթ, նիկկել, պղինձ և այլն: Դրանց մեջ առաջին տեղը

բռնում է քարածուխը։ Քարածխի պաշարով Կանադան հետ է մնում միայն Միաց. Նահանգներից։ Կանադայի ջրային էներգիան հավասար է մոտ 18 միլիոն ձիու ուժի, որից 3 միլիոնն արդեն շահագործվում է։

Շնորհիվ անգլիական, վերջերս նաև Միացյալ Նահանգների կապիտալի՝ արդյունագործությունը զարգանում է խոշոր քայլերով։ Արդյունագործության կարևոր ճյուղերն են սննդանյութերի վերամշակությունը և անտառային արդյունագործությունը։

Կանադայի արտահանության գլխավոր առարկաներն են—հացահատիկները, որոնք կազմում են արտահանության ամբողջ արժեքի 35%-ը, փայտը և փայտի իրերը՝ 26%, անասնապահական պրոդուկտները՝ 9%, մետաղները և հանքերը՝ 10%։ Ներմուծվող ապրանքների մեջ կարևոր են յերկաթը, պողպատը և դրանցից պատրաստած իրերը, քարածուխը, գործվածքները, շաքարը և նավթը։ Այսպիսով Կանադան ներմուծում է գլխավորապես արդյունագործական հում նյութ և ֆաբրիկատներ։

Կանադան տնտեսապես տարեց տարի ավելի ու ավելի յե կապվում Միաց. Նահանգների հետ։ Դրա գլխավոր պատճառը նրա աշխարհագրական դիրքն է։ Կանադան Միացյալ Նահանգների բնական շարունակությունն է կազմում—սահմանները պայմանական են։ Բացի այդ Կանադայի գործարանների խոշոր մասը պատկանում է Միաց. Նահանգների կապիտալիստներին։ Միաց. Նահանգների դերը Կանադայի արտաքին առևտրի մեջ խոշոր չափերի յե հասել։ Անգլիայի և Կանադայի տնտեսական կապն, ընդհակառակը, հետզհետե թուլանում է։

Կանադան դոմինիոն է։ Կատարողական իշխանությունը պատկանում է նախարարների խորհրդին և գեներալ նահանգապետին, որը նշանակվում է անգլիական թագավորի կողմից, իսկ օրենսդրականը՝ պարլամենտին։

Գլխավոր քաղաքները: Մոնրեալ — Կանադայի ամենամեծ քաղաքն է։ Գտնվում է Ս. Լավրենտիոս գետափին։ Առևտրական և արդյունագործական կենտրոն է։ Վանկուվեր—նավահանգիստ է Խաղաղ օվկիանոսի ափին։ Հալիֆաքս—նավահանգիստ է Ատլանդյան օվկիանոսի ափին, առևտուր Յեվրոպայի հետ։ Կվեբեկ—հացի և փայտի զանգվածի առևտուր։ Օտտավա — —վարչական կենտրոն։

Կանադան վորտեղ է գտնվում։ Ի՞նչ զոնային ֆակտորներ աննպաստ են յերկրի տնտեսության զարգացման համար։ Ի՞նչպիսի յերկիր է։ Գլխավորապես ի՞նչ է մշակվում։ Կանադայից ի՞նչ են արտահանում։ Գլխավոր քաղաքները վորո՞նք են։

Հյուս. Ամերիկայի համր քարտեզի վրա ներկեցեք Կանադայի տեղը. գրեցեք գլխավոր ծոցերը, քաղաքները։

Ամերիկայում Անգլիային պատկանում են նաև Նյու-Ֆաունդլենդը և մի շարք ուրիշ կղզիներ, վորոնք գտնվում են Կենտրոնական և Հարավային Ամերիկայում։

Նյու-Ֆաունդլենդի բնակիչների գլխավոր պարապմունքը կազմում է ձկնորսությունը։ Դոմինիոն է։

ԱՎՍՏՐԱԼԻԱ

Ավստրալիան ամենափոքր աշխարհամասն է։ Նրա մակերեսը առանց կղզիների կազմում է 7,7 միլ. քառ. կիլոմետր։

Ավստրալիան ի՞նչ օվկիանոսներով է շրջապատված։

Ցույց տվեք Յորք թերակղզին, Կարպենտարիայի և Ավստրալիական ծոցերը, Տորրեսի և Բասսի նեղուցը, Տասմանիա և Նոր Գվինեա կղզիները։

Ավստրալիայի մեծ մասը հարթություններ են, վորոնց արևելյան յեզերքը բարձրանում է և կազմում լեռնաշղթաներ (Ավստրալիական Ալպեր)։ Սակայն այդ լեռներն այնքան էլ բարձր չեն և նրանց գագաթները հավերժական ձյունով ծածկված չեն։



Նկ. 32. Անգլիայի (մետրոպոլիայի) և Ավստրալիայի համեմատական մեծությունը։

Հյուսիսային Ավստրալիան գտնվում է տաք գոտում, իսկ մնացածը բարեխառն գոտում։ Հյուս. Ավստրալիայում հոկտեմբերից մինչև ապրիլ, այսինքն՝ Ավստրալիայի ամառվա ընթացքում փչում է հյուսիսային կամ հյուսիսարևելյան մուսսոնը, վորը առատ մթնոլորտային տեղումներ է բերում, բայց այդ մթնոլորտային տեղումները թափվում են ծովեզերային շրջաններում։ Ձմեռը (ապրիլից հոկտեմբեր) մուսսոնը փչում է ցամաքից դեպի ծովը. դա տարվա ամենաչոր ժամանակն է։ Ավստրալիայի արևելյան ծովափը յենթակա յե հարավ-արևելյան պասսատների ազդեցության։ Այդ խոնավ քամիները, հանդիպելով լեռների, իրենց միջի խոնավությունը հաղորդում են արևելյան ծովեզերքին և լեռնալանջերին։ Լեռներից դեպի արևմուտք անձրևներ շատ քիչ են գալիս, այդ պատճառով Ավստրալիայի միջին և արևմտյան մասերը ներկայացնում են տաք և ջրազուրկ անապատներ, վորոնք յեզերվում են չոր տափաստաններով։

Ազգաբնակությունը: Ավստրալիայի բնակիչների թիվը մոտ 5,5 միլիոն է: Ազգաբնակության խտությունն աննշան է: Միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա մի մարդ էլ չի ապրում: Նույնիսկ Սիբիրն ավելի խիտ է բնակված, քան Ավստրալիան: Ազգաբնակության գլխավոր զանգվածն ապրում է ցամաքի հարավ-արևելյան անկյունում (ինչու), որտեղ գտնվում են Վիկտորիա և Նոր Հար. Ուելս շտատները: Անապատներն ու չոր տափաստանները, որոնք յերկրի մեծ մասն են բռնում, համարյա զուրկ են ազգաբնակությունից:

Քաղաքային կյանքն Ավստրալիայում բավական զարգացած է: Վիկտորիա շտատի ազգաբնակության կեսից ավելին ապրում է Մելբուրն քաղաքում (767 հազար բնակիչ), իսկ Նոր Հար. Ուելսի ազգաբնակության $^{2}/_{5}$-ը՝ Սիդնեյում (900 հազար բնակիչ): Մեծ բնակչություն ունեն նաև Ադելաիդա, Բրիսբեն և Պերտ քաղաքները: Ընդհանուր առմամբ Ավստրալիայի ամբողջ ազգաբնակության 40%-ն ապրում է հիշած քաղաքներում:

Ավստրալիայի ազգաբնակության 90%-ը անգլիացիներ են, իսկ 10%-ը ուրիշ ազգություններ: Տեղացի սևամորթները ստիպված յեղան լավագույն վայրերը զիջել անգլիացիներին, իսկ իրենք քաշվեցին անապատների և չոր տափաստանների շրջանները: Այժմ նրանց թիվը 58,5 հազար էլ չկա:

Գյուղատնտեսություն: Ավստրալիան գյուղատնտեսական յերկիր է: 1921 թ. տվյալների համաձայն յերկրի տարեկան արտադրանքը գնահատվում էր 402 միլիոն ֆունտ ստեռլինգ, որի կեսից ավելին անասնապահությունը և յերկրագործությունն են տվել:

Յերկրագործության ճյուղերից առաջին տեղը բռնում է հացահատիկների մշակությունը: Գլխավոր հացահատիկը ցորենն է, որի ցանքերը կազմում են ամբողջ ցանքսի մակարդակի $^{2}/_{3}$-ը: Ցորենի բերքի մեծ մասն արտահանվում է: Մյուս հացահատիկներից նշանավոր են գարին և յեգիպտացորենը:

Ընդարձակ տափաստանների շնորհիվ անասնապահությունը մեծ չափերի յե հասել: Խոշոր յեղջյուրավոր անասունների թվով Ավստրալիան հետ է մնում Արգենտինայից, բայց ոչխարների թվով առաջինն է ամբողջ աշխարհում: 1924 թ. 89 միլիոն ոչխար կար: Բրդի արտահանությամբ նա առաջինն է: Ոչխարաբուծությունն եկամտաբեր է. սննդի պակասությունից և յերաշտից յերբեմն միլիոնավոր ոչխար է փչանում: Վերջին ժամանակներս առանձին յեռանդով բազմացնում են խոշոր յեղջ. անասուններ և ձիեր: Կաթնատնտեսության զարգացման շնորհիվ Ավստրալիան համաշխարհային շուկային մատակարարում է մեծ քանակությամբ կաթնամթերք:

Բնական հարստությունները և արդյունագործությունը: Ավստրալիան հարուստ է զանազան հանքերով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է քարածուխը: Քարածխի պաշարը հաշվում են 170 միլիարդ տոնն:

Բացի այդ՝ ավստրալիական քարածուխը բարձր որակ ունի, այդ պատճառով արտահանության առարկաներից մեկն է:

Քարածխից հետո աչքի յեն ընկնում ոսկին (1926 թ.—16 հազար կիլոգրամ), արծաթը (1925—330 հազար կիլոգրամ), պղինձը, կապարը, կլայեկը և այլն:

Արդյունագործությունը զարգանում է: 1914 թ. արդյունագործության արտադրած ապրանքը գնահատվում էր 166,4 միլ. ֆունտ ստեռլինգ, իսկ 1924 թ. արդեն 348,6 միլիոն ֆունտ էր: Սակայն այդ արդյունագործությունը յերկրի կարիքներին չի կարողանում բավարարել, այդ պատճառով Ավստրալիան ստիպված է ներմուծել գործարանային ապրանքներ:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտրի մեծությամբ Ավստրալիան անգլիական դոմինիոնների մեջ յերկրորդ տեղն է բռնում (Կանադա): Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ավստրալիայի արտահանության և ներմուծության պատկերը (1925—26 թ.)

Ներմուծություն	% ներմուծության ամբողջ արժեքի նկատմամբ	Արտահանություն	% արտահանության ամբողջ արժեքի նկատմամբ
Գործվածքներ և շորեր .	19,8	Բուրդ	43,5
Մեքենաներ և մետաղե իրեր	16	Ցորեն և ալյուր	16,6
Փայտ	2,5	Կաթնամթերք	5,8
Նավթ	7,4	Ոսկի և արծաթ . . .	3,8
Քիմիական նյութեր, պարարտանյութեր .	4,3	Կապար	3,1
Թեյ	3,6	Կաշի	5,7
Ծխախոտ	2,8	Միս	5
		Քարածուխ	1

Այստեղից յերևում է, որ Ավստրալիայի արտահանության մեջ գերիշխողը գյուղատնտեսական ապրանքներն են, իսկ ներմուծության մեջ՝ գործարանայինը: Ավստրալիայի հետ առևտուր անող յերկրների մեջ առաջին տեղը բռնում է Անգլիան: Ավստրալիայի արտաքին առևտրի ամբողջ արժեքի $^{2}/_{5}$-ը Անգլիային է ընկնում: Այստեղից յերևում է, որ Ավստրալիան մետրոպոլիայի հետ տնտեսապես ավելի յե կապված, քան Կանադան:

Ավստրալիան ինչ նշանակություն ունի մետրոպոլիայի համար:

Համաշխարհային տնտեսության մեջ Ավստրալիան ինչ մասնակցություն ունի, այսինքն ինչ ապրանքներ է արտահանում համաշխարհային շուկա:

ԽՍՀՄ-ի համար Ավստրալիայի առևտուրն առայժմ այնքան էլ կարև-

վոր չէ, բայց ապագայում կարող է զարգանալ, վորովհետև ԽՍՀՄ-ն բրդի կարիք ունի, իսկ Ավստրալիան փայտի։

Վարչական կազմը։

Ավստրալիան դոմինիոն է և մտնում Բրիտանական կայսրության մեջ։ Մինչև 1901 թվականը Ավստրալիան բաժանվում եր վեց իրարից անկախ գաղութների, վորոնք այդ թվականին միացան իրար հետ և կազմեցին «Ավստրալիական Միություն»։ Ավստրալիական միությունն այժմ բաղկացած է հետևյալ 6 շտատներից — Նոր Հար. Ուելս, Վիկտորիա, Քվինսլենդ, Հար. Ավստրալիա, Արևմտ. Ավստրալիա *և* Տասմանիա։ *Համամիութենական որենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է սենատից և պատգամավորական խորհրդից։ Պարլամենտ հրավիրելու կամ արձակելու իրավունքը պատկանում է անգլիական գեներալ-նահանգապետին, վորը նշանակվում է մետրոպոլիայի կողմից։ Բացի համամիութենական պարլամենտից, շտատներից յուրաքանչյուրն ունի նաև յուր տեղական պարլամենտը։ Սակայն տեղական պարլամենտի ընդունած վորոշումները չեն հակասում համամիութենական պարլամենտի վորոշումներին։*

Գլխավոր քաղաքները։

Սիդնեյ *— Ավստրալիայի մայրաքաղաքն է։ Գտնվում է գեղեցիկ ծովախորշի յեզերքին և առևտրական կապեր է պահպանում Յեվրոպայի և Ամերիկայի հետ։ Ավստրալիայի ամենախոշոր նավահանգիստն է։* Ադելաիդա *— նավահանգիստ է (Հար. Ավստրալիայի գլխավոր քաղաքն է)։* Բրիսբեն *— Քվինսլենդի գլխավոր քաղաքն է։ Մսեղենի արդյունաբերության կենտրոն։* Մելբուրն *— գտնվում է Վիկտորիայում։ Խոշոր նավահանգիստ է։* Պերտ *— յերկաթուղով միացած է վոսկեբեր շրջանի հետ։* Հոբարտ *— գտնվում է Տասմանիայում։ Կառուցվում է նոր մայրաքաղաք —* Կանբերրա։

Նոր Զելանդիա։

Նոր Զելանդիան նույնպես անգլիական դոմինիոն է։ Նրա կլիմայական պայմանները չափազանց նպաստավոր են գյուղատնտեսության համար։ Տաք և խոնավ կլիմայի շնորհիվ Նոր Զելանդիան ունի փարթամ բուսականություն։ Խոտաբույսերի մշակությունը կարևոր նշանակություն ունի յերկրի տնտեսության մեջ։ Մշակված հողերը կազմում են 7,5 միլիոն հեկտար, վորից 6,6 միլիոն հեկտարը բռնված է ցանովի խոտերով։ Այդ պատճառով անասնապահությունն ավելի կարևոր նշանակություն ունի, քան յերկրագործությունը։ Հացահատիկներից գլխավորն են ցորենը և վարսակը։

Արտահանվում են բուրդ, սառցրած միս, պանիր և յուղ։ Արտաքին առևտրի մեջ մեծ մասնակցություն ունի Անգլիան։

Գլխավոր քաղաքներն են — Աուկլենդը *(կամ Ոկլենդ) և* Վելլինգտոնը։ *Յերկուսն ել խոշոր նավահանգիստներ են։*

Ավստրալիայի համր քարտեզի վրա նշանակեցեք գլխավոր քաղաքները, շրջապատող ծովերը կղզիները և թերակղզիները։

Բուսական շրջանները ներկեցեք տարբեր գույներով։

Մթնոլորտային տեղումների քարտեզը ներկեցեք տարբեր գույներով։

Ավստրալիան ի՞նչ տիպի յերկիր է։ Բնակիչները գլխավորապես ինչո՞վ են պարապում։ Ի՞նչ ապրանքներ են արտահանվում և ներմուծվում։ Ավստրալիայի արտաքին առևտրի մեջ առաջին տեղը վո՞ր պետությունն է բռնում։

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Մենք ծանոթացանք անգլիական գաղութներին և տեսանք թե ինչպես փոքրիկ մետրոպոլիան կարողանում է յուր ձեռքում պահել բազմաթիվ ժողովուրդներ և շահագործել նրանց։ Մետրոպոլիայից արտահանվում են մեծ քանակությամբ գործարանային ապրանքներ, վորոնք բավական թանգ գնով վաճառվում են գաղութներում, իսկ դրանց փոխարեն գաղութներից ներմուծվում են զանազան հում նյութեր և սննդամթերք, առանց վորոնց Անգլիայի համար չափազանց ծանր վիճակ կստեղծվի։ Ահա թե ինչու Անգլիան ամեն կերպ աշխատում է այդ գաղութները յուր ձեռքում պահել և այդ նպատակով նա վոչ միայն ուժեղացնում է յուր ռազմական միջոցները, այլև գաղութներում հաստատում է այնպիսի կարգեր, վոր ցանկալի յեն իրեն։ Հենվելով կալվածատերերի, հոգևորականության և բուրժուազիայի վրա, նա ամենախիստ միջոցներով խեղդում է աշխատավորության ազատագրական շարժումները. դրանով ել չբավականանալով, նա մի ժողովուրդ կռվեցնում է մյուսի դեմ և այլն։ Բայց գաղութների ազգաբնակությունը վաղուց է հասկացել անգլիական քաղաքականության աստառը և աշխատում է ազատագրվել նրանից։

Այդ ազատագրական շարժումն ուժեղ է մանավանդ մի քանի յերկրներում։ Սկսենք Յեգիպտոսից։

Ազատագրվող Յեգիպտոսը։

Անգլիան գրավել է Յեգիպտոսը դեռ 1882 թ. Պատերազմի ընթացքում Յեգիպտոսի տնտեսությունը քայքայվեց, վորովհետև բամբակի արտահանությունը, վոր այնքան մեծ նշանակություն ունի յերկրի համար, դադարեց։ Ֆելլահ գյուղացիները քայքայվեցին։ Կառավարությունը պատերազմի կարիքները հոգալու համար հարկերը մեծացրեց, խլեց գյուղացու հացն ու անասունը զորքի համար և մյուս կողմից չնչին գներով հավաքեց բամբակը։ Այս հողի վրա ազատագրական շարժումը մեծ չափերի հասավ։ Ազգային շարժման գլուխ անցավ հայտնի Զագլուլ փաշան, վորը միացնելով զանազան հոսանքներ, ստեղծեց մի խոշոր ճակատ։

1918 թվականին յեգիպտական ժողովուրդը Յեգիպտոսի ազատության պահանջը հրապարակի վրա դրեց, բայց հաջողություն չունեցավ։ Զագլուլ փաշան ձերբակալվեց և աքսորվեց։ 1919 թ. մարտին դեռ Կահիրեյում, ապա Ալեքսանդրիայում և ստորին Յեգիպտոսում սկսվեց չտեսնված ապստամբություն։ Ապստամբվեցին ֆելլահ գյուղացիները, քոչվոր-բեդվինները և յերկաթուղային բանվորները։ Միայն Յեվրոպայից և Սուդանից բերած խոշոր ուժերի ոգնությամբ եր, վոր անգլիական իշխանությունը կարողացավ ճնշել այդ ապստամբությունը։

Դրանից հետո անգլիացիները վորոշեցին զիջումներ անել և բանակցության մեջ մտան Զագլուլ-փաշայի հետ։ Սակայն այդ բանակցությունները արդյունք չտվին, վորովհետև Անգլիայի զիջումները աննշան եյին։ Բայց այդ բանակցությունների հետևանքն այն յեղավ, վոր միասնական ճակատը քայքայվեց և բաժան-բաժան յեղավ։ Առաջին հերթին անջատվեց ձախ թևը, վորը բաղկացած եր գյուղացիներից, քաղաքային մանր բուրժուազիայից, հոգևորականությունից և ինտելիգենցիայից։ Դրանց հետ եր և պրոլետարիատը, վորը դեռ նոր եր սկսել քաղաքականապես կազմակերպվել։ Աջ թևը, վոր բաղկացած եր լիբերալ բուրժուազիայից, խոշոր կալվածատերերից և բարձրաստիճան ծառայողներից, կոմպրոմիսների միջոցով Անգլիայի հետ հաշտության լեզու գտավ։ Հենց այդ ժամանակ ել բամբակն սկսվեց մեծ չափով արտահանվել։ Գյուղացիները հանգստացան։ Յեվ Անգլիան հետ վերցրեց այն վողորմելի առաջարկները, վոր նա արել եր 1920 թ. Դարձյալ սկսվեցին դժգոհության ցույցեր։ Անգլիացիները դիմեցին խիստ միջոցների, վորի հետևանքն այն յեղավ, վոր յեգիպտացիները ընդհանուր բոյկոտ հայտարարեցին Անգլիային։ Կռիվը վերջացավ նրանով, վոր 1922 թ. հունվարի 30-ին Անգլիան համաձայնվեց «անկախություն» տալ Յեգիպտոսին, մի պայմանով, վոր Անգլիայի զորքերը մնան Յեգիպտոսում և Սուեզի ջրանցքը պաշտպանելու իրավունքը նրան պատկանի։

Նշանակվեցին պարլամենտի ընտրություններ։ Կառավարության գլուխ անցավ Զագլուլ-փաշան, վոր պահանջեց հանել Անգլիական զորքերը Յեգիպտոսից, վերացնել անգլիացիների ունեցած արտոնությունները, Սուեզի ջրանցքի պահպանությունը թողնել Յեգիպտոսին և ազատել Սուդանը։ Պարզ է, վոր Անգլիան այս առաջարկությունները չեր կարող ընդունել։ Զագլուլ փաշային նրանք տապալեցին և նրա փոխարեն կառավարության գլուխ դրին իրենց հլու հպատակ Զիվարին։ Յեգիպտական նոր կառավարությունը իրագործեց Անգլիայի ցանկությունները։ Այսպիսով Անգլիան կարողացավ առայժմ խեղդել յեգիպտական ազատագրական շարժումը։

Ազատագրական շարժման այս փոքրիկ ակնարկը համոզում է մեզ մի

բանում, վոր յեգիպտական բուրժուազիան չէ, վոր պետք է ազատագրե Յեգիպտոսը, այլ գյուղացին ու բանվորը, վորոնք կազմակերպվելով և միանալով իրար հետ կարող կլինեն ազատել յերկիրն անգլիական ճիրաններից։ Հենց այդ ուղղությամբ ել աշխատում է յեգիպտական կոմմունիստական կուսակցությունը։

Ազատագրվող Հնդկաստանը։

Ազատագրական շարժումը խոշոր չափերի հասավ մանավանդ Հնդկաստանում, վորը համարվում է «անգլիական թագի մարգարիտ»։ Հնդկաստանի ազատագրումը անգլիական իմպերիալիզմի համար մահ է։ Այդ պատճառով անգլիացիները վոչ մի յերկրում ազատագրական շարժումն այնպիսի կատաղությամբ չեն խեղդում, ինչպես Հնդկաստանում։

Հնդկաստանում ապրում են յերեք ցեղի ժողովուրդներ, վորոնք դավանում են մի քանի տասնյակ կրոններ. ազգաբնակությունը խոսում է մի քանի հարյուր լեզուներով ու բարբառներով, բացի այդ՝ հնդիկները բաժանվում են առանձին կաստաների, վորոնք դեպի իրար թշնամական վերաբերմունք ունեն։ Այս ցեղային, կրոնական և պատմական-կուլտուրական հակադրություններին ավելանում են և արդի դասակարգային բաժանումները։

Կալվածատերերը շահագրգռված են, վոր անգլիական իշխանությունը մնա, վորովհետև այդ իշխանությունը հնարավորություն է տալիս գյուղացիներից մեծ կապալագին վերցնել։

Խոշոր բուրժուազիան մրցում է անգլիական կապիտալիզմի դեմ և աշխատում է անգլիական ապրանքները դուրս մղել հնդկական շուկայից, բայց և այնպես ավելի լավ է համարում, վոր անգլիական իշխանությունը մնա, քան թե ժողովրդական ապստամբության և հեղափոխական շարժումների զոհը դառնա։

Այսպիսով միակ ուժը, վոր կարող է մտածել Հնդկաստանի ազատագրման մասին, դա գյուղացիությունն ու բանվորությունն է (սկզբնական շրջանում նաև մանր բուրժուազիան)։ Հնդկաստանի պրոլետարիատը բավական մեծ թիվ է կազմում և արդեն առաջացրել է խոշոր բանվորական կազմակերպություններ։

Հնդկաստանի ազգային ազատագրական շարժումը վերջին տարիների ընթացքում հետևյալ պատկերն ուներ։ Դեռևս 1885 թ. կազմակերպվել եր հնդկական ազգային կոնգրես, վորը պատերազմից առաջ գտնվում եր ձախ նացիոնալիստների ձեռքում։ Այդ ձախ թևը պնդում եր դիմել անգլիացիների դեմ վճռական միջոցների, իսկ աջ թևն, ընդհակառակը, կողմնակից եր, վոր անգլիական իշխանությունը մնա։ Յերբ ազգային կոնգրեսի ղեկավարությունն անցավ ձախ թևին, վերջինս անմիջապես բոյկոտ հայտարարեց անգլիացիներին։ Այստեղ, այնտեղ գյուղացիական ապստամբու-

թյուններ տեղի ունեցան, վորոնք, սակայն, ամենախիստ միջոցներով ճընշվեցին։ Հնդկական բուրժուազիան հայտարարեց, վոր պատերազմի ժամանակ ինքը պաշտպանելու յե Անգլիային և հրաժարվում են ազգային կռվից։

Պատերազմից հետո անգլիացիները խաբեցին հնդկական բուրժուազիային չտվին խոստացած ինքնավարությունը: Սկսվեց ազատագրական նոր շարժում, վորի գլուխ անցավ Գանդին:

Գանդին կողմնակից չեր սուր հեղափոխական միջոցների և գտնում եր, վոր անգլիացիների դեմ վարվող կռվի. լավագույն միջոցը բոյկոտն է: Նա միայն մի նպատակ ուներ, այն ե՝ ձեռք բերել ինքնավարություն, վոր հնդիկ լեզվով կոչվում ե սվարաջ:

1920 թ. տեղի ունեցած մի ցույցի ժամանակ 10 րոպեյում անգլիացիները գնդակահարեցին ավելի քան 2.000 մարդ։ Այս դեպքը ցնցեց յերկիրը և Գանդին ունեցավ միլիոնավոր հետևողներ։ Ազատագրական շարժման աճումը վախեցրեց անգլիացիներին, վորոնք ստիպված յեղան մի քանի բարենորոգումներ մտցնել։ Բայց Գանդին չընդունեց այդ բարենորոգումները և պահանջեց լիակատար ինքնավարություն։

Գանդին զարթեցրեց գյուղացիությունը, բայց նա չկարողացավ տալ գյուղացուն պարզ լոզունգներ ու ղեկավարել նրան։ Այդ պատճառով գյուղացիները շուտով քաշվեցին իրենց ղեկավարներից։ Անգլիացիները տեսնելով այդ, համոզվեցին մի բանում, վոր գանդիզմը հեղինակություն չունի։ Գանդին ձերբակալվեց։

Ճիշտ ե, գանդիզմը ռեալ արդյունք չտվեց, բայց գյուղացիական մասսայի առաջ դրեց Հնդկաստանի ազատագրման խնդիրը։ Մյուս կողմից գանդիզմը ոգնեց բուրժուազիային կազմակերպել բուրժուական դասակարգային կուսակցություն, վորն այժմ կոչվում ե սվարաջ: Այդ կուսակցությունը անգլիացիների դեմ կռվում ե պարլամենտական ճանապարհով և նպատակն ե լեզու գտնել նրանց հետ։

Բայց Հնդկաստանը ազատագրող միակ ռեալ ուժը գյուղացիական յեվ բանվորական զանգվածներն են: Թե վորքան ուժեղ են բանվորական կազմակերպությունները, այդ յերևում ե նրանից, վոր վերջին ապստամբությանը (Կալկաթայում) մասնակցում եր մոտ 120.000 մարդ։

Ծովային հզորությունը յեվ ծովային ճանապարհները:

«Վորպեսզի մեզ համար պարզ լինի, թե Բրիտանական կայսրությունը ամբողջ աշխարհի չորս կողմը ցրված տարբեր յերկրներից ինչպես մի միություն կազմեց—բավական ե նրա պատմության մի համառոտ ակնարկը։ Անգլիան ծովերի վրա գերիշխանություն ձեռք բերեց ովկիանոսային ճանապարհները բացվելուց հետո, վորը կատարվեց 16-րդ դարի վերջում, այդ

գերիշխանությունը բացատրվում ե նրա աշխարհագրական նպաստավոր դիրքով։ Իսկ հաջորդ դարում նա ձեռք ե ձգում առևտրական տրանսպորտի համաշխարհային մենաշնորհը։ Նա աշխարհի բոլոր անկյուններում առևտրական կայարաններ և նավահանգիստներ ե հիմնում։ Նրա համար անհրաժեշտ եր ապահովել և յուր ձեռքում հաստատուն կերպով ամրացնել այն բոլոր առևտրական ճանապարհները, յերկար ծովային ուղիները, վորոնցով լողում եյին նրա առևտրական նավերը՝ բեռնավորված ապրանքներով։

XIX-րդ դարի ընթացքում այդ առևտրական կայարաններից և նավահանգիստներից կազմվում ե Բրիտանական կայսրությունը։ 1800—1850 թվերի ընթացքում կայսրության կալվածները յեռապատկվեցին։ Անգլիական տիրապետությունների այս վիթխարի աճումը հետևանք եր ովկիանոսի վրա մարդու ձեռք բերած իշխանության ամրացման և ընդարձակման, վորը ստեղծվեց շոգենավային հաղորդակցության շնորհիվ։

Կայսրության մասերի անվերջ բաժանվածությունն ու ցրվածությունը նրա ներսում ստեղծում ե ցեղային, կրոնական, և առևտրական բարդ պրոբլեմներ։ Այս ցրվածությունն այն տեղն ե հասել, վոր աշխարհի վորևե անկյունում կատարվող վորևե մի դեպք շատ կամ քիչ չափով շոշափում ե անգլիական շահերը։ Բրիտանական կայսրությունը կանգուն ե շնորհիվ ծովային հզորության և յուր միությունը կարող ե պահել այնքան ժամանակ քանի վոր այդ հզորությունը իրան հավասար մրցակիցներ չունի»։

Կարդացեք «Բրիտանական կայսրությունը (Խորբաբրեն, 121—137 յեր.). առանձնապես ուշադրություն դարձրեք հետևյալ յերեք կետի վրա—1. Հնդկական ովկիանոսը և Անգլիայի ծովային ճանապարհները դեպի այդ ովկիանոսը. 2. Շփման կետերը. 3. Մեծ Բրիտանիայի բնական հարստությունները և նրա հարաբերական անկումը։

Համաշխարհային քարտեզի վրա ցույց տվեք Անգլիայի գլխավոր գաղութները (Աշխ. ատլաս)

Ջիբրալտարը, Մալտան, Կիպրոսը (Միջերկր. ծովում) ինչ նշանակություն ունեն։

Գաղութներից Անգլիայի համար ամենակարևորը վո՞րն ե։

Անգլիան ինչո՞ւ ե գրավել Միջագետքը։

Ի՞նչ նշանակություն ունեն Սինգապուրը, Հոնգկոնգը։

Ի՞նչ նշանակություն ունի Յեգիպտոսը։

Անգլիական վո՞ր գաղութն ե առաջին տեղը բռնում ամբողջ աշխարհում վոսկու արտադրությամբ։

Անտառով վո՞ր գաղութն ե հարուստ։

Կանադան տնտեսապես դեպի վո՞ր յերկիրն ե ձգտում։

Անգլիական վո՞ր գաղութն ե հարուստ յերկաթով և վո՞րը բրդով։

Համաշխարհային համր քարտեզի վրա վորևե գույնով ներկեցեք Անգլիայի գաղութները և նշանակեցեք այդ գաղութների կարևոր քաղաքները։

2. ՖՐԱՆՍԻԱ

Քարտեզի վրա ցույց տվեք Ֆրանսիայի սահմանները։ Նա Յեվրոպայի վո՞ր մասումն ե գտնվում։

Իսպանիայից և Իտալիայից ինչ լեռներով է բաժանվում։ Ծրջապատող ծովերը վորոնք են։

Յեվրոպայի համր քարտեզի վրա ներկեցեք Ֆրանսիայի բռնած տեղը, և ապա գրեցեք շրջապատող ծովերը, հարևան յերկրները։

Ֆրանսիայի դիրքը յեվ մակերեվույթի կազմությունը:

Ֆրանսիայի աշխարհագրական դիրքը առևտրական հարաբերությունների և ընդհանրապես տնտեսական զարգացման համար շատ նպաստավոր է։ Նրա մի կողմը գտնվում է Ատլանտյան ովկիանոսը, վորով նա կապվում է Ամերիկայի հետ, իսկ մյուս կողմը՝ Միջերկրական ծովը, վորի վրայով անցնում է դեպի Հնդկաստան և ասիական այլ գաղութներ տանող ճանապարհը։ Ֆրանսիայի ծովային սահմանը շատ ավելի յերկար է, քան ցամաքայինը. Նրա նավահանգիստները յերբեք չեն սառչում, իսկ մակերեվույթն այնպիսի կազմություն ունի, վոր նրա ներքին մասերը հեշտությամբ կապվում են ծովեզերքի հետ։ Գետերը սկսվելով յերկրի կենտրոնում հոսում են դեպի շրջապատող ծովերը։ Այս հանգամանքը հնարավորություն է տվել միացնել գետերն իրար հետ արհեստական ջրանցքներով։

Քարտեզի վրա գտեք Ֆրանսիայի գլխավոր գետերը—Սենան, Լուարան, Գարոննան և Ռոնան։ Նրանք վօրտեղից են սկսվում և դեպի ուր են հոսում։

Ցույց տվեք Ալպերը, Յուրան, Պիրենեյները և Արդեննները։

Կլիման:

Ֆրանսիայի կլիման Գերմանիայի կլիմայից տաք է. դրա պատճառն այն է, վոր Ֆրանսիան ավելի հարավային դիրք ունի, և ովկիանոսն էլ մոտիկ է։ Հունվարի բարեխառնության միջինը ամեն տեղ (բացի լեռներից) 2°-ից բարձր է լինում, ձյունը նստում է տեղ-տեղ միայն և այն էլ շատ կարճ ժամանակով։

Ֆրանսիայի հյուսիսային և արևմտյան մասերի կլիման կախված է Ատլանտյան ովկիանոսից։ Արևմտյան և հարավ-արևմտյան քամիները այնքան մեծ խոնավություն են հաղորդում այդ շրջաններին, վոր ընդարձակ տարածություններ ծածկված են փարթամ արոտատեղերով։ Այս տեսակետից հյուսիսային Ֆրանսիան (մանավանդ Բրետանը և Նորմանդիան) հիշեցնում է Անգլիան։ Մերձատլանտյան տափաստանները (օրինակ Բորդոյի շրջանը) հարմար են վոչ միայն ցորենի, այլ և խաղողի և այլ թանգարժեք մշակույթների համար։

Բոլորովին այլ կլիմա ունի հարավային Ֆրանսիան, վորը վողողվում է Միջերկրական ծովով։ Այստեղ իշխողը վոչ թե արևմտյան խոնավ քամիներն են, այլ Աֆրիկայի չոր և տաք քամիները։ Դրանց պատճառով շատ քիչ մթնոլորտային տեղումներ են թափվում. այն ժամանակ, յերբ արևմտյան Ֆրանսիայում մթնոլորտային տեղումները հասնում են 1000—1500 միլիմետրի, հարավային Ֆրանսիայում նրանք հազիվ 500—800 միլիմետր են կազմում։ Բայց դրա՝ փոխարեն ջերմության աստիճանն այստեղ բավական

բարձր է. հունվարի միջին աստիճանը լինում է +6,7°, իսկ հուլիսինը 24°։ Շնորհիվ տաք կլիմայի, Միջերկրական ծովի ափերին հնարավոր է լինում մշակել այնպիսի թանգարժեք բույսեր, ինչպիսին են՝ խաղողը, թթենին, ձիթենին և այլն։ Ընդհանուր առմամբ Ֆրանսիայի կլիման գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր է։ Բայց վորովհետև Ֆրանսիան յերկու տարբեր կլիմաների աշխարհ է, այդ պատճառով գյուղատնտեսությունը նրա հյուսիսային և հարավային մասերում նույնը չէ։

Մակարդակի մեծությունը յեվ ազգաբնակությունը:

Պատերազմից առաջ Ֆրանսիայի ամբողջ մակարդակը հավասար էր 536,5 հազար քառ. կիլոմետրի։ Վերսայլի դաշնագրի համաձայն նա Գերմանիայից ստացավ Էլզաս-Լոթարինգիան, վորի մակարդակն է 14,5 հազար քառ. կիլոմետր և այսպիսով Ֆրանսիայի մակարդակը դարձավ մոտ 551 հազար քառ. կիլոմետր։

Ֆրանսիայի ազգաբնակությունը 1926 թ. տվյալների համաձայն մոտ 40,7 միլիոն է։ Յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա միջին հաշվով ապրում է 73,9 մարդ։ Ազգաբնակության խտությամբ նա հետ է Բելգիայից, Հոլլանդիայից, Անգլիայից, Գերմանիայից, Իտալիայից, Չեխո-Սլովակիայից, Շվեյցարիայից և Ավստրիայից։ Ֆրանսիայի ազգաբնակության համար շատ բնորոշ է նրա թույլ աճումը։ Վերջին 40 տարվա ընթացքում Ֆրանսիայի ազգաբնակությունն աճել է յուր մեծության $^{1}/_{25}$-ի չափ, մինչդեռ հարևան յերկրների ազգաբնակությունը համարյա կրկնապատկվել է։

Ազգաբնակության աճումը վորևէ յերկրի տնտեսական կյանքի զարգացման կարևոր ֆակտորներից մեկն է։ Նա ստիպում է ժողովրդին բարձրացնել արդյունագործությունը և գյուղատնտեսությունը, վորպեսզի հնարավոր լինի ավելացած ազգաբնակության աշխատող ձեռքերի համար գործ գտնել և յուր սեփական միջոցներով կերակրել ամբողջ ազգաբնակությունը։ Ազգաբնակության թույլ աճման դեպքում յերկրի տնտեսության զարգացումը դանդաղ է կատարվում և նրա տնտեսությանը գերազանցում են այն պետությունները, վորտեղ ազգաբնակությունն ավելի արագ է աճում։

1921 թ. տվյալների համաձայն Ֆրանսիայի քաղաքներում ապրում էր 18,2 միլիոն մարդ, վոր կազմում է ամբողջ ազգաբնակության 46%-ը։ Այս տեսակետից Ֆրանսիան հետ է Անգլիայից, Գերմանիայից, Միաց. Նահանգներից և նույնիսկ Կանադայից, վորոնք ունեն քաղաքային բնակչության ավելի բարձր տոկոս, քան Ֆրանսիան։ Ըստ պարապմունքների ազգաբնակությունը բաժանվում է հետևյալ խմբերի՝ գյուղատնտեսություն և ձկնորսություն—41%, արդյունագործություն—36%, առևտուր և տրանսպորտ—10%, այլ պրոֆեսիաներ—13%։ Այս թվերը ցույց են տալիս, վոր Ֆրան-

սիան ավելի պակաս արդյունագործական յերկիր ե, քան Անգլիան ու Գերմանիան։

Ինքնագործունյա ազգաբնակչությունը Ֆրանսիայում հաշվվում ե մոտ 20 միլիոն մարդ։

Վորոնցից

Արդյունագործական բանվորները 8.000.000

Բատրակներ 3.300.000

Կիսապրոլետարներ 2.700.000

Միջակ գյուղացիներ և մանր բուրժվաներ 4.500.000

Խոշոր բուրժվաներ, կալվածատերեր և կուլակներ 1.500.000

Բացի այդ՝ Ֆրանսիայում կան մոտ 3 միլիոն օտարերկրյա բանվորներ։

Գյուղատնտեսություն։ Ֆրանսիայի ամբողջ մակարդակի 73%-ը կուլտուրական հողեր են, 18,7%-ը անտառներ, իսկ 8,3%-ը անպետք։ Այսպիսով գյուղատնտեսական հողի տոկոսով Ֆրանսիան հետ ե մնում միայն Դանիայից (75%) և Անգլիայից (80%)։ Հողը մշակվում ե բավական ինտենսիվ կերպով։ Արհեստական պարարտացումը տարածված ե լայն չափերով և փոխանակ յերկդաշտ կամ յեռադաշտ սիստեմի իշխում ե բազմադաշտը։ Բայց և այնպես Ֆրանսիան յուր գյուղատնտեսության ինտենսիվությամբ դեռ բավական հետ ե Գերմանիայից, Բելգիայից, Հոլանդիայից, Անգլիայից և Դանիայից։

Հացահատիկներից առաջին տեղը բռնում ե ցորենը։ Ցորենի հացը ֆրանսիացու հիմնական հացն ե։ Բայց չնայելով, վոր արևմտյան Յեվրոպայի պետությունների մեջ Ֆրանսիան ցորենի արտադրությամբ առաջին տեղն ե բռնում, այնուամենայնիվ սեփական հացը չի բավականանում և ժողովրդի կարիքներին բավարարելու համար ստիպված ե ամեն տարի մեծ քանակությամբ հացահատիկ ներմուծել։ Պատերազմից առաջ նա միջին հաշվով տարեկան ներմուծում եր 1,7—1,8 միլիոն տոնն հացահատիկ, չհաշված կարտոֆիլը։ Այդ քանակի մեծ մասը ստացվում եր Ռուսաստանից։

Ցորենից հետո աչքի յե ընկնում վարսակը, վորի ցանքսերի ընդհանուր մակարդակի մեծությամբ Ֆրանսիան յերկրորդ տեղն ե բռնում ամբողջ Յեվրոպայում (առաջինը Գերմանիան ե)։

Մյուս հացահատիկները այնքան էլ կարևոր դեր չեն խաղում Ֆրանսիայի տնտեսության մեջ։

Բայց խաղողի մշակության և գինեգործության ասպարեզում Ֆրանսիան համաշխարհային նշանակություն ունի։ Խաղողի այգիների մակարդակը 1926 թ. Ֆրանսիայում կազմում եր 1,6 միլիոն հեկտար, մինչդեռ Իտալիայում մոտ 4,4 միլիոն հեկտար եր, այսինքն՝ Իտալիան ավելի շատ խաղողի այգիներ ունի, քան Ֆրանսիան, բայց չնայելով դրան՝ վոչ մի յերկիր գինու արտադրությամբ չի կարողանում մրցել Ֆրանսիայի հետ։ Դա բացատրվում ե նրանով, վոր ֆրանսիական գինեգործները ամեն տարի Իտալիայից ներմուծում են մեծ քանակությամբ խաղող և խաղողի կիսաֆաբրիկատ, ապա դրանից պատրաստում են ընտիր գինի և իրենց նշանով (մարկայով) շուկա հանում։

Ֆրանսիայում գինեգործությունը որինակելի հիմքերի վրա յե դրված։ Պատերազմից առաջ Ֆրանսիայի գինեգործները բավական բարձր վարձատրությամբ հրավիրվում եյին Ռուսաստան գինեգործական տնտեսությունները վարելու համար։ Շամպանի գինին (Շամպան շրջանի անունով), Բորդոյի և Բուրգունդիայի կարմիր գինիները և կոնյակը (Կոնյակ քաղաքի անունով) մեծ հռչակ ունեն ամբողջ յերկրագնդի վրա։

Ժողովրդական տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի նաև այգեգործությունը։ Մշակում են բավական մեծ չափերով տանձ, խնձոր, դեղձ, ձիթենի, ծիրան, շագանակ, ընկույզ, թուզ և այլն։ Բերքի մի մասն արտահանվում ե։

Անցնելով անասնապահությանը՝ պետք ե նկատել, վոր Ֆրանսիան անասունների ընդհանուր թվով Արևմտ. Յեվրոպայում հետ ե մնում միայն Գերմանիայից։ Անասունների թիվը պատերազմից առաջ և այժմ, ինչպես և այս կամ այն անասունով ապահով կամ վոչ ապահով լինելը պարզվում ե հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 42.

	Հազար գլուխ		100 հեկտար գյուղատնտ. մակարդակին ընկնում ե		100 մարդուն ընկնում ե	
	1913	1926	1913	1926	1913	1926
Ձի	2.231	2.893	5,4	7,3	5,6	7,2
Խոշոր յեղջ. անասուն .	13.121	14.482	31,6	36,6	33,1	36,2
Վոչխար	14.560	10.775	35,2	26.8	36,7	26,8
Այծ	1.453	1.388	3,5	3,5	3,7	3,5
Խոզ	6.113	5.777	15,4	14,8	35,4	14,8
Եշ ու ջորի	533	448	1,2	1,4	1,2	1,4

Աղյուսակից յերևում ե, վոր պատերազմի ընթացքում մանր անասունների թիվը (մանավանդ վոչխարն ու խոզը) պակասել ե։ Մյուս կողմից աչքի յե ընկնում այն, վորի ձիերի թիվը համեմատած ազգաբնակության հետ բավական քիչ ե։ Մինչդեռ Ռուսաստանում (պատերազմից առաջ) 100 շընչին ընկնում եր 21 ձի, Ֆրանսիայում այժմ 100 շնչին հազիվ 8 ձի յե ընկ-

նում: Սրա պատճառն այն է, որ Ֆրանսիայում ավտոմոբիլային, շոգու և ելեկտրական տրանսպորտը վերջերս մեծ չափի յե հասել, բացի այդ՝ յերկրագործության մեջ ձիու փոխարեն այժմ շատ տեղ մեքենաներ են աշխատում: Ֆրանսիայում անասնապահությունը հառաջադիմում է վորակով: Առանձին ուշադրություն է դարձնվում կենդանիների ազնվացման վրա, որինակ՝ ֆրանսիական ձիու միջին կենդանի քաշը մոտ 450 կիլոգրամ է, մինչդեռ ռուսական ձին կշռում է հազիվ 290 կիլոգրամ:

Գյուղատնտեսության մյուս ճյուղերից պետք է հիշել ճագարապահությունը, շերամապահությունը, բանջարաբուծությունը և ծաղկաբուծությունը:

Մեծ նշանակություն ունի նաև ձկնորսությունը: Դրանով պարապում են մոտ 100 հազար մարդ: Վորսած ձկների քանակությամբ Ֆրանսիան 8-րդ տեղն է բռնում, բայց սեփական ձուկը յերկրի կարիքներին չի բավարարում:

Ֆրանսիայի գյուղատնտեսական պայմանների վրա ինչ ֆակտորներ են ազդում: Ինչու հարավային մասում հնարավոր է ձիթենի մշակել, իսկ հյուսիսային մասում վոչ:

Գլխավոր մշակույթները վորոնք են: Սեփական հացը բավականանում է: Գյուղատնտեսական ինչ պրոդուկտներ է Ֆրանսիան արտահանում:

Հանքային արդյունաբերություն:

Ֆրանսիայի մետաղագործությունը զարգանում եր բավական ծանր պայմաններում: Նախ՝ այդ արդյունագործության համար անհրաժեշտ յերկու հանքերը—յերկաթը և քարածուխը միևնույն տեղում չեն գտնվում: Յերկաթահանքը քարածխի հանքատեղը տանելու համար Ֆրանսիան ստիպված է վերադիր ծախսեր անել, մինչդեռ Անգլիան ու Գերմանիան այդ ծախսերից ազատ են: Յերկրորդ աննպաստ պայմանն այն է, վոր սեփական քարածուխը չի բավականանում: Պատերազմից առաջ յերկրի ներսը գործածվող քարածխի $^1/_3$-ը բերվում եր դրսից: Քարածխի պակասության պատճառով Ֆրանսիայի յերկաթային արդյունագործությունը բավական դանդաղ քայլերով եր զարգանում. այսպես՝ 1870 թ.-ից մինչև 1913 թ. չուգունի արտադրությունը մեծացել է մոտ 4 անգամ, մինչդեռ Գերմանիայում նույն ժամանակամիջոցում մեծացել է 12 անգամ, իսկ Միաց. Նահանգներում նույնիսկ 19 անգամ:

Ճիշտ է, Ֆրանսիան Վերսալի դաշնագրի համաձայն ստացավ Էլզաս-Լոթարինգիան և 15 տարով էլ Սաարի քարածխային շրջանը, բայց դրանով քարածխի խնդիրը չլուծվեց: Սաարի շրջանը բավականաչափ կոքսացող քարածուխ չի տալիս. յեղածը հազիվ բավարարում է տեղական կարիքներին: Այսպիսով Վերսալի դաշնագրից հետո Ֆրանսիան ունեցավ յերկաթահանքի բավական խոշոր պաշար (Յեվրոպայի յերկաթահանքի ամբողջ պաշարի $^1/_4$-ից ավելին Ֆրանսիային է պատկանում), բայց չապահովվեց քա-

րածխով: Պարզ է, վոր այսպիսի պայմաններում Ֆրանսիան յուր ծանր արդյունագործությամբ չեր կարող մրցել վոչ Անգլիայի և վոչ էլ Գերմանիայի հետ: Նա ավելի շուտ կարող է համեմատվել Շվեդիայի հետ, վորը ունենալով յերկաթահանքի մեծ պաշար, բայց չունենալով բավականաչափ քարածուխ, ստիպված է յուր յերկաթահանքը վաճառել քարածխով հարուստ յերկրներին (յերկաթահանքը քարածխի մոտ տանելն ավելի եժան է նստում, քան հակառակը):

Չնայելով վերը հիշած դժվարություններին, մենք տեսնում ենք, վոր չուգունի և պողպատի արտադրությունը պատերազմից հետո խոշոր չափերի յե հասել: 1925 թ. Ֆրանսիան տվեց չուգունի համաշխարհային արտադրության $13^0/_0$-ը: Դա մասամբ բացատրվում է նրանով, վոր պատերազմից հետո Լոթարինգիայի և Սաարի շրջանի բազմաթիվ գործարաններ, վորոնք շինված եյին տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, անցան ֆրանսիացիների ձեռքը:

Աղյուսակ № 43.

ՉՈՒԳՈՒՆԻ, ՊՈՂՊԱՏԻ ՅԵՎ ՔԱՐԱԾԽԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԱՌԱՋ ՅԵՎ ՀԵՏՈ
(միլլիոն տոններով)

	1913 թ.			1921	1924	1925
	Հին սահմաններում	Էլզաս-Լոթարինգիայում և Սաարի շրջանում	Ընդամենը	Ֆրանսիական նոր սահմաններում Սաարի շրջանի հետ		
Քարածխի արտադրությունը	40 8	17,0	57,8	38,5	58,9	61,0
Չուգունի » . .	5,2	5,2	10,4	4,1	9,0	9,9
Պողպատի » . .	4,7	4,3	9,0	4,1	8,4	9,0

Բացի քարածխից և յերկաթից՝ Ֆրանսիայում գտնվում են նաև պղինձ, ցինկ, կապար, բոկսիտ (ալյումին), ֆոսֆորիտ և այլն, բայց դրանց արտադրությունն այնքան էլ մեծ չէ. բացառություն է կազմում բոկսիտը, վորով Ֆրանսիան յերկրորդ տեղն է բռնում ամբողջ յերկրագնդի վրա (Միաց. Նահանգներ): Ֆրանսիան բոլորովին զուրկ է նավթից, դրանով է բացատրվում այն, վոր ֆրանսիացիներն առանձին ուշադրություն են դարձնում ԽՍՀՄ-ի նավթային հարստության վրա:

Ֆրանսիան ինչ հանքերով է հարուստ: Քարածխի և յերկաթի արտադրությամբ Ֆրանսիան վորերորդ տեղն է բռնում: Ինչով է բացատրվում այն հանգամանքը, վոր Գերմանիայի և Անգլիայի յերկաթային արդյունագործությունն ավելի արագ զար-

գացավ, քան Ֆրանսիայինը։ Պատերազմն ինչ ազդեցություն ունեցավ Ֆրանսիայի հանքային արդյունաբերության վրա։ Պատերազմից հետո Ֆրանսիան քարածխով և յերկաթով հարուստ ինչ շրջաններ գրավեց։

Արդյունագործություն։ Պատերազմից առաջ Ֆրանսիայի արդյունագործությունը այնքան էլ ծաղկած դրության մեջ չեր գտնվում։ Այդ ասպարեզում Ֆրանսիան չափազանց դժվարությամբ եր կարողանում դիմանալ առանձնապես Գերմանիայի մրցակցության։ Ֆրանսիան ավելի շուտ մանր արդյունագործական, գյուղատնտեսական յերկիր եր, քան խոշոր արդյունագործական—ինչպես եյին Գերմանիան և Անգլիան։ Պատերազմից հետո դրությունը փոխվում ե։ Պատերազմող յերկրներից ամենից արագ վոտքի ե կանգնում Ֆրանսիայի արդյունագործությունը և արագ թափով զարգանում ե։ Այս հանգամանքը բացատրվում ե նրանով, վոր Ֆրանսիան պարտված Գերմանիայից հսկայական գումարներ ստացավ, վորպես պատերազմական հատուցում։

Պատերազմից հետո արդյունագործության բոլոր ճյուղերը Ֆրանսիայում զարգացան, նույնիսկ մետաղագործությունը խոշոր չափերի յե հասել, չնայելով վոր Ֆրանսիան աղքատ ե մետաղներով (բացի յերկաթից) և քարածուխով։ Բայց ինչպես ասացինք, Ֆրանսիայի արդյունագործության խոշոր մասն աշխատում ե բերովի քարածխով, իսկ մետաղագործությունը՝ ոտար մետաղներով։

Ամենից առաջ աչքի յե ընկնում գյուղատնտեսական մթերքների վերամշակությունը. ճակնդեղից պատրաստում են մեծ քանակությամբ շաքար, խաղողից ընտիր գինիներ, պտուղներից ու սերմերից զանազան յուղեր և այլն։

Պատերազմից առաջ Ֆրանսիան արտադրում եր մոտ 7,8 միլիոն կվինտալ ճակնդեղի շաքար։ Արտադրած շաքարի քանակությամբ նա հետ եր Գերմանիայից, Ռուսաստանից և նախկին Ավստրո-Վենգրիայից։ 1925/26 թ. Ֆրանսիան արտադրել ե մոտ 7 միլիոն կվինտալ շաքար։ Ինչպես ցույց են տալիս այս թվերը, շաքարի արտադրությունը վերջին տարիները համարյա հասել ե մինչ պատերազմյան դրության, չնայելով վոր շաքարի գործարանների $^3/_4$-ը գտնվում եր հենց այն շրջաններում, վորտեղ պատերազմը մեծ ավերածություններ և արել։ Ֆրանսիայի արդյունագործության համար չափազանց բնորոշ ե պերճանքի յեվ մոդայի պարագաների պատրաստելը։ Ֆրանսիական կտորեղենը (մանավանդ մետաքսի գործվածքները), պատրաստի հագուստները, կրուժեվները, գալանտերեյը, խալիները, հախճապակյա իրերը, հոտավետ ոծանելիքներն ու սապոնները իրենց նմանը չունեն ամբողջ աշխարհում։

Բամբակեղենի արտադրությամբ Ֆրանսիան բռնում ե չորրորդ տեղը

(Անգլիա, Միաց. Նահանգներ և Գերմանիա)։ Նրա ֆաբրիկաներում պատերազմից առաջ գտնվում եր 7,4 միլիոն իլիկ, իսկ 1926 թ. 9,5 միլիոն։ Մեծ նշանակություն ունի նաև բրդեղենի և մետաքսեղենի արտադրությունը։ Մետաքսը, մետաքսի գործվածքները և մյուս տեքստիլները մեծ չափով արտահանվում են։

Չտեսնված արագությամբ զարգանում ե ելեկտրոտեխնիկական արդյունագործությունը։ 1921 թ. ելեկտրական կայարաններում դրված մեքենաների կարողությունը 1,4 միլիոն կիլովատտ եր, իսկ 1923 թ. արդեն 2,6 միլիոն եր։ Ելեկտրոֆիկացիային մեծ չափով նպաստում ե ջրային եներգիան, վորի մեծությամբ Ֆրանսիան յերրորդ տեղն ե բռնում արևմտյան Յեվրոպայում (Շվեցիա, Նորվեգիա)։ Ելեկտրոտեխնիկական արդյունագործության ամբողջ արտադրությունը 1913 թ. գնահատվում եր 200 միլիոն ֆրանկ, իսկ 1923 թ.—1500 միլիոն։ Այս հաջողության հետևանքով այժմ Ֆրանսիան բավական մեծ քանակությամբ ելեկտրոտեխնիկական պարագաներ ե արտահանում։

Ֆրանսիայում արդյունագործության վոր ճյուղերն են զարգացած։

Հաղորդակցության միջոցները։ Ֆրանսիայի յերկաթուղիների ընդհանուր յերկարությունն ե մոտ 50000 կիլոմետր, այսինքն ամեն 10000 բնակչին ընկնում ե 12,3 կիլոմետր։ Յերկաթուղային ցանցի խտությամբ Ֆրանսիան 9-րդ տեղն ե գրավում ամբողջ Յեվրոպայում։ Բայց նրա յերկաթուղային ցանցն այն առավելությունն ունի, վոր սկսվում ե յերկրի արդյունագործական և առևտրական խոշոր կենտրոնից՝ Փարիզից և տարածվում դեպի յեզերքները։

Հարմար դասավորություն ունեն նաև գետերը, վորոնք սկսվելով յերկրի կենտրոնում՝ հոսում են դեպի շրջապատող ծովերը։ Բազմաթիվ շլյուզների շնորհիվ ծովային խոշոր շոգենավերը կարողանում են գետաբերանով բարձրանալ դեպի յերկրի ներսը։ Այսպես, որինակ, ամենամեծ ծովային նավերը Սենա գետով հասնում են մինչև Ռուան, իսկ շատերը նաև մինչև Փարիզ։ Բացի այդ՝ գետային սիստեմները միացած են բազմաթիվ ջրանցքներով, վորոնց ընդհանուր յերկարությունն ե մոտ 5000 կիլոմետր, մինչդեռ նավագնաց գետերի յերկարությունն ե ընդամենը՝ 8070 կիլոմետր։ Այսպիսով ջրանցքների ցանցը կազմում ե նավագնաց գետային ցանցի 62-%-ը (ԽՍՀՄ-ի մեջ 0,02%)։ Ջրանցքներից մեծ նշանակություն ունի մանավանդ այսպես կոչված Հարավային ջրանցքը, վորը Գարոննա գետի ոգնությամբ Բիսկայան ծոցը միացնում ե Միջերկրական ծովի հետ։

Ծովային նավատորմի մեծությամբ Ֆրանսիան այժմ չորրորդ տեղն ե բռնում (Անգլիա, Միաց. Նահանգներ և Յապոնիա)։ Պատերազմից հետո նրա

նավատորմիղն այնքան մեծացավ, վոր 1927 թ. կազմում էր արդեն 3,47 միլիոն տոնն։ Գլխավոր նավահանգիստներն են Մարսելը և Շերբուրգը, այնուհետև կարևոր են Հավրը, Ռուանը, Բուլոնը և Բորդոն։ Փաստորեն ծովային նավահանգիստ է նաև Փարիզը, շնորհիվ այն հանգամանքի, վոր Սենայի հունը բավականաչափ խորացվել է ծովային նավերի յերթևեկության համար։ Ծովային նավագնացությանը մեծ չափով նպաստել է անշուշտ նրա աշխարհագրական դիրքը, ինչպես և գաղութային քաղաքականությունը։

Ավտոմոբիլային գործը Ֆրանսիայում զարգանում է չափազանց արագ քայլերով։ Ավտոմոբիլների թվով Ֆրանսիան այժմ չորրորդ տեղն է բռնում ամբողջ յերկրագնդի վրա։ Մեծ չափերի յե հասել նաև օդային տրանսպորտը։ Օդային նավատորմի մեծությամբ Ֆրանսիան առաջինն է ամբողջ յերկրագնդի վրա։

Ֆրանսիայի յերկաթուղային ցանցը համեմատեցեք մյուս յերկրների յերկաթուղային ցանցի հետ թե յերկարությամբ և թե խտությամբ։ Ֆրանսիայի յերկաթուղիների գլխավոր հանգույցը վո՞րն է։

Համեմատեցեք Ֆրանսիայի առևտրական նավատորմը մյուս յերկրների նավատորմի հետ (տես գրքի վերջին մասը)։

Քարտեզի վրա ցույց տվեք Ֆրանսիայի գլխավոր նավահանգիստները։

Արտաքին առևտուրը։ Արդյունագործության վերջին տարիների զարգացումը մեծ չափերի հասցրեց Ֆրանսիայի արտաքին առևտուրը։ Արտաքին առևտրի ընդհանուր շրջանառությունն այժմ ավելի մեծ է, քան պատերազմից առաջ, բացի այդ նրա բալանսը դարձել է ակտիվ, այսինքն արտահանությունն ավելի մեծ արժեք է տալիս, քան ներմուծությունը։ 1926 թ. արտահանությունը կազմում էր 59535 միլիոն ֆրանկ, իսկ ներմուծությունը—59515 միլիոն։ Ներմուծվող ապրանքների մեջ առաջին տեղը բռնում են հետևյալ հում նյութերը—քարածուխ, կոքս, նավթ, բուրդ, բամբակ և այլն, վորոնք կազմում եյին 1924 թ.-ի ներմուծության ամբողջ արժեքի 65%-ը։ Յերկրորդ տեղը բռնում են պարենները—հացահատիկ, թեյ, սուրճ, կակաո, գինի և այլն։ Բացի այդ ապրանքներից՝ Ֆրասիան ներմուծում է նաև մեքենաներ, քիմիական պարագաներ, մետաղից պատրաստած իրեր և այլն, բայց դրանք համեմատաբար փոքր տոկոս են կազմում։

Արտահանվող ապրանքների մեջ առաջին տեղը բռնում են գործարանային պատրաստի իրերը։ 1624 թ. նրանք կազմում եյին արտահանության ամբողջ արժեքի 60%-ը։ Ֆրանսիան արտահանում է՝ մետաքսե և բամբակե գործվածքներ, պատրաստի հագուստներ, հոտավետ յուղեր, պերճանքի առարկաներ, մետաղից պատրաստած իրեր, ավտոմոբիլներ, քիմիական ապրանքներ, ռետինե իրեր և այլն։ Պարենի արտահանությունն այնքան էլ մեծ չէ։ Արտահանվում են՝ գինի, պտուղներ և կաթնեղեն։ Հում նյութերից արտահանում են հանք, և հում մետաքս։

Ֆրանսիան համեմատաբար մեծ առևտուր ունի Անգլիայի, Միաց. Նահանգների և Բելգիայի հետ։ Վոչ պատերազմից առաջ և վոչ էլ այժմ Ֆրանսիան ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ աչքի ընկնող տեղ չի գրավում։*) Նա Ռուսաստանից պատերազմից առաջ արտահանում էր հացահատիկ, փայտ, նավթ, մանգանի հանք և կտավատ, իսկ փոխարենը տալիս էր պերճանքի պարագաներ, գինի, մեքենաներ և այլն։

Այսպիսով Ֆրանսիան յուր արտաքին առևտրով նմանվում է արդյունագործական յերկրների. արտահանում է գլխավորապես գործարանային պատրաստի իրեր, իսկ ներմուծում է գլխավորապես հում նյութ գործարանի համար և պարեն։

Ֆրանսիան արտաքին առևտրի շրջանառությամբ վո՞րերորդ տեղն է բռնում։
Ներմուծվող և արտահանվող ապրանքների մեջ գլխավորները վորո՞նք են։
Ֆրանսիան ԽՍՀՄ-ից ինչ է ստանում։

Պետական կազմը Ֆրանսիան բուրժուական հանրապետություն է։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է պատգամավորական խորհրդարանին և սենատին։ Կատարողական իշխանությունը գտնվում է հանրապետության նախագահի ձեռքում։ Նախագահն ընտրվում է 7 տարով, նշանակում է նախարարներ, կնքում է միջազգային պայմանագրեր, հայտարարում է պատերազմ (նախապես առնելով պալատների համաձայնությունը) և այլն։

Դասակարգեր։ Ֆրանսիայում ներկայումս կատարվում է դասակարգերի վերախմբավորում։ Յերկրի արագ ինդուստրացման հետևանքով քաղաքային պրոլետարիատի նշանակությունն աճել է։ Մյուս կողմից պրոլետարացման են յենթարկվում մանր բուրժուազիայի լայն խավերը վորոնք առաջներում տոն եյին տալիս ֆրանսիական քաղաքականության։ Խոշոր արդյունագործական և ֆինանսական բուրժուազիան նույնպես այժմ կազմակերպված է Պուանկարեյի ռազմատենչ և իմպերիալիստական արտաքին քաղաքականության շուրջը, իսկ ներքին կյանքում տանում է ամենակատաղի պայքար ֆրանսիական պրոլետարիատի դեմ՝ հանձինս Կոմունիստական կուսակցության։

Բուրժուական կուսակցություններ. — Բուրժուազիան ունի վոչ թե իսկական կուսակցություններ, վորոնք ունենային վորոշ ծրագիրներ և կազմակերպություններ, այլ զանազան խմբեր, վորոնք ձգտում են իրենց շուրջը համախմբել մանր բուրժուազիային, բանվորներին և գյուղացիներին։ Այդ խմբավորումներից մի քանիսում տիրապետում են խոշոր բուրժուական էլե-

*) 1926/27 թ. մարտից մինչև հոկտեմբերը Ֆրասիան ԽՍՀՄ-ից գնել է 35,6 միլիոն ռուբլու ապրանք, վորի մեջ մտնում են ցորեն—13,7 միլիոն, շաքարավազ—6,3 միլիոն, նավթ—5,5 միլիոն, փայտ—1,6 միլիոն և վուշ-1 միլիոն

մենտները, իսկ մի քանիսում՝ մանր բուրժուական (ձախ բլոկ)։ Այնուամենայնիվ այդ խմբերը կոչվում են կուսակցություններ։

1. Խոշոր բուրժուազիայի կուսակցությունները. ա) Ռոյալիստներ։ Այս կուսակցության ղեկավարող մասը բաղկացած է աղքատացած ազնվականներից և կաթոլիկ յերիտասարդությունից։ Ներկայումս ռոյալիստները աշխատում են բանվորներից և բատրակներից կազմել զանազան ֆաշիստական խմբեր։ բ) «Լ'աքսիոն լիբերալ է պոպյուլեր» կուսակցությունը հանդիսանում է գլխավոր ներկայացուցիչը այն կաթոլիկների, վորոնք հաշտվել են հանրապետության հետ։ Կուսակցությունը ուժեղ աշխատանք է տանում գյուղացիության մեջ և ղեկավարում է քրիստոնեական պրոֆմիությունները։ գ) Հանրապետական Ֆեդերացիան հանդիսանում է գլխավորապես խոշոր հողատերերի կուսակցություն։ դ) Դեմոկրատական-Հանրապետական կուսակցությունը միացնում է խոշոր արդյունաբերողներին «Կոմիտե դը Ֆորժ»-ի (մետաղարդյունաբերության տերերի միություն) ղեկավարությամբ։ Վերջին յերկու կուսակցությունները կազմում են ազգային-հանրապետական լիգա կամ աջ բլոկ (ղեկավարը Միլյերան)։

2. «Ձախեր». ա) Ռադիկալներ յեվ ռադիկալ-սոցիալիստական կուսակցությունը գլխավորապես ներկայացնում է մանր արդյունաբերողների և առևտրականների, միջակ գյուղացիության, չինովնիկության, մի քանի բանկերի հետ կապված ինտելիգենտների շահերը։ Ձախ բլոկի հետևից գնում են մի շարք ուժեղ կազմակերպություններ։ բ) Հանրապետական-սոցիալիստական կուսակցություն. սա ավելի շուտ պոլիտիկանների մի խմբակ է, քան կուսակցություն, վորը իր հետևից չունի գրեթե վոչ մի կազմակերպություն։

3. Պրոլետարական կուսակցություններ. Սոցիալիստական կուսակցություն։ Ունի 100.000-ից ավելի անդամներ, վորոնց մի մասը կազմում են մանր բուրժուաները։ Կուսակցությունը մեծ մասամբ բլոկ է կազմում «ձախ» բուրժուական կուսակցությունների հետ և վճռական մոմենտին միշտ դավաճանում պրոլետարիատի շահերին։

Կոմունիստական կուսակցությունը, չնայած վոր պատերազմից հետո յե կազմակերպվել, ունի ներկայումս (1927 թ.) 80.000 անդամ, վորոնց 65%-ը կազմում են արդյունաբերական բանվորները։ 1924 թվի պարլամենտական ընտրություններին կուսակցությունը ստացավ 875,812 ձայն, իսկ 1928 թվի ընտրություններին 1 միլիոն 200 հազար ձայն։

Թվեցեք Ֆրանսիայի գլխավոր կուսակցությունները։
Ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում նրանք իրար հետ։

Գլխավոր քաղաքները։

Փարիզ (3 միլիոն բնակիչ)—Ֆրանսիայի մայրաքաղաքն է։ Այստեղ են գտնվում կառավարությունը և օրենսդրական հիմնարկները։ Ֆինանսական, առևտրական և արդյունա-

գործական կենտրոն է։ Մեծ չափերի յե հասնում պերճանքի առարկաների արտադրությունը։ Փարիզի բազմաթիվ խանութները մատակարարում են ապրանքներ վոչ միայն քաղաքի ազգաբնակչությանը, այլ և գավառին։ Խոշոր նավահանգիստ է Սենայի վրա։

Բորդո—գտնվում է Ատլանտյան ովկիանոսի ափին (Գարոննայի գետաբերանում). խոշոր նավահանգիստ է։ Գինու առևտուր։

Հավր—ծովային խոշոր նավահանգիստ է։ Առևտուր է անում հեռավոր յերկրների հետ (Միաց. Նահ.-ից ներմուծում է բամբակ, Բրազիլիայից՝ սուրճ, Արգենտինայից՝ կաշի և բուրդ, կակաո, կաուչուկ և այլն)։ Մեքենաների կառուցում։

Լիոն (562 հազար բնակիչ)—մետաքսի արդյունագործական կենտրոն։ Խոշոր առևտուր։

Մարսել (586 հազար բն.)—Նավահանգիստ Միջերկրական ծովի ափին։ Յերկրագնդի խոշոր նավահանգիստներից մեկն է։ Ֆրանսիան նրա վրայով առևտուր է անում Մերձավոր և Հեռավոր Արևելքի հետ։ Ունի բազմաթիվ գործարաններ (սապոն, շաքար և այլն)։

Նանտ—Նավահանգիստ է. գտնվում է Լուարայի գետաբերանում։ Ներմուծում է արտասահմանյան քարածուխ։ Արդյունագործական կենտրոն է։ Նիցցա—գտնվում է Միջերկրական ծովի ափին. հայտնի յե յուր մեղմ կլիմայով։ Ռուան—Նավահանգիստ Սենայի վրա։ Ստրասբուրգ—Էլզասի գլխավոր քաղաքն է։ Նավահանգիստ է Հռենոսի վրա։

Ֆրանսիայի համր քարտեզի վրա նշանակեցեք շրջապատող ծովերը, գլխավոր գետերը, գլխավոր քաղաքները։ Այդ համր քարտեզի վրա ցույց տվեք այն տեղը, վորտեղից սկսվում են Ֆրանսիայի գլխավոր գետերը։

Ցույց տվեք նույն համր քարտեզի վրա գլխավոր յերկաթուղային գծերը և ջրային ճանապարհները։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Ֆրանսիան դառնալով հզոր պետություններից մեկը և զարգացնելով յուր ծովային առևտուրը, արդեն XVI դարում հաստատում է մի շարք գաղութներ Հյուս. Ամերիկայում, բայց այդ գաղութները չկարողացավ պահել յուր գերիշխանության տակ։ Այժմ նա Ամերիկայում ունի ընդամենը մի քանի գաղութներ, վորոնց ընդհանուր մակարդակն է 91 հազար քառ. կիլոմետր, իսկ ազգաբնակությունը՝ ընդամենը կես միլիոն է։ Այդ գաղութներից աչքի յեն ընկնում ֆրանսիական Գվիանան և Մարտինիկա, Գվադելուպա, Սեն-Պյեր, Միկելոն կղզիները և այլն։

Ֆրանսիայի ամենագլխավոր գաղութները գտնվում են Աֆրիկայում և Ասիայում։ Աֆրիկական գաղութների ընդհանուր մակարդակը կազմում է

մոտ 11 միլիոն քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 36 միլիոն: Նշանավոր են Ալժիրը, Տունիսը, Մարոկկոն, Ֆրանսիական Արևմտ. Աֆրիկան, Ֆրանսիական Արևել. Աֆրիկան (մասնավորապես Մադագասկար կղզին) և Սահարան:

Ասիայում գտնվող ֆրանսիական գաղութների ընդհանուր մակարդակն է 856.700 քառ. կիլոմետր, 23,6 միլիոն բնակչով: Դրանց կենտրոնը կազմում է Հնդկաչին թերակղզին: Ասիական գաղութներից նշանավոր են Կոխինխինա, Կամբոջա, Աննամ, Տոնկին, Լաոս, Կվան-Չու-Վուն (Չինաստանում), մի քանի քաղաքներ Հնդկաստանում և Ասորիքը:

Բացի հիշած գաղութներից Ֆրանսիային պատկանում են նաև մի շարք կղզիներ Հնդկական և Խաղաղ օվկիանոսներում: Դրանց ընդհանուր մակարդակը կազմում է մոտ 23 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը, 80 հազար:

Ֆրանսիական բոլոր գաղութները բռնում են մոտ 11,8 միլիոն քառ. կիլոմետր տարածություն, այսինքն մոտ 22 անգամ մեծ են, քան մետրոպոլիայի մակարդակը: Գաղութների բոլոր բնակիչների թիվն է 60 միլիոն, որը մետրոպոլիայի ազգաբնակությունից մեծ է միայն ընդամենը մոտ $1^1/_2$ անգամ:

Գաղութներ ունեցող պետությունների մեջ Ֆրանսիան բռնում է յերկրորդ տեղը (առաջինը Անգլիան է), բայց ասիական գաղութների և մետրոպոլիայի աշխարհագրական կապը բավական թույլ է, որովհետև Սուեզի ջրանցքը և Մալակկայի նեղուցը գտնվում են Անգլիայի ձեռքում: Մետրոպոլիային ավելի մոտ են աֆրիկական գաղութները, մանավանդ Ալժիրը, Տունիսը և Մարոկկոն, որոնք մետրոպոլիայից բաժանվում են Միջերկրական ծովով:

Կանգ առնենք այդ գաղութներից մի քանիսի վրա:

ԲԵՐԲԵՐԻԱ

Աֆրիկայի հյուսիս-արևմտյան անկյունը կոչվում է Բերբերիա կամ Մաղրեբ: Ամբողջ Բերբերիայի յերկարությամբ ձգվում են Ատլասի լեռները, որոնք արևմուտքից դեպի արևելք գնալով հետզհետե ցածրանում են և բաժանվում առանձին լեռնաշղթաների: Այդ լեռնաշղթաները արևելքում հեռանում են իրարից և իրենց միջև գոյացնում Բերբերական հայտնի բարձրավանդակը, որը ծածկված է շոտերով: Շոտեր կոչվում են այն փոսերը, որոնք ձմեռային անձրևների ժամանակ լցվում են ջրով, իսկ ամառը ցամաքում են և ծածկվում սպիտակ աղի շերտով:

Բերբերիան յուր կլիմայով հիշեցնում է Միջերկրականի յեվրոպական

ափերը: Ամառը շոգ է և չոր, իսկ ձմեռը տաք և անձրևային: Համեմատաբար լավ ոռոգվում են ծովափերը և այն լեռնալանջերը, որոնք դարձած են դեպի Ատլանտյան օվկիանոսը և Միջերկրական ծովը, իսկ բարձրավանդակները և հարավային լեռները, որոնք գտնվում են Սահարա անապատի ազդեցության տակ, այնքան չոր են, որ յերկրագործությունը հնարավոր է միայն ջրովի տեղերում և օազիսներում: Յերկրի չոր շրջաններում ազգաբնակության հիմնական պարապմունքը անասնապահությունն է: Բերբերիան հարավային Յեվրոպային նման է ոչ միայն յուր կլիմայով, այլև բուսականությամբ: Այստեղ աճում են խաղող, թզենի, արմավենի, ձիթենի, խցանակաղնի և այլն:

Հյուսիս-արևմտյան Աֆրիկան, գտնվելով դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհների վրա և մոտ լինելով Յեվրոպային ու Ասիային, շատ վաղուց գրավել է իմպերիալիստական պետությունների ուշադրությունը: Այդ յերկիրը գրավելու համար առանձնապես մեծ ջանք թափեց Ֆրանսիան, որը 1830 թվին տիրացավ Բերբերիայի ամենահարուստ մասին—Ալժիրին, 1881 թ.—Տունիսին, իսկ XX-րդ դարի սկզբներին նաև Մարոկկոյին: Այժմ համարյա ամբողջ Բերբերիան պատկանում է Ֆրանսիային:

Բերբերիայի բնակիչների թիվը մոտ 14 միլիոն է, որի մեծ մասը կազմում են բերբերները: Սրանք պատկանում են սպիտակ ցեղին և Ալժիրում կոչվում են նաև կաբիլներ: Թվով յերկրորդ տեղը բռնում են արաբները, որոնք VII-րդ դարում յեկել են Արևելքից: Յեվրոպացիների թիվը մոտ մեկ միլիոն է. սրանց մեծ մասը կազմում են ֆրանսիացիները, իսպանացիները և իտալացիները: Ֆրանսիական կառավարությունը մետրոպոլիայից գաղթականներ գրավելու համար աշխատում եր առանձին արտոնություններ ստեղծել: Այսպես, նա տեղացիներից խլում եր հողերը և համարյա ձրիաբար տալիս ֆրանսիացի գաղթականներին: Բերբերիայի ծովափնյա հարուստ հողերն այժմ պատկանում են յեվրոպացիներին (գլխավորապես ֆրանսիացիներին):

Ամբողջ Բերբերիան բաժանվում է յերեք մասի — Ալժիր, Տունիս և Մարոկկո:

Ալժիր յեվ Տունիս: Ալժիրը և Տունիսը բռնում են Բերբերիայի Արևելյան մասը: Նրանց ընդհանուր մակարդակը հավասար է մոտ 700 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ 8,1 միլիոնի, որը բաշխվում է այսպես.

	Հազար քառ. կիլոմետր	Հազար բնակիչ	Ազգաբնակության խտությունը
Ալժիր	575,3	6.064	10,5
Տունիս	115,1	2.094	16,7
Ընդամենը	700,4	8.158	11,6

Բնակիչների 90%-ը կազմում են տեղացիները—բերբերները և արաբները, իսկ մնացածը յեվրոպացիներ են, վորոնցից ֆրանսիացիները գլխավորապես բնակություն են հաստատել Ալժիրում, իսկ իտալացիները՝ Տունիսում:

Ալժիրը և Տունիսը գյուղատնտեսական յերկրներ են: Ծովափնյա հարուստ շրջաններում ազգաբնակության գլխավոր զբաղմունքը կազմում են յերկրագործությունն ու այգեգործությունը: Հացահատիկներից առաջին տեղը բռնում է ցորենը, ապա գարին և վարսակը: Արհեստական վոռոգման, ինչպես և արհեստական պարարտացման շնորհիվ յեվրոպացիները կարողանում են բավական մեծ բերք ստանալ:

Պտղատու ծառերի և թփերի մեջ առաջնակարգ տեղը գրավում է ձիթենին, վորի պտուղներից ստացվում է մեծ քանակությամբ յուղ: Յեվրոպացի գաղթականների համար մեծ նշանակություն ունի նաև խաղողի մշակությունը: Արտադրած գինու քանակությամբ Ալժիրը յերկրագնդի գլխավոր գինեգործական յերկրներից մեկն է: Մյուս պտուղներից աչքի յեն ընկնում նարինջը, կիտրոնը, թուզը, մանդարինը և այլն:

Բարձրավանդակը հարմար է գլխավորապես անասնապահության համար: Տեղացիները պահում են մեծ քանակությամբ վոչխար և այծ, խոշոր յեղջյուրավոր անասուններ, ձորիներ և ուղտեր: Կենդանիները և բուրդը արտահանության կարևոր առարկաներն են:

Սահարայի սահմաններում սկսվում են ոազիսները, վորտեղ աճում են փյունիկյան արմավենիներ: Արտեզյան ջրհորների շնորհիվ այդ ոազիսների թիվը վերջերս այնքան է մեծացել, վոր արմավների բերքի մի մասը նույնիսկ արտահանվում է:

Բնական հարստությունները բավական շատ են: Առաջին տեղը բռնում են յերկաթահանքը և ֆոսֆատները, այնուհետև աչքի յեն ընկնում՝ կապարը, ցինկը, քարածուխը և այլն: Շնորհիվ հարմար ծովային հաղորդակցության և մետրոպոլիայի մոտիկության, այդ հանքերն այժմ մեծ չափերով մշակվում են և արտահանվում:

Արտաքին առևտուրը: Ինչպես տեսանք, Ալժիրը և Տունիսը գյուղատնտեսական յերկրներ են. այդ պատճառով այդ յերկրներից արտահանվում են գլխավորապես յերկրագործական և անասնապահական ապրանքներ, իսկ Տունիսից նաև հանքեր: Ալժիրի արտահանությունն ունի հետևյալ պատկերը (%-ներով ըստ արժեքի):

Գինի	31	Կենդանի	8
Ծխախոտ	6	Կաշի, բուրդ և մորթի	3
Հացահատիկ	6	Յերկաթահանք	4
Պտուղներ և բուսական այլ ապրանքներ	25	Ֆոսֆատ	3

Այստեղից յերևում է, վոր ամբողջ արտահանության $^3/_4$-ը տալիս է յերկրագործությունը, իսկ 10%-ը անասնապահությունը:

Տունիսի արտահանությունը մի քիչ ուրիշ պատկեր է ցույց տալիս: Այստեղ առաջին տեղը բռնում են հանքերը (ֆոսֆատները և այլն), իսկ յերկրորդ տեղը՝ անասնապահական և յերկրագործական ապրանքները:

Արտահանության մեծ մասն ուղղվում է Ֆրանսիա. յերկրորդ տեղը բռնում է Իտալիան:

Ֆրանսիայից ներմուծվում են մետաղե իրեր, գործվածքներ և այլ գործարանային ապրանքներ:

Ալժիրի յեվ Տունիսի նշանակությունը Ֆրանսիայի համար

Արդեն արտաքին առևտրից կարելի յե յեզրակացնել, թե վորքան կարևոր նշանակություն ունեն այդ յերկրները մետրոպոլիայի համար: Նրանք տալիս են Ֆրանսիայի ազգաբնակությանը ուտելիք և գործարաններին հում նյութ, մյուս կողմից՝ Ֆրանսիան ներմուծում է գործարանային ապրանքներ: Բացի այդ՝ Ալժիրը և Տունիսը ունենալով մեղմ կլիմա և գտնվելով մետրոպոլիայից վոչ հեռու, կարող են Յեվրոպայից ընդունել մեծ թվով գաղթականներ:

Մ ա ր ո կ կ ո:

Մարոկկոն սուլթանություն է, վորի մեծ մասը գտնվում է Ֆրանսիայի, իսկ փոքր մասը՝ Իսպանիայի հովանավորության տակ, բացի այդ՝ Տանժեր քաղաքն իր շրջակայքով հայտարարված է միջազգային: Տանժերը, գտնվելով Ջիբրալտարի նեղուցի դիմաց, այնքան մեծ առևտրական և ստրատեգիական նշանակություն ունի, վոր մեծ պետություններից և վոչ մեկը թույլ չի տալիս, վոր նա պատկանի վորևե ուրիշ պետության:

Թեև Մարոկկոն ունի յուր սուլթանը, բայց փաստորեն կառավարությունը գտնվում է ֆրանսիական գեներալ-կոմիսարի ձեռքում: Այդ կոմիսարը միևնույն ժամանակ Մարոկկոյում գտնվող ֆրանսիական զորամասերի հրամանատարն է:

Մարոկկոյի ընդհանուր մակերեսը հավասար է 572 հազար քառ. կիլոմետրի, վորից 420 հազարը գտնվում է Ֆրանսիայի հովանավորության տակ: Բնակիչների թիվն է մոտ 4 միլիոն. այսպիսով յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա միջին հաշվով ապրում է 7 մարդ:

Մարոկկոն, մի կողմից դարձած լինելով դեպի Ատլանտյան ովկիանոսը, իսկ մյուս կողմից բարձր լեռներով պաշտպանված լինելով Սահարա անապատից, ունի ավելի լավ կլիմայական և հողային պայմաններ, քան Ալժիրը և Տունիսը: Յեվրոպացիները բնակություն են հաստատել ծովափերին, իսկ յերկրի ներսը ապրում են տեղացիները, վորոնց գլխավոր պարապմունքը կազմում է անասնապահությունը:

Մարոկկոյում մշակում են նույն բույսերը, ինչ որ Ալժիրում և Տունիսում, բայց այստեղ հացահատիկների մեջ առաջին տեղը բռնում է ոչ թե ցորենը, այլ գարին։ Երկրի տնտեսության համար մեծ նշանակություն ունեն նաև ձիթենին, թզենին և փյունիկյան արմավենին։ Բացի եվրոպացիներից Մարոկկոյում երկրագործությամբ պարապում են նաև նստակյաց բերբերները, իսկ արաբներն, ընդհանրապես, քոչվորներ են և նրանց գլխավոր պարապմունքը կազմում է անասնապահությունը։ Անասուններից կարևոր են այծը և ոչխարը։

Հանքային հարստություններից հայտնի են՝ երկաթը, պղինձը, ֆոսֆատը, կապարը, արծաթը և այլն։ Երկաթի և կապարի հանքերն արտահանվում են։

Արտաքին առևտուրը կատարվում է գլխավորապես Ֆրանսիայի, Անգլիայի, և Ալժիրի հետ։ Արտահանվում են գյուղատնտեսական ապրանքներ (հացահատիկ, կաշի, բուրդ), իսկ ներմուծվում են գործվածքներ, մեքենաներ, շաքար և այլ գործարանային ապրանքներ։

Բնական պայմանները, աշխարհագրական հարմար դիրքը և տեղական նոսր ազգաբնակությունը գրավում են եվրոպացիների ուշադրությունը։ Մարոկկոյում կարող են բնակություն հաստատել դեռևս շատ եվրոպացիներ, բացի այդ՝ նա, գյուղատնտեսությունն ինտենսիվ դարձնելու դեպքում, մետրոպոլիային կարող է մատակարարել մեծ քանակությամբ հում նյութ և ուտելիք։

Ռիֆերի ապստամբությունը Մարոկկոյում։

Ինչպես գաղութային բոլոր երկրներում, այնպես և Մարոկկոյում մշտական ժողովրդական շարժումներ և ապստամբություններ են ծագում իմպերիալիստական պետությունների դեմ, այդ շարժումների նպատակն է ազատվել իմպերիալիստների շահագործումից և կեղեքումից և անկախ կյանք վարել։ Այս տեսակետից առանձնապես նշանակալից է ազատագրական շարժումը Մարոկկոյում, ուղղված ֆրանսիական իմպերիալիզմի դեմ։ Այդ շարժումը առանձնապես մեծ ծավալ ստացավ 1924 թվին վերածվելով իսկական պատերազմի։ Ապստամբության ղեկավարն էր ռիֆերի առաջնորդ Աբդ-էլ-Քերիմը։ Ֆրանսիացիները և իսպանացիները կատաղի անգթությամբ ճնշեցին ժողովրդի ազատագրական շարժումը, օգտագործելով այդ գործում ռազմական տեխնիկայի բոլոր նվաճումները (օդանավեր, քիմիական խեղդիչ գազեր, հեռաձիգ թնդանոթներ և այլն)։

Գլխավոր քաղաքները։

Մարոկկո (145 հազար բնակչով)—երկրի ամենամեծ քաղաքն է։ Գտնվում է լեռնահովտում և շրջապատված է նարնջի և ձիթենու այգիներով։ Ֆեց։ Կազաբլանկա—կարևոր նավահանգիստ է։

Աֆրիկայի քարտեզի վրա ցույց տվեք Մարոկկոն, Ալժիրը և Տունիսը։ Նրանք Ֆրանսիայի որ կողմն են գտնվում։ Ցույց տվեք Մարսել — Ալժիր ծովային ճանապարհը։

Նկարագրեցեք այդ երկրների բնական պայմանները։

Այնտեղ ինչ ժողովուրդներ են ապրում և դրանք գլխավորապես ինչով են պարապում։

Այդ երկրներն ինչ նշանակություն ունեն Ֆրանսիայի համար։

Ցույց տվեք Մարոկկոյի, Ալժիրի և Տունիսի գլխավոր քաղաքները։

Ի՞նչ կասեք Տանժերի մասին։

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՖՐԻԿԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԿԱԼՎԱԾՆԵՐԸ։

Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա։

Գտնվում է Սահարայից հարավ և հարավ-արևմուտք։ Նրա մեջ մտնում են Սենեգամբիան (Սենեգալ և Գամբիա գետերի շրջանը), Նիգերի վերին և միջին ավազանները և այն երկիրը, որ այստեղից տարածվում է դեպի արևելք մինչև Չադ լիճը։ Այդ բոլոր գաղութների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 3,7 միլիոն քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 13 միլիոն։ Ազգաբնակությունը բաղկացած է գլխավորապես նեգրերից, արաբներից և բերբերներից. եվրոպացիների թիվն աննշան է (ընդամենը 9.650 մարդ են, որից 7.742-ը՝ ֆրանսիացիներ են)։

Ամբողջ Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկան կառավարում է գեներալ-նահանգապետը, որը նստում է Դակար քաղաքում։ Տեղական ազգաբնակությունը երկրի կառավարության մեջ ամենևին մասնակցություն չունի, միայն Սենեգալի ազգաբնակության մի մասը ունի ֆրանսիական պարլամենտում յուր ներկայացուցիչը։

Բնակիչների գլխավոր պարապմունքը երկրագործությունն է։ Արտահանվում են պտուղներ, բուսական յուղեր, կաուչուկ, բամբակ, կակաո և այլն, իսկ մետրոպոլիայից ներմուծվում են գործվածքներ, մետաղե իրեր, սպիրտային խմիչքներ։

Գլխավոր քաղաքները։ Դակար—կարևոր նավահանգիստ է։ Ս. Լուի—նավահանգիստ է. տեղական ապրանքները դրա վրայով են արտահանվում։ Տիմբուկտու։

Աֆրիկայի քարտեզի վրա ցույց տվեք Ֆրանս. Արևմտ. Աֆրիկան։ Գտեք Դակար, Ս.-Լուի, Տիմբուկտու քաղաքները (Աշխ. ատլաս)։

Ֆրանսիան այդտեղից ինչ է արտահանում։

Կամերուն։

Կամերունը պատկանում էր Գերմանիային։ Պատերազմի ժամանակ Ֆրանսիան ու Անգլիան գրավեցին այդ երկիրը և իրենց մեջ բաժանեցին։ Մակերեսը 431 հազ. քառ. կիլոմետր է, իսկ բնակիչների թիվը՝ 3 միլիոն է։ Ազգաբնակությունը բաղկացած է նեգրերից. եվրոպացիների թիվն ընդամենը 741 է։ Գաղութը կառավարում է ֆրանսիական կոմիսարը։

Կամերունի հողն արգավանդ է, կլիման տաք և խոնավ։ Ազգաբնակչության գլխավոր պարապմունքը յերկրագործությունն է։ Արտահանվում են արմավ, արմավի յուղ, կակաո, իսկ ներմուծվում են՝ գործվածքներ, հագուստ, աղ և այլն։

Ցույց տվեք Կամերունը։ Առաջ նա ում էր պատկանում։ Ի՞նչ պրոդուկտներ են արտահանվում։ Ոլիմայական և բուսական ո՞ր զոնայում է գտնվում նա։

Մադագասկար։ Գտնվում է Հնդկական ովկիանոսում, Աֆրիկայից վոչ հեռու։ Կղզին կառավարում է ֆրանսիական գեներալ-նահանգապետը։

Ազգաբնակությունը բաղկացած է $3\frac{1}{2}$ միլիոն մարդուց, վորոնք մալայական ծագում ունեն և պարապում են յերկրագործությամբ և անասնապահությամբ։ Ֆրանսիան այստեղից արտահանում է չորացրած բանջարեղեն, բրինձ, սուրճ, կակաո, կաշի, սառցրած միս, վոսկի և այլն։ Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում գործվածքները, վոգելից խմիչքները, հագուստեղենը, մետաղները և այլն։

Սահարա։ Հսկայական անապատ է, վոր գտնվում է Հյուս. Աֆրիկայի կենտրոնում։ Մակերեսն է մոտ 2,4 միլիոն քառ. կիլոմետր, վորի վրա ապրում են ընդամենը 450 հազար մարդ։ Ազգաբնակությունը գլխավորապես ապրում է անապատի յեզերքներին և ոազիսներում։ Սահարան Ֆրանսիայի համար այն նշանակությունն ունի, վոր կապում է յուր շուրջը գտնվող ֆրանսիական գաղութներն իրար հետ։ Բերբերիայից դեպի հարավ Սահարայի միջով անցնում են մի քանի կարավանային ճանապարհներ։

Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկա։ (Նախկին ֆրանսիական Կոնգո)։ Բնակիչները գլխավորապես նեգրեր են, վորոնց թիվը մոտ $2\frac{1}{2}$ միլիոն է. յեվրոպացիները մոտ 3.000 հոգի յեն։ Յերկիրը կառավարում է ֆրանսիական գեներալ-նահանգապետը. տեղական ազգաբնակությունը յերկրի կառավարության մեջ վոչ մի մասնակցություն չունի։

Արտահանվում են—կաուչուկ, փայտ, փղոսկր, արմավենու ընկույզ (կոկոս), իսկ ներմուծվում են՝ գործվածքներ ու վոգելից խմիչքներ։

Ցույց տվեք Մադագասկարը, Սահարան և Ֆրանս. Հասարակած. Աֆրիկան. նրանք մետրոպոլիայի համար ի՞նչ նշանակություն ունեն։ Ցույց տվեք այդ գաղութների գլխավոր քաղաքները։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՆ ԱՍԻԱՅՈՒՄ

Ֆրանսիական Հնդկաչին։ Հնդկաչին թերակղզու ամբողջ արևելյան կեսը պատկանում է Ֆրանսիային և կոչվում է Ֆրանսիական Հնդկաչին։ Նրա մեջ մտնում են հետևյալ գաղութները—Կոխինխինա, Կամբոջա, Աննամ, Տոնկին և այլն։ Ընդհանուր մակերեսը հավասար է մոտ 700 հազար քառ. կիլոմետրի։ Բնակիչները 19 միլիոն են և բաղկացած են աննամիտներից, հնդիկներից, չինացիներից, մալայացիներից, յեվրոպացիներից և այլն։ Գտնվելով մուսսոնների շրջանում Ֆրանսիական Հնդկաչինն ունի տաք և խոնավ կլիմա։ Լեռնահովիտների արգավանդ հողը բնական առատ վոռոգման շնորհիվ առանձնապես հարմար է բրնձի մշակության համար։ Լեռները ծածկված են անտառներով, վորտեղ աճում են թանգարժեք ծառեր (վարդագույն, սև և այլ տեսակներ)։

Ազգաբնակության գլխավոր պարապմունքը յերկրագործությունն է։ Մշակում են մեծ չափով բրինձ, կաուչուկի ծառեր, թեյ, կակաո և այլն։ Յանքային արդյունաբերությունը տարեց տարի զարգանում է։ Ստացվում են նավթ, կլայեկ, արծաթ, ֆոսֆատներ և այլն։

Ֆրանսիական Հնդկաչինն արտահանում է բրինձ (վորը կազմում է արտահանության ամբողջ արժեքի $^3/_4$-ը), բամբակ, թեյ, սուրճ, պղպեղ, կաուչուկ, ծխախոտ, կաշի, ցինկ, արծաթ և այլն։

Յերկիրը կառավարում է ֆրանսիական գեներալ-նահանգապետը։

Սիրիա։ Սիրիան գտնվում է Արաբական բարձրավանդակի հյուսիսային մասում և տարածվում է Միջագետքից մինչև Միջերկրական ծովը։ Հնում Սիրիան հարուստ և արգավանդ յերկրներից մեկն էր. այստեղ գտնվում էին բազմաթիվ վաճառաշահ քաղաքներ, վորոնք առևտրական կապեր էին հաստատել վոչ միայն Իրանի, Միջագետքի, Արաբիայի հետ, այլև Միջերկրական ծովի վրայով հաղորդակցություն ունեին հեռավոր յերկրների հետ։ Այժմ այդ նավահանգիստներն ավերված են, իսկ յերկրի մեծ մասը ներկայացնում է անապատ, վորտեղ ապրում են քոչվոր արաբները։ Միայն Միջերկրականի ծովափը և Անտիլիբանանի արևելյան լանջերը, վորտեղ շատ ոազիսներ են գտնվում, բավական լավ մշակված են և ծածկված այգիներով ու պլանտացիաներով։ Անտիլիբանանի ստորոտում, ոազիսներից մեկում է գտնվում յերկրի ամենամեծ քաղաքը—Դամասկոսը, մյուս մեծ քաղաքը Բեյրութն է, վոր գտնվում է Միջերկրական ծովի ափին։

Սիրիան համաշխարհային պատերազմից առաջ պատկանում էր Թյուրքիային։ 1920 թվականին անկախություն ձեռք բերեց։ Ազգերի Լիգան այդ յերկիրը կառավարելու համար մանդատ տվեց Ֆրանսիային։ Նոր պետության մակերեսը հավասար է 155 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 3,5 միլիոնի։ Կառավարության գլուխ է կանգնած ֆրանսիական գերագույն կոմիսարը, վորը նշանակվում է Ֆրանսիայի հանրապետության նախագահի կողմից։

Ասորիքը գյուղատնտեսական յերկիր ե: Ազգաբնակության մեծ մասը պարապում ե յերկրագործությամբ և անասնապահությամբ: Հացահատիկներից մշակում են ցորեն, բրինձ և յեգիպտացորեն, իսկ մյուս բույսերից կարևոր են՝ բամբակը, ծխախոտը, նարինջը, մանդարինը, ձիթենին, թթենին և այլն:

Ասորիքից արտահանվում են տեղական գործվածքներ, անասուններ, բուրդ, կաշի, չոր միրգ և այլն, իսկ ներմուծվում են բամբակե և մետաքսե գործվածքներ, ներկեր, շաքար, մեքենաներ և այլն:

Ասորիքի աշխարհագրական դիրքը տնտեսական և քաղաքական նշանակություն ունի. նրա վրայով Միջագետքից, Թյուրքիայից, և Արաբիայից անցնում են մի շարք կարևոր ճանապարհներ դեպի Միջերկրական ծովը:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Գվադելուպա: Փոքր Անտիլյան կղզիներից մեկն ե: Մակարդակը հավասար ե 1.780 քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ 190 հազար ե: Կղզին կառավարում ե նահանգապետը:

Գվադելուպայի հողը չափազանց արգավանդ ե, իսկ կլիման տաք և խոնավ: Բնակիչների գլխավոր պարապմունքը յերկրագործությունն ե: Մշակում են շաքարեղեգ, սուրճ, կակաո, ծխախոտ և այլն: Արտահանվող ապրանքների մեջ կարևոր են շաքարը, սուրճը, կակաոն, վանիլը և այլն:

Ֆրանսիական Գվիանա: Գտնվում ե Հար. Ամերիկայում: Ազգաբնակությունը բաղկացած ե նեգրերից, հնդկացիներից և սպիտակներից: Մակարդակը հավասար ե 88 հազար քառ. կիլոմետրի, բնակիչների թիվը՝ 44 հազար ե:

Արտահանվող ապրանքների մեջ նշանավոր են վոսկին, կաուչուկը և վարդագույն փայտը:

Սեն-Պյեր յեվ Միկելոն: Մի խումբ կղզիներ են, վորոնք գտնվում են Նյու-Ֆաունդլենդ կղզու մոտ: Արտահանում են ձկնեղեն:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՈՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ:

Նոր Կալեդոնիա: Բավական մեծ կղզի յե: Բնակիչներն են պոլինեզիացիները, մելանեզիացիները և յեվրոպացիները: Վերջինների մեծ մասը աքսորված են Ֆրանսիայից: Արտահանվում են նիկել, քրոմ, կոբալտ, սուրճ, սոսինձ և այլն:

Տահիտի: Հրաբխային ծագում ունեցող կղզի յե: Արտահանվում ե վանիլ, կոկոս, նարինջ և այլն:

Ֆրանսիայի յեվ Անգլիայի շահերի ընդհարումը: «Անգլիան համաշխարհային պատերազմ մտավ այն նպատակով, վորպեսզի յուր յեվրոպական ախոյաններից ամենահզորին, Գերմանիային վոչնչացնի: Իսկ այդ պատերազմի արդյունքը Անգլիայի համար յեղավ (խոսքը Յեվրոպայի մասին ե) մի ախոյանի վոչնչացումը և նրա տեղը մի ուրիշ, շատ ավելի հզոր ախոյանի՝ Ֆրանսիայի հանդես գալը»:

Ֆրանսիայի և Անգլիայի շահերն առաջին հերթին ընդհարվում են Յեվրոպայում, վորտեղ Ֆրանսիան յուր ֆինանսական ազդեցության տակ ե առել համարյա ամբողջ Միջին Յեվրոպան (մանավանդ Ռումինիան և Լեհաստանը) և, գրավելով Ռուրը, վտանգավոր դիրք ե ստեղծել Անգլիայի համար:

Մյուս կողմից Ֆրանսիան աշխատում ե յուր գերիշխանությունը հաստատել և Միջերկրական ծովի վրա, վորի յեզերքին գտնվում են նրա կարևոր գաղութները—Մարոկկոն, Ալժիրը, Տունիսը, Ասորիքը: Այդ ծովում անգլիական մեծ ծովային ճանապարհն անցնում ե արևմուտքից դեպի արևելք (Ջիբրալտար—Սուեզ), իսկ ֆրանսիականը՝ հյուսիսից հարավ (Մարսել—Ալժիր): Պարզ ե, վոր Անգլիան պետք ե աշխատի հեռացնել Ֆրանսիային Մարոկկոյից, Ալժիրից և Ասորիքից. իսկ Ֆրանսիան յուր հերթին պետք ե աշխատի հեռացնել Անգլիային Ջիբրալտարից, Մալտայից և Յեգիպտոսից:

Միջերկրական ծովի համար մղված այդ կռիվը առաջ ե բերում մի շարք բարդ խնդիրներ, վորոնք միջազգային բնույթ ունեն: Ատլանտյան ովկիանոս դուրս բերող նեղուցը յերկու կարևոր կետեր ունի, մեկը Ջիբրալտարն ե, վոր գտնվում ե նեղուցի յեվրոպական ափին, իսկ մյուսը՝ Տանժերը աֆրիկական ափին: Ֆրանսիան աշխատում ե յուր ձեռքը ձգել Տանժերը և ամրացնել: Դրան դեմ են Անգլիան և Իսպանիան:

Այսպիսով Ֆրանսիայի և Անգլիայի շահերը ընդհարվում են յերկու կետերում. 1. նրանք մրցում են ծանր ինդուստրիայի մեջ և 2. կռվում են Միջերկրական ծովի վրա գերիշխանություն ձեռք բերելու համար: Յենթադրելով, վոր այս հարցերը վերջ ի վերջո զենքի ույժով են լուծվելու, Անգլիան 1922 թ. Ատլանտյան ովկիանոսից Միջերկրական ծովը տեղափոխեց մի հսկայական եսկադրա, բաղկացած 50 նավից: Այդ եսկադրան պատրաստված եր Գերմանիայի դեմ, իսկ այժմ անգլիացիները աշխատում են ոգտագործել նրան Միջերկրական ծովում հաստատվելու համար:

Ասիայի և Աֆրիկայի քարտեզների վրա ցույց տվեք Ֆրանսիայի գլխավոր գաղութները:

Ի՞նչ նշանակություն ունեն նրանք Ֆրանսիայի համար:

Համաշխարհային համր քարտեզի վրա վորևե գույնով ներկեցեք Ֆրանսիայի գաղութները: Նշանակեցեք այդ գաղութների գլխավոր նավահանգիստները:

Կարդացեք «Ֆրանսիական խումբը» (Խորրաբին, 165—177 յերես):

Կարդացեք «Մարոկկո», «Ալժիր» հոդվածները (Աշխարհի շուրջը):

3. ԳԵՐՄԱՆԻԱ

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա գտեք Գերմանիան:
Թվեցեք այն պետությունները, վորոնք սահմանակից են նրան:
Արևելյան Պրուսիան Գերմանիայից ինչով է բաժանվում:
Գերմանիայի յեզերքներն ինչ ծովերով են վողողվում:
Պատերազմից առաջ Գերմանիան սահմանակից եր Ռուսաստանին: Այժմ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև ինչ նոր յերկրներ կան:

Գերմանիայի աշխարհագրական դիրքը յեվ սահմանները:

Գերմանիայի աշխարհագրական դիրքը բավական նպաստավոր է առևտրական հարաբերությունների համար: Գտնվելով Յեվրոպայի համարյա կենտրոնում, Գերմանիան միջնորդ է հանդիսանում այդ աշխարհամասի արևելքի և արևմուտքի, հյուսիսի և հարավի միջև: Գերմանիայի վրայով են անցնում այն խոշոր ցամաքային ճանապարհները, վորոնք միացնում են Յեվրոպայի տարբեր մասերն իրար հետ:

Ցույց տվեք Բեռլին—Վարշավա—Մոսկվա, Բեռլին—Վիեննա—Բելգրադ—Կոստանդնուպոլիս, Բեռլին—Մյունխեն—Հռոմ, Բեռլին—Ֆրանկֆուրտ—Ստրասբուրգ—Փարիզ, Բեռլին—Համբուրգ—Լոնդոն ճանապարհները:

Գերմանիայի սահմաններն արևելքում և արևմուտքում միանգամայն պայմանական են և պաշտպանության համար անհարմար: Համեմատաբար լավ պաշտպանված են յերկրի հարավային սահմանները: Այստեղ բարձրանում են մի շարք լեռներ, վորոնցով Գերմանիան բաժանվում է հարևան պետություններից: Հյուսիսային սահմանը կազմում են Բալտիկ և Հյուսիսային ծովերը, Դանիան: Բալտիկ ծովի յեզերային գծի 1.365 կիլոմետրը և Հյուսիսային ծովի յեզերային գծի 300 կիլոմետրը պատկանում է Գերմանիային: Գերմանիայի ծովային առևտուրը կատարվում է հենց այդ ծովերի վրայով, վորտեղ նա ունի մի շարք համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստներ (Համբուրգ և այլն):

Գերմանիայի համր քարտեզի վրա ներկեցեք Գերմանիայի տեղը. չմոռանաք ներկել և Արևելյան Պրուսիան, վորը «Դանցիգի կորրիդորով» բաժանվում է Գերմանիայից (այդ մասին խոսվում է քիչ հետո):
Նշանակեցեք Բեռլինը և հարևան յերկրները. գրել մատիտով և շատ մանր:

Մակարդակը յեվ ազգաբնակությունը:

Գերմանիայի մակարդակը պատերազմից առաջ 540,9 հազար քառ. կիլոմետր եր, իսկ այժմ կազմում է 470,6 հազ. քառ. կիլոմետր: Համաշխարհային պատերազմում պարտություն կրելով, Գերմանիան Վերսալի դաշնագրի համաձայն տրված յեղավ Ֆրանսիային զիջել արդյունագործական Ելզասը և յերկաթահանքերով հարուստ Լոթարինգիան, Լեհաստանին—ինտենսիվ յերկրագործություն ունեցող Պոզնանը, Արևմտյան և Արևելյան Պրուսիայի մասերը և քարածխով հարուստ Սիլեզիայի մասերը, Չեխո-Սլովակիային—Վերին Սիլեզիայի մի մասը, Դանիային—Շլեզվիգի հյուսիսային մասը, Բելգիային—

Եյպենը և Մալմեդին. բացի այդ՝ Դանցիգը յուր շրջանով անկախ հայտարարվեց: Այսպիսով Գերմանիայից կտրվեց մոտ 70 հազար քառ. կիլոմետր տարածություն, 6,5 միլիոն բնակչով: Գերմանիայի ժողովրդական տնտեսության մեջ այդ շրջանները չափազանց մեծ նշանակություն ունեյին: Յերկրի գյուղատնտեսության $1/6$-ը, յերկաթահանքի արտադրության $3/4$-ը, ցինկի արտադրության 70%-ը, չուգունի արտադրության $1/4$-ը, քարածխի արտադրության $1/5$-ը և այլն այդ շրջաններն եյին տալիս:

Վերսալի դաշնագրի համաձայն Գերմանիան զրկվեց նաև յուր բոլոր գաղութներից, վորոնց ընդհանուր մակարդակը կազմում եր մոտ 3 միլիոն քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 13,5 միլիոն: Աֆրիկական գաղութները հանձնվեցին Անգլիային, Ֆրանսիային, Բելգիային և Պորտուգալիային, իսկ Խաղաղ ովկիանոսում գտնվող գաղութները՝ Անգլիային և Ճապոնիային:

Գերմանիայի բնակիչների թիվը վերջին տեղեկությունների համաձայն կազմում է 63,3 միլիոն, վորի 95%-ը գերմանացիներ են, իսկ 5%-ը լեհեր, հրեաներ և այլ ազգություններ: Յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա միջին հաշվով ապրում է 134,5 մարդ: Յուր ազգաբնակության խտությամբ Գերմանիան բռնում է առաջնակարգ տեղերից մեկը ամբողջ Յեվրոպայում:

Անցյալ դարի սկզբներում Գերմանիան յերկրագործական տիպիկ յերկիր եր և քաղաքային ազգաբնակությունը համեմատաբար մեծ չեր: Յերկրի ինդուստրացումն սկսվեց նույն դարի յերկրորդ կիսում միայն, բայց զարգացավ չափազանց արագ քայլերով: Դրա հետ քաղաքային ազգաբնակությունն սկսեց մեծանալ, ինչպես այդ յերևում է աղյուսակից.

	1875 թ.	1900 թ.	1925 թ.
Գյուղական ազգաբնակություն	61%	46%	36%
Քաղաքային ազգաբնակություն	39%	54%	64%

Քաղաքային ազգաբնակության այս մեծ տոկոսը ցույց է տալիս, վոր Գերմանիան արդյունագործական յերկրներից մեկն է:

Աղյուսակ № 44

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄԸ

Ֆրանսիային անցավ	1,9	միլիոն մարդ
Լեհաստանին »	3,9	» »
Դանիային »	165	հազ. »
Լիտվային »	140	» »
Բելգիային »	60	» »
Չեխո-Սլովակ. »	54	» »
Դանցիգում »	365	» »

Աղյուսակ № 45

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ

(Պատերազմից առաջ)

Գյուղատնտեսության մեջ	35,2%
Հանքային արդյունաբերության և արդյունագործության մեջ	40,0%
Առևտրի և տրանսպորտի մեջ	12,4%
Ազատ պրոֆեսիաների և պետական ծառայության մեջ	3,9%
Տնային ծառայություն	4,5%
Զինվորական ծառայություն	3,6%

Ներկայումս Գերմանիայի ազգաբնակչության դասակարգային կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ինքնագործ ազգաբնակչությունը հավասար է 34 միլիոն մարդու, վորոնցից՝

Բանվորներ	22,8 միլիոն
Ծառայողներ	3,2 »
Կիսապրոլետարներ	3,5 »
Ինքնուրույն գործատերեր (սրանց մեջ մտած նաև վորոշ զբաղմունք չունեցողները)	4,4 »

Գերմանիան վորքան մարդ կորցրեց։
Ազգաբնակության ամենամեծ տոկոսը ինչով է պարապվում։
Աշխատավոր տարրի վոր տոկոսն է պարապում արդյունագործությամբ և վորը գյուղատնտեսությամբ։

Բնական պայմանները։ Յուր մակերևույթի կազմությամբ Գերմանիան բաժանվում է յերկու մասի—հյուսիսային և հարավային։ Հյուսիսային Գերմանիան դաշտավայր է և լայն շերտով ձգվում է արևմուտքից դեպի արևելք (Յեվրոպայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Գերմանական դաշտավայրը)։

Հարավային Գերմանիան բարձրադիր է և բաղկացած է մի շարք բարձրավանդակներից և լեռներից, վորոնց միջև գտնվում են արգավանդ լեռնահովիտներ։ Ընդհանուր առմամբ Գերմանիայի մակերևույթը հարավից դեպի հյուսիս ցածրանում է. այդ յերևում է գետերի ընթացքից։ Յերկրի նավագնաց գետերը—Օդերը, Էլբան, Վեզերը և Հռենոսն սկսվում են հարավում և հոսում դեպի հյուսիս (ցույց տվեք)։ Դանուբը հոսում է դեպի արևելք։

Գերմանիայի կլիման բարեխառն է։ Հուլիս ամսվա բարեխառնության միջինը վոչ մի տեղ 20°-ից չի բարձրանում։ Արևմուտքից փչող խոնավ քամիների պատճառով յերկրի արևմտյան մասն ունի մեղմ և խոնավ կլիմա, իսկ արևելյանը՝ ցամաքային։ Արևմտյան Գերմանիայում հացահատիկները 3—4 շաբաթով ավելի շուտ են հասնում, քան արևելքում։ Համբուրգում (արևմուտքում) մթնոլորտային տեղումները կազմում են 73—75 սանտ., իսկ արևելյան շրջաններում 50—60 սանտիմետր։

Գերմանիայի համր քարտեզի վրա բարձրավանդակները ներկեցեք դարչնագույն, իսկ դաշտավայրերը՝ կանաչ գույնով. այդ նկարը համեմատեցեք Յեվրոպայի ֆիզիկական քարտեզի գերմանական տերրիտորիայի հետ։
Գրեցեք գետերի անունները։
Ինչու արևմտյան Գերմանիան ավելի տաք է և խոնավ, քան թե արևելյանը։

Գյուղատնտեսություն։ Վերջին պաշտոնական տեղեկությունների համաձայն (1922 թ.) Գերմանիայի զանազան տեսակի հողերը հետևյալ տոկոսային հարաբերությունն են տալիս։

Գյուղատնտեսական մակարդակ	63,4%
Անտառներ	27,0%
Անպետք հողեր	9,6%

Գյուղատնտեսական մակարդակի մեծ մասը բռնված են հացահատիկներով, արոտատեղերով և խոտահարքով.

	Հազար հեկտարներով հաշված	%
Վարելահող	22.327	73,9
Արոտատեղ և խոտահարք	7.737	25,6
Խաղողի այգիներ	91	0,3
Պտղատու ծառերի այգիներ	49	0,2
Ընդամենը	30.204	100,0

Ինչպես վերն ասացինք, Գերմանիայի գյուղատնտեսությունը XIX-րդ դարի կեսերից մեծ փոփոխությունների յենթարկվեց։ Գյուղատնտեսական յերկիրը կարճ ժամանակում դարձավ արդյունագործական, և քաղաքային մեծ ազգաբնակությունը նոր պահանջներ դրեց յերկրագործության առաջ։ Մինչև արդյունագործական յերկիր դառնալը, Գերմանիան մեծ քանակությամբ հաց եր արտահանում, իսկ այժմ, արագ աճող քաղաքային ազգաբնակությանը բավարարելու համար, նա ստիպված յեղավ հաց ներմուծել։ Սննդամթերքի պահանջը հետզհետե մեծանում է, և արդյունագործական կենտրոնների շուրջը առաջանում են գյուղատնտեսական ինտենսիվ շրջաններ, այնպես վոր անցյալ դարու վերջում Գերմանիան դառնում գյուղատնտեսական փայլուն զարգացում ունեցող արդյունագործական յերկիր։

Հանգստացող հողերը կազմում են ամբողջ վարելահողի 3%-ը միայն, յեռադաշտ սիստեմի փոխարեն տարածված է բազմադաշտյան սիստեմը. բերքատվությունը շնորհիվ արհեստական պարարտացման բավական մեծ է։

Արհեստական պարարտանյութերի գործածությամբ Գերմանիան հետ է մնում միայն Բելգիայից և Անգլիայից, բայց միաժամանակ նկատվում է

և այն, վոր գործածվող քիմիական պարարտանյութերի քանակն արագորեն աճում է: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե զանազան յերկրներում մեկ հեկտար հողին քանի կիլոգրամ պարարտանյութ է տրվում (1924 թ.):

Աղյուսակ № 46

Քիմիական պարարտանյութեր	Բելգիա	Անգլիա	Գերմանիա	Ֆրանսիա	Ռուսաստան (պատերազմից առաջ)
Ֆոսֆորաթթվային պարարտանյութ .	198	200	126	178	5,8
Կալիումային	15	39	42	12	0,7
Ազոտային	190	37	76	25	0,4
Ընդամենը .	403	276	244	215	6,9

Հացահատիկներից առաջին տեղը բռնում է հաճարը, վորի բերքով Գերմանիան պատերազմից առաջ բռնում եր առաջին տեղը. հաճարից հետո աչքի յեն ընկնում վարսակը, ցորենը և գարին: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս հացահատիկների և կարտոֆիլի բերքը, ինչպես և այն, թե Գերմանիան վորքան ապահով է այս կամ այն հացահատիկով (1925 թ., հազար տոններով հաշված):

Աղյուսակ № 47

	Բ ե ր ք ը	Ներմուծվում է	Արտահանվում է	Յերկրում գործ է ածվում	Սեփ. բերքը ծածկում է յերկրի ամբողջ գործած. $^0/_0$-ը
Հաճար . .	8.063	361	176	8.248	98
Վարսակ .	5.585	444	105	5.924	95
Ցորեն . .	3.217	1.678	212	4.683	69
Գարի . . .	2.599	933	13	3.519	74
Յեգիպտացորեն	—	557	7	550	—
Բրինձ . .	—	533	203	330	—
Ընդամենը					
Հացահատիկ	19.464	4.506	716	23.254	84
Կարտոֆիլ .	41.718	692	266	41.844	100

Այստեղից յերևում է, վոր հացահատիկների սեփական բերքը ծածկում է յերկրի կարիքների $84^0/_0$-ը, իսկ կարտոֆիլի բերքը միանգամայն բավարարում է: Ուրեմն չնայելով յերկրագործության ինտենսիվության, սեփական հացը չի բավականացնում յերկրի կարիքներին: 1925 թ. ներմուծվող հացահատիկները կազմում եյին մոտ 4,5 միլիոն տոնն:

Հացահատիկների և կարտոֆիլի բերքի մի մասը վերամշակվում են գործարաններում և ստանում սպիրտ, գարեջուր, օսլա և այլն:

Ճակնդեղի մշակությունը Գերմանիայում մեծ չափերի յե հասել: Արտադրված շաքարի քանակությամբ Գերմանիան բռնում է առաջին տեղը ամբողջ Յեվրոպայում:

Յերկրագործական մթերքների գործարանային վերամշակության ժամանակ ստացվում են թեփ, քուսպ և այլ մնացորդներ, վորոնք բավական ուժեղ կեր են հանդիսանում անասունների համար: Այս կերի, ինչպես և ցանովի առատ խոտի և արմատապտուղների շնորհիվ անասնապահությունը մեծ չափի յե հասել վոչ միայն քանակով, այլև վորակով: Գերմանիայի անասնապահության վիճակի մասին կարելի յե գաղափար կազմել հետևյալ աղյուսակով (1926 թ.).

Աղյուսակ № 48.

Անասուններ	Հազար գլուխներով հաշված	100 հեկտար գյուղատնտեսական մակերդակին ընկնում է—գլուխ անասուն
Ձի	3.869	13
Խոշոր յեղջ. անասուն	17.195	57,6
Վոչխար	4.084	46,0
Այծ	3.478	13
Խոզ	19.412	65
Ընդամենը խոշոր յեղջ. անասուններով հաշված . . .	28.617	96

Այստեղից կարելի յե յեզրակացնել, վոր Գերմանիան ապահովված չե ձիերով, բայց ձիերի այդ պակասությունը Գերմանիայի համար հետամնացության նշան չի, այլ ընդհակառակը: Յերկրի փոխադրական գործի մեխանիզացիայի, մասնավորապես գյուղատնտես. մեքենաների լայն կիրառման պատճառով մեծ քանակով ձի պահելը դառնում է վոչ ձեռնտու: Գերմանիայում յուրաքանչյուր 100 բնակչին ընկնում է մոտ 30 խոշոր յեղջ. անասուն, այսինքն պակաս, քան ԽՍՀՄ-ում, բայց այստեղ կարևորը քանակը չե, այլ վորակը: Գերմանական խոշոր յեղջ. անասունների մեծ մասը ազնվացեղ է: Խոզերի քանակով Գերմանիան առաջինն է ամբողջ Յեվրոպայում:

Գյուղատնտեսությունը Գերմանիայում ինչ հիմքերի վրա յե դրված: Ի՞նչ բույ-

ներ են մշակվում: Սեփական հացը քանի ամիս է բավականանում: Գերմանիան պատերազմից հետո ինչ հացառատ շրջանից զրկվեց:
Ցույց տվեք այն յերկրները, վորտեղից Գերմանիան հաց է ներմուծում:

Հանքային արդյունաբերություն:

Գերմանիայի արդյունագործության զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ քարածխի և յերկաթահանքի այն հսկայական պաշարը, վոր տարածված է նրա զանազան մասերում: Պատերազմից առաջ Գերմանիայում գտնվում եր քարածխի համաշխարհային պաշարի $9^0/_0$-ը, յերկաթահանքի $16^0/_0$-ը:

Քարածխի և յերկաթահանքի արտադրությունը այնքան արագ քայլերով աճեց, վոր պատերազմի նախորյակին Գերմանիան արտադրվող քարածխի քանակությամբ բռնում եր յերրորդ տեղը, իսկ ստացվող յերկաթահանքի քանակությամբ, ինչպես և պողպատի ու չուգունի արտադրությամբ յերկրորդ տեղը: Յուր պողպատի իրերով (մեքենաներով, ռելսերով և այլն) Գերմանիան հեղեղում եր համաշխարհային շուկան:

Պատերազմի հետևանքով Գերմանիան ստիպված յեղավ Լեհաստանին զիջել յուր քարածխի պաշարի $35{,}6^0/_0$-ը (Սիլեզիայում), բացի այդ $6{,}6^0/_0$-ը ժամանակավորապես գրավվեց Ֆրանսիայի կողմից (Սաարի և Ռուրի շրջանը): Զգալի չափով պակասեց նաև չուգունի արտադրությունը, վորի $26{,}8^0/_0$-ը ստացվում եր Ելզաս-Լոթարինգիայում և Սիլեզիայում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս լեռնային արդյունաբերության վիճակը պատերազմից առաջ և այժմ (միլիոն տոններով).

	1913 թ.	1925 թ.
Քարածուխ	190	133
Յերկաթահանք	26,6	5,5
Չուգուն	16,8	10,1
Պողպատ	17,1	12,2

Բացի յերկաթից Գերմանիայում գտնվում են նաև հետևյալ մետաղները և հանքերը—ցինկ, կապար, պղինձ, աղ, ծծումբ և այլն: Պատերազմից առաջ ստացվող ցինկի քանակությամբ Գերմանիան յերկրորդն եր ամբողջ յերկրագնդի վրա (Միաց. Նահանգներ): Պատերազմից հետո ցինկի արտադրությունը զգալի չափով պակասեց: Մեծ նշանակություն ունի նաև աղը, վորի արտադրությամբ բռնում եր յերրորդ տեղը:

Գերմանիան ինչ հանքերից զրկվեց: Այդ հանքերն ում անցան:
Գերմանիայի արդյունագործության զարգացումն ինչով կարելի յե բացատրել:

Արդյունագործություն:

Արդյունագործության շատ ճյուղեր Գերմանիայում զարգացել են այն աստիճան, վոր ունեն համաշխարհային նշանակություն: Մանավանդ հիշատակության արժանի յեն մետաղագործական, քիմիական և ելեկտրոտեխնիկական արդյունագործությունը:

Մետաղագործական արդյունագործության գլխավոր կենտրոններն են Հռեոսի շրջանը և Վեստֆալիան, ինչպես և Սաքսոնիան ու Սիլեզիան: Հռենոսի շրջանում գտնվում են մետաղագործական արդյունագործության մի շարք խոշոր կենտրոններ, վորոնք համաշխարհային նշանակություն ունեն, ինչպես օրինակ՝ Զոլինգենը, Կրուպպը և այլն: Կրուպպի գործարանում պատրաստվում եյին թնդանոթներ, մետաղե պարագաներ յերկաթուղիների և զրահակիրների համար և այլն: Պատերազմից առաջ չկար մի պետություն, վոր Կրուպպի գործարանին չպատվիրեր թնդանոթներ յուր նավատորմի և զորքի համար: Այժմ Կրուպպի գործարաններում պատրաստվում են (Վերսալի դաշնագրի համաձայն) միայն յերկրագործական մեքենաներ, գործիքներ և այլն: Գերմանիայի գործարաններում պատրաստված մեքենաները, գործիքներն ու մետաղե այլ ֆաբրիկատներ, վոչ միայն բավարարում եյին յերկրի կարիքներին, այլև խոշոր չափերով արտահանվում եյին համաշխարհային շուկա, վորտեղ նրանք մեծ հաջողությամբ մրցում եյին անգլիական ֆաբրիկատների հետ:

Ելեկտրոտեխնիկական արդյունագործությունը զարգացման բարձր մակարդակի վրա յե գտնվում և համաշխարհային նշանակություն ունի: Այդ արդյունագործության գլխավոր կենտրոնը Բեռլինն ե: Ելեկտրոտեխնիկական պարագաների համաշխարհային արտահանության համարյա կեսը տալիս է Գերմանիան:

Քիմիական արդյունագործության մեջ Գերմանիան մրցակից չունի ամբողջ աշխարհում: Նրա քիմիական ապրանքների մեջ աչքի յեն ընկնում մանավանդ ներկերը, վորոնք մեծ չափով արտահանվում են:

Տեքստիլ արդյունագործության ասպարեզում Գերմանիան նույնպես մեծ առաջադիմություն է արել: Այդ արդյունագործության մեջ առաջին տեղը բռնում են բամբակի, ապա բրդի և վուշի գործվածքները:

Անհրաժեշտ է հիշել նաև շաքարի, սպիրտի և գարեջրի արտադրությունը: Ճակնդեղի շաքարի արտադրությամբ Գերմանիան առաջինն ե: Բավարիայի գարեջուրը հռչակված է ամբողջ աշխարհում:

Գերմանիայի տնտեսության մեջ արդյունագործությունն ինչ նշանակություն ունի: Գերմանիան ինչ տիպի յերկիր կարելի յե համարել: Արդյունագործության վոր ճյուղերն են զարգացած:
Ինչու Անգլիան և Ֆրանսիան առանձնապես ձգտում եյին թուլացնել Գերմանիայի արդյունագործությունը:

Վերսալի դաշնագիրը յեվ Գերմանիան:

Կռվող յերկրներից վոչ մեկը համաշխարհային պատերազմից հետո այնպիսի ծանր հարված չստացավ, ինչպես Գերմանիան: 1919 թ. հունիսի 28-ին Ֆրանսիայի Վերսալ քաղաքում դաշնակից պետությունների (Միաց. Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Յապոնիայի, Ռումանիայի

և այլն) և Գերմանիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, վորի համաձայն պարտված Գերմանիան

ա) զրկվում է յուր տերրիտորիայի մի քանի մասերից և գաղութներից: Այդ մասին արդեն խոսել ենք:

բ) Գերմանիան պարտավորվում է կրճատել յուր ցամաքային զորքերը, ռազմանավերը և փակել զինվորական դպրոցները, բացի այդ նա պարտավորվում է օդային ռազմանավեր չունենալ: Հռենոսի աջ ափի բոլոր ամրոցները վերացվում են: Գերմանիան զրկվում է ռազմամթերք արտահանելու և ներմուծելու իրավունքից.

գ) Գերմանիան պարտավորվում է վճարել Անտանտային 132 միլիարդ մարկա ռեպարացիաներ*) թե փողով և թե իրերով—շոգենավերով, շոգեգնացքներով, վագոններով, կովերով, քարածուխով, մինչև անգամ տան կահկարասիքով:

Մինչև 1922 թ. վերջը Գերմանիան դաշնակիցներին վճարեց 22 միլիարդ մարկա թե վոսկով և թե ապրանքներով, իսկ մինչև 1924 թ. վերջը՝ 4 միլիարդ մարկա վոսկով: Այս պայմաններն այնքան ծանր եյին, վոր Գերմանիայի ժողովրդական տնտեսությունը փոխանակ բարձրանալու դեպի անկումն եր գնում, վորովհետև պարտքերի մի մասը վճարվում եր տնտեսության հիմնական դրամագլխից: Պարզ է, վոր այս դեպքում Գերմանիան չեր կարող վճարել յուր պարտքերը: Յեվ դաշնակիցները, տեսնելով այդ, 1924 թ. Լոնդոնում վերաքննության յենթարկեցին ռեպարացիաների խնդիրը և ընդունեցին ամերիկացի Դաուեսի պլանը:

Այդ պլանի նպատակն եր բարձրացնել Գերմանիայի տնտեսությունը, վորպեսզի նա կարողանա յուր պարտքերը վճարել: Յուր տնտեսությունը վերականգնելու համար Գերմանիան դաշնակիցներից ստանում է փոխառություն, բայց միաժամանակ յերկրի տնտեսության խոշոր աղբյուրները (յերկաթուղիները, մաքսը և այլն) յենթարկվում են դաշնակիցների հսկողությանը: Մնացած պարտքերի համար Գերմանիային տալիս են նոր ժամկետներ:

Դաուեսի պլանը, առաջին շրջանում վատ միջոց չեր գերմանական բուրժուազիայի համար: Այդ պլանը ուժեղացրեց գերմանական բուրժուազիայի դրությունը: Ստացված վարկերը հնարավորություն տվին արագ կերպով վերականգնելու գերմանական արդյունաբերությունը, վորի ապրանքները սկսեցին հեղեղել համաշխարհային շուկաները, լուրջ մրցակից դառնալով անգլիական և ֆրանսիական արդյունաբերության: Սակայն

*) Ռեպարացիա կոչվում է այն տուրքը, վորը ծախսվելու յե պատերազմից փչացած տնտեսությունները վերականգնելու համար:

Դաուեսի ծրագիրը Գերմանիայի բանվոր դասակարգի դրությունը ծայր աստիճան վատացրեց: Ահա թե ինչ է գրում ամերիկական մի խոշոր բանկի որգան այս մասին.

«Ինչ վերաբերում է Գերմանիայի իր պարտքերը վճարելու հնարավորության, ապա ակնհայտ է, վոր այդ պարտքերի վճարումը կախված է գերմանական արդյունաբերության արտադրողականությունը բարձրացնելուց և գերմանական ժողովրդի ապրանքների գործածությունը սահմանափակումից… դա, հավանաբար, կպահանջի, վոր արդյունաբերության մեջ բանվորական որը յերկարացվի… Վորպեսզի հնարավոր լինի պակասեցնել ապրանքների գործածությունը, անհրաժեշտ է ավելի քիչ աշխատավարձ վճարել քան ապրուստի միջոցների միջին արժեքն է: Դրան կարելի յե հասնել կամ ցածր փողային աշխատավարձով, կամ այնպիսի տուրքեր դնելով, վոր այն բոլորը, ինչ վոր ժողովուրդը գնում է, թանգ արժենան»: Ամերիկյան բանկիրների այս խորհուրդները գերմանական բուրժուազիան վերջին տարիներում առանձնապես աշխատում է կիրառել կյանքի մեջ ամենայն հարգաուությամբ: Գերմանական սոցիալ-դեմոկրատիան իր տակտիկայով, ոգնում է բուրժուազիային այս ծրագրի իրագործումը գլուխ բերելու: Միայն գերմանական Կոմունիստական կուսակցությունն է, վոր համառորեն պայքար է մղում բանվոր դասակարգին ճնշող նման ավազակաբարո պլանների դեմ:

Բացատրեցեք Դաուեսի պլանի նպատակը: Այդ պլանը ինչ հետևանքներ ունեցավ բանվոր դասակարգի համար:

Հաղորդակցության միջոցները:

Գերմանիայի յերկաթուղային ցանցի ընդհանուր յերկարությունը 1924 թ. կազմում եր 55,8 հազար կիլոմետր, այսինքն յերկաթուղային ցանցի համաշխարհային յերկարության 5%-ը: Յերկաթուղային ցանցի խտությամբ Գերմանիան հինգերորդ տեղն է բռնում ամբողջ յերկրագնդի վրա (Բելգիա, Լյուքսեմբուրգ, Շվեյցարիա և Անգլիա). 1.000 քառ. կիլոմետր տարածության ընկնում է 118 կիլոմետր յերկաթուղագիծ:

Փոխադրական գործում մեծ նշանակություն ունեն նաև գետերն ու ջրանցքները: Ունենալով մի շարք նավագնաց և հարմար դասավորություն ունեցող գետեր (Հռենոս, Ելբա, Օդեր և այլն), Գերմանիան նրանց միացրել է բազմաթիվ ջրանցքներով, վորոնք բավական հեշտացնում են ապրանքների փոխադրությունը: Ներքին ճանապարհներով կատարված ամբողջ փոխադրության 76%-ը տվել են յերկաթուղիները, իսկ 24%-ը ջրանցքներն ու գետերը: Վերսայլի դաշնագրի համաձայն Գերմանիան պարտավորվում է զիջել Ֆրանսիային և Բելգիային յուր գետային փոխադրական միջոցների 20%-ը:

1914 թ. Գերմանիան յուր ծովային առևտրական նավատորմի մեծությամբ յերրորդ տեղն եր բռնում (Անգլիա, Միաց. Նահանգներ)։ Թե վորքան մեծ եր Գերմանիայի առևտրական նավատորմի նշանակությունը, այդ յերևում ե նրանից, վոր Սուեզի ջրանցքով անցնող նավերի չարժման $^{1}/_{6}$-ը պատկանում եր գերմանական նավերին։ Այս տեսակետից Գերմանիան բռնում եր յերկրորդ տեղը (Անգլիայից հետո)։

Վերսայլի դաշնագրի համաձայն Գերմանիան ստիպված յեղավ Անտանտային զիջել յուր ծովային նավատորմի $^{9}/_{10}$-ը։ 1920 թվականից սկսած նա արագ թափով վերականգնում ե յուր առևտրական նավատորմը, այնպես վոր 1927 թ. Գերմանիայի առևտրական նավատորմը հավասարվում եր մինչպատերազմյան նավատորմի $^{2}/_{3}$-ին։

Վերջին տարիներս մեծ թափով զարգանում ե նաև օդային հաղորդակցությունը, ինչպես այդ յերևում ե հետևյալ աղյուսակից.

Աղյուսակ № 49

	1920	1923	1924	1925
Հաղորդակցության կանոնավոր գծերի յերկարությունը կիլոմետրերով	—	3.400	7.000	23.000
Փոխադրված մարդկանց թիվը (հազարներով)	4	8	13	55
Փոխադրված ապրանքները (տոններով)	12	44	93	808

Արտաքին առևտուր: Պատերազմից առաջ Գերմանիան համաշխարհային առևտրի մեջ յուր առևտրական շրջանառության արժեքով յերկրորդ տեղն եր բռնում (Անգլիա), իսկ այժմ նա բռնում ե յերրորդ տեղը (Անգլիա, Միացյալ Նահանգներ)։

Ներմուծվող ապրանքների մեջ գլխավոր տեղը բռնում են հացահատիկները և տեքստիլային հում նյութերը, իսկ արտահանվող ապրանքների մեջ՝ գործարանային ապրանքները (մետաղագործական և ելեկտրո-տեխնիկական ապրանքներ, գործվածքներ և ներկեր)։

Հետևյալ աղյուսակը ցույց ե տալիս Գերմանիայի արտաքին առևտրի պատկերը պատերազմից առաջ և հետո (տոկոսներով արտահանության և ներմուծության ամբողջ արժեքի նկատմամբ)։

Աղյուսակ № 50.

Ներմուծություն	1913	1925	Արտահանություն	1913	1925
Հացահատիկ և ալյուր . . .	11	10	Հացահատիկ և ալյուր . . .	5	3
Յուղատու սերմեր, քուսպ և այլն	8	6	Շաքար	3	1
Տեքստիլային հում նյութ (բամբակ, բուրդ) . .	15	15	Քարածուխ, կոքս	7	5
Գործվածքներ	5	9	Մետաղ չմշակված . . .	3	2
Անասուն	3	1	Մետաղե և ելեկտրո-տեխնիկական ապրանքներ և մեքենաներ	29	33
Փայտ, փայտի զանգված .	4	4	Գործվածքներ	13	15
Քարածուխ, կոքս	3	1	Կաշվեղեն	5	5
Հանքային յուղեր	2	2	Քիմիական ապրանքներ . .	8	8
Ցերկաթահանք և այլն . .	4	3			
Մետաղներ (չմշակված) . .	5	5			
Քիմիական հում նյութ և կիսաֆաբրիկատ . . .	2	1			

Պատերազմից առաջ Գերմանիայի արտահանության 9%-ը և ներմուծության 13%-ը տալիս եր Ռուսաստանը։ Պատերազմի ընթացքում ռուս-գերմանական առևտուրը կանգ առավ և վերականգնվեց միայն 1919 թ.։ ԽՍՀՄ-ն կարող ե Գերմանիա արտահանել հում նյութ և հաց, մյուս կողմից՝ նա Գերմանիայից կարող ե ստանալ գործարանային ապրանքներ։ Այսպիսով գյուղատնտեսական ԽՍՀՄ-ն և արդյունագործական Գերմանիան տնտեսապես կապված են իրար հետ։ 1924—25 թ. ԽՍՀՄ-ն Գերմանիայից ներմուծել ե 101,6 միլիոն ռուբլու ապրանք, իսկ դրա փոխարեն Գերմանիա ե արտահանել 87 միլիոն ռուբլու ապրանք։

Պետական կազմը: Գերմանիան միութենական պետություն ե և բաղկացած ե 18 առանձին պետություններից*), վորոնցից յուրաքանչյուրը իրեն վերաբերվող գործերի մեջ անկախ ե, իսկ ամբողջ միության գործերում յենթարկվում ե համագերմանական կառավարության։ 1918 թվականից Գերմանիան, ինչպես և նրա մեջ մտնող առանձին պետությունները, բուրժվական հանրապետություն ե։ Պետության

*) Այդ պետություններն են՝ Պրուսիան, Բավարիան, Սաքսոնիան, Վյուրտեմբերգը, Տյուրինգիան, Հեսսենը, Համբուրգը (ազատ քաղաք), Մեկլենբուրգ—Շվերինը, Օլդենբուրգը Բրաունշվեյգը, Անհալտը, Բրեմենը (ազատ քաղաք), Լիպպեն, Լյուբեկը (ազատ քաղաք), Մեկլենբուրգ—Ստրելից, Վալդեկ և Շաումբուրգ—Լիպպե։

գլուխը նախագահն է, որը ընտրվում է 7 տարով։ Կատարողական իշխանությունը պատկանում է ռեյխսկանցլերին (նախարարների համագերմանական խորհրդի նախագահին), որը պատասխանատու չե ռեյխստագի առաջ, իսկ օրենսդրական իշխանությունը՝ ռեյխստագին (պարլամենտին)։

Դասակարգեր։ Գերմանիան խիստ զարգացած և խիստ կենտրոնացած արդյունագործական յերկիր է։ Այնուամենայնիվ գյուղատնտեսությունն էլ խոշոր տեղ է բռնում։ Շատ ռայոններում տիրապետող է խոշոր հողատիրությունը։ Տնտեսական և քաղաքական իշխանությունը գլխավորապես խոշոր բուրժուազիայի ձեռքումն է կենտրոնացած։ Կալվածատերերի իշխանությունը թուլացել է։ Ազգաբնակչության պրոլետարացումը խոշոր չափերի չե հասել։ Մանր բուրժուազիայի զգալի մասը վալյուտայի անկման շնորհիվ բոլորովին քայքայման յենթարկվեց։ Դասակարգային ուժերի հարաբերակցությունը շատ յերերուն է։ Բուրժուազիան կարող է իր տիրապետությունը պահպանել միայն սոցիալ-դեմոկրատիայի աջակցությամբ։

Բուրժուական կուսակցություններ.—*Գերմ. ազգ. ժող. կուսակցությունը խոշոր կալվածատերերի և մասամբ խոշոր բուրժուազիայի կուսակցությունն է։ Կողմնակիցներ ունի գյուղացիության զանազան խավերում, պաշտոնեության և ազգայնականորեն տրամադրված մանր բուրժուազիայի շրջանում։ Վճռական ազդեցություն ունի այսպես կոչված «Հայրենի միություններում» (ազգայնական)։*

Ֆաշիստներ.—*Քաղաքային բուրժուազիայի շարժումն է։ Ազգայնական կուսակցություն է և կազմակերպված է խոշոր արդյունաբերողների և կալվածատերերի կողմից. Նպատակն է ջախջախել բանվորական շարժումը։*

Տնտեսական կուսակցություն (*Միություն*).—*Արդյունաբերական մանր բուրժուազիայի կուսակցությունն է։ Իր շուրջն է համախմբում մանր բուրժուազիայի այն մասին, որը գոհ չե ազգայնական կուսակցությունից։*

Գերմանական ժողովրդական կուսակցություն.—*Խոշոր արդյունաբերողների կուսակցությունն է, որի լոզունգն է «ազգային իրական քաղաքականություն»։*

Կենտրոն.—*Կաթոլիկական հոգևորականության կուսակցությունն է։ Այդ կուսակցությունը ազգաբնակչության բոլոր խավերում կողմնակիցներ ունի և տիրապետում է քրիստոնեական պրոֆմիությունների մեջ. բայց վերջին տարիներս կուսակցության մեջ ուժեղանում է օպոզիցիան, որը բանվորներից և մանր բուրժուազիայից է բաղկացած։*

Բավարիայի ժողովրդական կուսակցություն. — *Բավարիայի կուլակների և միջակների կուսակցությունն է, ղեկավարվում է հոգևորականության կողմից։*

Դեմոկրատական կուսակցություն. — *Առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի մի մասի շահերն է պաշտպանում։ Բանկային կապիտալի ազդեցության տակ է գտնվում։*

Պրոլետարական կուսակցություններ. — Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը *1925 թվին ուներ 844.000 անդամ։ Կուսակցության մեջ աճում է բանվորների դժգոհությունը։ Այդ բանվորները գոհ չեն ղեկավարների համաձայնողական քաղաքականությունից։ Առանձնապես կազմվում է ձախ թև, որը ամենից ուժեղ է Սաքսոնիայում։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անմիջական ղեկավարությամբ 1918 թվին ճնշվեց Գերմանիայում բանվորական հեղափոխությունը և 1919 թվին սպանվեցին Կարլ Լիբկնեխտն ու Ռոզա Լյուքսեմբուրգը։*

Գերմանիայի Կոմունիստական կուսակցությունը *1926 թվի հունվարի 1-ին ուներ 160.000 անդամ։ Գերմանական բուրժուական կուսակցության կողմից, սոցիալ-դեմոկրատների աջակցությամբ, խիստ հալածանքի է յենթարկվում։ Չնայած դրան կուսակցության հեղինակությունը ավելի և ավելի աճում է բանվորների շրջանում։ Սոցիալ-դեմոկրատ բանվորներից շատերը անցնում են կոմկուսակցության շարքերը։*

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ (ՌԵՅԽՍՏԱԳԻ) ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 1924 ՅԵՎ 1928 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

	1924 թ.		1928 թ.	
	Պատգամ. թիվը	Ստացած ձայների թիվը	Պատգամ. թիվը	Ստացած ձայների թիվը
Կոմունիստներ	45	2.679.000	54	3.233.000
Սոցիալ-դեմոկրատներ	131	7.788.000	152	9.111.000
Ազգայնականներ	111	6.122.000	76	4.360.000
Կենտրոն	69	4.061.000	62	3.704.000
Դեմոկրատներ	32	1.902.000	25	1.492.000
Ժողովրդ. կուսակցություն	41	3.017.000	44	2.670.000
Բավ. ժող. կուսակց.	19	1.111.000	16	936.000
Տնտեսական կուս.	17	1.025.000	23	1.391.000
Ֆաշիստներ	14	906.000	12	807.000

Ընտրությունների արդյունքները ցույց տվին, որ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձայները աճել են ի հաշիվ բուրժուական և մանր-

բուրժուական կուսակցությունների, իսկ կոմունիստների ձայները ավելացել են բանվորական խավերից։

Գլխավոր քաղաքները։ Բեռլին (մոտ 4 միլիոն բնակիչ) — մայրաքաղաք և արդյունագործական ու առևտրական խոշոր կենտրոն։ Համբուրգ (1 միլիոն բնակիչ) — ազատ քաղաք, խոշոր նավահանգիստ է։ Դրեզդեն—Սաքսոնիայի մայրաքաղաքն է. արդյունաբերական կենտրոն։ Լեյպցիգ—Սաքսոնիայի ամենախոշոր քաղաքը և արդյունաբերական կենտրոնը։ Մյուս քաղաքներից կարևոր են։ Մյունխեն (Բավարիայում), Քյոլն, Մագդեբուրգ, Քյոնիգսբերգ, Բրեմեն և այլն։

4. ԻՏԱԼԻԱ

Եվրոպայի քաղաքական քարտեզի վրա գտեք Իտալիան։ Նա Եվրոպայի վո՞ր մասումն է գտնվում։

Քարտեզի վրա գտեք Իտալիայի սահմանակից պետությունները։

Իտալիան ի՞նչ ծովերով է շրջապատված։

Ցույց տվեք Պո գետը, Լոմբարդական դաշտավայրը, Ապեննինյան լեռները, Սիցիլիա և Սարդինիա կղզիները (Աշխ. ատլաս, Եվրոպա—ֆիզիկական)։

Իտալիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները։ Իտալիան բաղկացած է Ապեննինյան թերակղզուց և մի քանի կղզիներից, որոնցից Սիցիլիան և Սարդինիան բավական խոշոր են։

Իտալիայի աշխարհագրական դիրքը չափազանց նպաստավոր է առևտրական հարաբերությունների համար։ Գտնվելով Միջերկրական ծովի կենտրոնական մասում, Իտալիան դեռ հին ժամանակներից սկսած առևտրական կապեր էր հաստատել Հար. Եվրոպայի, Հյուս. Աֆրիկայի և Փոքր Ասիայի հետ։ Ամերիկայի գյուտից հետո Արևմտյան Եվրոպան Ատլանտյան օվկիանոսի վրայով կապվեց Ամերիկայի հետ, Միջերկրական ծովը կորցրեց յուր առաջվա նշանակությունը և Իտալիայի առևտուրն ընկավ։ Սուեզի ջրանցքի բացումը կրկին բարձրացրեց Իտալիայի առևտրական և քաղաքական նշանակությունը։

Իտալիան յուր բնությամբ բաժանվում է յերկու մասի—ցամաքային (կամ հյուսիսային Իտալիա) և թերակղզային (կամ միջին և հարավային Իտալիա)։ Ցամաքային Իտալիայի մեջ մտնում են Ալպյան լեռների հարավային մասը և Լոմբարդական դաշտավայրը, իսկ թերակղզային Իտալիայի մեջ՝ բուն Ապեննինյան թերակղզին, Սիցիլիան, Սարդինիան և մնացած կղզիները։

Ալպյան լեռները ձգվում են աղեղի ձևով և բաժանում Իտալիան միջին Եվրոպայի յերկրներից։

Լոմբարդական դաշտավայրը հյուսիսից, հարավից և արևմուտքից շրջապատված է լեռներով և միայն արևելյան կողմում նա բացվում է դեպի Ադրիատիկ ծովը։ Ամբողջ դաշտավայրի յերկարությամբ արևմուտքից դեպի արևելք հոսում է ջրառատ Պո գետը, վորը սկիզբն է առնում Ալպյան լեռներից։ Ալպյան լեռներից են սկսվում նաև Պո գետի գլխավոր վտակները։ Թափվելով Ադրիատիկ ծովի մեջ, Պո գետը յուր բերած տղմով գոյացնում է բավական մեծ դելտա, վորը տարեց տարի առաջ է շարժվում և այդպիսով մեծացնում Լոմբարդական դաշտավայրը։ Յենթադրում են, վոր Լոմբարդական դաշտավայրը մի ժամանակ ծովածոց է յեղել և ամբողջովին գոյացել է գետերի բերած տղմից։

Լոմբարդական դաշտավայրի կլիման ցամաքային է։ Դրա պատճառը շրջապատող լեռներն են, վորոնք արգելում են Միջերկրական ծովից և Ատլանտյան օվկիանոսից փչող քամիներին մտնել յերկրի ներսը։ Ամառը լինում է շոգ, իսկ ձմեռը ցուրտ։ Լոմբարդական դաշտավայրը յուր կլիմայով հիշեցնում է միջին Եվրոպան։ Այն մշտադալար բույսերը (օրինակ, ձիթենիները), վորոնք բնորոշ են միջերկրածովային յերկրների համար, ձմեռային ցրտերի պատճառով այստեղ չեն աճում։

Բոլորովին ուրիշ բնություն ունի թերակղզային Իտալիան։ Նա ձգվում է հյուսիսից դեպի հարավ և ունի բավական մեծ ծովեզերային գիծ։ Թերակղզու լայնությունը վոչ մի տեղ 200 կիլոմետրից չի անցնում, այնպես, վոր նրա միջին լեռնագագաթներից միաժամանակ կարելի յե տեսնել թե Ադրիատիկ և թե Տիրրենյան ծովերը։ Ամբողջ թերակղզու յերկարությամբ ձգվում է Ապեննինյան լեռները, վորոնք այնքան էլ մեծ բարձրություն չունեն և չեն խանգարում, վոր թերակղզու արևելյան և արևմտյան մասերը հաղորդակցություն ունենն իրար հետ։

Ապեննինյան թերակղզին և իտալական «Ռիվյերան» ունեն միջերկրածովային կլիմա։ Ռիվյերայում ազատ աճում են արմավենիներ, միջին Իտալիայում դրանց ավելանում են դափնին ու ձիթենին, իսկ ավելի հարավ՝ նարնջի և կիտրոնի ծառերը։ Ընդհանուր առմամբ թերակղզու կլիման տաք է։ Ամառը շոգ է և չոր, իսկ ձմեռը անձրևային և զով։

Երկրի մակարդակը և ազգաբնակությունը։ Իտալիայի մակարդակն այժմ հաշվում են մոտ 310,1 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 42 միլիոն։ Յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածության վրա ապրում է մոտ 135 մարդ։ Այսպիսով Իտալիան ավելի խիտ ազգաբնակություն ունի, քան նույնիսկ արդյունագործական Գերմանիան։ Լինելով գյուղատնտեսական յերկիր և մյուս կողմից հնարավորություն չունենալով յուր արդյունագործությունը խոշոր չափերի հասցնել, Իտալիան տալիս է բավական մեծ արտագաղթ։ Արտագաղ-

թողների մեծ մասն ուղղվում ե դեպի Միացյալ Նահանգները և Արգենտինան: Վերջին տարիներում յերկրից գաղթում են տարեկան 300.000—400.000 մարդ:

Գյուղատնտեսություն:

Իտալիան գյուղատնտեսական յերկիր ե: Անհարմար հողերը կազմում են յերկրի ամբողջ մակարդակի 13%-ը, իսկ անտառները՝ 16%-ը: Այսպիսով Իտալիայի ամբողջ մակարդակի 71%-ը մշակված ե:

Յերկրագործությունը զարգացած ե գլխավորապես Լոմբարդական դաշտավայրում: Գլխավոր հացահատիկներն են ցորենը, յեգիպտացորենը, բրինձը և վարսակը: Բերքատվությամբ Իտալիան Յեվրոպայի շատ պետություններից հետ ե: Մեկ հեկտարից Իտալիայում ստանում են մոտ 10 կվինտալ հացահատիկ, այնինչ Դանիայում ստացվում ե 30 կվինտալ, Բելգիայում՝ 22 կվինտալ և այլն: Գլխավոր հինգ հացահատիկների տարեկան ընդհանուր բերքը կազմում ե մոտ 100 միլիոն կվինտալ, վորը յերկրի կարիքներին չի բավարարում: Այսպիսով Իտալիան, չնայելով վոր յերկրագործական յերկիր ե, ստիպված ե դրսից ներմուծել բավական մեծ քանակությամբ հացահատիկ:

Ժողովրդական տնտեսության մեջ առանձնապես աչքի յե ընկնում խաղողի մշակությունը: Խաղողի այգիների մակարդակի մեծությամբ Իտալիան առաջինն ե ամբողջ աշխարհում, բայց արտադրած գինու քանակությամբ նա հետ ե մնում Ֆրանսիայից: Բացի խաղողից Իտալիայի այգիներում մշակում են նաև մեծ քանակությամբ նարինջ, ձիթապտուղ, կիտրոն և այլն: Ձիթապտղի յուղի արտադրությամբ Իտալիան առաջինն ե յեվրոպական յերկրների մեջ: Նարինջը և կիտրոնը մեծ չափով արտահանվում են: Հետաքրքիրն այն ե, վոր խաղողի, ձիթենու, նարնջենու, կիտրոնի և այլ պտղատու ծառերի այգիները համարյա այնքան տեղ են բռնում, վորքան բոլոր հացահատիկները միասին վերցրած:

Իտալիայի համար մեծ նշանակություն ունի նաև շերամապահությունը: Հում մետաքսի տարեկան արտադրությունը կազմում ե 3—4 հազար տոնն, վորը կազմում ե համաշխարհային արտադրության 10%-ը:

Հանքային հարստությունները յեվ արդյունագործությունը:

Իտալիան համեմատաբար աղքատ ե հանքերով: Նա չունի բավականաչափ քարածուխ յեվ յերկաթ: Այդ ե պատճառը, վոր Իտալիայի արդյունագործությունը զգալի չափով հետ ե Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելգիայի և այլ յերկրների արդյունագործությունից: Ստացվում ե տարեկան մոտ $^1/_2$ միլիոն տոնն քարածուխ, 1,6 միլ.—տոնն պողպատ (1926 թ.), 0,5 միլիոն տոնն չուգուն (1926 թ.): Վերջերս քարածխի բացը ծածկվում ե սպիտակ ածուխով: Իտալիայի գետերի եներգիան հաշվում են 4—6 միլիոն

ձիու ույժ, վորից ոգտագործվում ե մեկ միլիոնից ավելին: Թե՛ քարածուխը յեվ թե՛ յերկաթը ներմուծվում ե արտասահմանից:

Հանքերից կարևոր են ծծումբը (յերկրորդ տեղն ամբողջ աշխարհում), սնդիկը (առաջին տեղն ամբողջ աշխարհում) և մարմարը: Այդ յերեք հանքերն ել արտահանվում են:

Մետաղների մշակության տարբեր ճյուղերի մեջ աչքի յեն ընկնում ավտոմոբիլային և ելեկտրական արդյունագործությունները, մեքենաներ պատրաստելը և նավաշինությունը: Իտալիայում այժմ գոյություն ունեն 20-ից ավել ավտոմոբիլային գործարաններ, վորոնցից Ֆիատը և Լանչիան համաշխարհային նշանակություն ունեն: Ավտոմոբիլների արտահանությունը հետզհետե մեծանում ե (12—13 հազար մեքենա տարեկան):

Թեթև արդյունագործության մեջ կարևոր նշանակություն ունի տեքստիլ արդյունագործությունը, վորից մետաքսի արդյունագործությունն աշխատում ե տեղական հում նյութով, իսկ բամբակի և բրդի արդյունագործությունը հում նյութի մեծ մասը ներմուծում են դրսից:

Ժողովրդական տնտեսության համար մեծ նշանակություն ունեն նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակությունը. որինակ՝ գինու, շաքարի, մակարոնի արտադրությունը և այլն: Գինու արտադրությամբ Իտալիան բռնում ե յերկրորդ տեղը (Ֆրանսիա): Մակարոնի արտադրությամբ Իտալիան վաղուց մեծ հռչակ ունի, բայց հետաքրքիրն այն ե, վոր սեփական ցորենը չի բավականանում այդ արտադրության համար, այդ պատճառով Իտալիան ԽՍՀՄ-ից ներմուծում ե մեծ քանակությամբ պինդ տեսակի ցորեն:

Ագրարային գերբնակումը մեծ զարկ տվեց յերկրի արդյունագործության զարգացմանը: Յեվ իսկապես մենք տեսնում ենք, վոր պատերազմից հետո Իտալիան բավական մեծ հառաջադիմություն ե ցույց տալիս: 1914 թ. ակցիոներական ընկերությունների դրամագլուխը կազմում եր 5 միլիոն վոսկե լիրա, իսկ 1923 թ. արդեն 12 միլիոն վոսկի լիրա: 1913 թ. հալվել ե 934 հազար տոնն պողպատ, իսկ 1925 թ. 1.533 հազար տոնն:

Հաղորդակցության միջոցները:

Իտալիայի յերկաթուղային գծերի ընդհանուր յերկարությունը հավասար ե մոտ 23 հազար կիլոմետրի: Ամեն 1.000 քառ. կիլոմետր տարածության ընկնում ե 74 կիլոմետր յերկաթուղային գիծ: Խիտ յերկաթուղային ցանց ունի Լոմբարդական դաշտավայրը, վորովհետև այստեղ ե գտնվում յերկրի արդյունագործության խոշոր կենտրոնը:

Ունենալով բավական մեծ յեզերային գիծ և գտնվելով Միջերկրական ծովի կենտրոնական մասում, Իտալիան պետք ե ուշադրություն դարձներ

յուր առևտրական նավատորմի վրա: Իտալիայի առևտրական նավատորմի կարողությունն այժմ հասնում է մոտ 3,5 միլիոն բրուտտո տոննի, որով նա բռնում է հինգերորդ տեղն ամբողջ յերկրագնդի վրա (Անգլիա, Միաց. Նահանգներ. Ճապոնիա, Ֆրանսիա): Գլխավոր նավահանգիստներն են Ջենովան (Գենուա), Վենետիկը, Նեապոլը, Պալերմոն, Մեսինան, Բրինդիզին, Տրիեստը և այլն:

Արտաքին առևտուրը: 1925 թ. Իտալիայի ներմուծության ամբողջ արժեքը գնահատվում եր մոտ 2 միլիարդ ռուբլի վոսկով, իսկ արտահանությունը՝ 1,3 միլիարդ (պասսիվ բալանս): Իտալիայի արտահանության գլխավոր առարկաներն են (1924 թ., տոկոսներով ընդհանուր արտահանության նկատմամբ):

Մետաքս և արհեստական մետաքս	22%
Տեքստիլային ապրանքներ (գործվածքներ, թելեր և հում նյութ)	20 »
Պտուղներ և բանջարեղեն	6 »
Մետաղե իրեր և ավտոմոբիլներ	7 »
Գինի և այլ վոգելից խմիչքներ	2 »
Պանիր	3 »

Այստեղից յերևում է, վոր արտահանության 42%-ը կազմում են գործարանային պատրաստի ապրանքները (գործվածքները, մանավանդ մետաքսը և մեքենաները), մեծ տեղ են բռնում նաև գյուղատնտեսական մթերքները (պտուղներ, գինի, պանիր, անասուններ և այլն): Այսպիսով արտահանության գլխավոր առարկան կազմում են գործարանային ապրանքները, վորին հետևում են գյուղատնտեսական մթերքները:

Իտալիայի ներմուծումը հետևյալ պատկերն ունի (տոկոսներով ընդհանուր ներմուծության նկատմամբ):

Հում նյութ	32%
Կիսաֆաբրիկատ	20 »
Պատրաստի իրեր	21 »
Սննդամթերք և անասուն	27 »
Ընդամենը	100%

Ներմուծության գլխավոր առարկաներն են հում նյութը և սննդամթերքը: Պատրաստի իրերն ավելի պակաս նշանակություն ունեն: Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում ցորենը, հարածուխը, յերկաթը, բամբակը, բուրդը, ծխախոտը, զանազան մեքենաներ և այլն:

Իտալիայի հետ առևտուր անող պետությունների մեջ առաջին տեղը բռնում են Միացյալ Նահանգները, ապա Անգլիան և Ֆրանսիան:

1924—25 թ. ԽՍՀՄ-ն Իտալիա է արտահանել 15,4 միլիոն ռուբլու ապրանք, վորից սննդամթերքը (գլխավորապես ցորենը) գնահատվում եր 2,3 միլիոն ռուբլի, իսկ հում նյութերը (գլխավորապես նավթը) 13,1 միլ.

Պետական կազմը: Իտալիան սահմանադրական միապետություն է: Թագավորը կառավարում է յերկիրը նախարարների միջոցով, վորոնք պատասխանատու յեն պարլամենտի առաջ: Պարլամենտը բաղկացած է սենատից և պատգամավորների խորհրդարանից:

Փաստորեն ֆաշիստները սահմանադրությունը գրեթե ամբողջապես վերացրել են: Սենատի անդամները վոչ թե ընտրվում են, այլ նշանակվում են: Իսկ խորհրդարանի ընտրական սիստեմն այնպես է, վոր յերբ վորևե կուսակցություն ընտրությունների ժամանակ ձայների համեմատական մեծամասնություն է շահում, ստանում է խորհրդարանի բոլոր տեղերի յերկույերորդ մասը: Ընտրական այդ սիստեմի շնորհիվ ֆաշիստները պարլամենտում ունեն մեծամասնություն: Ունենալով կառավարական ապարատը իրենց ձեռքում, նրանք հնարավորություն ունեն միշտ ապահովել իրենց համար բացարձակ մեծամասնությունը:

Ֆաշիզմը սկզբում մանր-բուրժուական շարժում եր, բայց իշխանության հասնելով, նա խոշոր բուրժուազիայի շահերի արտահայտիչը դարձավ: Ֆաշիզմը Իտալիայում հաջողություն ունեցավ այն պատճառով, վոր յերկրում գերիշխողը գյուղատնտեսությունն է, իսկ արդյունաբերական պրոլետարիատի նշանակությունը համեմատաբար փոքր է: Սակայն բանվորական մասսաների և մանր-բուրժուական խավերի դժգոհությունը ֆաշիզմի տերրորի դեմ որ-որի աճում է:

Բուրժուական կուսակցություններ.— Ֆաշիստական կուսակցությունը, իբր իսկ տվյալներով, 750 հազար անդամ ունի: Իսկ իրականում այդ թիվը չափազանցված է: Կուսակցության ակտիվ անդամների մեծ մասը բուրժուազիայի և պաշտոնեության ներկայացուցիչներն են:

Նախկին Լիբերալ կուսակցությունը և դեմոկրատական կուսակցությունները այժմ իրենցից ներկայացնում են միայն տեղական քայքայված խմբակներ:

Հանրապետական կուսակցությունը (սրա մեջ մտնում են բանվորական արիստոկրատիան և մանր-բուրժուական ինտելիգենցիան) մեծ չէ: Բայց հին բուրժուական կուսակցություններից ամենից լավ այս կուսակցությունն է պահվել:

Պրոլետարական կուսակցություններ.—Ունիտար սոցիալիստական կուսակցությունը (Տուրատի կուսակցությունը) կառավարության կողմից արգելվեց 1925 թվի նոյեմբերին: Այդ կուսակցության պարլամենտական ֆրակցիան 1926 թվի սկզբներին կազմակերպեց Իտալիայի աշխատավորների նոր սոցիալիստական կուսակցություն, վորը մի քանի քայքայված խմբակներ ունի միայն:

Սոցիալիստական կուսակցությունը (*մաքսիմալիստները*) *համեմատաբար ազատ է գործում և ունի 15.000 անդամ։ Կուսակցական մասսան ճախանում է։*

Կոմունիստական կուսակցությունը *ձևականորեն արգելված չէ, բայց խիստ հետապնդման և մասսայական ձերբակալությունների պատճառով ստիպված եր աշխատանքների մեծ մասը վարել անլեգալ կերպով։ 30.000 անդամ ունի։ Համակիրների թիվը շատ ավելի մեծ է (ՄՈՊՐ-ը 130.000 անդամ ունի)։*

Իտալիայի գաղութները։

Իտալիայի գաղութները գտնվում են գլխավորապես Աֆրիկայում։

1) Տրիպոլի։ *Տրիպոլին գտնվում է Յեգիպտոսի և Տունիսի միջև, Միջերկրական ծովի յեզերքին։ Նրա մակերեսը մոտ 500 հազար քառ. կիլոմետր է, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 568 հազար։ Ազգաբնակությունը պարապում է յերկրագործությամբ և անասնապահությամբ, սակայն յերկրագործությունը հնարավոր է միայն ջրովի տեղերում։ Արտահանվում են կաշի, բուրդ, աղ, ծխախոտ և այլն։ Ներմուծության գլխավոր առարկաներն են անընդհատ թերքները, գործվածքները և այլն։*

2) Երիտրեյա։ *Գտնվում է Կարմիր ծովի ափին։ Մակերեսը հավասար է 120 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ 400 հազարի։ Ազգաբնակության գլխավոր պարապմունքը անասնապահությունն է։ Արտահանվում են անասնապահական մթերքներ, մարգարիտ և այլն։ Ունի բավականաչափ վոսկի և արծաթ։*

3) Իտալական Սոմալի։ *Մակերեսը 447 հազար քառ. կիլոմետր է, իսկ բնակիչների թիվը՝ 650 հազար։ Ունի արևադարձային կլիմա։ Իտալացիները վերջերս մշակում են բամբակ։*

Միջերկրական ծովում Իտալիային պատկանում է Հռոդոսը և մի քանի մանր կղզիներ։ Այդ կղզիների բնակիչների մեծ մասը հույներ են։

Իտալական բոլոր գաղութների ընդհանուր մակերեսը հավասար է 1.893.000 քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ մոտ 2 միլիոնի։ Այսպիսով գաղութներն իրենց մակերեսով մոտ 5 անգամ մեծ են մետրոպոլիայից, իսկ բնակիչների թվով բավական հետ են մետրոպոլիայի ազգաբնակությունից։

Իտալիան վո՞ր կլիմայական զոնայում է գտնվում։
Իտալիայի աշխարհագրական դիրքը համեմատեցեք Ֆրանսիայի և Անգլիայի դիրքի հետ։
Սուեզի ջրանցքի բանալը ինչու՞ նպաստավոր յեղավ Իտալիայի համար։
Իտալիայում ի՞նչ մշտադալար բույսեր են աճում։ Այդ բույսերը ի՞նչ նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար։ Ի՞նչ տիպի յերկիր է։ Ի՞նչ անընդհատ թերքներ է ներմուծում։

Ինչու՞ Իտալիայի արդյունագործությունը չկարողացավ զարգանալ։ Նրա ամենացավոտ կողմը վո՞րն է։
«Սպիտակ ածուխն» ինչ չափով են ոգտագործում։
Ցույց տվեք Հռոմը (մայրաքաղաք է), Միլանը, Նեապոլը, Տուրինը, Բոլոնիան, Ջենովան, Ֆլորենցիան, Պալերմոն, Տրիեստը։
Իտալիայի համր քարտեզի վրա նշանակեցեք գլխավոր ծովերը, գետերը, լեռները, քաղաքները։
Համաշխարհային համր քարտեզի վրա ներկեցեք Իտալիան յուր գաղութներով (բոլորը մի գույնով)։
Կարդացեք «Իտալիա» հոդվածը (Խորրաբին, 176 յերես)։

5. ՀՅՈՒՍԻՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ.

Ցույց տվեք Հ. Ա. Միացյալ Նահանգների սահմանները։
Ի՞նչ պետություններով են նրանք շրջապատված։
Ցույց տվեք Լենինգրադ—Նյու-Յորք ծովային ճանապարհը (Նյու-Յորքը Միաց. Նահանգների ամենախոշոր նավահանգիստն է)։
Մասշտաբի ոգնությամբ իմացեք, թե Նյու-Յորքից մինչև Սան-Ֆրանցիսկո, այսինքն Ատլանտյան ովկիանոսի յեզերքից մինչև Խաղաղ ովկիանոսը քանի կիլոմետր է։

Աշխարհագրական դիրքը յեվ մակերեսի մեծությունը։

Հյուսիս-Ամերիկյան Միացյալ-Նահանգները բռնում են Հյուսիսային Ամերիկայի միջին մասը և տարածվում են Կանադայից մինչև Մեքսիկա, Ատլանտյան ովկիանոսից մինչև Խաղաղ ովկիանոսը։ Յերկրի հյուսիսային սահմանն ունի Փարիզի լայնությունը (49°), իսկ հարավայինը բավական մոտ է խեցգետնի արևադարձին։

Միացյալ Նահանգների աշխարհագրական դիրքը բավական նպաստավոր է առևտրական հարաբերությունների համար։ Գտնվելով յերկու ովկիանոսի միջև, նրանք մի կողմից կապված են Արևմտյան Յեվրոպայի արդյունագործական յերկրների հետ, իսկ մյուս կողմից՝ Արևելյան Ասիայի հետ։

Միացյալ-Նահանգների մակերեսի մեծությունը (հաշվելով և Ալյասկան) հավասար է 9.369 հազար քառ. կիլոմետրի, իսկ յեթե հաշվենք նաև գաղութները, այն դեպքում նրանց մակերեսը կլինի 9.772 հազար քառ. կիլոմետր (Հյուս. Ամերիկայի կեսը կամ համարյա ամբողջ Յեվրոպայի չափ)։ Այսպիսով Հ. Ա. Միացյալ-Նահանգները մակերեսի մեծությամբ հետ են մնում միայն ԽՍՀՄ-ից և Կանադայից։

Մակերեվույթի կազմությունը յեվ կլիման։

Միացյալ-Նահանգների մակերեսն ամեն տեղ միատեսակ չէ։ 100-րդ միջօրեականից դեպի արևմուտք յերկիրը բարձրադիր է և լեռնոտ, իսկ դեպի արևելք, ընդհանուր առմամբ ցածրադիր է և հարթ։

Արևմտյան բարձրադիր մասը բաղկացած է մի շարք լեռնաշղթաներից (Ժայռոտ, Կասկադյան, Սիերրա-Նեվադա, Յեզերային Կորդիլերներ),

որոնց միջև գտնվում են ընդարձակ բարձրավանդակներ, 1.200—2.000 մետր բարձրությամբ։ Այդ բարձրավանդակների կլիման չոր է, ցամաքային. յերկրագործությունն առանց արհեստական վոռոգման մեծ արդյունք չի տալիս։ Լավ վոռոգվում է միայն Խաղաղ ովկիանոսի յեզերային նեղ շերտը, վորն ունի բավական մեղմ ծովային կլիմա։

Ժայռոտ լեռներից դեպի արևելք յերկիրը հետզհետե ցածրանում է և փոխվում դաշտավայրի, վորը վոռոգվում է Միսսիսիպի գետով։ Միսսիսիպի հովտից դեպի արևելք ձգվում են Ալլեգանյան լեռները, վորոնք մոտենալով Ատլանտյան ովկիանոսին, կտրտում են նրա յեզերքը և գոյացնում բազմաթիվ հարմար նավահանգիստներ։ Արևելյան մասի կլիման ընդհանուր առմամբ հիշեցնում է Արևելյան Յեվրոպան։ Ամառը լինում է շոգ, իսկ ձմեռը՝ ցուրտ. բայց մթնոլորտային տեղումները բավարար են։ Հյուսիսից դեպի հարավ կլիման տաքանում է։ Մեքսիկայի ծոցի յեզերքներն այնքան տաք են, վոր ընդարձակ տարածություններ ծածկված են մշտադալար ծառերով։ Այսպիսով 100-րդ միջօրեականից դեպի արևելք գտնվում են ընդարձակ արգավանդ հարթություններ, նավարկելի խոշոր գետեր և վաճառաշահ նավահանգիստներ. յեթե դրան ավելացնենք և այն, վոր քարածխի գլխավոր հանքերը գտնվում են արևելքում, այն դեպքում հասկանալի կլինի, թե ինչու յերկրի գյուղատնտեսության և արդյունագործության կյանքը յեռում է արևելյան և վոչ թե արևմտյան նահանգներում։

Ամերիկայի քարտեզի վրա ցույց տվեք Միաց. Նահանգների Ատլանտյան ափը. այդտեղ ինչ նավահանգիստներ կան, գտեք։ Ցույց տվեք Միաց. Նահ.-ների Խաղաղական ափը. այդտեղ ինչ նավահանգիստներ կան։

Գտեք Մեքսիկայի ծոցը, Միսսիսիպի գետը, Կորդիլերները, Ալլեգանները։

Ամերիկայի մթնոլորտային տեղումների քարտեզը ներկեցեք տարբեր գույներով։ Վ՞որտեղ շատ մթնոլորտային տեղումներ են թափվում։

Դիտեցեք քարտեզը և ապա ասացեք. վ՞որ մասն ցածր և վ՞որ բարձր։ Լեռներն ինչ ուղղություն ունեն (Աշխ. ատլաս)։

Ազգաբնակությունը։ Միացյալ Նահանգների բնակիչների թիվը է մոտ 106 միլիոն։ Մի քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է միջին հաշվով 11,3 մարդ։ Արևելյան շտատներն ընդհանուր առմամբ ավելի խիտ ազգաբնակություն ունեն, քան արևմտյանը։ Դրա պատճառը վոչ միայն այն է, վոր յերկրի արևելյան մասը հարուստ է քարածխի հանքերով և ունի արգավանդ հողեր, այլ և այն, վոր սկզբներում Միաց. Նահանգներ եյին գաղթում բացառապես յեվրոպացիներ, վորոնք բնակություն եյին հաստատում Ատլանտյան ովկիանոսի ափերին և ապա այստեղից կամաց-կամաց տարածվում դեպի յերկրի ներսը։

Միացյալ Նահանգներն ունենալով բավական նոսր ազգաբնակություն, կարող են դեռ ևս շատ գաղթականներ ընդունել։ Այդ գաղթականների շնոր-

հիվ նրանց բնակիչների թիվը աճում է արագ քայլերով։ 1820 թվականից
մինչև 1925 թիվը Միաց. Նահանգներ են գաղթել ավելի քան 36,3 միլիոն
մարդ։ Պատերազմից առաջ Միաց.-Նահանգներ ներգաղթողները միջին հաշ-
վով տարեկան կազմում եյին մոտ մեկ միլիոն մարդ, վորոնց մեծ մասը
իտալացիներ, գերմանացիներ և ռուսներ եյին։

Վերջերս Միացյալ Նահանգներն աշխատում են ներգաղթը սահմանա-
փակել. մանավանդ մեծ դժվարություններ են ստեղծում դեղին ցեղի ներ-
գաղթի առաջ։ 1924. թ. ճապոնացիների մուտքը բոլորովին արգելվեց։

Ազգաբնակության կեսից ավելին ($51,4^{0}/_{0}$-ը) ապրում է քաղաքներում։
Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր արդյունագործությունը յերկրի
տնտեսական կյանքում ավելի կարևոր դեր է կատարում, քան գյուղատըն-
տնտեսական կյանքում ավելի կարևոր դեր է կատարում, քան գյուղատըն-
տեսությունը։ 1923 թ. գյուղատնտեսության արտադրությունը գնահատ-
վում եր 16 միլիարդ դոլլար, իսկ արդյունագործության արտադրությունը՝
60 միլիարդ դոլլար։ Դիտելով ազգաբնակության պրոֆեսիոնալ կազմը,
մենք տեսնում ենք, վոր առևտրով, արդյունագործությամբ և տրանսպոր-
տով պարապողները յերկու անգամ ավելի շատ են, քան գյուղատնտեսու-
թյամբ պարապողները։ 1920 թ. տեղեկությունների համաձայն 10 տարե-
կանից բարձր բնակիչներից

Գյուղատնտեսությամբ պարապում եյին		. . . . . . 11,0 միլիոն
Հանք. արդյունաբերությամբ	»	. . . . . . 1,1 »
Արդյունագործությամբ	»	. . . . . . 12,8 »
Փոխադրական գործով	»	. . . . . . 3,1 »
Առևտրով	»	. . . . . . 4,2 »
Պետակ. և հաս. ծառայությամբ	»	. . . . . . 0,8 »
Ազատ պրոֆեսիայով	»	. . . . . . 2,1 »
Այլ ծառայություններով	»	. . . . . . 3,4 »

Միաց. Նահանգների վ՞որ մասերն ունեն խիտ ազգաբնակություն. դա ինչ՞ով կարելի յե բացատրել։

Ազգաբնակության արագ աճումն ինչ՞ով եք բացատրում։ Ինչ՞ու ամերիկացիներն աշխատում են ներգաղթը սահմանափակել։

Միաց. Նահանգների պատմությունը։ Առաջին անգլիացի գաղթականները բնակություն հաստատեցին Հյուս. Ամերիկայի արևելյան ափերին XVI-րդ դարի վերջերը, իսկ XVII-րդ դարի կեսին հիմնվեց անգլիական գաղութների միություն, Նոր Անգլիա անունով։ Գահիմնական կորիզին հետզհետե միանում եյին նոր գաղութ-
ղութների այդ հիմնական կորիզին հետզհետե միանում եյին նոր գաղութ-
ներ, այնպես վոր XVIII-րդ դարի վերջում Ատլանտյան ովկիանոսի ամբողջ
ծովեզերքն արդեն պատկանում եր Անգլիային։ Բայց մետրոպոլիան, այ-
սինքն Անգլիան, ամեն կերպ աշխատում եր ճնշել գաղութների առևտուրը և
ծանր մաքս եր նշանակում։ Այս ճնշումների հետևանքն այն յեղավ, վոր
գաղութներն ապստամբեցին Անգլիայի դեմ և, կարճատև պատերազմից հե-

տո 1783 թ. անջատվելով մետրոպոլիայից, հիմնեցին Հյուս. Ամեր. Միաց. Նահանգները։ Միաց. Նահանգների մակարդակն սկսեց հետզհետե ընդարձակվել դեպի արևմուտք։ Ճնշելով հնդիկներին, նրանք գրավեցին հարուստ տափաստանները. դրամով գնեցին Ալյասկան Ռուսաստանից, Լուիզիանան Ֆրանսիայից. պատերազմելով Մեքսիկայի հետ, նրանք գրավեցին Տեխասը և այսպիսով XIX-րդ դարում յերկրի մակարդակը հասցրին խոշոր չափերի։

Ազգաբնակության ցեղային կազմը 1920 թ. պաշտոնական տեղեկությունների համաձայն:

Սպիտակները կազմում են	94.821.000	կամ 89,9%
Նեգրերը »	10.463.000	» 9,9%
Հնդիկները »	244.000	—
Չինացիները »	62.000	—
Ճապոնացիները »	111.000	—
Այլ ազգութ. »	9.000	—

Աղյուսակը ցույց ե տալիս, որ Միացյալ Նահանգների ազգաբնակության մոտ $^{9}/_{10}$-ը կազմում են սպիտակները, որոնք շատ վաղուց բնակություն են հաստատել այստեղ և այժմ հայտնի յեն յանկի անունով։ Յանկիների մեջ թվով առաջին տեղը բռնում են անգլիացիները, որոնց լեզուն ընդունված ե ամբողջ Միացյալ Նահանգներում, որպես ազգային լեզու։ Անգլիացիներից հետո իրենց թվով աչքի յեն ընկնում գերմանացիները և իռլանդացիները։

Միացյալ Նահանգների սպիտակ ազգաբնակությունն ունի մի քանի բնորոշ գծեր, որոնք Յեվրոպայում ապրողներին հատուկ չեն։ Բարձրահասակ ու նիհար յանկին աչքի յե ընկնում յուր արագ և սուր շարժումներով, անսպառ յեռանդով ու յեռուն գործունեությամբ։ Բայց նրա այդ ամբողջ յեռանդը, համառ ցանկությունները մի նպատակ ունեն—ձեռք բերել հարստություն, փող։

Նեգրերն ապրում են գլխավորապես հարավային և հարավ-արևելյան նահանգներում։ Այժմյան նեգրերի նախորդները ստրուկներ եյին և բերվել են Աֆրիկայից շաքարեղեգի և բամբակի պլանտացիաներում աշխատելու համար։ 1861—1865 թվականներին հյուսիսային և հարավային նահանգների միջև պատերազմ ծագեց ստրկատիրության առթիվ։ Հյուսիսային նահանգները ցանկանում եյին ստրկությունը վերացնել, իսկ հարավային նահանգները դրան հակառակ եյին։ Պատերազմի ժամանակ հյուսիսային նահանգները հաղթող հանդիսացան և ստրկությունը օրենքով վերացավ։ Սպիտակն ու նեգրը իրենց իրավունքներով հավասար ճանաչվեցին։ Բայց հարավային նահանգների շատ քաղաքներում դեռ այսօր էլ շարունակում են հալածել նեգրերին, օրինակ՝ մի քանի քաղաքներում նեգրերն իրավունք

չունեն գիշերելու, սպիտակի և նեգրի ամուսնությունը օրինական չի համարվում և այլն։ Չնայելով այս խոչընդոտներին նեգրերը մեծ առաջադիմություն են ցույց տալիս։ Նրանք տվել են բազմաթիվ հասարակական գործիչներ, բժիշկներ, բանաստեղծներ, իրավաբաններ, դերասաններ և այլն։

Հնդիկները յերկրի նախկին տերերն են և այժմ կազմում են Միացյալ Նահանգների ամբողջ ազգաբնակության հազիվ $^{1}/_{2}$%-ը։ Յեվրոպացիները բռնի ուժով ճնշելով հնդիկներին, գրավեցին նրանց բնակության շրջանները, իսկ բնակիչներին քշեցին դեպի արևմուտք։ Նրանց թիվը տարեց տարի նվազում ե. այդ պատճառով սպիտակները հնդիկներից առանձին յերկյուղ չեն կրում և սպիտակի ու հնդիկի ամուսնությունն օրենքով չի արգելվում։ Մյուս ազգություններից աչքի յեն ընկնում չինացիներն ու ճապոնացիները։ Սկզբում նրանց ներգաղթը խրախուսվում եր, իսկ այժմ ամեն կերպ աշխատում են դրա առաջն առնել։

Մինչև յեվրոպացիների գալը Հյուս. Ամերիկայում ինչ ժողովուրդներ եյին ապրում։

Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ յեվրոպացիներն աշխատում եյին բնակություն հաստատել Միաց. Նահանգներում։

Նեգրերը որտեղից են բերված և ինչո՞ւ։

Այժմ Միաց. Նահ.-ի տիրող ժողովուրդը ո՞ր ցեղին ե պատկանում։ Միացյալ Նահանգների ազգային լեզուն ո՞րն ե։

Գյուղատնտեսություն: Ինչպես տեսանք, Միացյալ Նահանգները ընդարձակ տարածություն են բռնում, բնական պայմանները չափազանց նպաստավոր են գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար, բայց ազգաբնակությունը բավական նոսր ե. այդ պատճառով մշակված հողերը կազմում են յերկրի ամբողջ մակարդակի 26%-ը միայն, մինչդեռ Արևմտյան Յեվրոպայում մշակված հողերը բավական մեծ տոկոս են կազմում։

Միացյալ Նահանգների գյուղատնտեսությունն ունի մի քանի առանձնահատկություններ, որոնք ամերիկական պայմանների հետևանք են։ Կանգ առնենք այդ առանձնահատկություններից մի քանիսի վրա։

1. Ֆերմաները գտնվում են մի ամբողջական հողամասում և ուրիշ գյուղատնտեսի հողերով կտրտված չեն։ Այս հանգամանքը բավական հեշտացնում ե տնտեսություն վարելու գործը։

2. Հողամասերն աչքի յեն ընկնում իրենց մեծությամբ (ինչո՞ւ)։ 100—150 դեսյատին հող ունեցողը Միաց. Նահանգներում համարվում ե միջակ հողատեր։ Այդպիսի հողամասերում տնտեսությունը վարվում ե վարձու բանվորների օգնությամբ, բայց ինքը, տերը ևս անձամբ մասնակցում ե գործին։

Հետևյալ աղյուսակը ցույց ե տալիս, թե տարբեր մեծություն ունեցող հողամասերն ինչպես են բաշխված (1920 թ.)։

Հողամասերի մեծությունը	Ֆերմաների թիվը
Մինչև 3 ակր	20.350
3-ից մինչև 10 ակր	268.422
10 » » 20 »	507.763
20 » » 50 »	1.503.732
50 » » 100 »	1.474.745
100 » » 500 »	2.456.107
500 » » 1000 »	149.819
1000-ից ավել	67.405

Աղյուսակը ցույց է տալիս, որ 50-ից մինչև 500 ակր հողամաս ունեցողների թիվը 3,9 միլիոն, որը կազմում է բոլոր ֆերմաների կեսից ավելին: Միջակ ֆերման ունի մոտ 150 ակր հողաբաժին:

3. Գյուղատնտեսությունն ընդհանուր առմամբ էքստենսիվ է. այդ պատճառով այստեղ մեկ հեկտարից ավելի քիչ բերք են վերցնում, քան Արևմտյան Յեվրոպայում: Պատերազմից առաջ մեկ հեկտարից

Միաց. Նահանգներում	վերցնում	եյին	10,0	կվինտալ	ցորեն
Ֆրանսիայում	»	»	14,3	»	»
Անգլիայում	»	»	21,1	»	»
Գերմանիայում	»	»	21,3	»	»
Դանիայում	»	»	32,6	»	»

ԽՍՀՄ-ում բերքատվությունը վո՞րքան է. համեմատեցեք Միաց. Նահանգների հետ:

Սակայն բերքատվության այս նվազ չափը բացատրվում է վոչ թե նրանով, որ ամերիկացի գյուղատնտեսը անգլիացուց կամ ֆրանսիացուց հետամնաց ու տգետ է, այլ նրանով, որ «Ամերիկայում մեծ հողամասի վատ մշակելն ավելի ձեռնտու յէ, քան փոքր հողամասի լավ մշակելը»:

4. Հողամասերի մեծությունը և աշխատավոր ձեռքերի պակասությունը ստիպում է ամերիկացուն դիմել մեքենաների ոգնության: Վոչ մի յերկրում գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքներն այն աստիճան տարածված չեն, ինչպես Միացյալ Նահանգներում: Այնտեղ, վորտեղ այդ հնարավոր է, ամերիկացին աշխատում է ձեռքի աշխատանքը փոխարինել շոգեմեքենայի և նավթային շարժիչների ու ելեկտրականության ույժով: Հսկայական լոկոմոբիլները շարժում են գութաններ, տափաններ, հնձող մեքենաներ և այլն: Կան և այնպիսի գյուղատնտ. մեքենաներ, վորոնք միաժամանակ հնձում են, հնձածը կալսում, քամում, ցորենը հավաքում պարկերի մեջ և ապա այդ պարկերի բերանները կապում: Խոտի հարելը և հավաքելը, կարտոֆիլի ցանելը, անասունների կերի կտրտելն ու բաժանելը նույնպես մեքենաներով է կատարվում: Ֆերմաներում գլխավոր շարժիչ ույժը ելեկտրականությունն է, վորը վոչ միայն լուսավորում է ֆերմայի շենքերը, այլև կատարում է զանազան աշխատանքներ, օրինակ, փայտը սղոցում է, գերաններից սղոցի ոգնությամբ տախտակներ է պատրաստում, ջուրը քաշում է, հացահատիկն աղում է, յեգիպտացորենը մաքրում է, վոչխարները խուզում է և այլն:

Ամերիկացի ֆերմերը ցորենն անմիջապես դաշտից փոխադրում է մոտակա ելեվատոր (հացահատիկների հսկայական շտեմարան): Հացահատիկը հանձնելուն պես ստանում է ստացական, վորով նա հետագայում կարող է հետ ստանալ յուր հացահատիկը, գրավ դնել բանկում կամ, վերջապես, ծախել: Հանձնած հացահատիկը մեքենաների ոգնությամբ բարձրացնում են ելեվատորի վերին հարկը, իսկ այնտեղից էլ, յերբ պետք է, լայն խողովակներով ածում են յերկաթուղու վագոնների մեջ (յերկաթուղին ելեվատորի մոտով է անցնում):

Միաց. Նահանգների գյուղատնտեսությունն ինչ առանձնահատկություններ ունի: Ինչու հողամասերն այնքան մեծ-մեծ են: Ինչու ամերիկացու համար ձեռնտու յէ մեծ հողամասը վատ մշակել, քան թե փոքրը լավ մշակել:

Մեխանիզացիայի լայն տարածումն ինչով բացատրել:

Հացաբույսերի մշակույթը:

Հացահատիկներից Միացյալ Նահանգներում չափազանց տարածված են յեգիպտացորենը, ցորենը և վարսակը. գարին և հաճարը համեմատաբար փոքր նշանակություն ունեն: Այդ հացահատիկների ցանքսերի մակարդակը 1925 թ. հետևյալ պատկերն ուներ (միլիոն ակրերով հաշված):

Յեգիպտացորեն	101,6
Ցորեն	52,2
Վարսակ	45,2
Գարի	8,2
Հաճար	4,1

Ցանքսի մակարդակի մեծությամբ առաջին տեղը վո՞ր հացահատիկն է բռնում իսկ ԽՍՀՄ-ում:

Բերքի չափի մասին կարելի յէ գաղափար կազմել հետևյալ աղյուսակով (1927 թ.).

Յեգիպտացորեն	661,3	միլ. կվինտ.
Ցորեն	234,8	» »
Վարսակ	175,0	» »
Գարի	57,6	» »
Հաճար	15,6	» »

Միացյալ Նահանգներում շնչին վո՞րքան հացահատիկ է ընկնում, իսկ ԽՍՀՄ-ում, Անգլիայում:

Յեգիպտացորենի, ցորենի և վարսակի արտադրությամբ այժմ Միացյալ Նահանգները բռնում են առաջին տեղը ամբողջ աշխարհում: Յեգիպտացորենի հսկայական բերքից Միաց. Նահանգներն արտահանում են միայն

չին հաշվով 2%-ը միայն։ Ամերիկացին գերադասում է այդ յեգիպտացորենով գերացնել խոզերը և խոշոր յեղջ. անասունները, քան թե արտահանել։

Բացի վերը հիշած 5 հացահատիկից բավական մեծ չափով տարածված է նաև բրնձի և կարտոֆիլի մշակությունը։ Բրնձի բերքն այնքան մեծ է, վոր ծածկում է յերկրի կարիքների $^3/_4$-ը։

Բամբակ։ Միաց. Նահանգներում մշակվող բույսերից վոչ մեկը յուր նշանակությամբ չի կարող մրցել բամբակի հետ, վորը արտահանվող ապրանքների մեջ առաջին տեղն է բռնում։ Պատերազմից առաջ Միացյալ Նահանգները տալիս եյին բամբակի համաշխարհային բերքի 70%-ը (5,3 միլիոն տոննից 3,4-ը), վորի $^2/_3$-ը արտահանվում եր։

Բամբակի համաշխարհային առևտրի կենտրոնն այժմ Նյու-Յորքն է, վորտեղ և նշանակվում է բամբակի արժեքը։ Յեթե Նյու-Յորքում բամբակի գինը վորևէ փոփոխության է յենթարկվում, այդ փոփոխությունն անմիջապես ազդում է բոլոր յերկրների բամբակի գնի վրա։

Բամբակի արտահանությունը կատարվում է գլխավորապես Գալվեստոն, Նոր Օրլեան և Սավաննա նավահանգիստների վրայով։

Առաջադրանք: Գտեք Միացյալ Նահանգների բամբակի մշակության շրջանը։ Այդ շրջանը վորևէ գույնով ներկեցեք։

Կազմեցեք զանազան յերկրների բամբակի բերքի համեմատական մեծության դիագրամը։

Ծխախոտ։ Միացյալ Նահանգները ծխախոտի արտադրությամբ (մոտ $^1/_2$ միլիոն տոնն) նույնպես համաշխարհային նշանակություն ունեն։ Նրանք տալիս են ամբողջ համաշխարհային բերքի $^1/_4$-ը, այսինքն 2 անգամ ավել, քան թե ամբողջ Յեվրոպան։ Ծխախոտի բերքով Միաց. Նահանգները հետ են մնում միայն Չինաստանից։ Բերքի $^1/_3$-ը արտահանվում է Անգլիա։

Ծխախոտը գլխավորապես մշակվում է արևելյան Նահանգներում (Կենտուկի, Հյուս. Կարոլինա և Վիրգինիա)։ Բացի այդ մեծ քանակությամբ ծխախոտ ստացվում է նաև Կուբա, Պորտո-Րիկո և Ֆիլիպպյան կղզիներում։

Անասնապահություն։ Միաց. Նահանգները անասունների թվով հետ են մնում միայն Հնդկաստանից և ԽՍՀՄ-ից, բայց Միաց. Նահանգների ազգաբնակությունն անասուններով ավելի յէ ապահովված, քան Հնդկաստանն ու ԽՍՀՄ-ն։

№ 19 աղյուսակից պարզեցեք Միաց. Նահանգների անասունների ընդհ. թիվը և մասնավորապես խոշոր յեղջ. անասունների, խոզերի, ձիերի և վոչխարների թիվը։

Վերջերս ամերիկացիք առանձին ուշադրություն են դարձնում անասունների վորակի վրա։ Ամերիկական անասունը ռուսականից մոտ 2 անգամ ծանր է։ Խոտի ցանքսը զարգանում է արագ քայլերով։ Ցանքսերից մոտ 6 անգամ ավելի խոտ է ստացվում, քան բնական խոտահարքից (85 միլիոն տոնն և 15 միլիոն տոնն)։ Բացի խոտից, անասուններին կերակրում են նաև յեգիպտացորենով և վարսակով։ Յերբեմն յեգիպտացորենի բերքը չեն հավաքում, այլ խոզերին ուղղակի յեգիպտացորենի դաշտն են անում։

Մսեղենի յեվ կաթնեղենի արտահանությունը խոշոր չափերի յէ հասել։ Հազարավոր և միլիոնավոր անասուններ յերկաթուղիներով փոխադրում են Չիկագո, Կանզաս-Սիտի, Սեն-Լուի քաղաքները, վորտեղ գտնվում են համաշխարհային նշանակություն ունեցող սպանդանոցներ։ Աշխատավոր ձեռքերի պակասության պատճառով անասունները մորթվում և մաս-մաս են արվում մեքենաների օգնությամբ։ Մսի մի մասը սառցնում են, մյուս մասից պատրաստում են պահածոներ, ապուխտ, կոլբաս և այլն, հետո արտահանում ներքին և արտաքին շուկաները։ Գնացքների մեջ կան հատուկ վագոն-սառցարաններ, վորոնցով միսը մեծ արագությամբ փոխադրում են յերկրի մի ծայրից մյուսը։

Մսեղենի արտադրության զարգացումը առանձնապես ազդում է խոզաբուծության վրա։ Խոզերի քանակով Միաց. Նահանգներն առաջին տեղն են բռնում ամբողջ յերկրագնդի վրա։

Կաթնեղենի խոշոր մասը գործ է ածվում յերկրի ներսը. յուղի և պանրի արտահանությամբ Միաց. Նահանգները հետ են մնում շատ յերկրներից։

Ինչպես հետո կտեսնենք, գյուղատնտեսական ապրանքների վերամշակությունը Միաց. Նահանգների արդյունագործության կարևոր ճյուղերից մեկն է։ Սննդամթերքների արդյունաբերությունն ավելի մեծ արժեք է տալիս, քան արդյունագործության մնացած ճյուղերից վորևէ մեկը։

Այսպիսով գյուղատնտեսությունը Միաց. Նահանգների ժողովրդական տնտեսության մեջ բավական խոշոր դեր է կատարում։

Գյուղատնտեսությունը ինչ դեր է կատարում Միաց. Ն.-ների տնտեսության մեջ։ Ի՞նչ բույսեր են մշակվում։ Ի՞նչ յերկրագործական պրոդուկտներ են արտահանվում։ Անասնապահությունն ինչ պրոդուկտներ է արտադրում։

Ամերիկայի քարտեզի վրա ներկեցեք տնտեսական շրջանները։

Ֆերմերը յեվ կապիտալիզմը։ Անգլիայի հետ ունեցած պատերազմից հետո բացվում է մի յերկար պայքար ֆերմերի և կապիտալի միջև։ Կապիտալիստը, յուր ձեռքում ունենալով ելեվատորներ, յերկաթուղիներ և դրամագլուխ, շահագործում է մանր ֆերմերներին։ Մանր ֆերմերը ստիպված է հացահատիկը ելեվատորում պահելու համար քրեհ տալ ելեվատորի տիրոջը, գյուղատնտեսական մթերքները փոխադրելու համար նույնպես հարկադրված է գումարներ վճարել յեր-

կաթուղու տերերին կամ մեծ տոկոսներ տալ բանկերին ապառիկ վերցրած գործիքների համար: Այսպիսով մանր ֆերմերականությունը կամաց-կամաց քայքայվում է և ֆերմերը փախչում է դեպի արևմուտք, վորտեղ ավելի ազատ հողեր կան, կամ անցնում է քաղաք, գործարան: Մանր ֆերմերականության քայքայման յերկրորդ պատճառն էլ այն է, վոր խոշոր ֆերմերը գյուղատնտեսական արտադրության մեջ մտցնում է բարձր տեխնիկա և ֆերման դարձնում է մի տեսակ գործարան: Մանր ֆերմերը չի կարողանում մրցել նրա հետ և դառնում է նրա վարձու բանվորը:

Վերջին տարիներս մանր ֆերմերի դրությունը ավելի ևս վատթարացավ, վորովհետև այժմ արևմուտքում հողեր ստանալը բավական դժվարացել է: Յեվ ֆերմերը, մանավանդ յերկաթուղային ընկերությունների, գյուղատնտեսական մեքենաներն ապառիկ տվող անձանց, հաց հավաքող խոշոր վաճառականների շահագործումից ստիպված, յուր ֆերման գրավ է դնում: Ներկայումս բոլոր ֆերմաների $40^0/_0$-ը գրավ է դրված:

Այսպիսով մանր ֆերմերականությունը Միաց. Նահանգներում նույն վիճակումն է գտնվում, ինչ վոր մեր սակավահող գյուղացիությունը ցարական շրջանում: Դրանով է բացատրվում այն կապը, վոր այժմ Միաց. Նահանգներում հաստատվել է մանր ֆերմերի և բանվորի միջև. 1923 թ. հունիսի 3-ին կազմակերպվեց բանվորա-ֆերմերական հեղափոխական-սոցիալիստական կուսակցություն:

Հանքային հարստությունները:

Միաց. Նահանգները չափազանց հարուստ են այնպիսի հանքերով, վորոնք կարևոր դեր են կատարում արդյունագործության մեջ:

Քարածխի համաշխարհային պաշարի կեսը (3,8 տրիլիոն տոնն) գտնվում է Միաց. Նահանգներում, իսկ յերկաթահանքի պաշարով նրանք վոչ մի յերկրից հետ չեն մնում: Միաց. Նահանգները համաշխարհային նշանակություն ունեն նաև նավթի, պղնձի, կապարի, արծաթի, վոսկու և այլ հանքերով:

Քարածուխ:

Քարածխի գլխավոր ավազանները գտնվում են գլխավորապես յերկրի արևելյան մասում: Դրանցից ամենանշանավորն է Ալլեգանյան խումբը, վորը բռնում է մոտ 184 հազ. քառ. կիլոմետր տարածություն: Միաց. Նահանգներում արտադրվող քարածխի $^2/_3$-ը Ալլեգանյան խումբն է տալիս: Պակաս նշանակություն ունի հյուսիսային խումբը, վորը տարածվում է Միչիգան լճի մոտ: Բացի այս խմբերից յերկրի զանազան մասերում գտնվում են նաև մի շարք ավազաններ, այսպես՝ արևելյան մասում գտնվում է արևելյան-կենտրոնական խումբը, Միսսիսիպի գետից արևմուտք տարածվում է արևմտյան-կենտրոնական խումբը և այլն: Քարածխի արտադրությամբ առաջին տեղը բռնում է Պեննսիլվանիա

նահանգը, վորտեղ բավական մեծ քանակությամբ քարածուխ կոքս է դարձվում մետալլուրգիական արդյունաբերության պետքերի համար:

Քարածխի արդյունաբերությունը Միաց. Նահանգների լեռնային արդյունաբերության ամենակարևոր ճյուղերից մեկն է և տալիս է նրա ամբողջ արտադրության կեսից ավելին: Նրա արտադրությունը զարգանում է չափազանց արագ, ինչպես այդ ցույց է տալիս աղյուսակը.

Աղյուսակ № 44.

1875 թ. ստացվել է	48	միլիոն տոնն	քարածուխ
1900 » »	245	»	» »
1913 » »	517	»	» »
1918 » »	615	»	» »
1922 » »	425	»	» »
1924 » »	506	»	» »
1925 » »	531	»	» »
1926 » »	602	»	» »

Վերջին 50 տարվա ընթացքում Միաց. Նահանգներում արտադրությունը քանի անգամ է մեծացել:

Դիտեցեք հետևյալ աղյուսակը և ասացեք

1) Քարածխի համաշխ. արտադրության վո՞ր տոկոսն են տալիս Միացյալ Նահանգները:

2) Միաց. Նահանգների քարածխի արտադրությունը համեմատեցեք ամբողջ Յեվրոպայի քարածխային արտադրության հետ:

Աղյուսակ № 45.

1925 թ. բոլոր յերկրները տվել են	1.375	միլիոն տոնն,	վորից
Միաց. Նահանգները »	531	»	»
Անգլիան »	275	»	»
Գերմանիան »	113	»	»
Ամբողջ Յեվրոպան »	549	»	»
Ասիան »	70	»	»
Աֆրիկան »	12	»	»
Ամբողջ Ամերիկան »	543	»	»
Ավստրալիան »	185	»	»

Արտադրված քարածխի խոշոր մասը գործ է ածվում յերկրի ներսը, արտահանվող քարածուխը կազմում է ամբողջ արտադրության $5^0/_0$-ը միայն: Ամերիկական քարածուխն արտահանվում է գլխավորապես Հար. Ամերիկա, Կանադա, Ֆրանսիա, Իտալիա և այլն:

Յերկաթ:

Քարածխի արդյունաբերության հետ կապված է պողպատի և չուգունի արտադրությունը: Ինչպես յերկաթագործական արդյունաբերության այլ կենտրոններում, այնպես էլ Միաց. Նահանգներում յերկաթահանքը պողպատ և չուգուն դարձնելու համար փոխադրում են քարածխի արտադրության կենտրոնները (Պեննսիլվանիա և Օհայո): Յերկաթի գլխավոր հանքերը գտնվում են Միչիգան լճի

շրջանում, վորը մեծ լճերով և յերկաթուղային բազմաթիվ գծերով կապված է Պենսիլվանիայի հետ։ Յերկաթահանքի կեսը փոխադրվում է Պենսիլվանիա (Պիտսբուրգ), իսկ մնացածը Օհայո նահանգը և Դետրոյտ ու Չիկագո քաղաքները։ Դետրոյտում են գտնվում Ֆորդի հայտնի գործարանները։

Չուգունի և պողպատի արտադրությամբ Միաց. Նահանգները մրցակից չունեն։ Այդ մետաղների համաշխ. արտադրության 50%-ը ստացվում է Միաց. Նահանգներում։

Դիտեցեք № 26 աղյուսակը և ասացեք՝
Միաց. Նահանգներն են շատ չուգուն և պողպատ արտադրում, թե՞ Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան միասին վերցրած։

Նավթ։ Նավթի արտադրությամբ Միաց. Նահանգները նույնպես առաջին տեղն են բռնում։ Նավթն ստացվում է գլխավորապես Պենսիլվանիայում, Կալիֆորնիայում և այլ նահանգներում, ապա այստեղից հում նավթը նավթատար խողովակներով փոխադրվում է զանազան քաղաքներ, վորոնք գտնվում են գլխավորապես ծովափերին կամ արդյունագործական կենտրոններում։ Թե ինչպիսի արագ քայլերով էր զարգանում նավթի արտադրությունը Միաց. Նահանգներում, այդ յերևում է հետևյալ աղյուսակից.

1870 թ.	0,7	միլիոն տոնն
1900 «	8,3	« «
1913 «	34,0	« «
1922 «	76,4	« «
1924 «	97,9	« «
1925 «	103,5	« «
1926 «	105,3	« «

Նավթի համաշխարհային արտադրության 70%-ը տալիս են Միացյալ Նահանգները (տես № 24 աղյուսակը)

Պղինձ։ Միացյալ Նահանգների համար կարևոր նշանակություն ունի նաև պղինձը, վորի արտադրությամբ նրանք նույնպես առաջին տեղն են բռնում։ Պղնձի համաշխարհային արտադրության 60%-ը ստացվում է Միաց. Նահանգներում։ Այդ արտադրության կեսից ավելին արտահանվում է։ 1923 թ. ստացվել է մոտ 571 հազար տոնն, 1926 թ. 768 հազար, իսկ 1926 թ. 893 հազար։

Միաց. Նահանգները առաջին տեղն են բռնում նաև կապարի, ցինկի և ալյումինի արտադրությամբ։

Վոսկին ստացվում է Կալիֆորնիայում, Ալյասկայում, Կոլորադոյում և Նեվադայում։

Վոսկու արտադրությամբ Միաց. Նահանգները հետ են մնում միայն Հար. Աֆրիկական Միությունից, իսկ արծաթով՝ Մեքսիկայից։

Դիտիր № 28 և 29 աղյուսակները և ասա—պղինձի, վոսկու, արծաթի համաշխարհային արտադրության վո՞ր տոկոսն է ստացվում Միաց. Նահանգներում։

Արդյունագործություն։ Վորքան ավելի եյին շահագործվում Միաց. Նահանգների արտադրական ուժերը, վորքան ավելի եյին շատանում բնակիչները, այսինքն արտադրողներն ու սպառողները, Միաց. Նահանգներն այնքան ավելի ելին կորցնում իրենց միակողմանի ագրարային բնույթը և դառնում արդյունագործական—ագրարային յերկիր։

Միաց. Նահանգների արդյունագործությանը նպաստեցին հում նյութերի առատությունը, քարածխի, յերկաթի և այլ հանքերի հսկայական պաշարը, ջրային և յերկաթուղային խիտ ցանցը և բանվորների այն հսկայական բանակը, վոր Յեվրոպան տվեց Միաց. Նահանգներին։ Գործարանները, բացի քարածխից և նավթից շահագործում են նաև սպիտակ ածխի հսկայական պաշարը։ Ջրային ենէրգիայի շահագործմամբ Միաց. Նահանգները բռնում են առաջին տեղը. միայն Նյու-Յորքի նահանգում գործադրում են 1300000 ձիու ույժ, այսինքն ավելի, քան ամբողջ Շվեյցարիայում։

Արդյունագործության զարգացումն սկսվեց Նոր Անգլիայում։ Ներգաղթողների անընդհատ շարքերն ուղղվում եյին դեպի Նոր Անգլիա. այստեղ ձեռքի տակ գտնվում եյին ջրային ենէրգիա, քարածուխ, յերկաթ և նավթ։ Միաց. Նահանգների հյուսիս-արևելյան այս անկյունը այսոր էլ տալիս է Միաց. Նահանգների գործարանային արտադրության ամբողջ արժեքի 3/4-ը։ Այստեղ են կենտրոնացած յերկրի գործարանային բանվորության 2/3-ը։ Այստեղ են գտնվում Միաց. Նահանգների խոշոր գործարանային քաղաքների մեծ մասը, վորտեղ զարգանում են գործարանային արդյունաբերության բոլոր ճյուղերը։ Այժմ գործարանային կյանքը զարգանում է նաև արևմուտքում, հյուսիսում և հարավում։

Արդյունագործության աշխարհագրական տարածումը սերտ կերպով կապված է հում նյութի բաշխման հետ։ Այսպես, որինակ, յերկաթագործական արդյունաբերությունը զարգացել է գլխավորապես Ալլեգանների շրջանում, վորտեղ գտնվում է քարածխի հսկայական պաշար, իսկ յերկաթը ջրային եժան ճանապարհով բերվում է Վերին լճի շրջանից։ Հարավային տաք նահանգներում տարածված է բամբակի, ծխախոտի և շաքարեղեգի վերամշակությունը։ Անտառով և ջրային ուժերով հարուստ արևմտյան շրջանում զարգացել են թղթի, կահ կարասիքի արտադրությունը, սղոցարանները և տախտակագործարանները։ Միսսիսիպի գետի հարուստ տափաստաններում տարածված են ալյուրի, կաշվի արտադրությունը, մսի գործը, գյուղատնտեսական գործիքների և մեքենաների արտադրությունը և այլն։

Արդյունագործության առանձին ճյուղերի նշանակությունը պարզվում է հետևյալ աղյուսակից.

Արդյունագործության առանձին ճյուղի անունը	Հիմնարկությունների թիվը	Բանվորների թիվը հազարներով	Արտադրության արժեքը միլիոն դոլարներով
1. Սննդամթերքների արտադրություն	51847	682	9524
2. Տեքստիլ արդյունագործություն	26797	1729	9487
3. Երկաթի և պողպատի մշակություն . . .	6358	893	6829
4. Այլ մետաղների մշակություն	7433	297	2634
5. Փայտի մշակություն	21674	932	3633
6. Թղթի և լիտոգրաֆ. արդյունագործություն	25775	528	3770
7. Կաշվեղենի արտադրություն	4868	345	1880
8. Մեքենաների արտադրություն	12147	907	4728
9. Քիմիական արդյունագործություն	9371	523	6665
10. Կերամիկային «	8287	348	1539
11. Ծխախոտի «	5672	146	1044
12. Սայլեր, ավտոմոբիլներ, կառքեր	3873	606	5333
13. Երկաթուղային նորոգման արհեստանոցներ	2348	523	1520
14. Այլ և այլ	11869	330	1970

Ամերիկական արդյունագործության գլխավոր ճյուղը սննդամթերքների արդյունաբերությունն է, որը տալիս է ամբողջ արտադրության $16^{0}/_{0}$-ը: Մանավանդ տարածված է մսեղենի և ալյուրի գործը:

Արտադրության արժեքով յերկրորդ տեղը բռնում է մետաղագործությունը: Մետաղագործության արդյունաբերության զարգացմամբ Միաց. Նահանգները բռնում են առաջին տեղը: Չափազանց մեծ նշանակություն ունի գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, այնուհետև կարևոր են շոգեգնացքների, վագոնների, կարի մեքենաների, հեծանիվների, բենզինի շարժիչների և մանավանդ ավտոմոբիլների արտադրությունը:

Վոչ մի յերկրում ավտոմոբիլների արտադրությունն այն աստիճանի զարգացած չէ, ինչպես Ամերիկայում: 1913 թվին Միաց. Նահանգներում պատրաստվել է ընդամենը 484 հազար ավտոմոբիլ, 1920 թ.—2 միլ. 205 հազ., իսկ 1923 թ.—4 միլիոն ավտոմոբիլ: 1925 թ. յերկրում կար 17 միլիոն ավտոմոբիլ, միջին հաշվով ամեն 8 մարդուն ընկնում է մեկ ավտոմոբիլ:

Տեքստիլ արդյունագործության մեծությամբ Միաց. Նահանգները հետ են մնում միայն Անգլիայից, բայց Միաց. Նահանգներն այն առավելությունն ունեն, որ աշխատում են սեփական բամբակով, իսկ Անգլիան՝ դրսի բամբակով:

Ամերիկական արդյունագործության առանձնահատկությունները:

Ամերիկական արդյունագործությունը մի շարք առանձնահատկություններով տարբերվում է ուրիշ յերկրների արդյունագործությունից:

1. Ամերիկական արդյունագործությունը $^{9}/_{10}$-ական չափով աշխատում է ներքին շուկայի պետքերի համար, այն ինչ Անգլիայի և Գերմանիայի համար կարևորը արտաքին շուկան է:

2. Ամերիկական արդյունագործությունը հում նյութի և սննդի խոշոր մասը ստանում է յերկրի ներսից, իսկ Անգլիան, Ճապոնիան, Գերմանիան ներմուծում են հում նյութ գործարանների համար և սննդամթերք ազգաբնակության համար:

3. Ձեռքի աշխատանքը ամեն տեղ լայն չափով փոխարինում են մեքենաներով. բացի այդ՝ աշխատանքի բաժանումը մի քանի հիմնարկություններում հասել է յուր կատարելության: Հաճախ արդյունագործության այս կամ այն ճյուղում հազարավոր բանվորներ կատարում են վորև է աշխատանքի վորոշ մասը միայն. այսպես՝ ավտոմոբիլ շինող բանվորների մի մասը շարունակ անիվ է շինում, մի ուրիշ մասը՝ սռնակը և այլն: Անընդհատ միևնույն գործը կատարելով բանվորը ձեռք է բերում տվյալ աշխատանքի մեջ հմտություն, շնորք:

4. Ամերիկական արդյունագործության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մի վորևե գործարան արտադրում է միայն մի տեսակ ապրանք. օրինակ՝ գործարաններ կան, վոր միայն ավտոմոբիլներ են շինում, գործարաններ էլ կան, վոր միայն շոգեմեքենաներ են արտադրում և այլն:

5. Բացի այդ՝ վոչ մի յերկրում կապիտալի այնպիսի կենտրոնացում չի նկատվում, ինչպես Միաց. Նահանգներում: Յերկրի արտադրության խոշոր մասը գտնվում է մի խումբ հարուստ կապիտալիստական ընկերությունների ձեռքում: Արդյունագործական հիմնարկությունները, յերկաթուղիները, զանազան հրատարակչությունները, հյուրանոցները և այլն կենտրոնացել են այս կամ այն տրեստի ձեռքում: Նշանավոր տրեստներից են Ստանդարտ Օյլը (նավթային տրեստ), պողպատի տրեստը, հեռախոսային տրեստը, գյուղ. մեքենաների միջազգային տրեստը և այլն: Տրեստների կապիտալը միլիարդ դոլլարներով են հաշվում: Շնորհիվ այդ հանգամանքի, մի խումբ կապիտալիստներ կառավարում են 100 միլիոնանոց ժողովուրդ: Միաց. Նահանգների ազգաբնակության $9^{0}/_{0}$-ի ձեռքում կենտրոնացած է ժողովրդական ամբողջ հարստության $71^{0}/_{0}$-ը (1922 թ. Միաց. Նահանգների ժողովրդական հարստությունը հաշվում եյին 353 միլիարդ դոլլար):

Հաղորդակցության միջոցները:

Միաց. Նահանգների յերկաթուղային ցանցը
յուր մեծությամբ առաջնակարգ տեղերից մեկն է
բռնում: 1926 թ. յերկաթուղային գծերի ընդհանուր
յերկարությունը կազմում եր մոտ 422000 կիլոմետր (10 անգամ մեծ է յեր-
կրագնդի շրջապատից և ավելի յերկար է, քան յերկրագնդից մինչև լու-
սին յեղած տարածությունը). այս տեսակետից Միաց. Նահանգները գերա-
զանցում են բոլոր յեվրոպական պետություններից միասին վերցրած:
Բայց յերկրի մակարդակի մեծության պատճառով, ցանցի խտությու-
նը այքան էլ մեծ չե. 100 քառ. կիլոմետր տարածությանն ընկնում է
մոտ $4^1/_2$ կիլոմետր յերկաթուղային գիծ: Ազգաբնակության յերկաթուղով
ապահովված լինելու տեսակետից Միացյալ Նահանգները բռնում են առաջ-
նակարգ տեղերից մեկը. 10 հազար բնակչին ընկնում է 40 կիլոմետր յեր-
կաթուղային գիծ: Յերկաթուղային ցանցը բավական խիտ է հյուսիս-արևել-
յան շտատներում (արդյունագործություն), իսկ արևմուտքում նոսր է
(ինչու): Մի քանի յերկաթուղագծեր անցնում են յերկրի արևելյան յեզեր-
քից դեպի արևմտյան յեզերքը և այդպիսով Ատլանտյան ովկիանոսը միաց-
նում են Խաղաղ ովկիանոսի հետ:

Աչքի յե ընկնում ամերիկական շոգեգնացքների և վագոնների մեծու-
թյունը. ապրանքատար վագոնը կարող է վերցնել մինչև 2600 փութ բեռ:
Բացի սովորական յերկաթուղային գծերից կան մի շարք գծեր էլ, վորոնք
շինված են հատկապես հանքերը արդյունագործական կենտրոնների հետ
միացնելու համար:

Միաց. Նահանգների յերկաթուղիների մեծ մասը մասնավոր սեփա-
կանություն է: Բոլոր յերկաթուղիների մոտ 80%-ը գտնվում է մի քանի
տրեստների ձեռքում, վորոնց գլուխ են կանգնած Մորգանը, Րոկֆելլերը և
այլ ամերիկական միլլիարդերներ:

Ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման պատճառով խճուղիների
նշանակությունը յերկրի ներքին հաղորդակցության գործում մեծանում է:
Նոր խճուղիներ անցկացնելու, ինչպես և հները վերանորոգելու համար մեծ
գումարներ են ծախսվում:

Միաց. Նահանգների ներքին հաղորդակցության համար կարևոր են
նաև գետերն ու լճերը: Բոլոր գլխավոր գետերը հոսում են դեպի Մեքսի-
կայի ծոցը և Ատլանտյան ովկիանոսը: Այս հանգամանքը հեշտացնում է
Միաց. Նահանգների ծովային առևտուրը Յեվրոպայի հետ:

Միսսիսիպին Միսսուրի վտակով յերկրագնդի ամենայերկար գետն է:
Հսկայական գետային նավեր յերթևեկում են նրանց վրայով և փոխադրում
ահագին քանակությամբ ապրանքներ: Միսսուրին յուր ակունքով բավա-

կան մոտենում է Կոլումբիա գետին, վորը հոսում է դեպի Խաղաղ ովկիա-
նոսը: Այսպիսով Խաղաղ ովկիանոսը համարյա անընդհատ ջրային ճանա-
պարհով միանում է Ատլանտյան ովկիանոսի հետ:

Միաց. Նահանգների հյուսիս-արևելյան մասում գտնվում են մի շարք
լճեր (Վերին, Միչիգան, Հուրոն, Երի և Օնտարիո), վորոնք՝ միացած լինե-
լով իրար հետ, ներկայացնում են ընդարձակ ջրային ճանապարհ. միայն
Երի լիճը 100 մետրով բարձր է Օնտարիոյից և այն գետը, վոր միացնում
է այդ յերկու լճերն իրար հետ, կազմում է ջրվեժ, վոր կոչվում է Նիագա-
րա (աշխարհի ամենագեղեցիկ ջրվեժներից մեկն է):

Միաց. Նահանգների բոլոր նավագնաց գետերի ընդհանուր յերկարու-
թյունը հաշվում են մոտ 20000 կիլոմետր:

Այսպիսով Միաց. Նահանգները բավական ապահոված են գետային
սիստեմներով, վորոնց նշանակությունը ավելի ևս մեծանում է արհեստա-
կան բազմաթիվ ջրանցքների պատճառով:

Մեծ է և ծովային հաղորդակցությունը:Ծովային նավագնացությամբ
Միաց. Նահանգներն այժմ հետ են մնում միայն Անգլիայից: Նավահան-
գստային շարժմամբ Միաց. Նահանգները հետ են մնում միայն Անգլիայից:
Նավահանգիստներից առաջին տեղը բռնում է Նյու-Յորքը, վորից հետո գա-
լիս են Նոր-Օրլեանը, Գալվեստոնը, Ֆիլադելֆիան, Բոստոնը: Խաղաղ ովկիա-
նոսի ափերին աչքի յեն ընկնում Օլիմպիան, Ս. Ֆրանցիսկոն և Լոս-Անջե-
լոսը:

Արտաքին առևտուրը

Արտաքին առևտրի մեծությամբ Միաց. Նահանգ-
ները հետ են մնում միայն Անգլիայից: Բնորոշ է
այն, վոր այդ առևտրի բալանսը յերկար տարիների ընթացքում մնում է
ակտիվ, այսինքն ավելի շատ արտահանում են, քան թե ներմուծում:

МИАЦ. НАХАНГНЕРИ АРТАКИН АРЕВТУРЕ

МИАЦ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

(միլիոն դոլլարներով հաշված)

	Ներմուծում	Արտահանում	Բալանս
1913/14 թ. . . .	1894	2365	+ 471
1915/16 . . .	2198	4333	+2136
1917/18	2946	5920	+2974
1920/21	3654	6517	+2862
1923/24	3554	4312	+ 758
1924/25	3824	4864	+1040
1926 . . .	4431	4712	+ 281

Համեմատաբար քիչ առաջ Միաց. Նահանգներն արտահանում եյին
համարյա բացառապես հում նյութ և ներմուծում եյին գործարանային
պատրաստի իրեր: 1913 թ. արտահանվող ապրանքների կեսը կազմում եյին
գործարանային պատրաստի իրերը:

Արտահանվող ապրանքների 22%-ը կազմում է բամբակը, 8,7%-ը նավթանյութերը, 6,4%-ը—ավտոմոբիլները, 4,9%-ը—մեքենաները և այլն: Բացի այդ մեծ չափով արտահանվում են նաև ծխախոտ, պղինձ, քարածուխ, ցորենի ալյուր, բամբակե գործվածքներ և այլն:

Միաց. Նահանգները ներմուծում են արդյունագործական հում նյութ (կաուչուկ, վուշ, ջուտ, մետաքս, բուրդ), սննդամթերքներ (շաքար, սուրճ), թուղթ, փայտեղեն և այլն:

Միաց. Նահանգների ԽՍՀՄ-ի հետ ունեցած առևտուրը 1924/25 թվին հետևյալ պատկերն ուներ:

ԽՍՀՄ ներմուծվել է 120,3 միլիոն ռ. ապրանք, որը կազմում է ԽՍՀՄ-ի ներմուծության 27%-ը

ԽՍՀՄ-ից արտահանվել 28,1 միլիոն. ապրանք (ԽՍՀՄ-ի արտահանության 5%-ը)

Այստեղից յերևում է, որ Միաց. Նահանգները ԽՍՀՄ-ի ներմուծության մեջ բավական մեծ դեր է կատարում: ԽՍՀՄ-ն Միաց. Նահանգներում ձեռք է բերում գլխավորապես մեքենաներ, իսկ փոխարենը տալիս է կաշի և մորթի: Սակայն Միաց. Նահանգների առևտուրը ԽՍՀՄ-ի հետ չի կարող մեծ չափեր ստանալ, որովհետև նրանք համաշխարհային շուկա են արտահանում նաև այնպիսի ապրանքներ (հաց, նավթ, փայտ, կաթնեղեն), որպեսին ԽՍՀՄ-ն է տալիս:

Ամերիկական կապիտալի արշավանքը:

Ինչպես ասացինք, մինչև համաշխարհային պատերազմը, Միաց. Նահանգները ագրարային բնույթ ունեյին և արտահանում եյին համարյա միայն հում նյութ: Արդյունագործությունն այդ ժամանակ աշխատում եր ներքին շուկայի համար և Միաց Նահանգները բոլորովին չեյին հետաքրքրվում համաշխարհային քաղաքականության խնդիրներով:

Համաշխ. պատերազմը դրությունը փոխեց: Նա հնարավորություն ավեց Միաց. Նահանգներին օգտագործել յուր արտադրական հարուստ ուժերը: Պատերազմի ընթացքում Միաց. Նահանգների կապիտալիստները՝ ազատվելով Անգլիայի և Գերմանիայի մրցությունից, լայնացրին իրենց ապրանքների շուկան, արտահանելով խոշոր չափով գործարանային ապրանքներ դեպի աշխարհի բոլոր անկյունները: Միաժամանակ Միաց. Նահանգները, ստանալով դաշնակիցներից ռազմամթերքի պատվերներ, մեծ զարկ ավին արդյունագործության. բացվեցին բազմաթիվ նոր գործարաններ, յեկամուտները լայնացան և արդյունագործության մեջ դրված դրամագլուխը խոշոր չափերի հասավ: Գյուղատնտեսական հում նյութ արտադրող յերկիրը դարձավ արդյունագործական ապրանքներ արտահանող յերկիր: Պատերազմը

դադարելուց հետո նոր բացված գործարաններն արդեն ստիպված եյին աշխատել արտաքին շուկայի համար: Դրանով է բացատրվում այն, որ Միաց. Նահանգները պատերազմից հետո առանձնապես սկսում են ուշադրություն դարձնել միջազգային քաղաքականության վրա:

Յերկիրն ըրեցոր հարստանում է: Մասնավոր անձանց և կապիտալիստական զանազան ընկերությունների ձեռքում հավաքվում է հսկայական դրամագլուխ: Յեվ Միաց. Նահանգները վոչ միայն կարողանում են վճարել իրենց պարտքերը Յեվրոպային, այլև սկսում են փոխառություն տալ Յեվրոպական զանազան յերկրներին: 1924 թ. Միաց. Նահանգների կապիտալիստներն արտասահմանում ունեյին 944 միլ. դոլլար, որից Յեվրոպայում գտնվում եր 520,6 միլ. դոլլար (Գերմանիայում—120 միլ., Ֆրանսիայում—144, Հոլլանդիայում—46, Բելգիայում—50, Շվեցարիայում—30 և այլն), Ասիայում—187,5 միլ. լատինական Ամերիկայում – 161,3 միլ. Կանադայում—180,5 միլ. դոլլար:

Միաց. Նահանգների ազդեցությունը մեծ է մանավանդ Կանադայում, Մեքսիկայում և Կենտր. և Հար. Ամերիկայում: Կանադայի արդյունագործական կապիտալի 31%-ը պատկանում է Միաց. Նահանգներին. Մեքսիկայի նավթային արդյունաբերության կապիտալի մոտ $^3/_4$-ը Միաց. Նահանգներինն է: «Դաուեսի պլանը» մշակել է ամերիկացի Դաուեսը, ռեպարացիաների գործի գլխավոր ագենտը, որ ամերիկացի յե: Այսպիսով տնտեսական պատճառները դրդում են Միաց. Նահանգներին խառնվել համաշխարհային քաղաքականության մեջ, բռնել իմպերիալիզմի ճանապարհը:

Միաց. Նահանգներն առանձնապես ուշադրություն են դարձնում Հեռավոր Արևելքի վրա: Խաղաղ ովկիանոսն սկսում է կարևոր դեր խաղալ Միաց. Նահանգների համար: «Ատլանտյան ովկիանոսի պատմությունը մոտենում է յուր վախճանին. սկսվում է Խաղաղ ովկիանոսի շրջանը», ասել է Ռուզվելտը.

Բայց Հեռավոր Արևելքով (գլխավորապես Չինաստանով) շահագրգռված են վոչ միայն Միաց. Նահանգները, այլև Յապոնիան և Անգլիան: Յապոնիան չունի յերկաթ և վառելիք. Չինաստանը նրան այս տեսակետից շատ պետք է և նա առանց կռվի վոչ մի պետության զիջում չի անի: Մյուս կողմից՝ Չինաստանը կարևոր շուկա յե անգլիական և ամերիկական ապրանքների համար: Յապոնիայի և Միաց. Նահանգների տնտեսական շահերը այսպիսով բախվում են իրար և Խաղաղ ովկիանոսը դառնում է զինման թատերաբեմ: Զինվում է Յապոնիան, զինվում են և Միաց. Նահանգները: Յերկուսն էլ գիտակցելով, որ ապագա պատերազմը տեղի յե ունենալու հենց այդ ովկիանոսի վրա, առանձնապես ուժեղացնում են ծովային ռազմական և օդային ռազմական նավատորմը:

Պետական կազմը։ Միաց. Նահանգները բուրժուական ֆեդերատիվ հանրապետություն են և բաղկացած են 48 նահանգից (շտատից), 1 շրջանից և 2 տերրիտորիայից (Ալյասկա և Հավայի)։

Սահմանադրության համաձայն իշխանությունը բաղկացած է օրենսդրական, կատարողական և դատական մասերից. դրանցից յուրաքանչյուրը միանգամայն ինքնուրույն է և կարող է կոնտրոլի յենթարկել մյուսներին։

Օրենսդրական իշխանության ֆեդերալ՝ օրգանը կոնգրեսն է, վորը բաղկացած է սենատից և ներկայացուցիչների պալատից։

Սենատի կազմի մեջ մտնում են 2-ական սենատոր ամեն մի նահանգից. նրանք ընտրվում են ժողովրդի կողմից 6 տարով։ Ներկայացուցչական պալատի անդամներն ընտրվում են 2 տարով։

Ֆեդերալ օրենսդրական իշխանությունը վճռում է մի շարք միջազգային նշանակություն ունեցող խնդիրներ, ինչպես և նավատորմին, զորքին, հարկերին, առևտրին, կշիռներին և չափերին վերաբերող հարցեր։

Կատարողական իշխանությունը գտնվում է պրեզիդենտի ձեռքում։

Պրեզիդենտն ընտրվում է 35 տարին լրացրած քաղաքացիների միջից 4 տարով։ Պրեզիդենտը կնքում է միջազգային դաշինքներ, նշանակում է նախարարներ և այլն։

Դատական իշխանության գլուխ է կանգնած Գերագույն դատարանը։ Գերագույն դատարանն անկախ է և նա միայն կարող է բացատրություն տալ այս կամ այն օրենքին։ Նա բաղկացած է 9 անդամից, վորոնք նշանակվում են պրեզիդենտի կողմից ցմահ։

Ամեն մի նահանգ ունի յուր սեփական սահմանադրությունը, օրենսդրական օրգանը և դատական սիստեմը։

Գլխավոր քաղաքները։ Նյու-Յորք—խոշոր առևտրական կենտրոն է։ Արտաքին առևտրի կեսից ավելին նրա վրայով է կատարվում։ Ունի մոտ 5½ միլիոն բնակիչ (արվարձաններով 8 միլիոն)։ Ֆիլադելֆիա—արդյունագործական կենտրոն։ Չիկագո—հացի և փայտի առևտուր, սպանդանոցներ, մսի և կոնսերվների արտադրություն։ Պիտսբուրգ—պողպատի արդյունագործության կենտրոն։ Դետրոյտ—արդյունագործ. կենտրոն, ավտոմոբիլներ (Ֆորդ)։ Սեն-Լուի—առևտրական - արդյունագործական կենտրոն։ Կանզաս-Սիտի—հացի, անասունների շուկա։ Սան-Ֆրանցիսկո—Խաղաղ օվկիանոսի նավահանգիստ յեզերքին։ Լոս-Անժելոս։ Վաշինգտոն—մայրաքաղաք է։

Բուրժուական կուսակցությունները՝ Յերկրի բնական խոշոր հարստությունները և նրա արտադրական ապպարատի տեխնիկական բարձր մակարդակը ամբողջ ազգաբնակության համար ապահովել են համեմատաբան բարեկեցիկ կյանք, այդ պատճառով բուրժուազիան կարողացել է

մինչև այժմ իր ձեռքում պահել ազգաբնակության բոլոր խավերի ղեկավարությունը։ Դրանով է բացատրվում այն, վոր մասսաների քաղաքական զարգացումը հետ է մնացել և գրեթե վոչ մի տարբերություն չի նկատվում գոյություն ունեցող յերկու խոշոր բուրժուական կուսակցությունների՝ դեմոկրատական և հանրապետական կուսակցությունների միջև։

Քաղաքական ամբողջ պայքարը գրեթե ամբողջապես այս կամ այն կապիտալիստական խմբերի շահերի շուրջն է պտտվում։ Բայց վերջին ժամանակներս, այս տեսակետից, վորոշ շրջադարձ կատարվեց։ Բանվոր դասակարգի բարեկեցությունը այլ ևս առաջվա նման արագ չի աճում, մանր բուրժուազիայի և ֆերմերների դրությունը վատանում է։ Այս բանի հետևանքով, յերկու կուսակցություններից էլ բաժանվում են օպպոզիցիոն խմբակներ և սաղմնավորվում է մի յերրորդ կուսակցություն, վորի ղեկավարությունը հավանորեն բանվորների ձեռքն է ընկնելու։

Քաղաքական զարգացմանը նպաստում են ֆերմերական կազմակերպությունները, վորոնց թիվը վերջին տարիներում բավական արագ կերպով աճում է։

Պրոլետարական կուսակցությունները։ Ամերիկայի բանվոր դասակարգը դեռ մասսայական, նույնիսկ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն չունի։

Սոցիալիստական կուսակցությունը մտնում է II ինտերնացիոնալի մեջ։ Նրա հայտարարությամբ (վոր շատ կասկածելի յե) կուսակցությունն ունի 18 հազար անդամ։ Նրա ազդեցությունը մասսաների վրա շատ թույլ է։

Փորձեր են արվում կազմակերպելու անգլիական բանվորական կուսակցության տիպի մասսայական կուսակցություն, վորի մեջ պետք է մըտնեն դժգոհ ֆերմերներ (բանվորա-ֆերմերական կուսակցություն)։

Ամերիկյան կոմունիստական կուսակցությունը դեռ անդամների մեծ թիվ չունի, բայց վերջին տարիները բավական. հաջողություններ է ձեռք բերել։

Պարլամենտի կազմը։ 1924 թվի նոյեմբերին ընտրված կոնգրեսը կուսակցական հետևյալ կազմն ունի։

Սենատ՝ 56 հանրապետականներ, 39 դեմոկրատներ, 1 դեպուտատ բանվորա-ֆերմերական կուսակցությունից։

Պատգամավորների պալատ՝ 247 հանրապետականներ, 183 դեմոկրատներ, 3 պատգամավոր բանվորա-ֆերմերական կուսակցությունից։

Ինչո՞վ բացատրել Միացյալ Նահանգների բանվորների քաղաքական հետամնացությունը.

Միաց. Նահանգների գաղութները։ Յուր գաղութների մեծությամբ Միաց. Նահանգները հետ են մնում յեվրոպական շատ յերկրներից,

բայց այդ գաղութների տնտեսական նշանակությունը բավական մեծ է։

Ամերիկայում Միաց. Նահանգներին պատկանում են հետևյալ յերկըր-ները.

Ալյասկա։ Այս թերակղզու մակերդակը հավասար է 1530 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը ընդամենը 55 հազար է։ Միաց. Նահանգները Ալյասկան գնել են Ռուսաստանից 1867 թ. 7,2 միլիոն դոլլարով։ Բնակիչները բաղկացած են սպիտակներից (65%), հնդիկներից, էսկիմոսներից և այլն։ Ժողովրդի գլխավոր պարապմունքը հանքային արդյունաբերությունն է. ստացվում են վոսկի, արծաթ, կապար, պղինձ, քարածուխ, նավթ և այլն։ Մեծ արդյունք ստացվում է նաև ձկնորսությունից։ Ընդհանուր առմամբ Ալյասկան բավական հարուստ յերկիր է։ Վարչական տեսակետից «տերրիտորիա» է, կառավարում է նահանգապետը։

Ալյասկան վո՞ր կլիմայական զոնայում է գտնվում։ Վո՞ր ֆակտորներն են Ալյասկայի համար նպաստավոր, զոնայինը, թե՞ վոչ զոնայինը։

Պորտո-րիկո։ Վեստ-Ինդիայի կղզիներից մեկն է և գնված է Իսպանիայից 1888 թվին։ Բնակիչները (1,3 միլիոն) բաղկացած են սպիտակներից, մուլատներից և նեգրներից։ Մշակում են շաքարեղեգ, սուրճ, ծխախոտ, բամբակ և այլն։

Պանամայի ջրանցքի շրջան։ Գնված է Պանամայի հանրապետությունից 1925 թ.։ Պանամայի Ջրանցքը խոշոր նշանակություն ունի. Միաց. Նահանգների առևտրական կենտրոնների և Հեռ. Արևելքի ամենակարճ ճանապարհը այդ ջրանցքով է անցնում։

Սան-Դոմինգո։ Հանրապետություն է. գրավվել է 1916 թ., կառավարում է Միաց. Նհաանգների կողմից նշանակված գեներալ-նահանգապետը։ Բնակիչներն են մետիսները, մուլատները, նեգրերը և սպիտակները։ Գլխավոր պարապմունքն է անասնապահությունը և հողագործությունը։

Հայիտի։ Բռնում է Հայիտի կղզու արևելյան մասը։ Պրոտեկտորատ է։ Բնակիչները (1,5 միլիոն) բաղկացած են գլխավորապես նեգրերից և մուլատներից։ Մշակում են սուրճ, կակաո, բամբակ, ծխախոտ, շաքարեղեգ։

Կուբա։ Մակերդակի մեծությունն է 114.400 քառ. կիլոմետր, բնակիչները (3,4 միլ.) բաղկացած են նեգրերից, մուլատներից, չինացիներից և սպիտակներից։ Մշակում են շաքարեղեգ (բռնում է առաջին տեղը), բրինձ, կակաո, սուրճ, բանան և այլն։ Ստացվում են նաև զանազան հանքեր (յերկաթ, մանգան, պղինձ և նավթ)։

Օրենսդրական իշխանությունը պատկանում է կոնգրեսին, վորը բաղկացած է սենատից և ներկայացուցիչների պալատից։ Միաց. Նահանգ-

ներն իրավունք ունեն Կուբայի ֆինանսները կոնտրոլի յենթարկելու և
միջամտելու նրա ներքին գործերին։

Պորտո-Րիկոն, Սան-Դոմինգոն, Հայիտին և Կուբան վո՞ր կլիմայական զոնայում
են գտնվում։
Այդ կղզիների համար վո՞ր բույսերն են կարևոր։

Խաղաղ ովկիանոսում Միացյալ Նահանգներին պատկանում են Հավայի
(Սանդվիչյան) կղզիները։ Բնակիչները բաղկացած են յապոնացիներից
(42%), սպիտակներից (24%), չինացիներից, հավայցիներից և այլն։ Մշա-
կում են բրինձ, ծխախոտ, բամբակ, սուրճ, անանաս, բանան և այլն։ Այդ
կղզիները կառավարում է Միաց. Նահանգների կողմից նշանակված գենե-
րալ նահանգապետը։

Բացի այդ կղզիներից Խաղաղ ովկիանոսում Միաց. Նահանգներին
պատկանում են մի շարք մանր կղզիներ ևս, վորտեղ գլխավորապես մշա-
կում են արևադարձային բույսեր (կակաո, սուրճ անանաս այլն)։

Ասիայում Միաց. Նահանգներին պատկանում են Ֆիլիպպյան կղզիները,
վորոնց մակերդակը հավասար է մոտ 297900 քառ կիլոմետրի, իսկ բնա-
կիչների թիվը՝ 10,8 միլիոնի։ Ազգաբնակության գլխավոր մասը կազմում են
մալայացիները, նեգրիտոսները և տեղական այլ ցեղեր։ Մշակում են բրինձ,
կանեփ, շաքարեղեգ, ծխախոտ, յեգիպտացորեն։ Անտառներից ստացվում են
կաուչուկ, բամբակ, զանազան ներկեր և այլն։ Ստացվում են նաև վոսկի,
արծաթ, պլատին, կապար, մանգան, յերկաթ, նավթ։

Ֆիլիպպյան կղզիներն ունեն սեփական պարլամենտ, վորը բաղկացած է
սենատից և պատգամավորական խորհրդարանից։ Կառավարում է Միաց.
Նահանգների կողմից նշանակված գեներալ-նահանգապետը։

Ունի վոչ միայն տնտեսական, այլև կարևոր ստրատեգիական նշա-
նակություն. նկատվում է ազատագրական ուժեղ շարժում, բայց Միաց. Նա-
հանգները ամեն կերպ աշխատում են խեղդել և ճնշել այդ շարժումը։

Ի՞նչ ֆակտորներ նպաստեցին Միաց. Նահանգների զարգացմանը։
Գյուղատնտեսությունն և արդյունագործությունն ի՞նչ չափերի յեն հասել։ Ի՞նչ
գյուղատնտեսական և արդյունագործական ապրանքներ են արտադրվում։
Միաց. Նահանգներն ի՞նչ առավելություններ ունեն Անգլիայի և Ֆրանսիայի
նկատմամբ։
Ինչու՞ արևելյան մասերն տնտեսապես ավելի յեն զարգացած, քան արևմտյան
մասերը։
Ի՞նչ նշանակություն ունի Պանամայի Ջրանցքը Միաց. Նահանգների համար։
Միաց. Նահանգների համր քարտեզի վրա նշանակեցեք Միաց. Նահանգների
գլխավոր քաղաքները, լեռները, գետերը, ծովերը և ծոցերը։
Կարդացեք «Ամերիկա» հոդվածը (Խորրաբեն, 105-120 յերես)։
Կարդացեք—Նյու-Յորքում, Նոր-Անգլիա, Չիկագո քաղաքը, ճանապարհորդու-
թյուն Միսսիսիպի գետի վրայով, բամբակի տնկարաններում, նավթահորերում և ածխա-
հանքերում, յեգիպտացորենի և ցորենի արտերում—հոդվածները (Աշխարհի շուրջը
124-142 յեր.)

6. ԲՐԱԶԻԼԻԱ

Քարտեզի վրա ցույց տվեք Բրազիլիան:
Գտեք նրա սահմանները և թվեցեք այն յերկրները, որ սահմանակից են նրան:
Ցույց տվեք նրա ծովային սահմանը:
Ցույց տվեք նրա լեռնային և դաշտային մասերը (Աշխ. ատլաս, Հար. Ամերիկա):
Յերևանից ինչ ճանապարհներով կարող եք գնալ Բրազիլիա:

Բրազիլիան յուր մակարդակի մեծությամբ (մոտ 8,5 միլիոն քառ. կիլ.) առաջինն է Հար. Ամերիկայում և յերկրորդը՝ ամբողջ Ամերիկայում:

Բրազիլիայի հյուսիսային մասում ձգվում է Ամազոնի ընդարձակ դաշտավայրը, իսկ արևելքում՝ Բրազիլիական լեռնաշխարհը:

Ամազոնի դաշտավայրի միջով արևմուտքից դեպի արևելք հոսում է Ամազոն գետը, որը ջրառատության պատճառով ամբողջ 4000 կիլոմետր տարածության վրա նավագնաց է. աջ ու ձախ կողմից նա ընդունում է հսկայական վտակներ, որոնք նույնպես նավագնաց են և Ամազոնի հետ ներկայացնում են ջրային ճանապարհների մի ահագին ցանց: Բայց չնայելով դրան նավագնացությունը զարգացած չէ. գետափերին գտնվող քաղաքները մանր են և բաժանվում են իրարից հսկայական տարածությամբ: Գտնվելով հասարակածի մոտ, Ամազոնի դաշտավայրն ունի տաք և խոնավ կլիմա: Առատ անձրևների շնորհիվ արևադարձային խիտ անտառները (սելվասները) ընդարձակ տարածություն են բռնում: Վատառողջ կլիմայի պատճառով ազգաբնակությունը չափազանց նոսր է, յեղածն էլ բաղկացած է գլխավորապես տեղացի հնդիկներից (հդկացիներից), որոնք ցրված ապրում են սելվասներում և զբաղվում են ձկնորսությամբ և որսորդությամբ: Շատ ցեղեր դեռ ծանոթ չեն յերկաթին և գործ են ածում թունավորած նետեր ու նիզակներ:

Ամազոնի դաշտավայրից հարավ ձգվում է Բրազիլիական լեռնաշխարհը, որի արևելյան յեզերքը փոքր ինչ բարձրացած է և ունի միքանի հարմար նավահանգիստներ: Գետափերն ու դեպի Ատլանտյան ովկիանոսը դարձած լեռնալանջերը ծածկված են արևադարձային անտառներով, իսկ բարձրավանդակի միջին ավելի չոր մասերը՝ սավաններով: Ընդհանուր առմամբ Բրազիլիական բարձրավանդակի կլիման համեմատաբար չոր է և առողջ. այդ պատճառով ազգաբնակության մեծ մասն ապրում է այս շրջանում:

Ազգաբնակությունը: Բրազիլիայի բնակիչների թիվը 30,6 միլիոն է: Միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա ապրում է 3,6 մարդ: Ազգաբնակության նոսրության պատճառով ամեն տարի բավական մեծ թվով յեվրոպացիներ (իտալացիներ, պորտուգալացիներ, իսպանացիներ, լեհեր և այլն) բնակություն են հաստատում այստեղ:

1887 թվականից մինչև 1917 թիվը Յեվրոպայից Բրազիլիա են գաղթել 2893 հազար մարդ, որից 1224 հազարը կազմում եյին իտալացիներ, 752 հազարը՝ պորտուգալացիներ, 472 հազարը՝ իսպանացիներ և այլն:

Ինչու յեվրոպացիները գլխավորապես բնակություն են հաստատել յերկրի հարավային և հարավ-արևելյան մասերում:
Ինչո՞ւ Ամազոնի դաշտավայրը նոսր ազգաբնակություն ունի: Այդ դաշտավայրի կլիման յեվրոպացու համար նպաստավո՞ր է:

Բրազիլիայի ազգաբնակությունը բաղկացած է հնդիկներից, նեգրերից, սպիտակներից և մետիսներից: Հնդիկները յերկրի բնիկներն են և թվով այժմ հազիվ 1,5 միլիոն են: Նրանց մեծ մասը բնակություն է հաստատել ծովափերից հեռու գտնվող խուլ անկյուններում—անտառներում և տափաստաններում: Նեգրերն ու մետիսներն ապրում են արևելյան ծովեզերքում, այսինքն այնտեղ, որտեղ և յեվրոպացիները: Յեվրոպացիների մեծ մասը բաղկացած է պորտուգալական ծագում ունեցող կրեոլներից (յերկրի խոսակցական լեզուն պորտուգալականն է):

Գյուղատնտեսությունը: Բրազիլիան գյուղատնտեսական յերկիր է: Մշակված հողերը կազմում են յերկրի ամբողջ մակարդակի 0,8%-ը միայն:

Մշակված հողերի մոտ մեկերորդը բռնված է սուրճի պլանտացիաներով: Սուրճի համաշխարհային արտադրության մոտ 80%-ը Բրազիլիան է տալիս: Արտահանությունը կատարվում է Սանտոսի և Րիո-Դե-Ժանեյրոյի վրայով:

Մյուս մշակույթներից աչքի յեն ընկնում շաքարեղեգը, ծխախոտը, կակաոն և բամբակը: Շաքարեղեգի շաքարի արտադրությամբ և բամբակի բերքով Բրազիլիան հինգերորդ տեղն է բռնում: Շաքարի և բամբակի մի մասն արտահանվում է: Արտահանվում են նաև ծխախոտն ու կակաոն: Կակաոյի բերքով Բրազիլիան յերրորդ տեղն է բռնում:

Ժողովրդական սննդի համար կարևոր նշանակություն ունեն յեգիպտացորենը, բրինձը, մանիոկը և բանանը: Հարավային շրջաններում վերջերս սկսել են մշակել նաև ցորեն: Ցորենի բերքը չի բավարարում յերկրի կարիքներին:

Անասնապահությունը մեծ չափերի յե հասել և այժմ բռնում է հինգերորդ տեղը (տես № 19 աղյուսակը): Արտահանվում են կաշի և սառցրած միս:

Բրազիլիայի անտառային հարստությունը հսկայական է. յերկրի կեսը ծածկված է արևադարձային անտառներով, որտեղ աճում են բավական խոշոր ծառեր: Անտառային արտադրության մեջ առաջին տեղը բռնում է կաուչուկը (ռեզինը): Վայրի կաուչուկի համաշխարհային բերքի $2/3$-ը Բրազիլիան

է տալիս։ Արտահանության համար կարևոր նշանակություն ունեն նաև մի շարք ամուր փայտ ունեցող ծառեր։

Հանքային հարստությունները յեվ արդյունագործությունը։ Բրազիլիայում ստացվում են վոսկի, արծաթ, պլատին, ադամանդ, մոնացիտ, մանգանի և պղնձի հանքեր, տալք և այլն։ Յերկաթահանքի պաշարով նա առաջինն է Հար. Ամերիկայում, բայց այդ հանքը դեռ ևս չի շահագործվում։ Պատահում է և նավթ։

Արդյունագործության գլխավոր ճյուղը տեքստիլ արդյունագործությունն է։ Գործվածքների մեջ առաջին տեղը բռնում է բամբակեղենը, ապա մետաքսի, բրդի և ջուտի գործվածքները։ Արդյունագործության մյուս ճյուղերից նշանավոր են՝ շաքարի, ծխախոտի, գարեջրի արդյունաբերությունը։ Ընդհանուր առմամբ զարգացած են արդյունագործության այն ճյուղերը, վորոնք աշխատում են սեփական հում նյութով։

Արտաքին առևտուրը։ Բրազիլիայի արտահանության մեջ առաջին տեղն, ինչպես ասացինք, սուրճն է բռնում։ Արտահանության ամբողջ արժեքի $^2/_3$-ը տալիս է սուրճը։

Սուրճից հետո կարևոր նշանակություն ունեն միսը, կաշին, շաքարը, ծխախոտը, կակաոն, բամբակը և կաուչուկը։

Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում ցորենը, ցորենի ալյուրը, չորացրած ձուկը, քարածուխը, նավթը և զանազան գործարանային ապրանքներ (մեքենաներ, գործվածքներ և այլն)։

Բրազիլիայի հետ առևտուր անող յերկրների մեջ առաջին տեղը բռնում են Միացյալ Նահանգները, իսկ յերկրորդ տեղը՝ Անգլիան։

Արտաքին առևտուրը կատարվում է Բահիա, Պերնամբուկո, Ռիո-դե-Ժանեյրո, Սան-Պաոլո յեվ Սանտոս նավահանգիստների վրայով։

Պետական կազմը։ Բրազիլիան յուր պետական կազմով նմանվում է Հյուս. Ամեր. Միացյալ Նահանգներին և յերբեմն կոչվում է Բրազիլիական Միացյալ Նահանգներ։ Նա բաղկացած է 20 առանձին շտատից (նահանգից), մեկ տերրիտորիայից և մեկ շրջանից։ Յերկրի կառավարության գլուխն է նախագահը (պրեզիդենտը), վորն ընտրվում է չորս տարով։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին («ազգային կոնգրեսին»), վորը բաղկացած է սենատից և պատգամավորների խորհրդարանից։ Յուրաքանչյուր շտատ յուր ներքին գործերի մեջ միանգամայն անկախ է և ունի յուր խորհրդարանը։

Բրազիլիան վո՞ր գոտում է գտնվում։ Զոնային ֆակտորները գլխավորապես վո՞ր մշակույթների համար են նպաստավոր։

Բրազիլիայի տնտեսության վո՞ր ճյուղն է զարգացած։ Ի՞նչ է արտահանվում։ Արտաքին առևտուրն ի՞նչ բնույթ ունի և վո՞ր քաղաքների վրայով է կատարվում։

Հար. Ամերիկայի համր քարտեզի վրա ներկեցեք Բրազիլիայի բռնած տեղը, նշանակեցեք գլխավոր քաղաքները, հարևան յերկրները և գետերը։

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Քարտեզի վրա ցույց տվեք Արգենտինան։

Գտեք նրա սահմանները և թվեցեք այն յերկրները, վոր սահմանակից են նրան։

Արգենտինան բռնում է Ամերիկայի հարավային ծայրը։ Նա տարածվում է մոտավորապես այծեղջեր արևադարձից մինչև Հրո Յերկիր կղզին և Անդյան լեռներից մինչև Ատլանտյան ովկիանոսը։ Յուր մակերևույթի մեծությամբ (2,9 միլիոն քառ. կիլոմետր) Արգենտինան բռնում է յերկրորդ տեղը Հարավային Ամերիկայում։

Յերկրի համարյա ամբողջ մակերևույթը հարթություն է, վորի հյուսիսային մասը ցածրադիր է, իսկ հարավայինը՝ բարձրադիր։ Այդ հարթության միջին մասերում ձգվում են ընդարձակ և արգավանդ տափաստաններ, վորոնք այստեղ կոչվում են պամպասներ։ Պամպասները Արգենտինայի ժողովրդական տնտեսության կենտրոնն են կազմում, այդ պատճառով նրանք ավելի խիտ ազգաբնակություն ունեն, քան մյուս շրջանները։

Կլիման հյուսիսից դեպի հարավ փոխվում է։ Յերկրի հյուսիսային կեսն ունի մերձարևադարձային կլիմա, իսկ հարավայինը՝ բարեխառն, բայց ցուրտ ձմեռներով։

Գետերից նշանավոր է Պարանան Պարագվայ և Ուրուգվայ վտակներով։ Պարանայի գետաբերանը ներկայացնում է ծովածոց և կոչվում է Լա-Պլատա։ Այս ծոցումն է գտնվում յերկրի առևտրական ամենամեծ քաղաքը Բուենոս-Այրեսը։

Ազգաբնակությունը։ Արգենտինայի բնակիչների թիվը կազմում է մոտ 9,5 միլիոն։ Միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է 3 մարդ, այսինքն Բրազիլիայից ել պակաս։

Ազգաբնակությունն արագ թափով աճում է։ 1861 թ. Արգենտինայում կար 1,3 միլիոն մարդ, 1914—7,9 միլիոն, 1924 թ. արդեն 9,5 միլիոն։ Բնակիչների թվի այդ թափով աճումը բացատրվում է ներգաղթով։ Ամեն տարի Յեվրոպայից բավական մեծ թվով մարդիկ գաղթում են Արգենտինա։ 1857 թվականից մինչև 1917 թ. Արգենտինա յեն գաղթել մոտ 5 միլիոն յեվրոպացի, վորոնց կեսը կազմում եյին իտալացիները, իսկ $^1/_3$-ը իսպանացիներ։

Յեվրոպացիները գրավելով լավագույն հողերը, տեղացիներին քշեցին վատառողջ շրջանները կամ վոչնչացրին։ Այսպիսով Արգենտինայի ազգա-

բնակության տիրող մասն այժմ կազմում են սպիտակները (եվրոպացիները)։ Տեղացիների (հնդիկների) թիվը հազիվ մի քանի հարյուր հազար է կազմում։

Երկրի պաշտոնական լեզուն իսպանականն է։

Գյուղատնտեսություն։ Արգենտինայի ամբողջ մակերդակն, ինչպես տեսանք, հավասար է 2,9 միլիոն քառ. կիլոմետրի կամ 290 միլիոն հեկտարի։ Այդ տարածությունից 40 միլիոն հեկտարը բռնված է անտառներով, իսկ 50 միլիոնը կազմում են անպետք հողեր (լեռներ ու անջրդի տեղեր)։ Մնացած 200 միլիոն հեկտարը կարելի յե օգտագործել անասնապահության և յերկրագործության համար, բայց մշակված է ընդամենը 20 միլիոն հեկտար։ Կլիման մի կողմից, հողի արգավանդությունը մյուս կողմից՝ չափազանց նպաստավոր են յերկրագործության համար։ Արգենտինայի հողն այնքան արգավանդ է, վոր կարելի յե 20 տարի իրար հետևից ցանել առանց պարարտացման։ Յեվ յեթե մշակված հողերը համեմատաբար քիչ տարածություն են բռնում, դրա գլխավոր պատճառն անշուշտ ազգաբնակության նոսրությունն է։

Մինչև 1870 թվականը Արգենտինան անասնապահական յերկիր եր. սեփական հացը չեր բավականանում յերկրի կարիքներին և մեծ չափով ներմուծվում եր։ Այդ թվականից սկսած ցանքսերի մակերդակն աճում է արագ թափով և 15 տարվա ընթացքում համարյա կրկնապատկվում է. արոտատեղերը կրճատվում են և անասնապահությունն սկսում է յերկրորդական դեր խաղալ ժողովրդական տնտեսության մեջ։ Այժմ Արգենտինայում այնքան հացահատիկ է ստացվում, վոր նրա մի մասն արտահանվում է։

Յերկրագործության գլխավոր կենտրոնը կազմում են պամպաները. այստեղ մշակում են ցորեն, յեգիպտացորեն, վուշ յեվ վարսակ։ Յերկրի հյուսիսային շրջաններում տարածված է շաքարեղեգը, Անդերի ստորոտներում՝ խաղողը և պտղատու ծառեր։ Հացահատիկների մշակությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

	Միլիոն հեկտար	Միլիոն կվինտալ
Ցորեն	7,8	52
Յեգիպտացորեն	4,5	71
Վարսակ	1,3	12
Գարի	0,4	3
Հաճար	0,2	—

Տնտեսությունը եքստենսիվ է. բերքատվությունը ցածր է (ինչու)։

Համաշխարհային շուկային հաց մատակարարող յերկրների մեջ Արգենտինան բռնում է յերկրորդ տեղը (Կանադա)։ Ցորենի արտահանությամբ նա հետ է մնում Կանադայից և Միացյալ Նահանգներից (1926 թ.). վարսակի արտահանությամբ առաջինն է։ Յեգիպտացորենի արտահանությամբ բռնում է առաջին տեղը։

Հացահատիկներից հետո մեծ նշանակություն ունի վուշը, վորի բերքի 3/4-ն արտահանվում է։ Ժողովրդական տնտեսության համար մեծ նշանակություն ունի նաև անասնապահությունը։ Անասունների թվով Արգենտինան բռնում է չորրորդ տեղը ամբողջ յերկրագնդի վրա (Հնդկաստան, Միաց. Նահանգներ և ԽՍՀՄ). բայց վորովհետև բնակիչների թիվը փոքր է, այդ պատճառով Արգենտինան անասուններով ավելի լավ է ապահովված, քան վորևե ուրիշ յերկիր։ Հենց նույն այդ պատճառով էլ նա հնարավորություն ունի արտահանելու համաշխարհային շուկա մեծ քանակությամբ միս, բուրդ և կաշի, իսկ վերջերս նաև կաթնեղեն։ Միայն սառցրած մսի արտահանությունը պատերազմից առաջ կազմում եր 6,5 միլիոն ցենտներ։

Մսի արտահանությամբ Արգենտինան վերերորդ տեղն է բռնում (աղ. № 10)։
Բրդի արտահանությամբ Արգենտինան վերերորդ տեղն է բռնում (աղ. № 18)։

Հանքային հարստությունները յեվ արդյունագործությունը։ Հանքային արդյունաբերությունը Արգենտինայում այնքան էլ զարգացած չէ. ստացվում է գլխավորապես նավթ, արծաթ, վոսկի և պղինձ։

Արդյունագործությունը զբաղվում է գլխավորապես սննդամթերքների վերամշակությամբ։ Առաջին տեղը բռնում են մսեղենի գործը և ալյուրի արտադրությունը։

Առևտուրը։ Յուր արտաքին առևտրի մեծությամբ Արգենտինան առաջինն է Հար. Ամերիկայում։ Արտահանության ամբողջ արժեքի 67%-ը տալիս է յերկրագործությունը, իսկ 30%-ը անասնապահությունը։ Այսպիսով Արգենտինայի արտահանությունը ցույց է տալիս, վոր այդ յերկիրը գերազանցորեն գյուղատնտեսական յերկիր է։ Ներմուծության մեջ կարևոր նշանակություն ունեն գործվածքները և յերկաթեղենը, վորոնք կազմում են ամբողջ ներմուծության 45%-ը։ Այստեղից յերևում է, վոր Արգենտինան արդյունագործական յերկրների համար կարևոր շուկա յե։

Արգենտինայի արտաքին առևտրի մեջ ամենախոշոր դեր կատարողներն են Անգլիան և Միացյալ Նահանգները։

Արգենտինան հացահատիկների համաշխարհային շուկայում յուր ցորենի, յեգիպտացորենի և վարսակի արտահանությամբ հանդես է գալիս վորպես մրցակից ԽՍՀՄ-ի։

Պետական կազմը։ Արգենտինան հանրապետություն է։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է սենատից և պատգամավորների խորհրդարանից։ Կառա-

վարության գլուխ է կանգնած նախագահը (պրեզիդենտը)։ Նրան է վերապահված նախարարներ, ինչպես և զանազան բարձրաստիճան պաշտոնյաներ նշանակելը և այլն։

Արգենտինայի ժողովրդ. տնտեսությունն ինչ բնույթ ունի։
Ինչու յեվրոպական գաղթականները ձգտում են դեպի Արգենտինա։
Գյուղատնտեսությունն եքստենսիվ է, թե ինտենսիվ. ինչու։
Ի՞նչ է արտահանվում։
Հար. Ամերիկայի համր քարտեզի վրա ներկեցեք Արգենտինան, նշանակեցեք գլխավոր քաղաքները և հարևան յերկրները։

ԽՍՀՄ-Ի ԱՍԻԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ.

8. ՅԱՊՈՆԻԱ

Յապոնիան Ասիայի ամենաարևելյան պետությունն է. այդ պատճառով նա յերբեմն կոչվում է «Ծագող արևի յերկիր»։ Գտնվելով բազմաթիվ կղզիների վրա և շրջապատված լինելով ծովերով ու ովկիանոսով, Յապոնիան Անգլիայի նման օգտագործել է յուր աշխարհագրական դիրքը և դարձել Ասիայի ամենախոշոր, իմպերիալիստական պետությունը։ Յերկրի կղզային դրության շնորհիվ յապոնացիներն ընտելացել են ծովին և դարձել հայտնի ծովագնացներ։ Նրանք այժմ բազմաթիվ նավերով յերթևեկում են ովկիանոսների վրայով և առևտրական կապեր հաստատում զանազան յերկրների հետ։ Յապոնիան «Ասիայի Անգլիան է»։

Յապոնիայի կորիզը կազմում են բուն Յապոնական կղզիները—Յեսսո, Հոնդո կամ Նիպոն, Սիկոկու և Կիուսիու։ Յապոնական կղզիներից դեպի հյուսիս աղեղնաձև ձգվում են Կուրիլյան կղզիները, իսկ դեպի հարավ՝ Րիու-Կիու կղզիների շարքը և Ֆորմոզան։ Բացի դրանից Յապոնիային են պատկանում նաև Սախալինի կեսը և բազմաթիվ մանր կղզիներ, վորոնց թիվը 2.000-ից անց է։ Զբավականանալով այդչափ կղզիներով, նա գրավումներ է արել նաև Ասիայի մայր ցամաքի վրա (Կորեա, Կվանտուն թերակղզու հարավային մասը՝ Պորտ-Արտուր նավահանգստով, Կիաոչաու)։

Յապոնիայի և նրա կալվածների մակերդակի մեծությունը յերևում է հետևյալ աղյուսակից.

Յապոնիա (բուն յապոնական կղզիները) . . . . 385.522 քառ. կիլոմ.
Յապոնիայի կալվածները . . . . 298.291 » »
Յապոնիան յուր բոլոր կալվածներով . . . . մոտ 684.000 » »

Ցույց տվեք Յապոնիային պատկանող գլխավոր կղզիները և նրանց շարքերը։ Այդ կղզիներն ինչ ուղղությամբ են ձգվում։

Կուրիլյան, Յապոնական և Րիու-Կիու կղզիներն, աղեղնաձև ձգվելով, Ասիայի հետ գոյացնում են մի քանի ծովեր. վորո՞նք են այդ ծովերը. ցույց տվեք։

Յապոնիայի մակերդակի մեծությունը համեմատեցեք Արևմտյան Յեվրոպայի խոշոր պետությունների մակերդակի հետ։

Ափերի գծագրությունը։

Յապոնիայի ափերը շատ են կտրտված և հարուստ են հարմար խորշերով և ծոցերով, վորոնք պաշտպանված են փոթորիկներից և ալեկոծություններից։ Այդ է պատճառը, վոր Յապոնիան ունի բազմաթիվ առաջնակարգ նավահանգիստներ։ Նագասակին, Կոբեն և Յոկոհաման ամբողջ Ասիայի լավագույն նավահանգիստներն են համարվում։

Մակերևույթի կազմությունը։

Յապոնիայի բոլոր կղզիները լեռնոտ են և ունեն բազմաթիվ հանգած և գործող հրաբուխներ։ Միայն Կուրիլյան կղզիների վրա հաշվում են 13 գործող հրաբուխ։ Հանգած հրաբուխների մեջ աչքի յե ընկնում Ֆուզի-Յամաճ, վորը կոնի ձև ունի և տարվա մեծ մասը ծածկված է ձյունով։ Հաճախակի տեղի ունեցող յերկրաշարժները մեծ ավերածություններ են անում Յապոնիայում։ Վերջին ուժեղ յերկրաշարժը տեղի ունեցավ 1923 թ. սեպտեմբերին։ Այդ ժամանակ սպանվեցին 225.000 մարդ, 450.000 հոգի վիրավորվեցին և ավելի քան 2 միլիոն մարդ մնաց անօթևան։

Յերկրի մակերևույթը լեռնային բնույթ ունի. այդ պատճառով Յապոնիայի գետերը կարճ են, արագահոս և ունեն բազմաթիվ ջրվեժներ ու սահանքներ։ Նրանք նավարկելի չեն, բայց օգտագործվում են դաշտերը վոռոգելու և ելեկտրիֆիկացիայի համար։

Յապոնիայում ընդարձակ հարթություններ չկան, յեղածներն էլ մանր են և ավելի շուտ ներկայացնում են հովիտներ ու ծովափնյա նեղ դաշտավայրեր։ Ազգաբնակությունը կենտրոնացած է գլխավորապես հովիտներում։ Այդպիսի հովիտներում են գտնվում Տոկիոյի, Յոկոհամայի, Կիոտոյի, Ոսակայի նման խոշոր քաղաքները։

Կլիման չեվ բուսականությունը։

Յապոնիային պատկանող կղզիները, ինչպես ասացինք, ձգվում են հյուսիսից դեպի հարավ, միջօրեականի ուղղությամբ։ Այս հանգամանքը մեծ ազդեցություն է անում Յապոնիայի կլիմայի վրա։ Կուրիլյան կղզիների կլիման համարյա բևեռային է, մինչդեռ Ֆորմոզա կղզին այնքան տաք է, վոր ծածկված է արևադարձային անտառներով։ Բուն Յապոնական կղզիների կլիման (չհաշված Յեսսոն) տաք է, մեղմ և խոնավ։ Կուրո—Սիվո տաք հոսանքը, սկիզբն առնելով տաք գոտում, անցնում է Յապոնական կղզիների մոտով և վողողում նրանց ափերը։ Ամառը փչում է հարավ-արևելյան մուսսոնը, վորը հագեցած լինելով գոլորշիներով, առատ մթնոլորտային տեղումներ է բերում։ Ձմեռը տաք և և մեղմ։ Մշտադալար ծառերը, թեյի թուփը, թթենին և այլն—այստեղ աճում են հաճարենու և թխկու հետ խառն, իսկ դաշտերում մշակվում են բրինձ և բամբակ։ Դեպի հյուսիս կլիման հետզհե-

տե ցրտում է, այնպես, վոր Յեսսո կղզին ծածկված է փշատերև անտառներով:

Ազգաբնակությունը:

Յապոնացիները պատկանում են դեղին կամ մոնղոլական ցեղին: Նրանց նախորդները գաղթել են Ասիա մայր ցամաքից և, անցնելով Կորեա թերակղզու վրայով, գրավել են կղզիները և հպատակեցրել այդ կղզիների բնիկներին: Յեկվորների և բնիկների խառնուրդից առաջացել է յապոնական ժողովուրդը: Կղզիների նախկին բնակիչներից մնացել են միայն մազմզոտ այնոսները, վորոնք ապրում են ցուրտ Յեսսոյում և թվով մի քանի տասնյակ հազար են:

Բուն Յապոնիայի բնակիչների թիվը է 60 միլիոն: Միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է մոտ 155 մարդ: Ազգաբնակության խտությամբ Յապոնիան գերազանցում է նույնիսկ բարձր տեխնիկա ունեցող Գերմանիայից: Բնակիչների խոշոր մասն ապրում է Հոնդո կղզում, վորի բոլոր քիչ թե շատ պետքական հողերը մշակված են: Այստեղ են գտնվում Յապոնիայի ամենախոշոր քաղաքները և արդյունաբերական կենտրոնները: Խիտ ազգաբնակություն ունեն նաև Սիկոկու և Կիուսիու կղզիները. վերջինիս վրա յեն գտնվում Յապոնիայի ամենահարուստ ածխահանքերը: Յեսսոն ցուրտ կլիմայի և լեռնոտ լինելու պատճառով նոսր ազգաբնակություն ունի:

Յապոնիայի ամբողջ ազգաբնակության $80^0/_0$-ն ապրում է գյուղերում:

Գյուղատնտեսություն:

Ինչպես տեսանք, Յապոնիայի մակերդակը չափազանց լեռնոտ է, այնպես վոր հարթությունները կազմում են նրա $^1/_8$ մասը միայն: Բայց կլիմայական պայմաններն այնքան նպաստավոր են, վոր յերկրագործությունը մեծ արդյունք է տալիս:

Յապոնիայի ամբողջ մակերդակի $43^0/_0$-ը կազմում են լեռներ և անպետք հողեր, $38^0/_0$-ը՝ անտառներ, միայն $19^0/_0$-ը՝ հարմար հողեր են, այսինքն ոգտագործվում են գյուղատնտեսության համար:

Յապոնիայի գյուղատնտեսության համար չափազանց բնորոշ է հողամասերի փոքրությունը: Յուրաքանչյուր գյուղական ընտանիք հազիվ մեկ հեկտար հող ունի: 3—5 հեկտար ունեցողը կալվածատեր է համարվում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե հողամասերն ինչպես են բաշխված գյուղական ընտանիքների մեջ: (Տես աղ. № 44. 181 յ.)

Աղյուսակից յերևում է, վոր բոլոր գյուղական ընտանիքներից 5.090 հազարը կամ $89^0/_0$-ը 2 շո-ից պակաս հող ունի, իսկ 591 հազարը կամ $21^0/_0$-ը՝ 2 շոից ավել: Յերկրի մշակվող հողերի $^3/_5$-ը պատկանում է աշխատավոր գյուղացիության, իսկ մնացածը՝ մասնավոր սեփականատերերին, վորոնք իրենց հողերը կապալով են տալիս գյուղացիներին:

Աղյուսակ № 46.

Ընտանիքին պատկանող հողամասերի մեծությունը	Ընտանիքների թիվը (հազարներով)	$^0/_0$ $^0/_0$
0,5 շո-ից պակաս . . .	1.938	35
0,5—1 շո *)	1.819	33
1—2 »	1,133	21
2—3 »	340	6
3—4 »	155	3
5-ից ավել	96	2

Հողի փոքրության պատճառով յապոնացին չի դիմում վոչ ընտանի կենդանու և ոչ էլ զանազան մեքենաների ոգնության: Ամեն ինչ ինքն է անում: Հողամասը մշակվում է չափազանց մեծ խնամքով: Չբավականանալով նրանով, վոր հողը կարող է տալ, յապոնացին պարարտացնում է յուր հողամասը զանազան հանքերով ու ձկներով և այնտեղ, վորտեղ այդ հնարավոր է, մի տարում յերկու բերք է վերցնում:

Գլխավոր մշակույթը կազմում է բրինձը, վորի բերքի չափով Յապոնիան յերկրորդն է ասիական յերկրների մեջ: Միջին հաշվով տարեկան ստացվում է մոտ 100 միլիոն կվինտալ բրինձ, վորը սակայն յերկրի կարիքներին չի բավարարում, ուստի ստիպված են լինում տարեկան մոտ 5 միլիոն կվինտալ էլ ներմուծել:

Լեռնային տեղերում, վորտեղ հնարավոր չի լինում բրինձ մշակել, ցանում են ցորեն և գարի: Մյուս հացերից կարևոր են հաճարը, վարսակը և յեգիպտացորենը: Զանազան տեսակի լոբիաներն ու կորեկը մեծ դեր են կատարում տեղական բնակչության սննդի մեջ: № 8 աղյուսակը գաղափար է տալիս Յապոնիայի հինգ գլխավոր հացահատիկների բերքի մասին:

Հացաբույսերից վորո՞նք են առանձնապես կարևոր յապոնացիների համար: Բրնձի դաշտերը ամբողջ ցանքսի վո՞ր տոկոսն է կազմում:

Ինչո՞ւ յապոնացիները գերադասում են փոքրիկ հողամասում բրինձ ցանել և վոչ թե ցորեն (նկատի ունեցեք բերքը):

Հաշվեցեք թե ո՞րքան կվինտալ կամ փութ հացահատիկ է ընկնում (հաշվելով աղյուսակի տվյալները):

Տեխնիկական բույսերից մեծ նշանակություն ունեն

Ծխախոտը, տարեկան մոտ 700 հազար կվինտալ
Բամբակը, » » 15 » »
Վուշը, » » 290 » »

Վերջին երկուսը յերկրի կարիքներին չեն բավարարում:

*) Շո=0,9 դեսյատինի:

Թեյի պլանտացիաները կազմում են մոտ 50 հազար հեկտար: Թեյի բերքով (մոտ 40 հազար տոնն) Ճապոնիան հետ է մնում Չինաստանից, Հնդկաստանից և Ցեյլոնից ոչ միայն քանակով, այլ և որակով: Թեյի գլխավոր մասը գործադրվում է երկրի ներսը:

Բայց արտահանության համար խոշոր նշանակություն ունի **շերամապահությունը**: 1923 թ. ծառերի տնկարաններով բռնված էր 617 հազար հեկտար, որից 525 հազար հեկտարը կազմում էին թթենու այգիները: Շերամապահության չափով Ճապոնիան առաջինն է ամբողջ երկրագնդի վրա: Բոժոժի բերքը տարեցտարի մեծանում է, ինչպես այդ ցույց է տալիս աղյուսակը.

Աղյուսակ № 47.

1909—13 թ.	156 հազար կիլոգրամ
1914—18 թ.	210 » »
1919—23 թ.	250 » »
1924 թ.	260 » »
1925 թ.	300 » »
1926 թ.	325 » »

Մետաքսի մեծ մասը գործադրվում է երկրի ներսը, բայց մի խոշոր մասն էլ արտահանվում է (գլխավորապես Միացյալ Ն-ր և Ֆրանսիա) 1925 թ. Ճապոնիան արտահանել էր 2300 միլիոն ռուբլու ապրանք, որից 880 միլիոնը կամ $38^0/_0$ կազմում էր մետաքսը: Մետաքսի համաշխարհային կարիքի $40^0/_0$-ը ծածկում է Ճապոնիան:

Անասնապահությունը Ճապոնիայում չափազանց աննպաստ պայմաններում է գտնվում: Համարյա բոլոր պետքական հողերը մշակված են և արոտատեղերի ու խոտհարքի համար շատ քիչ տարածություն է մնում: Հողը մշակում են ձեռքով, պարարտացնում են հանքերով ու ձկներով, կաթնեղեն ու միս չեն գործածվում և ոչխարի համար հարմար տափաստաններ չկան: Պարզ է, որ այսպիսի պայմաններում անասնապահությունը խոշոր չափերի չէր կարող հասնել: Քիչ թե շատ մեծանում է այծերի և խոզերի քանակը: Դա էլ բացատրվում է նրանով, որ արոտատեղի պակասության պատճառով ժանր տնտեսության համար ձեռնտու չէ պահել խոզ ու այծ:

№ 9 աղյուսակից պարզեցեք, թե Ճապոնիան անասունների թվով վերջերորդ տեղն է բռնում:
Գլխավոր անասունները որոնք են:

Ճապոնացիները մի քանի սախական ժողովուրդների նման մսի փոխարեն մեծ չափով գործ են ածում ձուկ: Բրինձը և ձուկը Ճապոնիայի ժողովրդական սննդի մեջ նույն դերն են կատարում, ինչ որ հացը և միսը եվրոպական և ամերիկական երկրներում: Այդ է պատճառը, որ ձկնոր-

սությունը Ճապոնիայում խոշոր չափերի չէ հասել: Ձկնորսությամբ պարապողների թվով Ճապոնիան առաջինն է ամբողջ աշխարհում: Որսած ձկան քանակով էլ նա գրավում է առաջնակարգ տեղերից մեկը: Դա բացատրվում է նրանով, որ Ճապոնիան շրջապատող ծովերը չափազանց հարուստ են ձկներով և զանազան ծովային կենդանիներով: Ամենահարուստ ձկնորսարանները գտնվում են Եեզոյի և Սախալինի ափերին. այնտեղ են որսում այն ձկները, որոնք առանձնապես կարևոր են ժողովրդական սննդի համար: Բնորոշ է և այն, որ ճապոնացիները ձուկը (գլխավորապես հարինգը) գործադրում են հողերը պարարտացնելու համար: Այդ նպատակով ձկները թաղում են հողում և այնքան պահում, մինչև որ նրանք սկսում են քայքայվել, հոտել. որից հետո նրանք պատրաստ են պարարտացման համար:

Ինչպես տեսանք, Ճապոնիայի ամբողջ մակերեսի $38^0/_0$-ը բռնված է **անտառով**, որը երկրի տնտեսության մեջ բավական խոշոր դեր է կատարում: Անտառից ստացվում է շենքերի համար փայտ (երկրաշարժից պաշտպանվելու համար ճապոնացիներն իրենց տները փայտից են շինում), վառելիք և փայտեղեն ատաղձագործության համար: Ճապոնիայում պատահող ծառերի տեսակները բազմազան են. այստեղ կարելի է պատահել և հյուսիսային, և միջձարևադարձային, և արևադարձային տիպի անտառներ: Կարևոր նշանակություն ունեն ժանավանդ քափուրի և լաքայի ծառերը: Առաջինից ատաղձագործության համար ընտիր փայտ է ստացվում, իսկ երկրորդից՝ ճապոնական լաքը:

Հանքային հարստությունները:

Ճապոնիայի տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունի **քարածուխը**, որը տարածված է գլխավորապես Եեզո և Կիուսիու կղզիներում:

Քարածխի արտադրության գլխավոր կենտրոնը Նագասակին է: Թե քարածխի արտադրությունը ինչպիսի արագ քայլերով է աճել, այդ երևում է նրանից, որ 1900 թ. ստացվել է ընդամենը մոտ $7^1/_2$ միլիոն տոնն, իսկ այժմ արտադրվող քարածխի քանակը հասնում է մոտ 30 միլիոն տոննի:

1925 թ. Ճապոնիան արտահանել է 33 միլիոն յենի քարածուխ, իսկ ներմուծել է 24,5 միլիոնի, այդ նշանակում է, որ սեփական քարածուխը բավարարում է երկրի կարիքներին և դեռ մի մասն էլ արտահանվում է: Բայց պետք է նկատի ունենալ, որ ճապոնական քարածուխը ցածր որակի է, և պաշարն էլ ընդամենը մոտ 8 միլիարդ տոնն է (մինչդեռ Միաց. Նահանգներում մոտ 3,8 տրիլլիոն տոնն է, Կանադայում—մոտ 1,2 տրիլլիոն, Չինաստանում—մոտ 1 տրիլլիոն, Խ. Ս. Ֆ. Մ-ի մեջ $^1/_2$ տրիլլիոն, Անգլիայում—761 միլիարդ և այլն): Այդ է պատճառը, որ Ճապոնիան առանձին ուշադրություն է դարձնում նավթի և «սպիտակ ածխի» վրա:

Ճապոնիան նավթով հարուստ չէ. արտադրվող նավթի քանակությամբ

նա հետ է մնում մի շարք յերկրներից և վորովհետև այդ նավթը չի բավարարում յերկրի կարիքներին, ուստի նա ստիպված է դրսից ներմուծել: Ճապոնական կապիտալիստները նավթային մեծ կոնցեսսիաներ են վերցրել Սախալինում, Մանջուրիայում և Չինաստանում:

Վառելիքի հետ միասին կարևոր նշանակություն ունի նաև «սպիտակ ածուխը», այսինքն գետերի էներգիան: Ճապոնիան լինելով լեռնոտ յերկիր, ունի կարճ, բայց արագահոս գետեր: Այդ գետերի ընդհանուր կարողությունը հաշվում են մոտ 8 միլիոն ձիու ույժ, վորից մոտ 2 միլիոնը օգտագործվում է թե արդյունագործության և թե լուսավորության համար:

Ճապոնիան աղքատ է նաև յերկաթահանքով, վորը չի բավարարում առաջորեն աճող ծանր ինդուստրիայի կարիքներին: Դրան ավելացրեք և այն, վոր յերկաթի պաշարը, նույն իսկ այն չափով, վոր այժմ արտադրվում է, կարող է բավականանալ միայն 50 տարի: Ահա թե ինչու ճապոնական իմպերիալիզմը ձգտում է գրավումներ անել Չինաստանում, վորի հարուստ յերկաթահանքերը կարող էյին ապահովել ճապոնական արդյունագործությունը:

Մյուս հանքերից կարևոր է պղինձը, վորի արտադրությամբ նա չորրորդ տեղն է բռնում ամբողջ յերկրագնդի վրա (Միաց. Նահանգներ, Չիլի և Բելգ. Կոնգո):

Արդյունագործություն:

Համաշխարհային պատերազմը մեծ զարկ տվեց Ճապոնիայի արդյունագործությանը: Անգլիան և Գերմանիան զբաղված լինելով պատերազմով ժամանակավորապես քաշվեցին ասիական շուկայից: Այս հանգամանքից օգտվեց Ճապոնիան և կարճ ժամանակում յուր արդյունագործությունը հասցրեց խոշոր չափերի, ինչպես այդ ցույց է տալիս աղյուսակը

	Արդյունագործության մեջ դրված դրամագլուխը:
1915	401 միլիոն յեն
1916	1.101 » »
1917	2.078 » »
1918	3.180 » »
1919	4.302 » »
1920	6.671 » »

Արագորեն աճել է ոչ միայն արդյունագործության մեջ դրված դրամագլուխը, այլև գործարանների և նրանցում աշխատող բանվորների թիվը: 10 բանվորից ավել ունեցող հիմնարկությունների թիվը և բանվորների քանակը ըստ վերջին յերկու վիճակագրության հետևյալն է

1914 թ. կար 16 հազար հիմնարկ. 916 հազար բանվորով.
1919 թ. » 24 » » 1.391 » »

1924 թ. տեղեկությունների համաձայն 5-ից ավել բանվոր ունեցող գործարաններում աշխատում էյին ավելի քան 2,1 միլիոն բանվոր:

Ճապոնական արդյունագործական գլխավոր ճյուղը տեքստիլ արդյունագործությունն է: XX-րդ դարի սկզբներում դեռ ևս խոշոր նշանակություն ուներ մետաքսի մշակույթը, բայց այժմ նա բավական հետ է մնացել բամբակի արդյունագործությունից: Բամբակի արդյունագործության զարգացմամբ Ճապոնիան այժմ յերկրորդ տեղն է բռնում ասիական յերկրների մեջ (առաջինը Հնդկաստանն է): Մեծ չափերի է հասել նաև բրդի արդյունագործությունը: Թե բամբակի և թե բրդի արդյունագործության համար հում նյութը դրսից է ստացվում: 1921 թ. պատրաստված բամբակի գործվածքները և մանվածքները գնահատվում էր 663 միլիոն ռուբլի, մետաքսի գործվածքները—503 միլիոն, բրդի ապրանքները—163 միլիոն:

Բերովի հում նյութով է աշխատում նաև ծանր արդյունագործությունը (մետաղագործությունը): Արտասահմանյան պողպատից է կախված նավակառուցումը, վորը պատերազմի վերջանալու նախորյակին 10 անգամ ավելի մեծ էր, քան պատերազմի սկզբին: Արդյունագործության մյուս ճյուղերից կարևոր են ելեկտրական և քիմիական արդյունագործությունը, լուցկու, կաշվի արդյունագործությունը և բուսական յուղի արտադրությունը:

Ճապոնական արդյունագործության գլխավոր կենտրոններն են Ոսական, Նագոյան և Տոկիոն: Ոսական յուր բամբակի արդյունագործության նարգացման պատճառով կոչվում է ճապոնական Մանչեստեր:

Բացի գործարանային խոշոր արդյունագործությունից Ճապոնիայում մեծ չափով տարածված է նաև տնային մանր արդյունագործությունը, վորն այստեղ հասել է բարձր կատարելագործության: Ամբողջ յերկրագնդի վրա հռչակված են փայտից, բրոնզից, հախճապակուց, փղոսկրից պատրաստած գեղարվեստական իրերը, մետաքսե ասեղնագործ գործվածքները, խըսիրները և այլն:

Հաղորդակցության միջոցները:

Ցամաքային ճանապարհներից ամենամեծ նշանակությունը յերկաթուղիներն ունեն, վորոնց ընդհանուր յերկարությունն է 18 հազար կիլոմետր: Յերկաթուղային ցանցի $^{3}/_{4}$-ից ավելին պատկանում է պետության, իսկ մնացածը՝ մասնավոր մարդկանց:

Ճյուղերով և հասարակ ճանապարհներով, ինչպես և քաղաքների փողոցներով, ապրանքների և մարդկանց փոխադրությունը կատարվում է նաև յերկանիվ սայլակներով, վորոնց քաշում են վոչ թե կենդանիները, այլ մարդիկ:

Բայց անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի ծովը: Ծովեզերային

գծի մեծությունը, բազմաթիվ հարմար նավահանգիստները հնարավորություն են տվել Յապոնիային զարգացնելու նավագնացությունը։ Յապոնական նավատորմի ընդհանուր տոննաժը պատերազմից առաջ 1, 6 միլիոն տոնն էր, իսկ այժմ մոտ 4 միլիոն տոնն է։ Համաշխարհային նավագնացության մեջ Յապոնիան յերրորդ տեղն է բռնում (Անգլիա, Միաց. Նահանգներ)։ Յապոնիան յուր նավատորմն ոգտագործում է վոչ միայն յուր առևտրի համար, այլև կարողանում է փոխադրել մի շարք ասիական յերկրների ապրանքներ։ Յապոնական շոգենավերն այժմ կանոնավոր կերպով յերթևեկում են մի կողմից ասիական և մյուս կողմից՝ Ավստրալիայի, Ամերիկայի և Յեվրոպայի նավահանգիստների միջև։ Մի քանի ծովային ճանապարհների վրա յապոնացիները կարողացել են դուրս մղել նույնիսկ անգլիացիներին։

Արտաքին առևտուր։ Յապոնիայի ժողովրդական տնտեսության զարգացման հետ մեծանում է և արտաքին առևտուրը։ Միայն պատերազմի ընթացքում նրա արտաքին առևտուրը ավելի քան կրկնապատկվեց։ Արտաքին առևտրի մեծությամբ Յապոնիան այժմ 7-րդ տեղն է բռնում (Անգլիա, Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Գերմանիա, Հնդկաստան և Կանադա)։ Ունենալով գործարանային ուժեղ արդյունագործություն, նա ներմուծում է գլխավորապես հում նյութ (բամբակ, յերկաթ, բուրդ և այլն), իսկ արտահանում է կիսաֆաբրիկատներ և պատրաստի իրեր (հում մետաքս, բամբակի գործվածքներ և մանվածք, մետաքսի գործվածքներ և այլն)։

Արտահանվող ապրանքների մեջ առաջին տեղը բռնում է հում մետաքսը, վորը կազմում է արտահանության արժեքի 38,1%-ը, իսկ բամբակի և մետաքսի գործվածքները՝ մոտ 30%։ Այսպիսով արտահանության ամբողջ արժեքի մոտ 0,7-ը տալիս են այդ մի քանի ապրանքները։ Բացի դրանցից՝ արտահանում են նաև ապակե իրեր, լուցկի, մեքենաներ, խաղալիքներ, շաքար և այլն։ Բայց այդ բոլորն, ի հարկե, մետաքսին չեն հասնի։

ՅԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 1925 Թ.

(%-ներով ամբողջ արժեքի նկատմամբ)

Ներմուծություն		Արտահանություն	
Բամբակ	35,8	Հում մետաքս	38,1
Բուրդ	4,7	Մետաքսի գործվածքներ	5.1
Բուսպ	4,2	Բամբակի մանվ. և գործվ.	24,2
Բրինձ	4,7	Ապակի և կավե իրեր	2,3
Շաքար	2,9	Թեյ	0,6
Յերկաթ	3,2	Շաքար	1,4
Մեքենաներ	3,5		

Պետություններից Յապոնիայի հետ մեծ չափով առևտուր են անում

Միացյալ Նահանգները և Հնդկաստանը։ Ամբողջ ներմուծության 1/4-ը տալիս են Միացյալ Նահանգները. յերրորդ տեղը բռնում է Անգլիան։ ԽՍՀՄ-ից Յապոնիան արտահանում է փայտ, ձուկ, յերկաթ, ցինկի հանք, կտավատի սերմ և այլն։

Գլխավոր քաղաքներ։ Տոկիո (մոտ 2 միլիոն բնակիչ)—մայրաքաղաք, առևտրական կենտրոն, տեքստիլ արդյունագործություն։ Ոսակա (2 միլիոն բնակիչ)—արդյունագործության խոշոր կենտրոն. մեքենաների կառուցում. տեքստիլ արդյունագործության կենտրոն։ Յոկոհամա—արտաքին առևտրով առաջին նավահանգիստն է։ Առևտրական կենտրոն. Նավակառուցում։ Կոբե (644,000 բնակիչ)—խոշոր նավահանգիստ է, մրցում է Յոկոհամայի հետ. առևտրա-արդյունագործական կենտրոն է. մեքենաների կառուցում։ Նագասակի—նավահանգիստ է։ Նավակառուցում։ Հակոդատե—նավահանգիստ Յեսսո կղզու վրա։

Պետական կազմ։ Յապոնիան սահմանադրական միապետություն է. բարձրագույն իշխանությունը պատկանում է կայսրին (միկադոյին), վորի իրավունքները սահմանափակված են պարլամենտով։ Վերջինս բաղկացած է յերկու խորհրդարանից—պատգամավորների խորհրդարան և վերին խորհրդարան։ Վերին խորհրդարանի կեսը նշանակվում է միկադոյի կողմից, իսկ մյուս մասը ընտրվում է հարկատուներից։ Պատգամավորների խորհրդարանը բաղկացած է 464 պատգամավորներից, վորոնք ընտրվում են չորս տարով։ Կանայք ընտրության իրավունքից զուրկ են։ Ընդհանուր առմամբ յապոնական սահմանադրությունը շատ հեռու է «դեմոկրատիայից»։ Միկադոն և վերին խորհրդարանը շատ ավելի մեծ իրավունքներ ունեն, քան ներկայացուցիչների խորհրդարանը։

Մինիստրների կաբինետը, յեվրոպական յերկրների պրակտիկային հակառակ, պարլամենտի առաջ պատասխանատու չե իր գործունեության համար։ Ծովային և պատերազմական մինիստրները նշանակվում են անպայման ռազմական և ծովային հիմնարկների բարձրագույն պաշտոնյաներից։ Այդ հանգամանքը բարձրացնում է միլիտարիստների ազդեցությունը։ Յեթե կաբինետը այդ միլիտարիստներին այս կամ այն պատճառով դուր չգա, նրանք կարող են հրաժարվել կաբինետի մեջ մասնակցելուց, այդ պատճառով կառավարության կազմակերպումը անհնարին կդառնա։ Յապոնական պրակտիկայում յեղել են դեպքեր, յերբ կաբինետը հրաժարական է տվել պատերազմական մինիստրի պաշտոնի համար մարդ չգտնելու պատճառով։

Յապոնիայի բուրժուական կուսակցությունները շատ յերիտասարդ են, վորովհետև յերկար ժամանակ չե, վոր յապոնական բուրժուազիան պետության մեջ իշխող դրություն է գրավել։ Յապոնական բուրժուական կուսակ-

ցությունների բնորոշ կողմն այն է, որ նրանք չունեն որոշակի քաղաքական ծրագրեր, այդ պատճառով էլ այդ կուսակցությունների քաղաքականությունն անկայուն և փոփոխական է։ Նրանք որոշ չափով իրարից տարբերվում են նրանով, որ պաշտպանում են բուրժուազիայի զանազան խմբերի շահերը, բայց որոշ տարբերիչ գիծ անցկացնել նրանց մեջ չի կարելի։ Ներկայումս պարլամենտում գոյություն ունեն յերեք խոշոր բուրժուական կուսակցություններ։

Բանվորա-գյուղացիական շարժում։ Յապոնական պրոլետարիատի քանակը շարունակ աճում է։ 1925 թվի վերջերին բանվորների թիվը հավասար էր 4.468.000-ի։

Յապոնիայում մինչև այժմ բանվորական շարժումը ընթանում է վոչ այնքան քաղաքական կուսակցությունների, վորքան արհմիությունների գծով։ Մի ժամանակ ուժեղ պայքար էր տարվում բանվորա-գյուղացիական կուսակցություն կազմելու համար։ Յեվ այդպիսի կուսակցություն 1926 թվին կազմակերպվեց։ Սակայն իսկական հեղափոխական տարրերին թույլ չավին նրա մեջ մասնակցելու։

Գյուղացիական շարժումների ղեկավար կենտրոնն է յապոնական գյուղացիական միությունը, վորը կազմակերպվել է 1922 թվականին և ունի իր բաժանմունքները ամբողջ յերկրում։ Միությունն ունի 50 հազարից ավելի անդամներ և յեռանդուն պայքար է մղում գյուղացի-արենդատորների դրությունը լավացնելու համար։

Յապոնական իմպերիալիզմը։ Արագորեն աճող առևտուրը և արդյունագործությունը ապահովելու համար Յապոնիան բռնում իմպերիալիստական քաղաքականության ճանապարհը։ Չին-յապոնական պատերազմից հետո (1894/95 թ.) նա գրավում է Ֆորմոզա կղզին և յուր ազդեցության տակ է առնում Կորեան։ Ռուս-յապոնական պատերազմից հետո (1904/05 թ.) ձեռք է բերում Սախալինի կեսը, Կվանտուն թերակղզին Պորտ-Արտուրով։ Հար. Մանջուրիան փաստորեն դարձրել է յուր գաղութը։ Այսպիսով նա կամաց-կամաց խորանում է Ասիայի մեջ և աշխատում է վոչ միայն բռնագրավումներ անել, այլև կոնցեսիաների միջոցով յուր ձեռքը ձգել Չինաստանի յերկաթի և քարածուխի հարուստ հանքերը։ Մյուս կողմից նա յուր ուշադրությունը դարձնում է նաև դեպի խաղաղ ովկիանոսը, վորտեղ նրա հետ մրցում են Միացյալ Նահանգները, Անգլիան և Ֆրանսիան։ Պատերազմից հետո Յապոնիան ստացավ Խաղաղ ովկիանոսում գտնվող գերմանական մի քանի գաղութներ—Կարոլինյան, Մարշալյան, Մարիանյան և այլ կղզիներ։

Յապոնիան այժմ գաղութատեր պետությունների մեջ բավական աչքի

ընկնող տեղ է գրավում։ Նա յուր գաղութներով ներկայումս բռնում է 684 հազար քառ. կիլոմետր, 84 միլիոն բնակչով։

Կորեա։ Կորեայի բնակիչների գլխավոր պարապմունքը կազմում է յերկրագործությունն ու անասնապահությունը։ Մշակում են բրինձ, գարի, ցորեն, լոբիա, ինչպես և ծխախոտ ու բամբակ։ Մեծ չափով տարածված է շերամապահությունը։ Հանքային հարստություններից յապոնացիներն այժմ ստանում են վոսկի, յերկաթ, քարածուխ և այլն։ Կորեայից արտահանում են հում նյութեր և հացահատիկ (բրինձ, լոբիա, յերկաթահանք, անասուն), իսկ ներմուծում են—բամբակե գործվածքներ, քարածուխ, նավթ, մեքենաներ։ Առևտուրը կատարվում է գլխավորապես Յապոնիայի և Չինաստանի հետ։ Գլխավոր քաղաքն է Սեուլ։ Յերկիրը կառավարում է Յապոնիայի կողմից նշանակված գեներալ-նահանգապետը։

Սախալին։ Շրջապատող ծովերը հարուստ են ձկներով։ Ձկնորսությունը բնակիչների գլխավոր զբաղմունքն է։ Ապագայում Սախալինի նշանակությունը կարող է ավելի ևս մեծանալ շնորհիվ այն բազմաթիվ բնական հարստությունների, վոր նա ունի (անտառ, քարածուխ, նավթ, վոսկի և այլն)

Ֆորմոզա—Բնակիչների գլխավոր պարապմունքն է յերկրագործությունը։ Մշակում են բրինձ, շաքարեղեգ, թեյ, ջուտ և այլն։ Արտահանում է քարածուխ, թեյ, շաքար, քաֆուր, կտավատ, ջուտ։ Առևտուրը կատարվում է գլխավորապես Յապոնիայի հետ։

Մնացած կղզիներն ավելի շուտ ռազմական նշանակություն ունեն, քան տնտեսական։

Ինչու՞ Յապոնիան համարվում է «Խաղաղ ովկիանոսի Անգլիա»։
Նրա տարբեր մասերն ինչպիսի կլիմա ունեն։
Բնական ինչ հարստություններ կան։
Հողն ինչպես են մշակում. ինչո՞ւ։
Գլխավոր հացահատիկները վորո՞նք են։ Ի՞նչ տեխնիկական բույսեր են աճում։
Արդյունագործության վո՞ր ճյուղերն են զարգացել։
Արտահանության և ներմուծության ապրանքները վորո՞նք են։
Ինչո՞ւ Յապոնիան առանձնապես հետաքրքրվում է Չինաստանով։
Ինչո՞ւ Միաց Նահանգների և Յապոնիայի միջև ընդհարումը Խաղաղ ովկիանոսի համար անխուսափելի չէ։

9. ՉԻՆԱՍՏԱՆ

Չինաստանը բաղկացած է բուն Չինաստանից և հպատակ յերկրներից, այն է՝ Արևելյան Թուրքեստանից, Մոնղոլիայից (սրա մի մասն անկախ է), Տիբետից և Մանջուրիայից։

Ցույց տվեք բուն Չինաստանը։ Նրա ափերն ինչ ծովեր են վողողում։
Ամբողջ Չինաստանի սահմանը վորո՞նք են։ ԽՍՀՄ-ն Չինաստանին սահմանակի՞ց է։

Ամբողջ Չինաստանի մակարդակը առանց Մոնղոլիայի կազմում է 8.350.800 քառ. կիլ., վորից 3,8 միլիոնը բռնում է բուն Չինաստանը։ Այսպիսով նա յուր մակարդակի մեծությամբ յերկրագնդի խոշոր յերկրներից մեկն է։

Ազգաբնակության թվի մասին հաստատ տեղեկություններ չկան։ Յեթե ընդունենք այն թիվը, վոր պաշտոնապես վերջերս հայտարարված է, այն դեպքում ամբողջ Չինաստանի ազգաբնակության մեծությունը կլինի մոտ 438 միլիոն։ Բնակիչների թվով, Չինաստանը հետ է միայն Բրիտանական կայսրությունից (Անգլիան գաղութներով վերցրած)։ Բուն Չինաստանի*) ազգաբնակության խտությունը բավական մեծ է։ Միջին հաշվով մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում է մոտ 112 մարդ, իսկ մի քանի շրջաններում՝ նույնիսկ 200 և 300 մարդ։ Հար. Չինաստանի մի քանի շրջաններ այնքան խիտ ազգաբնակություն ունին, վոր ամեն տարի բավական մեծ թվով չինացիներ թողնում են յերկիրը և գաղթում։ Գաղթողների մեծ մասը վերջին 20 տարվա ընթացքում անցել է Միաց. Նահանգներ, Ավստրալիա, Հար. Աֆրիկա և այլն. բայց այդ Անգլո-Սաքսոնական յերկրներն այժմ արգելում են չինացիների մուտքը, պատրվակ բերելով, վոր նրանք մրցելով տեղական բանվորների հետ կ՚իջեցնեն վերջինների աշխատավարձը։ Մեծ թվով չինացիներ այժմ գաղթում են Մանջուրիա և Հնդկաչին։

Չինացին տիպիկ մոնղոլ է. նրա նեղ և թեք դասավորված աչքերը, լայն և բութ քիթը, դուրս ցցված այտերը, համարյա կլոր գլուխը, սև և ուղիղ մազերը ապացույց են, վոր մոնղոլական ծագում ունի։ Նրանք մեզնից մոտ 5000 տարի առաջ թողել են իրենց չոր տափաստանները (Կենտ. Ասիայում) և գաղթել հյուսիսային Չինաստան։ Այստեղից նրանք կամաց-կամաց տարածվել են նաև դեպի հարավ։

Բնությունը։

Չինաստանի մեծ մասը լեռնոտ է։ Դաշտավայրերը գտնվում են գլխավորապես գետերի հովիտներում և ծովեզերքին. դրանցից ամենանշանավորը այն դաշտավայրն է, վորը ձգվում է Յան-Ցե-Կիանգի և Հոանգ-հո գետերի ստորին հոսանքով մինչև ծովը։ Յան-Ցե-Կիանգի և Հոանգհոյի ավազանների ջրբաժան գծով (Ցին-Լինգ լեռներով) ամբողջ Չինաստանը բաժանվում է յերկու մասի — հյուսիսային և հարավային։

Հյուսիսային Չինաստանը ծածկված է դեղնահողի (լյոսսի) հաստ շերտով, վորից յերկիրն ստանում է դեղին գունավորում։ Հոանգ-հոն, վորը լյոսսից պղտորված լինելով յերբեմն կոչվում է Դեղին գետ, ճեղքում է այդ լյոսսը և տեղ-տեղ գոյացնում ուղղաձիգ ափեր։ Լյոսսն ամեն ինչ է հյուսիսային Չինաստանի համար։ Նա յուր արգավանդ հողով չտեսնված բերք է տալիս յերկրագործին և կազմում է Հյուս. Չինաստանի շտեմարանը։ Հյուսիսային Չինաստանի ամենամեծ գետը Հոանգ-հոն է, բայց նա նավագնաց չէ, իսկ ստորին հոսանքում էլ շուտ շուտ յուր հունը փոխում է և վարարումների ժամանակ վոչնչացնում ցանքսերը։

*) Այսուհետև խոսելու ենք միայն բուն Չինաստանի մասին։

Հարավային Չինաստանը բռնված է Յան-Ցե-Կիանգի և Սի-Սյանի ավազաններով։ Յեթե հյուսիսային Չինաստանը կարելի յե անվանել դեղին յերկիր, այն դեպքում հարավայինը կկոչվի կարմիր յերկիր, վորովհետև այստեղ տիրողը կարմրահողն է։ Հարավային Չինաստանը՝ մոտ գտնվելով արևադարձին, ունի ավելի տաք կլիմա, քան հյուսիսայինը։ Մուսոնների ազդեցությունն էլ այստեղ ավելի մեծ է, քան թե Հյուս. Չինաստանում։ Այսպիսով հյուսիսային Չինաստանն ունի չոր, ցամաքային կլիմա, իսկ հարավայինը՝ տաք և խոնավ։ Այդ պատճառով հյուսիսային Չինաստանում մշակում են գլխավորապես ցորեն, կորեկ և լոբիներ, իսկ հարավային Չինաստանում՝ բրինձ և թեյ,

Գյուղատնտեսությունը։

Չինաստանը գյուղատնտեսական յերկիր է։ Ամբողջ ազգաբնակության $^{3}/_{4}$-ը յերկրագործությամբ է պարապում։ Յերկրագործների մեծ մասը մանր հողատերեր են։ Յերկրագնդի վրա վոչ մի տեղ (գուցե Յապոնիան բացառություն կազմի) հողամասերն այնքան մանր չեն, ինչպես Չինաստանում։ 1917 թ. պաշտոնական տեղեկությունների համաձայն ամբողջ Չինաստանում կար 49 միլիոն հողատեր ընտանիք, վորից մոտ 30 միլիոնն ուներ մինչև $1^{1}/_{2}$ դեսյատին հողաբաժին, իսկ 17 միլիոնը՝ $^{1}/_{2}$ դեսյատինից պակաս։

Բայց վոչ մի տեղ (բացի Յապոնիայից) հողն այնպիսի խնամքով չի մշակվում, ինչպես Չինաստանում։ Չինացին յուր փոքրիկ հողամասը ածուներով է մշակում։ Մինչև անգամ ցորենը հողի մեջ հատ-հատ է թաղում և վոչ թե ցանում, ինչպես մեզնում։ Չինական յերկրագործության համար բնորոշ է նաև ուժեղ պարարտացումը և աշխատավոր անասունների բացակայությունը (մի քանի տեղ հողը վարում են գոմեշների ոգնությամբ)։ Ազգաբնակության խտությունը ստիպել է չինացուն վերցնել հողից այն բոլորը, ինչ վոր նա կարող է տալ։ Հարավային Չինաստանում մի տարվա մեջ նույնիսկ յերեք բերք են ստանում, իսկ բրնձի դաշտերը հանգստի շրջանում ոգտագործում են ձկներ բազմացնելու համար։ Բրինձը, լոբիան և ձուկը չինացու սիրած կերակուրն է։

Հացահատիկներից հյուսիսային Չինաստանում առաջին տեղը բռնում է ցորենը, իսկ հարավային Չինաստանում՝ բրինձը։ Բացի դրանից Չինաստանում մշակում են նաև գաոլյան, գարի, վարսակ, յեգիպտացորեն և այլն։ 1921 թ. ստացվել է մոտ 2,8 միլիարդ փութ հացահատիկ, վորից 1,6 մի-

լխարդը կազմում է ցորենը: Բրնձի արտադրությամբ Չինաստանը մրցում է Հնդկաստանի հետ, բայց չնայելով դրան՝ նա ամեն տարի անագին քանակությամբ բրինձ է ներմուծում:

Բացի հացահատիկներից անագին նշանակություն ունեն նաև բամբակագործությունը, շերամապահությունը, թեյի, շաքարեղեգի, խաշխաշի յեվ ինդիգոյի մշակությունը:

Բամբակը տարածված է գլխավորապես Յան-Ցե-Կիանգի ավազանում: Վերջին տարիներս բամբակի բերքը զգալի չափով մեծացել է:

	1921/22 թ.	1924/25 թ.
Բամբակի ցանքսի մակարդակը հազար հեկտարներով . .	1.733	1.962
Բամբակի բերքը հազար կվինտալներով	3.288	4.693

Բամբակի բերքով Չինաստանն այժմ յերրորդ տեղն է բռնում ամբողջ աշխարհում: 1924—25 թ. Միաց. Նահանգներում ստացվել եր 29.528 հազ. կվինտալ բամբակ, Հնդկաստանում—10.991 հազար, Չինաստանում—4.693 հազար, Յեգիպտոսում—3.190 հազար, իսկ ԽՍՀՄ-ի մեջ՝ 1.024 հազար:

Արտադրվող մետաքսի քանակությամբ Չինաստանը պատերազմից առաջ առաջինն եր, իսկ այժմ նա բռնում է յերկրորդ տեղը (Յապոնիա): Հում մետաքսի համաշխարհային արտադրության 27%-ը Չինաստանն է տալիս:

Չինաստանի գյուղատնտեսության մեջ մեծ նշանակություն ունի նաև թեյի մշակությունը, որով պարապում է ավելի քան 60 միլիոն մարդ: Անցյալ դարի կեսին չինական արտահանության ամբողջ արժեքի մեծ մասը կազմում եր թեյը, այժմ միայն 3% է: Դա բացատրվում է նրանով, որ արտաքին շուկայում չինական թեյի հետ մրցում է հնդկական (Ցեյլոնի) և յապոնական թեյը: 1925 թ. Չինաստանից արտահանվել է 48 հազար տոնն թեյ, Ցեյլոնից—95 հազար, իսկ Բրիտ. Հնդկաստանից 152 հազար: Չինական թեյի մեծ մասը կլանում է ներքին շուկան: Թեյի մշակույթի կենտրոնը Հանկոուն է:

Մյուս մշակություններից հարավային Չինաստանում կարևոր նշանակություն ունեն նաև շաքարեղեգը, ինդիգոն և խաշխաշը (ափիոն պատրաստելու համար):

Համարյա ամենուրեք տարածված է ծխախոտը, որի բերքով Չինաստանը թերևս առաջինն է: Նա գերազանցում է նույնիսկ Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգներին:

Անասնապահությունը չնչին նշանակություն ունի: Դրա պատճառն այն է, որ չինացիները միս համարյա չեն գործածում. հողամասերն էլ այնքան մանր են, որ աշխատավոր անասունների կարիքը չի զգացվում: Անասուններից միայն խոզն է, որ մեծ չափերով բազմացվում է և կա-

րևոր տնտեսական նշանակություն ունի: Խոզի մազի արտահանությամբ Չինաստանն այժմ մրցում է ԽՍՀՄ-ի հետ:

Հանքային արդյունաբերություն:

Չինաստանը հարուստ է զանազան հանքերով: Քարածխի պաշարը հաշվում են մոտ մեկ տրիլիոն տոնն, որը կազմում է համաշխարհային պաշարի $^1/_7$-ը: Յուր քարածխի պաշարով նա հետ է մնում միայն Միաց. Նահանգներից և Կանադայից (տես № 3 աղյուսակը):

Քարածխից հետո մեծ չափերի հասնում է յերկաթը, որի պաշարը հաշվում են մոտ 400 միլիոն տոնն: Ամբողջ Ասիայի յերևացող յերկաթահանքի կեսը Չինաստանում է գտնվում: Մի քանի շրջանում քարածուխը և յերկաթահանքը համարյա կողք-կողքի յեն գտնվում: Այս հանգամանքը եժանացնում է յերկաթի և պողպատի արտադրությունը (փոխադրության կարիք չի զգացվի և ավելորդ, վերադիր ծախսեր չեն լինի):

Մինչև օտար կապիտալի մուտքը, չինացիները պրիմիտիվ միջոցներով շահագործում եյին թե յերկաթահանքը և թե քարածուխը, բայց արտադրությունն աննշան չափերի յեր հասնում: Վերջերս գործադրում են կատարելագործված տեխնիկական միջոցներ և այդ պատճառով արտադրությունը զարգանում է. քարածխի տարեկան արտադրությունը հասնում է մոտ 20 միլիոն տոննի: Օտար կապիտալը (մանավանդ յապոնականը) մեծ մասնակցություն ունի այդ արտադրության մեջ:

Մյուս բնական հարստություններից աչքի յեն ընկնում նավթը, պղինձը, անտիմոնը (սրա արտադրությամբ Չինաստանն առաջինն է ամբողջ յերկրագնդի վրա), վոսկին, արծաթը, կապարը, վոլ՛ֆրամը և այլն:

Արդյունագործություն:

Մինչև օրս էլ չինական արդյունագործության մեջ իշխողը մանր արհեստն ու տնայնագործությունն է: Տասնյակ միլիոնավոր մարդիկ պարապում են դրանով և արտադրում բամբակե, մետաքսե, քաթանե գործվածքներ: Չինական ասեղնագործ մետաքսե գործվածքները, հախճապակյա գեղեցիկ իրերը, յեղեգնից, բամբուկից և հարդից հյուսած իրերը հայտնի յեն ամբողջ յերկրագնդի վրա և արտահանվում են:

Անցյալ դարի 90-ական թվականներից սկսում է զարգանալ խոշոր գործարանային արդյունագործությունը, որի հիմնադիրներն եյին անգլիական և ամերիկական կապիտալիստները. հետագայում նրանց միացան յապոնական, իսկ վերջերս նաև չինական կապիտալիստները: Խոշոր արդյունագործության կենտրոններն են հետևյալ նավահանգստային քաղաքները՝ Շանհայ, Կանտոն, Հանկոու, Ֆուչժոու և ուրիշները: Առաջին տեղը բռնում է տեքստիլ արդյունագործությունը (բամբակի, մետաքսի և բրդի մանվածք-

ներն ու գործվածքները)։ Թե ինչպիսի արագ քայլերով և առաջադիմում բամբակի արդյունագործությունը, այդ յերևում է աղյուսակից.

Աղյուսակ № 48.

	Գործարանների թիվը	Իլիկների թիվը հազարներով
1891 թ.	2	65
1896 »	12	417
1902 »	17	545
1911 »	32	831
1916 »	42	1.152
1920 »	65	1.422
1923 »	190	3.183

Զարգանում են նաև արդյունագործության հետևյալ ճյուղերը—մետալուրգիա (մետաղներ ստանալը), մետաղագործությունը (մետաղներից մեքենաներ շինելը), ծխախոտագործությունը, սննդամթերքների վերամշակությունը և այլն։

Ընդհանրապես չինական արդյունագործությունն այժմ զարգացման այն աստիճանում է գտնվում, ինչ վոր մի քանի տարի առաջ յապոնականը. կապիտալը հեղաշրջում է չինական կենցաղն ու արդյունագործությունը, խոշոր մեքենաների մուտք գործելու հետ՝ ժողովրդական խավերի մեջ բուն են դնում կապիտալիստական փոխհարաբերությունները և այլն։

Ճանապարհները յեվ տրանսպորտը։

Ճանապարհները և փոխադրության միջոցները Չինաստանում այնքան էլ մխիթարական վիճակում չեն գտնվում։ Փոխադրության մեջ մասնակցում են վոչ միայն կենդանիները (հյուս. Չինաստանում—ուղտը, ջորին և էշը), այլ և մարդը։ Բայց անհամեմատ կարևոր է ջրային տրանսպորտը։ Չինաստանի ներքին ջրային ճանապարհների մեջ առաջին տեղը բռնում է Յան-Ցե-Կիանգը, վորը մոտ 2.000 կիլոմետր տարածության վրա նավագնաց է։ Ծովային նավերը գետն ի վեր կարողանում են հասնել մինչև Հանկոու, Մի շարք ջրանցքներով Յան-Ցե-Կիանգը միացած է յուր վտակների հետ։ Մեծ նշանակություն ունի նաև այսպես կոչված «Կայսերական ջրանցքը»։

Չինաստանում յերկաթուղիներ քիչ կան։ Նրանց ընդհանուր յերկարությունը հասնում է հազիվ 15 հազար կիլոմետրի, այսինքն ավելի պակաս, քան Յապոնիայում։

Ցույց տվեք Չինաստանի գլխավոր յերկաթուղիները (Խարբին—Մուկդեն—Լյու-Շուն, Մուկդեն—Պեկին, Պեկին—Հանկոու—Կանտոն)։

Մեծ նշանակություն ունեն նաև ծովային ճանապարհները։ Չինաստանի համարյա ամբողջ արտաքին առևտուրը ծովով է կատարվում, բայց այդ ծովային առևտրի մեծ մասը գտնվում է օտարների ձեռքում։ Չինական

նավատորմը դեռևս թույլ է, և նավերն էլ վատ վորակի յեն։ Չինաստանի գլխավոր նավահանգիստներն են Շանհայը, Կանտոնը յեվ Հոնգկոնգը, վորոնք նավերի շարժման չափով մրցում են այնպիսի խոշոր նավահանգստի հետ, ինչպիսին է Համբուրգը։

Արտաքին առևտուրը։

Չինաստանը, չնայելով յուր հսկայական ազգաբնակության, աննշան արտաքին առևտուր ունի։ Նրա արտաքին առևտուրը կազմում է համաշխարհային առևտրի ամբողջ շրջանառության 1,5%-ը, մինչդեռ ազգաբնակությունը համարյա հավասար է յերկրագնդի ամբողջ ազգաբնակության 1/4-ին։

Չինաստանը արտահանում է գլխավորապես գյուղատնտեսական ապրանքներ—մետաքս և մետաքսե գործվածքներ (արտահանության ամբողջ արժեքի 1/4-ը), հում բամբակ, թեյ, բուրդ, բուսական յուղեր, կաշի և անագ։ Ներմուծության մեջ առաջնակարգ տեղը բռնում են ֆաբրիկատները և սննդամթերքները։ Ներմուծվող ապրանքների ամբողջ արժեքի 25%-ը կազմում են բամբակի և բրդի գործվածքները, 7%-ը՝ մետաղները. մյուս ապրանքներից կարևոր է հիշել ձուկը և շաքարը։

Չինաստանի հետ գլխավորապես առևտուր են անում հետևյալ յերկրները՝ Անգլիա—Չինաստանի արտաքին առևտրի ամբողջ արժեքի 35%, Յապոնիա—25%, Միաց. Նահանգներ—17%։

Պատերազմից առաջ Չինաստանի արտաքին առևտրի մեջ մեծ մասնակցություն ուներ նաև Ռուսաստանը, վորը բռնում էր յերրորդ տեղը (Անգլիա, Յապոնիա), բայց պատերազմի ընթացքում չինական շուկան լցվեց յապոնական ապրանքներով։ Այժմ խորհրդային-չինական առևտուրը չնչին չափեր ունի, բայց նկատի ունենալով այն քաղաքական դրությունը, վոր ստեղծվել է Չինաստանի շուրջը, կարելի յե հույս ունենալ, վոր ապավոր Խորհրդային Միության և Չինաստանի առևտրական հարաբերությունները կուժեղանան։

Պետական կազմը։

Հազարավոր տարիների ընթացքում Չինաստանի գերագույն իշխանությունը պատկանում էր կայսրին (բողդիխանին), վորը համարվում էր «յերկնքի վորդի» և միջնորդ էր աստվածների ու մարդկանց միջև։ 1912 թ. տեղի ունեցավ հեղաշրջում և Չինաստանը հայտարարվեց հանրապետություն։

1923 թվի սահմանադրության համաձայն չինական հանրապետության սուվերեն իրավունքը պատկանում է ամբողջ ժողովրդին։ Բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ։ Բարձրագույն իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է սենատից և ստորին պալատից։ Սենատի լիազորության շրջանը 6 տարի յե, իսկ պալատինը՝ 3։ Գոր-

ծաղիր իշխանության գլուխ է կանգնած պրեզիդենտը, վորն ընտրվում է պարլամենտի կողմից 5 տարով։

Ներկայումս փաստորեն պարլամենտ գոյություն չունի։ Փաստորեն պրեզիդենտ էլ չկա։ Իրական իշխանությունը գտնվում է գավառների (պրովինցիա) զինվորական նահանգապետների (դուցզյուն կամ դուբան) ձեռքին։ Դուցզյունները ունենալով խոշոր քանակությամբ զորք, չեն յենթարկվում կենտրոնական կառավարության և չեն ուղարկում նրան իրենց իշխանության տակ գտնվող պրովինցիաների յեկամուտները։ Ձգտելով ընդարձակել իրենց ազդեցության շրջանները՝ դուցզյունները անվերջ կռիվներ են մղում իրար դեմ։

Անցյալ դարի վերջերից Սուն-Յաթ-Սենը սկսեց հեղափոխական գործնեյություն, վորի նպատակն էր տապալել միապետությունը։ 1911 թվին նա այդ նպատակին հասավ և հեղափոխությունը Սուն-Յաթ-Սենին հանրապետության գլուխը դրեց։ Հանրապետության առաջին պրեզիդենտը նա ընտրվեց։ Սուն-Յաթ-Սենի հիմնած կուսակցությունը՝ Գոմինդանը մասսաների մեջ տարած թույլ աշխատանքի պատճառով պարտվեց։

Սակայն 1918 թվին Սուն-Յաթ-Սենը Կանտոնում իշխանությունը գրավեց և սկսեց աստիճանաբար մոտենալ ժողովրդական մասսաներին ու կազմակերպել նրանց վոչ միայն Կանտոնում, այլ և ամբողջ յերկրում։ Գոմինդանի ազդեցությունը յերկրում սկսվեց արագ թափով ուժեղանալ։ Սկսվեց Հարավային արշավանք Ջժան-Ցզո-Լինի Պեկինյան իշխանության դեմ, վորը իմպերիալիստական պետությունների (առանձնապես Յապոնիայի) գործակալն էր հանդիսանում Չինաստանում։ Սուն-Յաթ-Սենը Գոմինդանի ծրագրի մեջ մացրել էր յերեք սկզբունք — ազգայնականություն, դեմոկրատիզմ և սոցիալիզմ։ Ծրագրի ազգային մասը բնորոշվում էր, առաջին՝ պայքար իմպերիալիստական ճնշումներից չինական ժողովրդին ազատագրելու համար, պայքար Չինաստանի անկախության համար և յերկրորդ՝ պայքար Չինաստանում ապրող բոլոր ազգությունների իրավահավասարության համար։ Սուն-Յաթ-Սենը ջերմ կողմնակից էր սերտ բարեկամություն պահպանելու ԽՍՀՄ-ի հետ և գործակցելու կոմունիստների հետ։ Սակայն Սուն-Յաթ-Սենի մահից (1924 թ.) հետո, կուսակցության մեջ աստիճանաբար ուժեղացավ աջ բուրժուական տարրը։ Յեվ յերբ 1927 թ. սկզբներին բանվորական և գյուղացիական շարժումը մեծ ծավալ ստացավ, Գոմինդանի բուրժուական տարրերը խիստ վախեցան և սկսեցին հալածել կոմունիստներին։ 1927 թ. Շանհայի գրավումից հետո գոմինդանական գեներալ Ջանկայ-Շին կատարեց աջ գոմինդանական հեղաշրջում և գնդակահարեց հազարավոր բանվորների և կոմունիստների։ Ներկայումս կոմունիստական կու-

սակցությունը թեև գործում է անլեգալ, բայց նրա ազդեցությունը բանվորական և գյուղացիական մասսաների վրա խիստ ուժեղ է։

Իմպերիալիստական պետություններն ու Չինաստանը։

Չինաստանի վզին բռնությամբ փաթաթված անհավասար պայմանագրերի հիման վրա, ոտար պետությունները Չինաստանում բացառիկ իրավունքներով են օժտված։ (Միայն ԽՍՀՄ-ն իր հոժար կամքով հրաժարվում է ցարական կառավարության կնքած անհավասար դաշնագրերից)։ Մի շարք քաղաքներում այդ պետություններն ունեն կոնցեսիաներ և սեթլմենտներ—այսինքն այնպիսի թաղամասեր, վորոնց իրենք տեր են հանդիսանում, իսկ չինացիները հպատակների դրության մեջ են։ Ոտարյերկրացիները չեն կարող դատվել չինական դատարաններում։ Պետություններն ունեն իրենց հյուպատոսական և խառն դատարանները, վորտեղ չինացիների և ոտարյերկրացիների մեջ յեղած վեճերը վճռվում են ի հարկե վերջինների ոգտին։

Չինաստանի մաքսատները գտնվում են ոտարյերկրացիների վերահըսկողության տակ։ Մաքսատների բոլոր յեկամուտները գտնվում են Անգլիայի վերահսկիչի ձեռքին, վորն առաջին հերթին այդ գումարներից վճարում է Չինաստանի պարտքերը ոտարյերկրացիներին և մնացածը (հազիվ 10%-ը) հանձնում է Չինաստանի կառավարության։ Իմպերիալիստների ճնշումով մաքսային հարկերը չափազանց նվազ են (ապրանքի արժեքի 5%-ից էլ պակաս)։ Այդ հանգամանքը խանգարում է չինական արդյունաբերության զարգացման և զարկ է տալիս ներմուծման, վորը շատ ձեռնտու յե ոտարյերկրացիներին և վնաս է Չինաստանին։

1894—1895 թ. Յապոնիան հաղթելով Չինաստանին գրավեց Ֆորմոզա կղզին։ Ի պատասխան դրան Գերմանիան «99 տարով կապալով վերցրեց» Կիաո-Չաուն և Շանդունը, վորոնք 1922 թ. կրկին անցան Չինաստանին. Ռուսաստանը գրավեց Պորտ-Արտուրը (1905 թ. անցավ Յապոնիային), Անգլիան—Վեյ-Հայ-Վեյը և Կան-Լուն թերակղզին, Ֆրանսիան—Կուան-Ջժոու։ Բացի դրանից Անգլիան գրավեց Հոնգկոնգը և յուր ազդեցության տակ գցեց Տիբեթը։ Իմպեր. յերկրներն այս բոլոր քայլերն անում են նրա համար, վոր 1) Չինաստանը դարձնեն շուկա իրենց գործարանային ապրանքների համար և 2) հում նյութով կարողանան ապահովել իրենց արդյունաբերությունը։

Գլխավոր քաղաքները։

Պեկին (800 հազար բնակիչ)—ամբողջ Չինաստանի մայրաքաղաքն է։ Բարձրագույն դպրոցներ։ **Շանհայ** (1,5 միլիոն բնակիչ)—համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստ է։ Առևտրական և արդյունագործական խոշոր կենտրոն։ Քաղաքի լա-

վագույն մասը գտնվում է իմպերիալիստական յերկրների ձեռքին և կոչվում է «միջազգային թաղամաս» (սեթլմենտ)։ Հանկոու (1,5 միլ. բն.)—բազմաթիվ մետաքսի գործարաններ. յերկաթուղային հանգույց։ Նանկին (400 հազար բնակիչ)—գտնվում է յերկաթուղային գծի վրա։ Կանտոն (1,4 միլիոն բնակիչ)—Հար. Չինաստանի քաղաքական կենտրոն. նավահանգիստ, արդյունագործական և առևտրական կենտրոն։ Հոնգկոնգ—հայտնի նավահանգիստ, վորտեղ կանգ են առնում գլխավորապես անգլիական նավերը։

Չինաստանը քանի մասերից է բաղկացած։ Հյուս. Չինաստանն ինչո՞վ է տարբերվում Հարավայինից։

Հողաբաշխումն ինչ պատկեր ունի։ Հողն ինչպես է մշակվում։

Գլխավոր հացահատիկները վորո՞նք են և բավականանո՞ւմ են։

Արդյունագործությունն ինչ բնույթ ունի։ Ինչո՞ւ օտար կապիտալը շահագրգռված է Չինաստանով։

Կարդացեք «Հեռավոր Արևելքը» (Խորբաբին)։

10. ԹՅՈՒՐՔԻԱ

Ասիայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Թյուրքիան։

Գտեք նրա հարևան յերկրները, շրջապատող ծովերը։

Ասիայի համր քարտեզի վրա ներկեցեք Թյուրքիայի բռնած տեղը. նշանակեցեք շրջապատող ծովերի և հարևան յերկրների անունները։

Թյուրքիան համաշխարհային պատերազմից առաջ ընդարձակ կալվածներ ունեցող յերկրներից մեկն եր։ Պատերազմից հետո (1923 թ.) Լոզաննի դաշնագրի համաձայն նա ստիպված յեղավ հրաժարվել յեվրոպական և ասիական մի քանի շրջաններից (Արաբիայից, Միջագետքից, Ասորիքից և այլն)։

Այժմ Ասիայում Թյուրքիային պատկանում են Փոքր Ասիան և Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասը, իսկ Յեվրոպայում՝ Բալկանյան թերակղզու մի փոքրիկ կտորը՝ Կոստանդնուպոլիս քաղաքով։ Դրանց մեջ յուր մեծությամբ և տնտեսական ու քաղաքական նշանակությամբ կարևոր է Փոքր Ասիան, վորի վրա մենք առանձնապես կանգ կառնենք։

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Թյուրքիայի մակերդակի և ազգաբնակության մեծությունը պատերազմից առաջ և այժմ։ (տես յեր. 199.)

Աշխարհագրական դիրքը։ Թյուրքիան յուր աշխարհագրական դիրքով կարող եր միջնորդ հանդիսանալ Յեվրոպայի և Ասիայի միջև։ Բայց լինելով տնտեսապես թույլ, նա չկարողացավ օգտագործել յուր հարմար դիրքը և այդ պատճառով համաշխարհային տնտեսության մեջ չունեցավ այն նշանակությունը, վոր կարող եր ունենալ բնական պայմանների հետևանքով։ Պատերազմից առաջ Թյուրքիան իշխում եր Կոնստանդնուպոլսի և Դարդանելի նեղուցների վրա. և դրանով

Աղյուսակ № 49.

	Համաշխ. պատերազմից առաջ		Համաշխ. պատերազմից հետո		
	Մակերդակը (հազ. քառ. կիլոմետ.)	Բնակիչների թիվը (հազարներով)	Մակերդակը (հազ. քառ. կիլոմետ.).	Բնակիչների թիվը (հազարներով)	Ազգաբնակ. խտ. 1 քառ. կմ-ի վրա
Յեվրոպական Թյուրքիա .	27	1.891	մոտ 21	մոտ 1.200	մոտ 60
Ասիական Թյուրքիա	մոտ 1.823	մոտ 21.000	» 706	» 11.800	» 17
Ընդամենը .	մոտ 1.850	մոտ 23.000	մոտ 727	մոտ 13.000	մոտ 18

Սև ծովը Ռուսաստանի համար դարձնում կիսով չափ փակ ծով։ Պատերազմից հետո այդ նեղուցները ազատ հայտարարվեցին և Թյուրքիան ընդմիշտ զրկվեց այդ «նեղուցների դռնան» ամրացնելու իրավունքից։ Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունեցավ մանավանդ ԽՍՀՄ-ի համար, վորովհետև Բալտիկ ծովի յեզերային գիծը, մի քանի մանր յերկրների Ռուսաստանից անջատվելու պատճառով, բավական կարճացել է։

Թյուրքիան ցամաքով ինչ յերկրների հետ կարող է հարաբերություն ունենալ։

Անդրկովկասից Թյուրքիա ինչ յերկաթուղային գիծ է անցնում։

Ցույց տվեք Տրապիզոն—Օդեսսա, Բաթում—Կոնստանդնուպոլիս, Զմյուռնիա—Ալեքսանդրիա, Զմյուռնիա—Մարսել, Կոնստանդնուպոլիս—Նեապոլ ծովային ճանապարհները.

Գյուղատնտեսություն։ Թյուրքիան գյուղատնտեսական յերկիր է։ Բնակիչները պարապում են գլխավորապես յերկրագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ։

Յեվրոպական Թյուրքիան և Փոքր Ասիայի ծովեզերքն ունեն բավական տաք, մեղմ կլիմա և արգավանդ հող։ Այստեղ բացի հացահատիկներից մշակվում են նաև ձիթենի, նարինջ, մանդարին, կիտրոն, խաղող, թթենի, թուզ, ծխախոտ և այլն։ Մեզնում բավական մեծ հռչակ ունեն Սամսոնի և Տրապիզոնի ծխախոտը։ Բրինձը և չորացրած թուզը արտահանվում են։ Չափազանց մեծ նշանակություն ունի նաև շերամապահությունը. մետաքսը արտահանվում է։

Փոքր Ասիայի միջին մասերը չոր կլիմա ունեն։ Այստեղ տարածված է գլխավորապես անասնապահությունը։ Պահում են մեծ քանակությամբ այծ և վոչխար։ Անգորական այծը յուր բրդով հռչակված է ամբողջ աշխարհում։

Հանքային արդյունաբերություն յեվ արդյունագործություն: Թյուրքիան հարուստ ե զանազան հանքերով, վորոնց մեջ աչքի յեն ընկնում վոսկին, արծաթը, քրոմը, ցինկը, մանգանը, պղինձը, քարածուխը և այլն: Բայց յերկրի արդյունագործության թույլ զարգացման պատճառով այդ հանքերը այնքան էլ չեն շահագործվում: Քարածխի տարեկան արտադրությունը կազմում ե հազիվ 400 հազ. տոնն:

Արդյունագործությունը թույլ ե: Գոյություն ունեն ընդամենը մի քանի գործարան, վորտեղ մշակվում են բուրդ և բամբակ: Յերկրի տնտեսության համար ավելի կարևոր նշանակություն ունեն արհեստանոցները, վորտեղ պատրաստում են զանազան զենքեր, կաշի, գորգեր և այլն:

Յերկաթուղիներ: Թյուրքիայի յերկաթուղային գծերի ընդհանուր յերկարությունն ե մոտ 3.500 կիլոմետր, վորից 336 կիլոմետրը գտնվում ե Յեվրոպական Թյուրքիայում, իսկ մնացածը՝ Ասիական Թյուրքիայում: Գլխավոր յերկաթուղային գիծն սկսվում ե Կոստանդնուպոլսից (ավելի ճիշտ՝ Սկուտարից) և Կոնիայի վրայով անցնում ե դեպի Միջագետք (Բաղդադ, Պարսից ծոց): Այս գծից սկսվում են յերկու ուրիշ գծեր, վորոնցից մեկը միանում ե Զմյուռնիայի հետ, իսկ մյուսը՝ Անգորայի հետ: Բաղդադի յերկաթուղային գիծը սկսեցին գերմանացիները, բայց պատերազմի պատճառով չավարտեցին: Նրանց նպատակն եր կարճ ճանապարհով Բեռլինը միացնել Պարսից ծոցի հետ: Յեվ իսկապես, յեթե Լոնդոն—Վիեննա—Կոստանդնուպոլիս—Բաղդադ—Պարսից ծոց—Հնդկաստան ճանապարհը համեմատելու լինենք Լոնդոն—Ջիբրալթար—Սուեզ—Հնդկաստան ճանապարհի հետ, կստացվի հետևյալ պատկերը.—Լոնդոնից Բաղդադի վրայով մինչև Պարսից ծոցը պահանջվում ե մոտ 144 ժամ, իսկ Պարսից ծոցից (Բասրա նավահանգստից) մինչև Բոմբեյ (Հնդկաստան) 84 ժամ: Լոնդոնից մինչև Բոմբեյ (Բաղդադի վրայով) կպահանջվի 9—10 որ, մինչդեռ Սուեզի ջրանցքով Լոնդոնից Բոմբեյ հասնելու համար պետք կլինի 13—14 որ:

Մնացած յերկաթուղային գծերը (Կարսինը, Ադանայինը) առանձին նշանակություն չունեն:

Ծովային նավատորմը մեծ չե, չնայելով վոր Թյուրքիան ունի բավական յերկար յեզերային գիծ և մի շարք հարմար նավահանգիստներ (Տրապիզոն, Կոստանդնուպոլիս, Բրուսսա, Զմյուռնիա և այլն):

Արտաքին առևտուրը: Մի ժամանակ Փոքր Ասիայի վրայով անցնում եյին մի քանի կարևոր առևտրական ճանապարհներ, վորոնք Յեվրոպան միացնում եյին ասիական մի շարք յերկրների հետ: Ծովային տրանսպորտի զարգացման և մանավանդ Սուեզի ջրանցքի կառուցման պատճառով այդ ճանապարհները կորցրին իրենց նշանակությունը

և Թյուրքիան այժմ համաշխարհային առևտրի մեջ տրանզիտի տեսակետից առանձին դեր չի կատարում:

Նա արտադրում ե գլխավորապես գյուղատնտեսական ապրանքներ—ծխախոտ, բուրդ, բամբակ, ափիոն, չոր միրգ, սպունգ և այլն: Արտահանվում են նաև գորգեր, պղինձ և այլն: Ներմուծվում են գլխավորապես գործարանային ապրանքներ (շաքար, գործվածքներ, մեքենաներ և այլն), քարածուխ, նավթ, ննդի մթերքներ և այլն:

Ներմուծման մեջ կարևոր դեր են կատարում Անգլիան, Իտալիան, Միացյալ Նահանգները և Գերմանիան, իսկ արտահանման մեջ՝ Անգլիան, Ֆրանսիան և Միաց. Նահանգները:

ԽՍՀՄ-ը Թյուրքիա յե արտահանում շաքար, գործվածքներ, սապոն նավթ և այլն: Թյուրքիայի արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության մեջ 1923 թ.-ին ԽՍՀՄ-ին բաժին եր ընկնում մոտ 5 միլ. թուրք. ֆունտ, իսկ 1925/6 թվին արդեն 12,6 միլ. թուրք. ֆունտ:

Գլխավոր քաղաքներ: Անգորա—մայրաքաղաք ե, գտնվում ե յերկրի կենտրոնում: Կոնիա — գյուղատնտեսական շրջանի կենտրոն. շերամապահություն. գորգեր: Սվաս: Երզրում—գտնվում ե Տրապիզոն—Թավրիզ ճանապարհի վրա: Կարս—(ցամաքային առևտուր ԽՍՀՄ-ի հետ. Լենինականի և Երզրումի հետ յերկաթուղով միացած ե): Ադանա—գտնվում ե Փոքր Ասիայի հարավում, ծովափից վոչ հեռու: Բրուսսա—ծխախոտի մշակություն, շերամապահություն, գորգեր, ձիթապտուղ. գտնվում ե Փ. Ասիայում՝ Մարմարյան ծովից վոչ հեռու: Ադրիանուպոլիս—ծխախոտի մշակություն, գինեգործություն. գտնվում ե Յեվր. Թյուրքիայում:

Գլխավոր նավահանգիստներն են Կոստանդնուպոլիսը—1 միլիոն բնակիչ. առևտրական և կուլտուրական կենտրոն. նախկին մայրաքաղաք: Սամսոն—ծխախոտ: Տրապիզոն—կարևոր նավահանգիստ Սև ծովի յեզերքին. տրանզիտային առևտուր Պարսկաստանի հետ: Զմյուռնիա—(360.000 բնակիչ): Կոստանդնուպոլսից հետո կարևոր առևտրական կենտրոն և նավահանգիստ. չամիչ, թուզ, ծխախոտ, հաց:

Պետական կազմը: 1923 թվից Թյուրքիան հանրապետություն ե: Պարլամենտի (Ազգային ժողովի) անդամներն ընտրվում են չորս տարով: Դրանց միջից ընտրվում ե հանրապետության նախագահը (պրեզիդենտը) նույնպես չորս տարով: Հանրապետության նախագահը յուր կողմից նշանակում ե կառավարության նախագահ, վորը պարլամենտի անդամների միջից հրավիրում ե կոմիսարներ և կազմում կառավարություն:

ԽՍՀՄ-ն Թյուրքիայի հետ բարեկամական հարաբերության մեջ ե գտնվում:

Աշխատանք: *Գտեք քարտեզի վրա Թյուրքիայի գլխավոր քաղաքները և ապա համր քարտեզի վրա նշանակեցեք:*

11. ԻՐԱՆ

Իրանը մի ընդարձակ բարձրավանդակ է, վորը ձգվում է Հայկական լեռնաշխարհից մինչև Պամիրի լեռները և Կասպից ծովից մինչև Հնդկական ովկիանոսը: Հյուսիսում նրա յեզերքով բարձրանում են Ելբուրս *և* Հինդուկուշ *լեռնաշղթաները, արևելքում՝* Սուլեյմանյան *լեռները, իսկ հարավ-արևմուտքում և հարավում՝* Զագրոս *և* Հար. Իրանական *լեռները: Լեռների այն ստորոտներում, վորոնք դարձած են դեպի ծովը, ձգվում են ճահճոտ հարթություններ. սրանց յեզերքներն այնքան էլ կտրտված չեն և զուրկ են հարմար նավահանգիստներից:*

Ամեն կողմից շրջապատված լինելով բարձր լեռներով, Իրանի բարձրավանդակը խոնավություն չի ստանում վոչ Կասպից և վոչ էլ Հնդկական ովկիանոսից. այդ պատճառով նրա կլիման սաստիկ չոր է և աչքի յե ընկնում յուր բարեխառնության սուր տատանումներով: Ամառվա ընթացքում գիշերները յերբեմն սնդիկն իջնում է մինչև 0°, իսկ ցերեկները բարձրանում է մինչև 32—35°: Կլիմայի չորության պատճառով անապատները և չոր տափաստաններն ընդարձակ տարածություն են բռնում: Շատ գետեր սկիզբն առնելով շրջապատող լեռներից, հոսում են դեպի բարձրավանդակի ներսը և հաճախ կորչում ավազուտների մեջ: Ներքին գետերից յուր մեծությամբ նշանավոր է Հիլմենդ *գետը, վորը թափվում է* Համուն *լճի մեջ:*

Լավ վոռոգվում են Կասպից ծովի և Պարսից ծովի յեզերքները, բայց սրանք էլ ունեն վատառողջ կլիմա:

*Քաղաքական տեսակետից Իրանը բաժանվում է երեք մասի—*Պարսկաստան, Աֆղանիստան *և* Բելուջիստան: *Դրանցից առաջին երկուսը անկախ պետություններ են, իսկ յերրորդը մտնում է Բրիտանական Հնդկաստանի մեջ:*

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Պարսկաստանն ինչ պետություններով է շրջապատված:
Պարսկաստանը Խ. Ս. Հ. Մ-ից ինչ գետերով և ծովով է բաժանվում:
Աշխատանք: *Անխայի համր քարտեզի վրա ներկեցեք Պարսկաստանի բռնած տեղը:*
Նշանակեցեք հարևան յերկրները:

Պարսկաստանի մակարդակի մեծությունը և ազգաբնակությունը:

Ամբողջ Իրանը 2,610,000 քառ. կիլոմետր է, վորից 1.627.000-ը պատկանում է Պարսկաստանին: Այս հսկայական տարածության վրա ապրում է ընդամենը մոտ 10 միլիոն մարդ, այնպես վոր յուրաքանչյուր քառ.

կիլոմետր մակարդակին ընկնում է մոտ 6 մարդ: Ազգաբնակության այսպիսի չնչին խտությունը բացատրվում է նրանով, վոր յերկրի մեծ մասը ծածկված է լեռներով և անապատներով:

Ազգաբնակության 75%-ը կազմում են պարսիկները, վորոնք պատկանում են սպիտակ ցեղի իրանական խմբին: Պարսիկներից հետո քանակով յերկրորդ տեղը բռնում են դեղին ցեղի թյուրք-մոնղոլական ժողովուրդները (թուրքմենները կարաջադաղցիները, շահսովանները, աֆշարները և այլն): Սրանք ընդամենը մեկ միլիոն են, այսինքն կազմում են ամբողջ ազգաբնակության 10-%-ը: Մյուս ազգություններից աչքի յեն ընկնում արաբները *(350,000 մարդ),* քյուրդերը *(750,000),* լուրերը *և* բախտիարները *(300,000), հայերը (70,000), հրեաները, այսորիները և այլն:*

Գյուղատնտեսությունը:

Պարսկաստանը գտնվում է մերձարևադարձային զոնայում: Տեղ-տեղ յերկիրը ներկայացնում է անապատներ և չոր տափաստաններ, բայց տեղ-տեղ էլ գտնվում յեն այնպիսի շրջաններ, վորոնք զարմացնում են իրենց ճոխ բուսականությամբ: Այդպես է օրինակ, Կասպից ծովի յեզերքը, վորտեղ առատ խոնավության պատճառով աճում են շաքարեղեգ և բրինձ: Արգավանդ են նաև արևմտյան և հյուսիս-արևելյան շրջանները, վորտեղ բռնում են պտղատու ծառեր, խաղող, թթենի, բամբակ, խաշխաշ, ծխախոտ և ցորեն: Կիսաանապատային բնույթ ունի Պարսից ծոցի յեզերքը, վորը ծովից շատ քիչ խոնավություն է ստանում: Այստեղ չափազանց տարածված է փյունիկյան արմավենու մշակությունը:

Կենտրոնական Պարսկաստանի հարթությունները ծածկված են արգավանդ լյոսսով, բայց կլիման այստեղ այնքան չոր է, վոր երկրագործությունը և այգեգործությունը հնարավոր են միայն գետափերին և արհեստական վոռոգման ոգնությամբ: Ջրանցքները շատ տեղեր բավական հեռվից են բերվում և, վորպեսզի սաստիկ չորության պատճառով ջուրը չգոլորշիանա, այդ ջրանցքները տանում են գետնի տակով: Բայց վորովհետև արհեստական վոռոգումը ամեն տեղ հնարավոր չի, ուստի չոր տափաստաններում բնակիչները ստիպված են անասնապահությամբ պարապել: Կենտրոնական Պարսկաստանի $^{1}/_{3}$-ը ծածկված է անապատներով: Ընդհանրապես բնական պայմանները այնքան էլ նպաստավոր չեն գյուղատնտեսության համար: Ամբողջ յերկրի $^{4}/_{5}$-ը լեռներ ու անապատներ են և միայն $^{1}/_{5}$-ը կամ 20%-ը մշակովի հողեր:

Բնական այս աննպաստ պայմաններին ավելանում են նաև գյուղացու իրավազուրկ վիճակը և հարստահարությունները թե խաների և թե պետության կողմից: Յերկրագործը հողը մշակելու համար առանձին տուրք

է վճարում, ջրից օգտվելու համար՝ առանձին, հացի բերքի համար՝ առանձին, յուրաքանչյուր գլուխ անասունի համար՝ առանձին և այլն։ Ընդհանուր առմամբ նրա բերքի $^3/_5$-ը ծախսվում է զանազան տուրքերի համար։

Ծանրաբեռնված լինելով այդչափ հարկերով, շատ գյուղացիներ, թողնում են իրենց հայրենիքը և անցնում հարևան ԽՍՀՄ։

Տեղական հարստահարիչներին միանում են օտար կապիտալիստները, վորոնք կոնցեսիայի միջոցով աշխատում են Պարսկաստանը դարձնել գաղութ։ Այդ ուղղությամբ աշխատում է մանավանդ Անգլիան։

Երկրագործությունը Պարսկաստանի գյուղատնտեսության հիմնական ճյուղն է։ Մշակում են գլխավորապես **ցորեն, բրինձ** և **գարի**, վորոնցից բրինձը արտահանվում է (գլխավորապես ԽՍՀՄ)։ Պարսկաստանի հարավային յերկրքներին մշակում են մեծ քանակությամբ փյունիկյան արմավենիներ, վորոնց պտուղները (**արմավները**) հացի տեղն է ծառայում։

Երկրագործությունից հետո ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակություն ունի **այգեգործությունը**։ Մերձարևադարձային կլիմայի շնորհիվ բնակիչները մշակում են խաղող, ծիրան, դեղձ, թուզ, արմավ, կիտրոն, նարինջ, սերկևիլ, ընկույզ և այլն։ Թարմ վիճակում գլխավորապես արտահանվում են կիտրոն ու նարինջ։ Խաղողից պատրաստում են չամիչ, վորը մեծ քանակությամբ արտահանվում է։ Բացի չամիչից Պարսկաստանն արտահանում է նաև չորացրած թուզ, դեղձ, ծիրան և այլն։

Թթենին հնարավորություն է տալիս պարապել **շերամապահությամբ**։ Մետաքսի $^3/_4$ մասն արտահանվում է (գլխավորապես Իտալիա)։

Տեխնիկական բույսերից կարևոր նշանակություն ունի **բամբակը**, բայց պարսկական բամբակը այնքան էլ բարձր վորակ չունի։

Մյուս բույսերից պետք է յիշել **ծխախոտը, թեյը, շաքարեղեգը, խաշխաշը** (ափիոնի համար) և այլն։

Մեծ նշանակություն ունի մանավանդ **անասնապահությունը**։ Մի քանի ցեղեր (բախտիարները, լուրերը, քյուրդերը, շահսևանները և այլն) համարյա բացառապես պարապում են անասնապահությամբ. բազմացնում են գլխավորապես այծեր և վոչխարներ։ Անասնապահությունն արտադրում է կաշի և բուրդ. վերջինս արտահանվում է փոքր չափով, վորովհետև նրա մեծ մասը գործ է ածվում յերկրի ներսը գորգեր պատրաստելու համար։

Հանքային հարստությունները:

Պարսկաստանը հարուստ է զանազան հանքերով. դրանց մեջ կարևոր են մանավանդ **նավթահանքերը**, վորոնք ընդարձակ տարածություն են բռնում։ Ամենահարուստ նավթահանքերը գտնվում են Կասպից ծովի մոտ և հարավում, Պարսից ծոցի մոտ։ Անգլիացիներն այնքան յեռանդուն կերպով են շահա-

գործում Պարսից ծոցի մոտ գտնվող նավթահանքերը, վոր այժմ Պարսկաստանը արտադրած նավթի քանակությամբ չորրորդ տեղն է բռնում։

Բացի նավթից Պարսկաստանում գտնվում են նաև պղինձ, կապար, նիկել, անդիկ, քարածուխ և աղ։ Բայց այդ հանքերը շատ քիչ են մշակվում. քարածխի տարեկան արտադրությունը կազմում է հազիվ 10000 փութ։

Արդյունագործությունը:

Արդյունագործությունն անմխիթար վիճակում է գտնվում. այդ բանին նպաստում է մանավանդ յեվրոպական գործարանային ապրանքների մրցումը։

Շոգու կամ էլեկտրականության ոգնությամբ աշխատող գործարաններ համարյա չկան։ Թեհրանի, Թավրիզի և Սպահանի գործարանների մեծ մասն այժմ անգործության են մատնված։

Տնայնագործության մեջ կարևոր է **գորգագործությունը**։ Պարսկական գորգերը յուր գեղեցկությամբ հռչակված են ամբողջ յերկրագնդի վրա և մեծ չափով արտահանվում են։ Բացի գորգերից՝ ձեռքով գործում են նաև մետաքսե, բամբակե և այլ գործվածքներ։ Շատ տարածված է կաշվեգործությունը. հայտնի յե պարսկական սաֆյանը, վորը նույնիսկ արտահանվում է։

Հաղորդակցության միջոցները:

Պարսկաստանը հարմար ճանապարհներով և փոխադրության միջոցներով աղքատ է։ Միակ նավագնաց գետը Կարունն է, այն էլ շահագործում են օտարները (անգլիացիները)։ Յեղած խճուղիներն ու յերկաթուղիները կառուցել են օտարները և սրանք էլ այժմ շահագործում են այդ ճանապարհները։ Յերկաթուղիների ընդհանուր յերկարությունն է մոտ 560 կիլոմետր, վորից Ջուլֆա Թավրիզ յերկաթուղին ունի 215 կիլոմետր, իսկ Բուշիր-Բորազջան՝ 60 կիլոմետր։ Քարվաններն ու քարվանային ճանապարհները այսօր էլ կարևոր դեր են կատարում ներքին հաղորդակցության համար։

Արտաքին առևտուրը:

Պարսկաստանն արտահանում է գլխավորապես հում նյութ, նավթ, գորգեր և այլն, իսկ ներմուծում է գործարանային ապրանքներ՝ չիթ, շաքար, մեքենաներ և այլն։

1923/4 թ. ներմուծվել է 694,3 միլիոն ղրանի ապրանք, իսկ արտահանվել է 768,4 միլիոն ղրանի։ Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե այս կամ այն ապրանքը ինչ նշանակություն ունի Պարսկաստանի արտաքին առևտրի մեջ։

Ներմուծվել է 694,3 միլիոն ղրանի ապրանք, վորից		Արտահանվել է 768,4 միլ. ղրանի ապրանք, վորից	
Գործվածքներ (չիթ, մահուդ և այլն) .	216,6	Նավթ	388 միլ. ղր.
Զանազան մանվածքներ	25	Բամբակ	49,4 » »
Մետաղե իրեր և մեքենաներ	20,6	Կաշի և մորթի .	23,9 » »
Շաքար	131,7	Բուրդ	13,2 » »

Թեյ	60,2	Մետաքս	3 » »
		Գորգեր	104,8 » »
		Չոր միրգ	67,8 » »
		Բրինձ	12,9 » »

Պարսկաստանի արտաքին առևտրի մեջ առաջին յերկու տեղը գրավում են Անգլիան և Խորհրդ. Միությունը։ Համաշխ. պատերազմի ընթացքում Անգլիան կարողացավ յուր ձեռքը գցել պարսկական շուկայի մեծ մասը, այնպես որ ԽՍՀՄ-ը մինչև 21 թվականն աննշան մասնակցություն ուներ պարսկական արտաքին առևտրի մեջ։ ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի առևտրական հարաբերությունները հետզհետե լայն չափեր են ստանում, որ յերևում է հետևյալ աղյուսակից.

	ԽՍՀՄ-ից Պարսկաստան է արտահանվել	Պարսկաստանից ԽՍՀՄ է արտահանվել
1923/24	7,7 միլ ռ.	22,4
1924/25	28,6 »	50,7
1925/26	48,5 »	50,8

ԽՍՀՄ—Պարսկական առևտրի արագ աճումը բացատրվում է այն բարեկամական կապով, որ հաստատվեց խորհրդայնացման հենց առաջին տարվանից։

Կապիտալիստական յերկրները յեվ Պարսկաստանը։

Պարսկաստանը՝ չնայելով յուր աղքատության, կարևոր նշանակություն ունի Անգլիայի համար, որովհետև նա գտնվում է Միջագետքի և Բրիտանական Հնդկաստանի միջև։ Այդ պատճառով Անգլիան ձգտում է Պարսկական կառավարության մեջ ունենալ այնպիսի մարդիկ, վորոնք կաշխատեն նրա օգտին։ Բացի այդ նա աշխատում է տնտեսապես շահագործել յերկիրը։ Անգլիական կապիտալիստները շահագործում են Պարսկաստանի հարուստ նավթահանքերը. անգլիական վաճառականների ձեռքում է գտնվում արտաքին առևտրի կեսից ավելին։ Պարսկական կառավարությունը նյութապես կախված է Անգլիական (Շահինշահի) բանկից, վորը հսկում է պետության գլխավոր յեկամուտների վրա, մանավորապես մաքսի վրա։ Հարկերից և մաքսից ստացված գումարների մեծ մասն այդ բանկն է ստանում։

Այսպիսով Անգլիան յուր կապիտալով շահագործում է Պարսկաստանը և դարձնում նրան կիսագաղութային յերկիր։

Պետական կազմը։

Պարսկաստանը սահմանադրական միապետություն է, վորի գլուխն է կանգնած շահը։ Օրենքները հաստատում են շահը և մեջլիսը։ Մեջլիսը բաղկացած է 136 պատգամավորներից, վորոնք ընտրվում են 2 տարով և բաղկացած են գլխավորապես խաներից և հոգևորականներից։

Գլխավոր քաղաքները։

Թեհրան (300.000 բնակիչ)—մայրաքաղաք։ Թավրիզ (200.000 բնակիչ)—առևտրական կենտրոն, միացած է Ջուլֆայի հետ յերկաթուղով։ Էնզելի (այժմ Բենդեր-ի—Փեհլևի)—նավահանգիստ է Կասպից ծովի ափին. ձկնորսություն։

Սպահան—Թեհրան-Շիրազ խճուղու վրա։ Մեշեդ—կրոնական կենտրոն. առևտուր Հնդկաստանի հետ։

Մոհամերա—նավահանգիստ. դրա վրայով է արտահանվում պարսկական նավթը։

Պարսկաստանը վո՞րտեղ է գտնվում։ Ինչո՞ւ նրա կլիման չոր է։
Կլիմայական վո՞ր գոտայում է գտնվում։ Ի՞նչ բույսեր են մշակվում։
Ժողովրդի գլխավոր պարապմունքը վո՞րն է։ Գյուղացու վիճակի մասին ի՞նչ կասեք։
Պարսկաստանն ի՞նչ հանքով առանձնապես աչքի յե ընկնում։ Այդ հանքն ո՞վ է շահագործում։
Ի՞նչ է արտահանվում և ներմուծվում։
Գլխավոր քաղաքները վորո՞նք են։
Իմպերիալիստական յերկրներից վո՞րն է առանձնապես շահագործում Պարսկաստանը։
Ինչո՞ւ Պարսկաստանը կոչվում է կիսագաղութային յերկիր։

Ա Ֆ Ղ Ա Ն Ս Տ Ա Ն

Աֆղանստանը գտնվում է Պարսկաստանի և Բրիտանական Հնդկաստանի միջև, ԽՍՀՄ-ից հարավ։ Խորհրդային Միության ամենահարավային կետը, Կուշկա կայարանը գտնվում է Աֆղանական սահմանի մոտ։

Աֆղանստանի մակարդակի և ազգաբնակության մեծության մասին ճիշտ տեղեկություններ չունենք։ Մակարդակը հաշվում են 600—700 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 6—8 միլիոն։

Բնակիչների մեծ մասը աֆղաններ են, վորոնք պատկանում են սպիտակ ցեղի իրանական խմբին։ Իրենց քանակով յերկրորդ տեղը բռնում են տաջիկները, վորոնք նույնպես իրանական ծագում ունեն և թվով մոտ մեկ միլիոն են։ Թյուրք ժողովուրդներից աչքի յեն ընկնում ուզբեկները, վորոնք մոտ 300000 են։ Թե աֆղանները և թե ուզբեկները գլխավորապես քոչվոր անասնապահներ են, իսկ տաճիկները նստակյաց են և պարապում են արհեստներով ու յերկրագործությամբ։ Քաղաքների ազգաբնակությունը բաղկացած է տաճիկներից։ Բացի յիշյալ ժողովրդներից Աֆղանստանում կան նաև մեծ թվով հնդիկներ։

Աֆղանստանը բավական բարձր լեռնաշխարհ է. Հինդուկուշն անցնելով յերկրի միջով և բաժանվելով բազմաթիվ ճյուղերի՝ տալիս է այդ յերկրին լեռնային բնույթ։

Գյուղատնտեսությունը: Աֆղանստանի լեռնալանջերը հարմար են անասնապահության համար, իսկ լեռնահովիտներն ու գոգերը՝ յերկրագործության, թեև տեղ-տեղ կլիմայի չորության պատճառով ստիպված են դիմել արհեստական վոռոգման ոգնության:

Հացահատիկներից մեծ չափով մշակում են ցորեն, յեգիպտացորեն, գարի, մի քանի շրջաններում էլ բրինձ: Գետերի արգավանդ հովիտներում տարածված են բանջարաբուծությունը և պտղաբուծությունը (զանազան բանջարեղեն, թուզ, բանան, նուշ, խաղող և այլն): Ժողովրդական տնտեսության մեջ մեծ դեր է կատարում նաև անասնապահությունը: Պահում են գլխավորապես վոչխար, այծ և ուղտ: Ուղտի բուրդը և այդ բրդից պատրաստված գործվածքները արտահանվում են:

Արդյունագործությունը: Աֆղանստանի լեռներում գտնվում են յերկաթ, քարածուխ, կապար, պղինձ, ցինկ, վոսկի, ծծումբ և զանազան թանգարժեք քարեր, բայց այդ հարստությունները համարյա չեն շահագործվում:

Գործարանային կյանքը բացակայում է: Տներում և արհեստանոցներում մշակում են գլխավորապես բուրդ և մետաքս (թաղիք, ուղտի և այծի բրդից գործվածքներ, շալեր, գորգեր, մետաքսե գործվածքներ և այլն):

Արտաքին առևտուրը: Յուր աշխարհագրական դիրքի շնորհիվ Աֆղանստանը կարողացել է առևտրական կապեր հաստատել ԽՍՀՄ-ի, Պարսկաստանի և Հնդկաստանի (Անգլիայի) հետ: Այդ բանին նպաստում են նաև ԽՍՀՄ-ի և Հնդկաստանի այն յերկաթուղիները, վորոնք անցնում են մինչև աֆղանական սահմանը: Աֆղանստանի արտաքին առևտրի մեջ առաջին տեղը բռնում է Հնդկաստանը, յերկրորդ տեղը՝ ԽՍՀՄ, իսկ յերրորդ տեղը՝ Պարսկաստանը: Աֆղանստանն արտահանում է Հնդկաստան՝ բուրդ, մետաքս, ձիեր, չոր միրգ և այլն, իսկ Հնդկաստանից ներմուծում է գործարանային ապրանքներ (շաքար, գործվածքներ): ԽՍՀՄ-ն Աֆղանստանից արտահանում է ցորեն, բրինձ, կաշի, մորթի, անասուններ, աղիքներ և այլն, իսկ փոխարենը տալիս է՝ շաքար, գործվածքներ և այլն:

Գլխավոր քաղաքները: Կաբուլ—մայրաքաղաք է. գտնվում է համանուն գետի արգավանդ հովտում, դեպի Հնդկաստան տանող ճանապարհի վրա: Առևտուր Հնդկաստանի հետ: Հերատ — առևտուր ԽՍՀՄ-ի հետ: Կանդահար—Բելուջիստանի սահմանի մոտ. անգլիացիների կառուցած ռազմական ճանապարհով կապվում է Հնդկաստանի հետ:

Պետական կազմը: Աֆղանիստանը մինչև 1919 թիվը ամբողջապես գտնվում էր Անգլիայի ազդեցության տակ: Անգլո-

աֆղանական յերրորդ պատերազմից հետո, 1919 թվին Աֆղանստանը ձեռք բերեց լիակատար անկախություն և հարաբերության մեջ մտավ մի շարք յեվրոպական յերկրների հետ: Անկախ Աֆղանստանը հենց սկզբից բարեկամական հարաբերություններ ստեղծեց ԽՍՀՄ-ի հետ:

Աֆղանստանը միապետություն է. միապետն այստեղ կոչվում է էմիր: Պետական խորհրդի անդամների կեսը նշանակվում է էմիրի կողմից, իսկ կեսն ընտրում է ժողովուրդը. բայց այդ խորհուրդը բացառապես խորհրդատու մարմին է միայն: Այսպիսով էմիրը ամբողջ յերկրի տեր ու տնօրենն է:

ԽՍՀՄ-ի առևտուրը մոտավոր արևելքի յերկրների հետ: Պարսկաստանը, Թյուրքիան և Աֆղանստանը ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ վորոշ արտոնություններ ունեն. բոլոր յերկրները (հաշված և Չինաստանն ու Յապոնիան) ապրանքներ ներմուծելու կամ արտահանելու համար ԽՍՀՄ-ից պետք է առանձին թույլտվություն ունենան, իսկ պարսկական, տաճկական և աֆղանական վաճառականները կարող են ազատորեն և առանց մաքսի ներմուծել ԽՍՀՄ իրենց յերկրի ապրանքները: Այն առևտրական պայմանագրերը, վոր կնքվել են ԽՍՀՄ-ի և մյուս կողմից Պարսկաստանի, Թյուրքիայի և Աֆղանստանի միջև, անշուշտ մեծ ազդեցություն են ունենալու այդ յերկրների արտաքին առևտրի զարգացման վրա: Առայժմ յեռանդուն առևտուր կատարվում է ԽՍՀՄ-ի և Պարսկաստանի միջև:

Աղյուսակ № 50.

Յերկրներ	Արտահանություն		Ներմուծություն		Ընդհ. շրջանառութ.	
	1913	1924/25 *)	1913	1924/25 *)	1913	1924/25 *)
Պարսկաստան	57.703	28.607	43.626	50.709	101.329	79.316
Թյուրքիա	35.783	10.042	18.440	3.739	54.223	13.781
Աֆղանստան	5.946	478	6.299	1.641	12.245	2.119

12. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ—Մոնղոլիա, Արևել. Թուրքեստան.

Կենտրոնական Ասիան յուր մեծությամբ (մոտ 6,3 միլիոն քառ. կիլոմետր) Յեվրոպայի $^{3}/_{5}$-ին է հավասար: Հյուսիսից նրա սահմաններն են՝ Սիբիրի լեռները (Ալտայը և Սայանյան լեռները), հարավից՝ Հիմալայը, արևելքից Խինգանը, իսկ արևմուտքից՝ Պամիրը:

Շրջապատված լինելով բարձրադիր լեռներով և գտնվելով ովկիանոսներից հեռու, Կենտրոնական Ասիան ունի ցամաքային, չոր կլիմա: Ցերեկը

*) Այժմյան գներով:

և ամառը գետինը սաստիկ տաքանում է, իսկ գիշերը և ձմեռը՝ ցրտում է. ամառվա ամենաբարձր և ձմեռվա ամենացածր աստիճանների տարբերությունը յերբեմն հասնում է մինչև 80°։ Բարեխառնության այդ սուր փոփոխություններից լեռնային տեսակները քայքայվում են և դրանից գոյանում են խճաքարեր ու ավազ, վորոնք ընդարձակ տարածություններ են ծածկում։

Ամբողջ Կենտրոնական Ասիան բաժանվում է յերեք մասի—Տիբեթ (Կուեն-Լունի և Հիմալայի մեջև), Արեւելյան Թուրքեստան (Կուեն-Լունի և Տյան-Շանի միջև, Տարիմ գետի ավազանում) և Մոնղոլիա (Տեբետից հյուսիս-արևելք մինչև ԽՍՀՄ-ի սահմանը)։

Այդ յերկրների համար բնորոշ է ազգաբնակության չնչին նոսրությունը, վորը յերևում է հետևյալ աղյուսակից

	Մակերեսը հազար քառ. կիլոմետրերով	Ազգաբնակությունը հազարներով	Ազգաբնակության խտությունը 1 քառ. կմ-ի վրա
Արևելյան Թուրքեստան . .	1.426	2.520	2
Մոնղոլիա	2.788	1.800	0,6
Տիբեթ	2.109	2.000	1

ԽՍՀՄ-ին սահմանակից են Արևելյան Թուրքեստանը և Մոնղոլիան։ Մենք կանգ կառնենք միայն այդ յերկուսի վրա։

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹՈՒՐՔԵՍՏԱՆ

Ցույց տվեք Արևել. Թուրքեստանի սահմանները։
ԽՍՀՄ-ից նա ինչ լեռներով է բաժանվում։
Այդ լեռներն աննպաստ են առևտրական հարաբերությունների տեսակետից, բայց նպաստավոր են ինչ տեսակետից։

Տարիմ գետի ավազանի մեծ մասը իսկական անապատ (Տակլա-Մական անապատ), վորը ծածկված է ավազաթմբերով և զուրկ է ջրից։ Փոթորիկների ժամանակ քամին բարձրացնում է ավազի ամպեր, վորոնք ավազի վարագույրով ծածկում են յերկինքը և որը ցերեկով խավար առաջացնում։ Քամու ազդեցությունից ավազաթմբերը կամաց-կամաց փոխում են իրենց տեղը և ծածկում արգավանդ հողեր և յերբեմն էլ ամբողջ քաղաքներ։ Վերջերս ճանապարհորդներին հաջողվել է գտնել ավազով ծածկված այդպիսի քաղաքների մնացորդներ։ Ավազաթմբերի շարժման շնորհիվ Լոբ-Նոր լիճը փոխում է յուր դիրքը և ձևը։ Անապատի յեզերքներին, լեռների ստորոտներում ձգվում է արգավանդ լյոսսի մի շերտ, վորը վոռոգվում է լեռնալանջերից հոսող գետերով, բայց այդ գետերը հետո ցամաքում են և կորչում ավազոտ անապատի մեջ։ Ջրազուրկ անապատի յեզերքներով տարածվում են տափաստաններ, վորտեղ արածում են անտիլոպներ, վայրի էշեր և ձիեր։

Ավազոտ անապատում վայրի վիճակում պատահում է յերկսապատանի ուղտ։ Լյոսսի շրջանում ցրված են բազմաթիվ օազիսներ, վորտեղ արհեստական վոռոգման շնորհիվ պարապում են այգեգործությամբ և յերկրագործությամբ։ Ստացվում են՝ կորեկ, ցորեն, յեգիպտացորեն, ծիրան, դեղձ, խնձոր, տանձ, խաղող և այլն։

Բնակիչները բաղկացած են թյուրք-թաթարներից, այսպես կոչված կաշգարցիներից: Նրանց մի մասը պարապում է անասնապահությամբ և իրենց անասունների հետ քոչում է տեղից-տեղ։ Ապրում են վրաններում, վորոնց ծածկում են թաղիքներով։ Ազգաբնակության մյուս մասը նստակյաց է, ապրում է օազիսներում և պարապում է յերկրագործությամբ և այգեգործությամբ։ Այդ նստակյացների մեջ տարածված է նաև տնայնագործությունը (պատրաստում են գորգեր, զանազան գործվածքներ, մետաքսի իրեր և այլն)։ Չինացիների թիվը հետզհետե մեծանում է. համարյա ամեն քաղաքում գտնվում է մի չինական թաղամաս։ Չինացիներն իրենց ձեռքն են առել յերկրի առևտուրն ու արհեստները, մասամբ էլ պարապում են յերկրագործությամբ։

Արևելյան Թուրքեստանը պատկանում է Չինաստանին։ Նրա գլխավոր քաղաքներն են Կաշգար եւ Յարքենդ:

Արևել. Թուրքեստանը ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերությունները պահպանում է գլխավորապես Կաշգարի և Յարքենդի վրայով։ ԽՍՀՄ-ից ստացվում են գործարանային ապրանքներ, իսկ փոխարենը արտահանվում են հում նյութեր.

Կարդացեք «Միջին Ասիայի անապատում» (աշխարհի շուրջը, 54 յեր.)

ՄՈՆՂՈԼԻԱ

Մոնղոլիան, Արևելյան Թուրքեստանի նման, բաղկացած է գլխավորապես չոր տափաստաններից և անապատներից։ Յուր բնական պայմաններով նա ավելի հարմար է անասնապահության, քան յերկրագործության համար։ Բնակիչները մոնղոլներ են, վորոնք պատկանում են դեղին ցեղին։ Չոր տափաստաններում և անապատների յեզերքներին նրանք պարապում են անասնապահությամբ։ Ուղտը, վոչխարն ու ձին քոչվոր մոնղոլի հարստությունն են կազմում։ Նրանց հետ մոնղոլը քոչում է տեղից-տեղ, տանելով յուր հետ նաև յուր ամբողջ գույքն ու վրանը։ Միսը, կաթը, կումիսն ու թեյը մոնղոլների կարևոր սնունդն են։

Մոնղոլիայի, ինչպես և ամբողջ Կենտր. Ասիայի, գլխավոր վառելիքը աթարն է։ Կանայք և յերեխաները տափաստաններում հավաքում են տավարի աղբը և ապա չորացնում ու այդպիսով պատրաստում վառելիք։

Ինչպես ասացինք, Մոնղոլիայի ժողովրդական տնտեսության միակ ճյուղը անասնապահությունն է։ Բայց մոնղոլները միայն անասնապահական մթերքներով չեն կարող բավարարվել։ Նրանց հարկավոր են թեյ (սննդառության գլխավոր առարկան է), ծխախոտ (ծխում են բոլորը, մինչև անգամ յերեխաները), բամբակե գործվածքներ (բրդե շոր չեն հագնում)։ Դրանց փոխարեն նրանք արտահանում են անասուններ, բուրդ, կաշի և յուղ։ Մոնղոլիայի արտաքին առևտրի մեջ խոշոր մասնակցություն ունեն անգլո-ամերիկական և չինական ֆիրմաները և սովետական առևտրական հիմնարկությունը։

1923-24 թ. Մոնղոլիայից Խորհրդ. Միությունն արտահանել է 1.101.000 ռուբլու բուրդ և անասուն, իսկ 1924-25 թ. Խ. Միության Մոնղոլիայի հետ ունեցած առևտրի շրջանառությունը ավելի քան յեռապատկել է։

Առևտրի համար կարևոր նշանակություն ունի այն ճանապարհը, վոր սկսվում է Պեկինից և Կալգանի վրայով հասնում է մինչև Ուլան-Բատոր (Նախկին Ուրգա), այստեղից էլ մինչև ԽՍՀՄ-ի սահման՝ Մայմաչին, վորի դիմաց գտնվում է Խ. Միության Կյախտա քաղաքը։ Կալգանից մինչև Ուլան-Բատոր մոտ 1000 կիլոմետր է. ուղտերն այդ տարածությունն անցնում են մոտ 35-40 որում։ Այժմ այդ ճանապարհով յերթևեկում են մարդատար ավտոմոբիլներ։

Մոնղոլիայում շատ քաղաքներ չկան. դրա պատճառն այն է, վոր բնակիչները նստակյաց չեն և քոչում են տեղից տեղ։ Գլխավոր քաղաքն է Ուլան-Բատորը, վորի բնակիչների թիվն է մոտ 100.000. մայրաքաղաք և առևտրական կենտրոն է։ Բացի նրանից նշանավոր են նաև Կոբդո և Ուլյասուտայ, վորոնք գտնվում են քարվանային առևտրի կենտրոնում։

1924 թ. Մոնղոլիան հայտարարվեց հանրապետություն, վորը ԽՍՀՄ-ի հետ բարեկամական հարաբերության մեջ է գտնվում։

13. ԽՍՀՄ-Ի ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Ֆ Ի Ն Լ Ա Ն Դ Ի Ա

Քարտեզի վրա ցույց տվեք Ֆինլանդիան։
Նրա արևմտյան կողմն ինչ պետություններ կան։
Ցույց տվեք նրա ափերը վողողող ծովերը։ Ինչու Ֆինլանդիայի հյուսիսային ծովեզերքը չի սառչում։ Հիշեցեք ԽՍՀՄ-ի Մուրմանսկ նավահանգիստը։
Ցույց տվեք ԽՍՀՄ-ի Ֆինլանդական սահմանը։

Ֆինլանդիան առաջ Ռուսաստանի մասն էր կազմում, բայց հեղափոխությունից հետո նա անջատվեց և իրեն հայտարարեց անկախ պետություն։ 1921 թվականի դաշնագրի համաձայն նա ԽՍՀՄ-ից ստացավ Պեչենգի շրջանը և այդպիսով հնարավորություն ունեցավ կապվել Հյուս. Բևեռային ծովի չսառչող յեզերքի հետ։ Յուր բնական պայմաններով Ֆինլանդիան հիշեցնում է Սկանդինավյան թերակղզին և կազմում է նրա բնական շարունակությունը։ Նրա մակերևույթը ներկայացնում է մի բլրաշատ բարձրավանդակ, վորը ծածկված է գրանիտի մերկ ժայռերով, անհամար լճերով (մոտ 40.000), ճահիճներով, ընդարձակ անտառներով, իսկ հյուսիսում նաև տունդրաներով։ Միայն ճահիճներն ու լճերը կազմում են Ֆինլանդիայի ամբողջ մակարդակի մեկ յերրորդ մասը։ Ֆինլանդիայի հողն արգավանդ չե և բարակ շերտով ծածկում է քարային լեռնային տեսակները, իսկ կլիման խիստ է։ Ընդհանուր առմամբ Ֆինլանդիայի բնական պայմանները յերկրագործության համար նպաստավոր չեն։

Յերկրի մակարդակը և ազգաբնակությունը։

Ֆինլանդիայի մակարդակը այժմ հավասար է 343,2 հազար քառ. կիլոմետրի, իսկ յեթե հաշվենք նաև ներքին ջրերի մակարդակը, այն դեպքում նրա մակարդակը հավասար կլինի 387,6 հազար քառ. կիլոմետրի։ Բնակիչների թիվը մոտ 3,4 միլիոն է։ Միջին հաշվով յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է 9 մարդ։

Ինչն է պատճառը, վոր Ֆինլանդիան այդչափ նոսր ազգաբնակություն ունի։

Չնայելով, վոր ազգաբնակությունն այդչափ նոսր է, ամեն տարի Ֆինլանդիայից մի քանի հազար մարդ գաղթում է դեպի Միաց. Նահանգները և այլ յերկրներ։ 1923 թ. Ֆինլանդիայից գաղթել է 13855 մարդ։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Ֆիններ	88.7%
Շվեդներ	11
Ռուսներ	0,16
Գերմանացիներ	0,08
Այլ ազգություններ	0,06

Գյուղատնտեսությունը։

Ֆինլանդիան գյուղատնտեսական յերկիր է։ Ազգաբնակության խոշոր մասը պարապում է յերկրագործությամբ և անասնապահությամբ, ինչպես այդ յերևում է հետևյալ աղյուսակից.

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԸ

Գյուղատնտեսությամբ պարապում է	61%
Արդյունագործությամբ »	14 »
Առևտրով և փոխադր. »	6 »
Պաշտոնյաներ և ազատ պրոֆեսիայի անձինք	2 »
Այլ և այլ ծառայություններ	17 »

Սակայն յերկրի բնական պայմանները գյուղատնտեսության համար

նպաստավոր չեն: Գյուղատնտեսական մակարդակը կազմում է երկրի ամբողջ մակարդակի 9%-ը միայն, մնացած 91%-ը անտառներ ու անհարմար հողեր են: Յերկրագործությունը զարգացած է գլխավորապես հարավային Ֆինլանդիայում:

Գլխավոր հացահատիկներն են՝ վարսակը, հաճարը յեվ գարին: Կարևոր նշանակություն ունի նաև կարտոֆիլը: 1926 թ. գլխավոր մշակույթների ցանքսերը և բերքը հետևյալ պատկերն էին ցույց տալիս.

Աղյուսակ № 51.

	Ցանքսը հազ. հեկտարներով հաշված	Բերքը հազ. տոններով հաշված	Բերքատվութ. կվինտալներով 1 հեկտարից
Վարսակ	447	496	11
Հաճար	216	267	12
Գարի	116	137	12
Ցորեն	15	19	13
Կարտոֆիլ	68	753	111

Կլիմայական և հողային աննպաստ պայմանների պատճառով բերքատվությունը Ֆինլանդիայում շատ ավելի ցածր է, քան արևմտյան Յեվրոպայի յերկրներում: Սեփական հացը յերկրի կարիքներին չի բավարարում, յեվ Ֆինլանդիան ստիպված է դրսից բավական մեծ քանակությամբ հացահատիկ (մանավանդ ցորեն) ներմուծել:

Բոլոր ցանքսերի մակարդակի համարյա կեսը կազմում են ցանովի խոտերը: Այս հանգամանքն արդեն ցույց է տալիս, որ Ֆինլանդիայում դաշտամշակությունը բավական ինտենսիվ է: Ցանքսերի ավելորդ խոնավությունը հեռացնելու համար ֆիններն անց են կացրել բազմաթիվ ջրուղիներ, իսկ բերքատվությունը բարձրացնելու համար վարելահողերը պարարտացնում են զանազան աղերով (ֆոսֆատներով, բորակով) և յեթե բերքատվությունն այնուամենայնիվ ցածր է մնում, դրա գլխավոր պատճառը բնական պայմաններն են:

Անասնապահությունը բավական զարգացել է: Բնական մարգագետինները, արմատապտուղներն ու ցանովի առատ խոտը հնարավորություն են տալիս պահելու ընտիր ցեղի կովեր: Կաթնատնտեսությունն այն աստիճանի լավ հիմքերի վրա յե դրված, որ Ֆինլանդիայից ամեն տարի բավական մեծ քանակությամբ յուղ և այլ կաթնամթերքներ են արտահանվում: 1913 թ. ստացվել էր ընդամենը 13,1 հազար տոնն յուղ, իսկ 1925 թ.—մոտ 18 հազար տոնն: Յուղի մեծ մասն արտահանվում է Անգլիա:

Անտառային տնտեսություն:

Ֆինլանդիան, ինչպես ասացինք, հարուստ է անտառներով: Յերկրի ամբողջ մակարդակի կեսից ավելին (58%) ծածկված է անտառներով: Քարածխի պա-

կասության պատճառով տներում, արդյունագործության, ինչպես և տրանսպորտի գործում, վորպես գլխավոր վառելիք, գործ է ածվում փայտը: Բացի այդ, Ֆինլանդիան յուր բազմաթիվ սղոցարաններում պատրաստում է գերաններ ու տախտակներ և արտահանում: Անտառը հնարավորություն է տալիս նաև պատրաստել թուղթ, վորը նույնպես արտահանվում է: Թե վորքան մեծ նշանակություն ունեն փայտեղենի մշակությունն ու թղթի արտադրությունը, այդ յերևում է նրանից, վոր գործարանային արդյունագործության ամբողջ արտադրության 34%-ը կազմում է փայտեղենի մշակությունը, իսկ 12%-ը թղթի արտադրությունը: 1920 թ. Ֆինլանդիայում աշխատում էին 660 սղոցարան 2.118 շարժիչով:

Բնական հարստությունները յեվ արդյունագործությունը:

Ֆինլանդիան հանքերով հարուստ չէ: Նա չունի քարածուխ և նավթ, չունի նաև բավարար չափով յերկաթահանք: Ֆինլանդիական յերկաթահանքը վատ վորակի յե և չի բավարարում յերկրի կարիքներին, այդ պատճառով նա ստիպված է շվեդական յերկաթահանքով աշխատել: Ֆինլանդիայում ստացվում են նաև փոքր քանակությամբ վոսկի, արծաթ, պղինձ և կլայեկ: Յեթե արդյունագործությունը քիչ թե շատ զարգացել է, այդ բանում նա զգալի չափով պարտական է աշխարհագրական հարմար դիրքին, «սպիտակ ածուխին», փայտային վառելիքին և ներքին հարմար ջրային ճանապարհներին: Արդյունագործության տարբեր ճյուղերի մեջ աչքի յեն ընկնում փայտի մշակությունը, թղթի արտադրությունը, մետաղների մշակությունը, տեքստիլ արդյունագործությունը, կաշվեգործությունը և այլն: Արդյունագործության առանձին ճյուղերի նշանակության մասին կարելի յե գաղափար կազմել հետևյալ աղյուսակից.

Յերկաթի մշակություն և մեքենաներ պատրաստելը	22.175	բանվոր
Տեքստիլ արդյունագործություն	20.147	»
Փայտի մշակություն	48.579	»
Թղթի արտադրություն	16.991	»
Կաշվեգործություն	5.232	»
Քիմիական արդյունագործություն	2.342	»
Այլ ճյուղեր	27.447	»

Հաղորդակցության միջոցները:

Ֆինլանդիայի յերկաթուղային գծերի ընդհանուր յերկարությունը կազմում է մոտ 4.500 կիլոմետր: Գլխավոր յերկաթուղային գիծն անցնում է Ֆիննական և Բոտնիկական ծոցերի յեզերքով և միացնում է ԽՍՀՄ-ն Շվեդիայի հետ: Այդ գլխավոր գծից անցնում են մի շարք ճյուղեր թե դեպի ներսը և թե դեպի գլխավոր նավահանգիստները:

Փոխադրական գործի համար մեծ նշանակություն ունեն նաև լճերն

ու գետերը, վորոնք բազմաթիվ ջրանցքներով միացած են իրար հետ: Ներքին ջրային ճանապարհները կարևոր դեր են կատարում փայտի արտահանության գործում:

Ֆինլանդիայի գլխավոր նավահանգիստներն են Վիբօրգը, Հելսինգֆորսը, Աբոն և Ուլեաբորգը:

Արտաքին առևտուրը: Ֆինլանդիան արտահանում է փայտեղեն (ամբողջ արտահանության 57,9%-ը), թուղթ (28,6%), գյուղատնտեսական մթերքներ (7,7%) և այլ ապրանքներ (5,8%): Ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում հացահատիկները, մետաղները, մեքենաները, գործվածքները և այլն: Ֆինլանդիայի արտաքին առևտրի մեջ խոշոր մասնակցություն ունեն Անգլիան, Միացյալ Նահանգները և Գերմանիան:

ԽՍՀՄ-ից Ֆինլանդիան արտահանում է գլխավորապես հացահատիկ, իսկ փոխարենը տալիս է թուղթ և մի քանի այլ ապրանքներ:

Պետական կազմը: Ֆինլանդիան հանրապետություն է: Օրենսդրական իշխանությունը պատկանում է սեյմին, իսկ կատարողականը՝ սեյմի նախագահին, վորը ընտրվում է 6 տարով: Նախագահը նշանակում է նախարարներ, վորոնք պատասխանատու յեն սեյմի առաջ:

Նկարագրեցեք Ֆինլանդիայի բնական պայմանները: Բնական պայմանները վո՞ր ճյուղի համար են նպաստավոր:

Ի՞նչ է արտահանվում և ներմուծվում: Ցույց տվեք գլխավոր նավահանգիստները:

ԽՍՀՄ-ի հետ Ֆինլանդիան ի՞նչ հարաբերության մեջ է:

ԵՍՏՈՆԻԱ.

Քարտեզի վրա ցույց տվեք Եստոնիայի տեղը: Գտեք սահմանները և շրջապատող ծովերն ու ծոցերը: Նրա հարևան յերկրները վորո՞նք են: ԽՍՀՄ-ի եստոնական սահմանն ինչպե՞ս է անցնում:

Եստոնիան անկախ յերկիր է: Նա կազմվել է Ռուսաստանի նախկին Եստլանդիայի նահանգից, Լիֆլյանդիայի, Պետրոգրադի (Լենինգրադի) և Պսկովի նահանգների մասերից ու Եզել, Տագո և Մոոն կղզիներից:

Յերկրի ամբողջ մակարդակը վերջին տեղեկությունների համաձայն կազմում 47.549 քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 1,1 միլիոն: Յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա ապրում է 23,4 մարդ:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Եստեր—92%, ռուսներ—5,2%, գերմանացիներ—1,3%, լատիշներ, լեհեր, հրեաներ և այլ ազգություններ—1,5%:

Գյուղատնտեսություն: Եստոնիան գյուղատնտեսական յերկիր է: Ազգաբնակության 72%-ը ապրում է գյուղերում և պարապում է յերկրագործությամբ և անասնապահությամբ: Եստոնիայի հողերը հետևյալ պատկերն ունեն.

Ցանքս	22,9%
Խոտահարք	24,5%
Արոտատեղ	17,5%
Անտառներ	20,1%
Անպետք հողեր	15,0%

Այսպիսով գյուղատնտեսական մակարդակը (ցանքսերը, խոտահարքը և արոտատեղերը) կազմում են յերկրի ամբողջ մակարդակի 64,9%-ը: Մյուս կողմից խոտահարքի և արոտատեղի բարձր տոկոսը ցույց է տալիս, վոր յերկրի տնտեսության համար անասնապահությունը կարևոր դեր է կատարում:

Հացահատիկներից առաջին տեղը բռնում են հաճարը, վարսակը և գարին: Ցորեն շատ չի մշակվում. բավական մեծ բերք ստացվում է նաև կարտոֆիլից: Սեփական հացը չի բավականանում:

Անասնապահությունը բավական զարգացած է (ինչու՞): Անասնապահական մթերքներն արտահանվում են:

Մեծ նշանակություն ունի և անտառային տնտեսությունը, վորովհետև յերկրի ամբողջ մակարդակի 1/5-ը ծածկված է անտառներով: Եստոնիան ունի մոտ 260 սղոցարան և մի շարք ուրիշ գործարաններ, վորտեղ փայտը վերամշակության յենթարկելով ստանում են թուղթ, փայտի զանգված և այլն:

Հանքային հարստություններ և արդյունագործությունը: Եստոնիան հանքերով աղքատ է: Նա՝ արդյունագործության զարգացման համար՝ յերկու անհրաժեշտ հանքերից—յերկաթից և քարածուխից զուրկ է: Յեղած հանքերի մեջ աչքի յեն ընկնում տորֆը, այրվող թերթաքարը, ֆոսֆատները և ցեմենտը:

Արդյունագործությունը բավական զարգացած է: Դա մասամբ բացատրվում է նրանով, վոր ռուսական արդյունագործությունը՝ կախված լինելով ոտար հում նյութերից, ձգտում էր հիմնվել արևմտյան սահմանի մոտ: Ռուս կապիտալիստները հիմնում էյին այժմյան Եստոնիայի տեղում (նախկին Եստլանդիայի նահանգում) գործարաններ, վորոնք վոչ միայն տեղական կարիքներին էյին բավարարում, այլև բավական մեծ քանակությամբ գործարանային ապրանքներ էյին ուղարկում Ռուսաստանի ներքին նահանգները:

Արդյունագործության ճյուղերից այժմ կարևոր են տեքստիլ արդյու-

նագործությունը, թղթի, կարդոնի պատրաստելը, կաշվեգործությունը, քիմիական արդյունագործությունը, գինեգործությունը և այլն: Մետաղային արդյունագործությունը հետադիմում է, վորովհետև նա չունի սեփական յերկաթ և քարածուխ: Այժմ ամբողջ Եստոնիայի մետաղագործության մեջ աշխատում են ընդամենը 6.000 մարդ, մինչդեռ պատերազմից առաջ միայն Րեվելի մետաղագործության մեջ աշխատում եյին 30.000 բանվոր:

Հաղորդակցության միջոցները: Եստոնիայի յերկաթուղային գծերն ունեն 1.433 կիլոմետր յերկարություն: Ամեն 1.000 քառ. կիլոմետր տարածությանն ընկնում է մոտ 30 կիլոմետր յերկաթուղային գիծ: Յերկաթուղային ցանցն ավելի խիտ է, քան ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում: Եստոնիայի յերկաթուղային ցանցը ռուսականի շարունակությունն է կազմում: Այդ ցանցով Լենինգրադի շրջանը և ներքին նահանգները կապվում են Բալտիկ ծովի հետ:

Ցույց տվեք Լենինգրադ—Նարվա—Րեվել (Տալլին), Պսկով—Րեվել գծերը:

Արտաքին առևտուրը: Եստոնիան արտահանում է գլխավորապես գյուղատնտեսական և անտառային տնտեսության ապրանքներ թե հում վիճակում և թե վերամշակված (թուղթ, սպիրտ), ինչպես այդ յերևում է հետևյալ աղյուսակից (տոկոսներով ամբողջ արտահանության նկատմամբ).

Վուշ	20,9%	Սպիրտ	3,6%
Փայտ	12,5 »	Կարտոֆիլ	2,8 »
Թուղթ	12 »	Մսեղեն	2,5 »
Հացահատիկ և ալյուր	11,9 »	Ցեմենտ	2,0 »
		Այլ ապրանքներ	27,4 »

Այդ ապրանքների մեծ մասն արտահանվում է Անգլիա:

Ներմուծվում են գործարանային պատրաստի իրեր, հում նյութ, վառելիք (քարածուխ) և սննդամթերք (ցորեն և այլ հացահատիկներ): Այդ ապրանքներն ստացվում են գլխավորապես Միաց. Նահանգներից, Անգլիայից և Գերմանիայից: ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ Եստոնիան այնքան էլ կարևոր դեր չի կատարում: 1924 թ. ԽՍՀՄ-ի, արտահանության ամբողջ արժեքի 4% ուղղվել է Եստոնիա: Մեր արտահանության գլխավոր ապրանքներն են՝ հացահատիկները, վուշը և կովի յուղը: Եստոնիայից ներմուծվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում թուղթը և կարտոնը:

Պետք է նկատի ունենալ և այն, վոր Եստոնիայից ստացվող ապրանքները պատրաստված չեն բուն Եստոնիայում, այլ ստացվում են Գերմանիայից, Անգլիայից և ընդհակառակը, Եստոնիային վաճառած մեր ապրանքները չեն մնում Եստոնիայում, այլ փոխադրվում են արևմտյան Յեվրոպա:

Այսպիսով ռուս-եստոնական առևտուրը վորոշ չափով տրանզիտային բնույթ ունի:

Պետական կազմը: Եստոնիան բուրժուական հանրապետություն է: Բարձրագույն իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է 100 պատգամավորից:

Կառավարությունը բաղկացած է նախարարներից և նախարարական խորհրդի նախագահից և պատասխանատու յե պարլամենտի առաջ:

Եստոնիան ինչ տիպի տնտեսություն ունի:
Ինչու այնտեղ մշակում են գլխավորապես վարսակ, հաճար ու գարի:
Գյուղատնտեսական վո՞ր ճյուղերն են զարգացած:
Ի՞նչ են արտահանվում և ներմուծվում:

ԼԱՏՎԻԱ

Լատվիան կազմվել է Ռուսաստանի նախկին Կուրլյանդիայի և Լիֆլյանդիայի նահանգների մասերից: Նրա մակարդակը հավասար է 65,8 հազար քառ. կիլոմետրի, իսկ բնակիչների թիվը՝ 1,8 միլիոնի: Յուրաքանչյուր քառ. կիլոմետրի վրա ապրում է 27 մարդ:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Լատիշներ	73%	Գերմանացիներ	7%
Ռուսներ	10%	Հրեաներ	6%
		Այլ ազգություններ	4%

Աղյուսակ № 52.

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԸ

Գյուղատնտեսությամբ պարապում է	79,8%
Արդյունագործությամբ »	6,6 »
Առևտրով և տրանսպորտով »	3,0 »
Պաշտոնյաներ և ազատ պրոֆեսիայի անձինք	1,6 »
Այլ զբաղմունքներ	8,6 »

Լատվիայի աշխարհագրական դիրքը բավական նպաստավոր է արտաքին հարաբերությունների համար: Րիգայի ծոցի չսառչող յեզերքն իր հարմար նավահանգիստներով պատկանում է Լատվիային:

Գյուղատնտեսություն: Լատվիան գյուղատնտեսական յերկիր է: Գյուղատնտեսական մակարդակը կազմում է նրա ամբողջ մակարդակի 55%-ը: 1926 թ. վարելահողերը հետևյալ պատկերն ունեյին (տոկոսներով և հազար հեկտարներով հաշված):

Աղյուսակ № 53.

	Հազար հեկտարներով հաշված	% %
Վարսակ	321	34

Հաճար	251	26
Գարի	190	20
Ցորեն	50	5
Հացերն ընդամենը . .	812	85
Կարտոֆիլ	82	8
Կտավատ	64	7
Ընդամենը . . .	958	100

Այստեղից չերևում է, վոր գլխավոր հացահատիկները կազմում են վարսակը, հաճարը և գարին: Մեծ նշանակություն ունեն նաև կարտոֆիլն ու վուշը:

Բացի հացահատիկներից և վուշից Լատվիայում մեծ չափով ցանում են նաև խոտաբույսեր, վորոնք հարուստ արոտատեղերի հետ հնարավորություն են տալիս պահել ազնվացեղ անասուններ: Անասունների թիվը համեմատած ազգաբնակության հետ բավական մեծ է:

Յերկրի տնտեսության մեջ կարևոր նշանակություն ունի անտառային տնտեսությունը, վորը Լատվիայում բավական՝ լավ հիմքերի վրա յե դրված: Փայտեղենը արտահանության գլխավոր առարկաներից մեկն է:

Արդյունագործություն: Պատերազմից առաջ Ռիգայում կային զանազան գործարաններ, վորտեղ պատրաստում եյին մեքենաներ, գործվածքներ, քիմիական պարագաներ, թուղթ, ռետինե իրեր և այլն: Պատերազմի ընթացքում մի քանի գործարաններ անցան Ռուսաստանի ներսը. բացի այդ՝ պատերազմական գործողությունները ու գերմանական գրավումը մեռցրին յերկրի գործարանային կյանքը: Այժմ Լատվիան աշխատում է վերականգնել այդ արդյունագործությունը, բայց սեփական վառելիք և հում նյութ չունենալը խոչընդոտ է հանդիսանում:

Հաղորդակցության միջոցները: Լատվիայի յերկաթուղային ցանցն ունի 2.855 կիլոմետր յերկարություն: Յուրաքանչյուր 1.000 քառ. կիլոմետր մակերեսին ընկնում է 39 կիլոմետր յերկաթուղային գիծ: Գլխավոր գծերը կազմում են ռուսական յերկաթուղիների շարունակությունը (Մոսկվա—Վինդավա, Որյոլ—Ռիգա և այլն): Ջրային գծերից ամենակարևորը Արևմտյան Դվինան է: Յուր հարմար նավահանգիստների և յերկաթուղիների շնորհիվ Լատվիան, վորպես տրանզիտային յերկիր, կարևոր նշանակություն ունի ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի համար:

Արտաքին առևտուրը: Լատվիայի արտահանումը բաղկացած եր հետևյալ ապրանքներից (տոկոսներով հաշված).

Փայտանյութեր	35%
Վուշ	26 »

Կտավատի սերմեր	11 »
Յուղ	8 »
Կաշի և մորթի	4 »

Այսպիսով Լատվիայի արտահանության գլխավոր ապրանքներն ստացվում է գյուղատնտեսությունից և անտառային տնտեսությունից:

Ներմուծության մեջ աչքի յեն ընկնում մեքենաները, գյուղատնտեսական գործիքները, յերկաթը, պողպատը, բամբակը, բրինձը, շաքարը և այլն:

Ռուս-լատվիական արտաքին առևտուրն ունի հետևյալ պատկերը (տոկոսներով ներմուծման և արտահանման ամբողջ արժեքի նկատմամբ).

	1921	1922	1923	1923/24	1924/25
Լատվիայից ներմուծվում է ԽՍՀՄ	1,0	5,2	1,7	1,0	0,4
ԽՍՀՄ-ից արտահանվում է Լատվիա	22,9	12,9	11,6	10,4	11,0

Այստեղից չերևում է, վոր Լատվիան ԽՍՀՄ-ի կարևոր շուկաներից մեկն է:

Պետական կազմը: Լատվիան հանրապետություն է: Օրենսդրական իշխանությունը պատկանում է սեյմին, վորը բաղկացած է 100 պատգամավորից: Պատգամավորները, ինչպես և նախագահը, ընտրվում են յերեք տարով: Նախագահը նշանակում է նախարարներ, վորոնք պատասխանատու յեն սեյմի առաջ:

Մերձբալթյան յերկրները և ԽՍՀՄ: Եստոնիան և Լատվիան, ինչպես տեսանք, գյուղատնտեսական յերկրներ են, զուրկ կարևոր բնական հարստություններից: Ունենալով հարևաններ՝ արևմուտքից արդյունագործական Յեվրոպան, իսկ արևելքից գյուղատնտեսական ԽՍՀՄ-ն, այդ յերկրները կարող են մասնագիտանալ այնպիսի ապրանքների արտադրության մեջ, վորոնք հեշտությամբ կտարածվեն թե Արևմտյան Յեվրոպայում և թե ԽՍՀՄ-ի մեջ: Մյուս կողմից Լատվիան և Եստոնիան կարող են իրենց ապահովել հացով՝ արևելքից, արդյունագործական ապրանքներով՝ արևմուտքից:

Բայց այդ յերկրներն ունեն ԽՍՀՄ-ի համար մի ուրիշ նշանակություն ևս: Դա հետևյալն է: Գտնվելով Բալտիկ ծովի յեզերքին, Լատվիան և Եստոնիան կազմում են կարևոր տրանզիտային ճանապարհ Արևմտյան Յեվրոպայի և ԽՍՀՄ-ի միջև: Լենինգրադի և Մուրմանսկի հետ կապվում են գլխավորապես ԽՍՀՄ-ի հյուսիսային շրջանները (անտառ), իսկ Ռիգայի, Լիբավայի և Վինդավայի հետ՝ ԽՍՀՄ-ի կենտրոնական և հարավային շրջանները:

Յեվրոպայի համր քարտեզի վրա ցույց տվեք Եստոնիան, Լատվիան, և Լիտ-

վան։ Ներկեցեք նրանց բռնած տեղը և նշանակեցեք գլխավոր քաղաքները։
Այդ յերկրները գլխավորապես ի՞նչ են արտահանում և ներմուծում։
Յե՞րբ անկախություն ձեռք բերին։ Ի՞նչ պետական կազմ ունեն։

ԼԵՀԱՍՏԱՆ

Յեվրոպայի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Լեհաստանի սահմանները։
Թվեցեք այն պետությունները, վորոնք սահմանակից են նրան։
Ցույց տվեք ԽՍՀՄ-ի լեհական սահմանը։
Ցույց տվեք Լեհաստանի ծովային սահմանը։

Լեհաստանը կազմվեց համաշխարհային պատերազմի ժամանակ։ Նրա մեջ մտան նախկին Ավստրո-Վենգրիայի, Ռուսաստանի և Գերմանիայի լեհական մասերը. բացի այդ՝ Լեհաստանին կցվեցին նաև Ուկրայնայի և Բելոռուսիայի արևմտյան շրջանները և Գերմանիայի այն մասը, վոր ձգվում է Վիսլայի ձախ ափով մինչև Բալտիկ ծովը («Դանցիգի միջանցքը»)։ Դանցիգի միջանցքով Արևելյան Պրուսիան, վոր Գերմանիայի մասերից մեկն է, անջատվում է բուն յերկրից։

Լեհաստանի մակարդակն այժմ կազմում է 388,2 հազար քառ. կիլոմետր, իսկ բնակիչների թիվը՝ 27,2 միլիոն։ Միջին հաշվով յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածության վրա ապրում է 70 մարդ։ Յուր ազգաբնակության խտությամբ Լեհաստանը հետ է մնում Արևմտյան Յեվրոպայի շատ յերկրներից, բայց յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր նա գլխավորապես գյուղատնտեսական յերկիր է, այն դեպքում Լեհաստանը պետք է համարել խիտ բնակված յերկիր։

Լեհերը կազմում են ամբողջ ազգաբնակության կեսը միայն. մնացած ազգություններից աչքի յեն ընկնում ուկրայնացիները, հրեաները, բելոռուսները, գերմանացիները և այլն։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

Լեհեր	52,7%	Բելոռուսներ	7,3%
Ուկրայինցիներ	21 »	Գերմանացիներ	7 »
Հրեաներ	11 »	Այլ ազգություններ	1 »

Ըստ պարապմունքի Լեհաստանի ազգաբնակությունը հետևյալ պատկերն ունի.

Յերկրագործությամբ պարապում է	61,3%
Արդյունագործությամբ »	15,8 »
Առևտրի և փոխադրական գործի մեջ	8,1 »
Հասարակական ծառայության մեջ	4,4 »
Մնացած ծառայություններ	10,4 »

Գյուղացիությունը կազմում է ամբողջ ազգաբնակության 39,2%-ը, պրոլետարիատը—38,2%-ը, իսկ ունևոր դասը՝ 22,6%-ը։

Գյուղատնտեսություն։

Լեհաստանի ազգաբնակության գլխավոր պարապմունքը յերկրագործությունն է։ Արգավանդ հողը, ընդարձակ հարթությունները ու համեմատաբար մեղմ կլիման հնարավորություն են տալիս մշակելու վոչ միայն հացահատիկներ, այլև վուշ, կանեփ, ճակնդեղ, գայլուկ և այլն։

Հացահատիկներից առաջին տեղը բռնում է հաճարը, յերկրորդ տեղը՝ վարսակը. ցորենը և գարին համեմատաբար պակաս նշանակություն ունեն։

Կարտոֆիլի և ճակնդեղի մշակությունը բավական տարածված է։

Աղյուսակ № 54.

ՑԱՆՔՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱԶԱՐ ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ ՀԱՇՎԱԾ

Հաճար	4.852
Վարսակ	2.619
Գարի	1.238
Ցորեն	1.108
Չորս հացահատիկները	9.817
Կարտոֆիլ	2.388
Ճակնդեղ	185

Հանքային հարստություններ և արդյունագործություն։

Լեհաստանը հարուստ է զանազան հանքերով, վորոնց մեջ կարևոր են նավթը, քարածուխը, աղը, յերկաթի և ցինկի հանքերը և այլն։ Լեհաստանի քարածխի պաշարը կազմում է ամբողջ Յեվրոպայի պաշարի 22%-ը։ Քարածխի արտադրությամբ Լեհաստանը այժմ բռնում է հինգերորդ տեղը, իսկ նավթի արտադրությամբ՝ 10-րդ տեղը։ Աղաքարի պաշարն անսպառ է։

Լեհաստանի ծանր արդյունագործությունը գտնվում է բավական լավ պայմաններում։ Յերկաթն ու քարածուխը գտնվում են իրար շատ մոտ և աշխատավոր ձեռքերի պակասություն չի զգացվում։ Յեվ յեթե այնուամենայնիվ այդ արդյունագործությունը հարկավոր բարձրության վրա չի կանգնած, դրա գլխավոր պատճառը պետք է համարել պատերազմը, վորը քայքայեց յերկրի տնտեսությունը։ Մյուս պատճառն էլ այն է, վոր Լեհաստանը այդ արդյունագործությունը բարձրացնելու համար անհրաժեշտ դրամագլուխ և սպառման շուկաներ չունի։ Լեռնային արդյունաբերության մեջ տեղավորված ամբողջ դրամագլխի 50%-ը պատկանում է ֆրանսիական կապիտալիստներին։

Արդյունագործության ճյուղերի մեջ ամենակարևորը կազմում է տեքստիլ արդյունագործությունը, վորի գլխավոր կենտրոններն են Լոդզ և Բելոստոկ։ Մյուս ճյուղերից աչքի յեն ընկնում քիմիական, մետաղագործական և թղթի արդյունագործությունները։

Արտաքին առևտուրը։

Լեհաստանի արտաքին առևտուրը հետևյալ պատկերն է տալիս (տոննաներով, 1924 թ.)

Ներմուծություն		Արտահանություն	
Բամբակ	18%	Քարածուխ	20%
Գործվածքներ	10	Նավթի արտադրանք	5
Կաշի, մորթի	7	Ցինկ և ցինկի իրեր	4
Հագուստ	4	Փայտեղեն	7
Մետաղ և մետաղե իրեր	7	Գործվածքներ	10
Քիմիական ապրանքներ	3	Շաքար	13
Սննդանյութեր	17	Հացահատիկ	5
		Անասուն	3
		Մսեղեն	3

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ Լեհաստանի ժողովրդական տնտեսությունը խառն բնույթ ունի։ Արտահանվող ապրանքների մեջ աչքի յեն ընկնում և՛ արդյունագործական, և՛ գյուղատնտեսական ապրանքները։

Ռուս-լեհական արտաքին առևտուրն առայժմ մեծ չե, որ յերևում է հետևյալ տվյալներից (%%-ով ԽՍՀՄ-ի ներմուծության և արտահանության նկատմամբ)։

	1921	1922	1923	1923/24	1924/25
Լեհաստանից ներմուծվել է ԽՍՀՄ	0,1%	3,6%	5,4%	1,4%	1,6%
ԽՍՀՄ-ից արտահանվել է Լեհաստան	0,1 «	3,5 «	1,2 «	0.9 «	0,7 «

Լեհաստանը դեռ մինչև այժմս էլ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի հետ առևտրական դաշնագիր չի կնքել։

Պետական կազմը:

Լեհաստանը հանրապետություն է։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, որը բաղկացած է սեյմից և սենատից։ Հանրապետության գլուխն է կանգնած նախագահը, վորը նշանակում է նախարարներ, կնքում է դաշնագրեր զանազան պետությունների հետ և այլն։

АЗGАБНАКЧЗ —

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ.

Կալվածատեր և գործարանատերեր	3,9%
Մանր և միջին բուրժուազիա	14,1%
Կուլակներ (20-ից մինչև 100 հեկտ. հող ունեցողներ)	1,2%
Միջակներ (5-20 հեկտ.)	13 %
Սակավահող գյուղացիներ (5-ից պակաս հեկտ.)	24,8%
Բատրակներ	20 %
Արդյունաբերական պրոլետարիատ	7,6%
Ազատ պրոֆեսիայի տեր մարդիկ և ծառայողներ	15,4%

Բուրժուական կուսակցություններ եվ խմբավորություններ:

Լեհական բուրժուական կուսակցություններից և խմբավորումներից նշանավորներն են՝

Ազգային-ժողովրդական միությունը (ժողովրդական դեմոկրատներ), վորը կալվածատերերի և կապիտալիստների հետադեմ կուսակցությունն է։

Խոշոր կալվածատերերի քրիստոնեական ազգային կուսակցությունը.

Պյաստ-Լեհական հետադեմ կուլակության կուսակցությունը.

Միջակ գյուղացիության Վիզվոլենիյե կուսակցությունը.

Ֆաշիստները, վորոնք ներկայացված են 16 կազմակերպությունների մեջ։

Պիլսուդսկու կազմակերպած ազատության Լեհական կազմակերպություն:

Նրա մեջ համախմբվել են Պիլսուդսկու կողմնակիցները, վորոնք մտնում են նաև այլ կազմակերպությունների մեջ։

Պրոլետարական կուսակցություններ:

Լեհաստանի Կոմունիստական կուսակցությունը: Կոմինտերնի սեկցիան։ Կուսակցությունը կազմակերպվել է 1918 թվին «Լեհաստանի և Լիտվիայի սոցիալ-դեմոկրատական» և Լեհական Սոցիալիստական կուսակցության ձախ թևի ձուլումով։ Կուսակցությունը այժմ աշխատում է անլեգալ։

Լեհական Սոցիալիստական կուսակցությունը սոցիալ-հայրենասիրական և շովինիստական քաղքենության և մանր բուրժուազիայի կուսակցությունն է։ Խիստ հալածանք է մղում կոմկուսակցության դեմ։

Պիլսուդսկու քաղաքականությունը եվ փոխհարաբերություն ՍՍՀՄ-ի հետ

1926 թվի մայիսին Պիլսուդսկին կատարեց զինվորական հեղաշրջում և փաստորեն սկսեց տեր ու տիրական հանդիսանալ Լեհական պետության։

Պիլսուդսկին հայտնի յե, վորպես ԽՍՀՄ-ի կատաղի թշնամի։ Գլխավորապես նրա ջանքերով եր, վոր առաջ յեկավ լեհ-խորհրդային պատերազմ 1919-1921 թվին։ Ներկայումս լեհական կառավարությունը Պիլսուդսկու և անգլիական պահպանողականների դրդմամբ, մերժում է ՍԽՀՄ-ի հետ չեզոքության և չհարձակման պայման կնքել, պատրաստվում է հափշտակելու Լիտվիայի ամբողջ տերիտորիան և ընդհանրապես իմպերիալիստական և միլիտարիստական քաղաքականություն է տանում։

Գլխավոր քաղաքները:

Վարշավա—յերկրի մայրաքաղաքն է։ Արդյունագործական խոշոր կենտրոն։ Կրակով—արևմտյան Գալիցիայի կենտրոն։ Լ՛վով—արևելյան Գալիցիայի կենտրոն։ Լոդզ—տեքստիլ արդյունագործության կենտրոն: Պոզնան։ Վիլնա:

Լեհաստանը յուր դիրքով ինչպիսի յերկիր է, ծովայի՞ն, թե ցամաքայի՞ն։
Նա վո՞րտեղով է ծովի հետ կապվում։
Ցույց տվեք «Դանցիգի միջանցքը»։
Ի՞նչ տիպի տնտեսություն ունի. ի՞նչ հանքային հարստություններ է պարունակում։
Թվեցեք արտահանվող և ներմուծվող ապրանքները։

Յեվրոպայի համր քարտեզի վրա ներկեցեք Լեհաստանի բռնած տեղը և նշանակեցեք գլխավոր քաղաքները (գրել մանր)։

ՌՈՒՄԻՆԻԱ

Քարտեզի վրա գտեք Ռումանիայի տեղը։ Ցույց տվեք նրա սահմանները և թվեցեք այն պետությունները, վորոնք սահմանակից են նրան։

Ցույց տվեք Բեսսարաբիան։

Յեվրոպայի ֆիզիկական քարտեզի վրա գտեք Ռումանիայի դաշտային և լեռնային մասերը։

Ցույց տվեք նրա գլխավոր գետերն ու լեռները։

Ռումանիայի մակարդակը յեվ ազգաբնակությունը:

Համաշխարհային պատերազմի հետևանքով Ռումանիան բավական մեծացրեց յուր կալվածները, ինչպես այդ յերևում է հետևյալ աղյուսակից։

Աղյուսակ № 55

	Մակերեսը հազար քառ. կիլոմետրերով հաշված	Բնակչության թիվը հազարներով հաշված	Ազգաբնակության խտությունը 1 քառ. կմ.
Ռումանիան 1914 թ. սահմաններում	138.6	7904,1	57,0
Բեսսարաբիա (ԽՍՀՄ ից)	44,4	2344,8	52,8
Բուկովինա (Ավստրիայից)	10,4	800,1	76,9
Տրանսիլվանիա	57,8	2678,3	46,3
Կրիշանա (Վենգրիայից)	20,8	1317,0	63,3
Մարամուրեշ	16,2	766,7	47,3
Բանատ	28,5	1582,1	55,5
	316,7	17393,1	54,9

Այսպիսով յերկրի մակարդակը և ազգաբնակությունը մեծացել են ավելի քան յերկու անգամ։

Ռումանիայի աշխարհագրական դիրքը բավական նպաստավոր է։ Նրա արևելյան ափերը վողողում է Սև ծովը, վորի նշանակությունը Ռումանիայի համար պատերազմից հետո ավելի ևս մեծացավ, վորովհետև Բոսֆորը և Դարդանելը այժմ ազատ են բոլոր յերկրների համար։

Բնակիչների թիվը 17,4 միլիոն է, վորի 80%-ը պարապում է գյուղատնտեսությամբ։ Յուրաքանչյուր քառ. կիլոմետր տարածության վրա ապրում է մոտ 55 մարդ։

Աղյուսակ № 56

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ։

Ռոմաններ	57,8%	Գերմանացիներ	6,8%
Մոլդավացիներ	7,9	Ռուսներ	6,6
Վենգրացիներ	8,7	Այլ ազգեր	6,2
Հրեաներ	6,8		

Գյուղատնտեսություն:

Ռումանիան պատերազմից առաջ խոշոր հողատերերի յերկիր էր։ Ռուսական հեղափոխության ազդեցության տակ կառավարությունն ստիպված յեղավ հողային բարենորոգումներ մտցնել, բաժանելով պետական, ինչպես և մասնավոր, հողերը չունևոր գյուղացիների մեջ։ Յերկրի ամբողջ մակարդակից

Վարելահողերը կազմում են	42,2%
Անտառները	23,2
Արոտատեղերը և խոտահարքերը	16,2
Խաղողի այգիները	0,8

Գլխավոր հացահատիկներն են՝ յեգիպտացորենը, ցորենը յեվ գարին: Վարսակը և հաճարը, վոր Լատվիայում, Եստոնիայում և Ֆինլանդիայում առաջնակարգ դեր են կատարում, այստեղ կարևոր նշանակություն չունեն։

Մյուս մշակույթներից նշանավոր են կարտոֆիլը, ճակընդեղը, ծխախոտը և խաղողը։ Գինու համաշխարհային արտադրության 3%-ը տալիս է Ռումանիան։

Բերքատվությամբ Ռումանիան հետ է մնում շատ յերկրներից, բայց չնայելով դրան՝ նա վոչ միայն ապահովված է սեփական հացով, այլեվ խոշոր քանակությամբ արտահանում է: Արտահանվող ամբողջ հացահատիկի կեսը յեգիպտացորենն է կազմում։

Համաշխարհային շուկայում Ռումանիան հանդես է գալիս, վորպես հաց մատակարարող յերկիր։

Տափաստանները, հարուստ արոտատեղերն ու խոտահարքերը, ալպյան մարգագետինները նպաստում են անասնապահության զարգացմանը, բայց ռումանական անասուններն իրենց վորակով դժվար թե կարողանան մրցել Արևմտյան Յեվրոպայի յերկրների հետ։

Յերկրի ժողովրդական տնտեսության համար մեծ նշանակություն ունին նաև անտառները, վորոնք կազմում են ամբողջ մակարդակի 23%-ը։ Լեռնային տեղերում տարածված են կաղնին և շամին, իսկ ցածրադիր մասերում՝ հաճարին։ Փայտը արտահանվում է:

Հանքային հարստություններ յեվ արդյունագործությունը:

Ռումանիան հարուստ է զանազան հանքերով. դրանց մեջ կարևոր են նավթը, աղը յեվ քարածուխը. կա փոքր քանակությամբ յերկաթ, ծծումբ, պղինձ, մանգան, կապար և այլն։

Պատերազմից առաջ Ռումանիան տալիս էր նավթի համաշխարհային արտադրության 3,7%-ը (1,9 միլիոն տոնն), իսկ այժմ՝ $1-1\frac{1}{2}$%-ը։ Ռումանիայի նավթային արդյունաբերության մեջ դրված դրամագլխի 95%-ը պատկանում է օտարներին։ Ստացված նավթի $1/3$-ն արտահանվում է։

Ռումինական քարածուխը վորակով բարձր չէ. նրա 85%-ը կազմում է գորշ քարածուխ, վորից կոքս չի ստացվում: Մեծ նշանակություն ունի աղը, վորի խոշոր մասն արտահանվում է:

Ծանր արդյունագործությունը զարգացած չէ, վորովհետև Ռումանիան չունի կոքսացող քարածուխ և համապատասխան հանքեր:

Թեթև արդյունագործության ճյուղերից աչքի յեն ընկնում տեքստիլ արդյունագործությունը, փայտի մշակությունը և գյուղատնտեսական նյութերի վերամշակությունը:

Ընդհանուր առմամբ Ռումանիայի արդյունագործությունը թույլ է:

Արտաքին առևտուրը: Ինչպես տեսանք, Ռումանիան արտադրում է հացահատիկներ և մի քանի հում նյութեր (նավթ, փայտ) արդյունագործության համար: Հենց այս ապրանքներն էլ կազմում են արտահանության գլխավոր առարկան, վոր յերևում է աղյուսակից.

Հացահատիկներ	50%
Նավթ	13
Փայտեղեն	17
Անասուններ	7
Այլ ապրանքներ	13

Այդ ապրանքներն ուղղվում են գլխավորապես արևմտյան Յեվրոպա, վորտեղից Ռումանիան ստանում է գործարանային ապրանքներ:

Ռուս-ռումանական առևտուրը չնչին է:

ԽՍՀՄ-ն և Ռումանիան դե-յուրե դեռևս չեն ճանաչել իրար: Սահմանագլխին՝ թյուրիմացությունների տեղիք չտալու համար, յերկու յերկրներն էլ ունեն հավասար քանակությամբ սահմանապահ զորամասեր: Ռումանիան բռնագրավել է ԽՍՀՄ-ի մասերից մեկը, Բեսսարաբիան: ԽՍՀՄ առաջարկում է ընդհանուր քվեարկությամբ (պլեբիսցիտ) վորոշել, թե վոր յերկրին է ուզում միանալ Բեսսարաբիան: Ռումանիան, վախենալով, վոր այդ բանը իր համար աննպաստ կարող է լինել, մերժում է:

Պետական կազմը: Ռումանիան սահմանադրական միապետություն է: Օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, վորը բաղկացած է սենատից և պատգամավորների խորհրդարանից: Նախարարները պատասխանատու յեն պարլամենտի առաջ:

Գլխավոր քաղաքները: Բուխարեստ — մայրաքաղաք է. արդյունագործական կենտրոն: Գալաց — նավահանգիստ է: Յասսի: Կիշինև — Բեսսարաբիայի գլխավոր կենտրոնը:

Յեվրոպայի ֆիզիկական քարտեզի վրա ցույց տվեք Ռումանիան և նկարագրեցեք մակերևույթը:

Նրա մեջով ի՞նչ գետ է հոսում:

Ի՞նչ տիպի տնտեսություն ունի: Գլխավորապես ի՞նչ հացահատիկներ են մշակվում: Թվեցեք նշանավոր հանքերը:

Համաշխարհային շուկային ի՞նչ է մատակարարում:

Յեվրոպայի համր քարտեզի վրա ներկեցեք Ռումանիայի բռնած տեղը և գրեցեք գլխավոր քաղաքները:

III. ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՊԸ ՅԵՎ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային առևտուր: Մենք տեսանք, վոր մի շարք ֆակտորների ազդեցության տակ առանձին յերկրների տնտեսությունն ունի գյուղատնտեսական կամ արդյունագործական և կամ խառն բնույթ:

Գյուղատնտեսական յերկրներն արտադրում են գլխավորապես հում նյութ և սննդամթերք, իսկ արդյունագործական յերկրները՝ ֆաբրիկատներ:

Ի՞նչ գյուղատնտեսական յերկրներ գիտեք: Դրանցից յուրաքանչյուրն ի՞նչ է արտադրում:

Արդյունագործական ի՞նչ գլխավոր կենտրոններ կան: Այդ կենտրոնների մեջ ի՞նչ յերկրներ են մտնում: Արդյունագործական յերկրներն ի՞նչ տեսակ ապրանքներ են արտադրում:

Այսպիսով յերկրների մեջ առաջացել է համաշխարհային աշխատանքի բաժանում կամ, ինչպես ասում են, «մասնագիտացում ապրանքների արտադրության մեջ»: Կանադան. Արգենտինան, ԽՍՀՄ-ն, Ռումանիան մեծ քանակությամբ հաց են արտադրում. Ավստրալիան, Կանադան, Արգենտինան, Դանիան՝ միս. Անգլիան, Միաց. Նահանգները, Գերմանիան՝ գործվածքներ, մեքենաներ և այլն: Վորպեսզի այդ յերկրների տնտեսական կյանքն ընթանա նորմալ տեմպով, անհրաժեշտ է, վոր նրանք փոխանակեն իրենց ապրանքները: Անգլիան պետք է Յեգիպտոսին գործվածքներ տա և դրա փոխարեն Յեգիպտոսից ստանա բամբակ: Ապրանքների այս փոխանակության վրա է հիմնված համաշխարհային առևտուրը:

Արտաքին առևտուրը բաղկացած է արտահանությունից և ներմուծությունից: Արտահանվող ապրանքների ամբողջ արժեքի և ներմուծվող ապրանքների ամբողջ արժեքի գումարը գաղափար է տալիս առևտրի ընդհանուր շրջանառության մասին:

Դիտեցեք հետևյալ աղյուսակը և ասացեք.

1) Արտաքին առևտրով առաջին տեղը վո՞ր յերկիրն է բռնում:
2) Ընդհանրապես արտաքին առևտրի շրջանառությամբ վո՞ր պետությունները են աչքի ընկնում: Այդ յերևույթն ինչո՞վ եք բացատրում:

Աշխատանք: Գծեցեք մի դիագրամ, վորով կարելի լինի գաղափար կազմել տարբեր յերկրների արտաքին առևտրի համեմատական մեծության մասին:

Աղյուսակ № 57.

ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 1925 Թ.

(միլիոն վոսկի ռուբլիներով հաշված)

Յերկրներ	Ներմուծում	Արտահանում	Ընդհանուր շրջանառություն
Անգլիա	12.418	8.707	21.125
Միացյալ Նահանգներ	8.220	9.545	17.765
Գերմանիա	6.085	4.091	10.176
Ֆրանսիա	4.082	4.215	8.297
Բրիտ. Հնդկաստան	1.596	2.812	4.408
Կանադա	1.725	2.323	4.048
Յապոնիա	2.039	1.840	3.879
Արգենտինա	1.550	1.891	3.441
Իտալիա	2.026	1.415	3.441
Հոլլանդիա	1.918	1.412	3.330
Բելգիա և Լյուքսեմբուրգ	1.647	1.341	2.988
Ավստրալիական Միություն	1.491	1.455	2.946
Չինաստան	1.635	1.215	2 850
Չեխո-Սլովակիա	1.015	1.084	2.099
Բրազիլիա	804	959	1.763
Շվեցարիա	990	766	1.756
Դանիա	861	808	1.669
Շվեդիա	749	708	1.457
Հար.-Աֆրիկյան Միություն	603	724	1.327
Ավստրիա	770	517	1.287
ԽՍՀՄ	709	568	1.277
Յեգիպտոս	561	583	1.144
Լեհաստան	570	478	1.048
Նորվեգիա	487	464	851
Ֆինլանդիա	270	273	543

Համաշխարհային առևտրական նավատորմ։

Համաշխարհային առևտրի $^{4}/_{5}$ մասը ծովային ճանապարհով է կատարվում։ Այդ պատճառով համաշխարհային առևտրի համար ծովային ճանապարհներն ավելի կարևոր նշանակություն ունեն, քան թե ներքին ջրային ճանապարհներն ու յերկաթուղիները։

1912 թ. Գերմանիայից արտահանված ապրանքների $^{2}/_{3}$-ը փոխադրվել է ծովով։ Նույնպիսի հարաբերություն նկատվում է նաև Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի արտաքին առևտրի մեջ, մինչդեռ Միաց. Նահանգներում ծովային առևտուրը կազմում եր արտաքին առևտրի $90^{0}/_{0}$-ը, իսկ Յապոնիայում և Անգլիայում ամբողջ արտաքին առևտուրը բացառապես ծովերով է կատարվում։

Ծովային ճանապարհներն ունեն մի քանի առավելություններ։ Առաջին՝ ցամաքային ճանապարհը կախված է յերկրի քաղաքական պայմաններից, իսկ ծովը պատկանում է բոլորին։ Յերկրորդ՝ ցամաքային ճանապարհի ուղղությունը գծված է, վորոշ է, իսկ ծովն ազատ է ամեն ուղղությամբ, մանավանդ այն ժամանակվանից սկսած, յերբ ծովային տրանսպորտի մեջ գործադրության մեջ դրվեց շոգեմեքենան։ Մարդն այլևս ծովային հոսանքներից ու քամու ուղղությունից կախում չունի։ Յերրորդ՝ ցամաքային ճանապարհներն անցկացնելն ու նորոգելը մեծ ծախսեր են պահանջում, մինչդեռ ծովային ճանապարհներն այդ բանից ազատ են։

Ծովային ճանապարհներն այս խոշոր առավելությունների, ինչպես և ժողովուրդների տնտեսական կյանքի համար ունեցած նշանակության պատճառով, բոլոր պետություններն աշխատում են դեպի ծով յելք ունենալ։ Հարմար աշխարհագրական դիրք ունեն Անգլիան, Յապոնիան, Ֆրանսիան, Միաց. Նահանգները. համեմատաբար աննպաստ դիրք ունեն Գերմանիան և մանավանդ ԽՍՀՄ։ Այն պետությունները, վորոնք ծովային սահման չունեն, որինակ՝ Շվեցարիան, Չեխո-Սլովակիան, Ավստրիան, Հաբեշստանը և այլն, արտաքին հարաբերությունների գործում կախված են հարևան յերկրներից։

Համաշխարհային նավատորմի մեծությունը։

Բոլոր յերկրների առևտրական նավատորմերը միասին վերցրած կոչվում են համաշխարհային նավատորմ։ Առևտրական նավատորմի մեծությունը վորոշվում է վոչ թե նավերի թվով, այլ տարողությամբ։ Նավերի տարողությունը չափելու համար ծովային պետությունների մեծ մասը գործ է ածում ծավալային տոննը*)։ Նետտո տոններով չափվում են ապրանքին հատկացրած ոգտակար տարածությունը, իսկ բրուտտո տոններով նավի ամբողջ տարողությունը, հաշված և այն տեղերը, վոր բռնված են քարածխով, մեքենաներով և ծառայողներով։

*) Անգլիական ծավալ. տոննը հավասար է 2.83 խոր. մետրի։

Աղյուսակ № 58.

ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՇԽ. ՆԱՎԱՏՈՐՄԸ

(հաշված հազար ծով. բրուտտո տոններով)

Յերկրներ	1914 թ.	1927 թ.
Անգլիա	21.045	22.174
Միաց. Նահանգներ	5.368	14.670
Ճապոնիա	1.708	4.033
Ֆրանսիա	2.319	3.470
Իտալիա	2.459	3.483
Հոլլանդիա	1.668	2.654
Գերմանիա	2.505	3.363
Նորվեգիա	1.495	2.824
Իսպանիա	1.118	1.161
Շվեդիա	899	1.365
Դանիա	820	1.060
Մնացած յերկրները	4.685	4·679
Ընդամենը	49.089	65.193

Համաշխ. առևտրական նավատորմը վորքան եր պատերազմից առաջ և վորքան պատերազմից հետո:

Վերջին տարիների ընթացքում առանձնապես վոր յերկրների նավատորմն ե մեծացել: Նավատորմի մեծությամբ առաջին տեղը վոր յերկիրն ե բռնում:

Աշխատանք: *Գծեցեք մի դիագրամ, վոր ցույց տա տարբեր յերկրների առևտրական նավատորմի համեմատական մեծությունը:*

Գլխավոր օվկիանոսները ու ծովերը:

Ինչպես վոր յերկաթուղային ցանցի խտությունը ցամաքի տարբեր մասերում միևնույնը չե, այնպես ել ծովային հաղորդակցության գծերի խտությունը տարբեր ե տարբեր օվկիանոսներում ու ծովերում:

Օվկիանոսների մեջ այս տեսակետից առաջին տեղը բռնում ե Ատլանտյան օվկիանոսը, վորի վրայով ամեն օր յերթևեկում են 300-ից ավել շոգենավ: Ամբողջ ծովային տրանսպորտի 77%-ը կատարվում ե Ատլանտյան օվկիանոսի վրայով, մինչդեռ Խաղաղ օվկիանոսին ընկնում ե 15%, իսկ Հնդկական օվկիանոսին՝ ընդամենը 8%:

Ատլանտյան օվկիանոսի ծովային տրանսպորտի այդ հսկայական չափը բացատրվում ե նրանով, վոր մի կողմում գտնվում ե արդյունագործական Արևմտյան Յեվրոպան, իսկ մյուս կողմում՝ Միաց. Նահանգներն ու Կանադան: Բացի դրանից Ատլանտյան օվկիանոսի վրայով Արևմտյան Յեվրոպան կապվում ե նաև Հար. Ամերիկայի գյուղատնտեսական յերկրների, ինչպես և Ավստրալիայի հետ, վորոնք Արևմտյան Յեվրոպային տալիս են մեծ քանակությամբ հում նյութ:

Ատլանտյան օվկիանոսի վրայով անցնող շոգենավային գծերից կարևորները սրանք են.

1. Հյուս.-Ատլանտյան գիծ, *վորին բաժին ե ընկնում համաշխարհային ծովային տրանսպորտի 50%-ը: Բոլոր յեվրոպական նավահանգիստները կապ են պահպանում Նյու-Յորքի հետ:*

2. Միջին Ատլանտյան գիծ— *Յեվրոպա-Վեստինդիա:*

3. Հարավ-Ատլանտյան գիծ—*Յեվրոպայի և Հարավային Ամերիկայի յերկրների միջև:*

4. Արևմտյան Աֆրիկայի գիծ, *Յեվրոպայից Աֆրիկայի արևմտյան ափերին զուգահեռ անցնում ե դեպի հարավային Աֆրիկա:*

Ատլանտյան օվկիանոսի ծովերից կարևոր ե Միջերկրական ծովը, վորի նշանակությունը վերջերս Սուեզի ջրանցքի շնորհիվ բավականաչափ մեծացել ե: Սև ծովը դեպի ծովը անհարմար յելք ունի (Նեղուցներ):

Բալտիկ ծովը այնքան ել խորը չե, ունի բավական ծանծաղուտներ և ձմեռը սառչում ե: Շրջապատված ե այնպիսի յերկրներով, վորոնց արդյունագործությունն այնքան ել զարգացած չե: Դեպի օվկիանոսն անհարմար յելք ունի:

Բալտիկ, Հյուսիսային, Միջերկրական և Սև ծովերի ափերին ինչ նշանավոր նավահանգիստներ կան:

Ցույց տվեք Լոնդոն, Լիվերպուլ, Համբուրգ, Անտվերպեն, Լենինգրադ, Նյու-Յորք, Մոնտեվիդեո, Մարսել, Նեապոլ նավահանգիստները:

Զափազանց արագ բարձրանում ե Խաղաղ օվկիանոսի *նշանակությունը: Դա բացատրվում ե Խաղաղ օվկիանոսի շուրջը գտնվող յերկրների (Ճապոնիայի, Ավստրալիայի, Հարավային Ամերիկայի) տնտեսական զարգացմամբ և մյուս կողմից՝ Պանամայի ջրանցքի բացմամբ: Խաղաղ օվկիանոսի գլխավոր գծերն սկսվում են Սան-Ֆրանցիսկոյից և Վանկուվերից ու վերջանում Ճապոնիայի և Չինաստանի խոշոր նավահանգստներում: Հյուսիսային Ամերիկայի ափերից դեպի Ավստրալիա գնացող խոշոր գծերի ճանապարհին գտնվում են մի շարք կղզիներ (Հավայի, Սամոա, Ֆիջի և այլն), վորոնք միջանկյալ կայարանի դեր են կատարում:*

Ցույց տվեք Սան-Ֆրանցիսկո—Հավայի—Յոկոհամա, Նյու-Յորք—Պանամա—Պաումոտու—Սիդնեյ գծերը:

Ցույց տվեք Խաղաղ օվկիանոսի շուրջը գտնվող գլխավոր նավահանգիստները:

ԽՍՀՄ-ի գլխավոր նավահանգիստներից մեկը գտնվում ե Խաղաղ օվկիանոսի ափին. դա վորն ե:

Բերինգյան նեղուցն ինչ կարևոր դեր ե կատարում համաշխարհային ծովային առևտրի մեջ:

Հնդկական օվկիանոսը *կիսաօվկիանոս ե: Նրա վրայով անցնում ե այն կարևոր ծովային ճանապարհը, վորն սկսվում ե Յեվրոպայում և Սուեզի ջրանցքով անցնում ե դեպի Հեռավոր Արևելք: Հնդկական օվկիանոսում*

այդ գլխավոր գծից բաժանվում է յերկու ճյուղ, վորոնցից մեկն ուղղվում է դեպի Ավստրալիա, իսկ մյուսը՝ Հար. Աֆրիկա։

Ցույց տվեք Լոնդոն—Ջիբրալտար—Սուեզ—Ադեն — Կոլոմբո — Սինգապուր—Հոնգկոնգ—Շանհայ գիծը։

Հիշած բոլոր ծովային ճանապարհներից առանձնապես աչքի յեն ընկնում յերկուսը. մեկը հյուսիս-ատլանտյան գիծն է, վորով Արևմտյան Յեվրոպան կապվում է Նյու-Յորքի հետ, իսկ մյուսը՝ Սուեզի գիծը, վորով Յեվրոպան կապվում է Հարավային Ասիայի և Արևելյան Ասիայի հետ։

Ծովային նեղուցները յեվ բազաները:

Բաց ծովում շոգենավը աշխատում է ժամանակ վաստակել, այսինքն ձգտում է անցնել ամենակարճ և ուղիղ ճանապարհով։ Բայց յեթե ծովային ճանապարհն անցնում է ցամաքի մոտով, այն դեպքում նա կախված է այդ ցամաքի կազմությունից։ Այս հանգամանքն առանձնապես յերևան է գալիս այնտեղ, վորտեղ շոգենավերն ստիպված են անցնել ջրային նեղ տարածություններով, այսինքն նեղուցներով։ Բոլոր ծովային գծերը հավաքվում են նեղուցում և կազմում հանգույցներ, իսկ նեղուցից դուրս գալով նորից բաժանվում են իրարից և ընդունում իրենց հարմար ուղղությունը։ Հյուս.-Ամերիկական ծովային ճանապարհն ունի միայն մի նեղուց. դա Պա-դե-Կալեն է (Լամանշի նեղ մասը), իսկ Սուեզի գիծն ունի մի քանիսը, որինակ, Ջիբրալտարը, Բաբ-էլ-Մանդեբի նեղուցը (Ադեն քաղաքով), Սինգապուրը և այլն։ Սովորաբար նեղուցների ափին առաջանում են վաճառաշահ քաղաքներ, հետևապես նեղուցները տնտեսական նշանակություն ունեն։ Բայց նրանք ունեն և քաղաքական նշանակություն։ Նա, վոր իշխում է նեղուցում, իշխում է և հարևան ծովում։ Անգլիան Սուեզի և Ջիբրալտարի շնորհիվ Միջերկրականի տեր ու տնօրենն է։ Պատերազմի ժամանակ նեղուցում իշխող պետությունը հեշտությամբ կարող է փոչնչացնել հակառակորդի նավագնացությունը։ Դրանով է բացատրվում այն, վոր ամեն մի պետություն աշխատում է ամրացնել յուր ձեռքում գտնվող նեղուցը։ Նեղուցի ափին կամ կղզիների վրա կառուցում են հսկայական ամրություններ և նավատորմի համար ծովային-ռազմական բազաներ։ Ծովային այդպիսի ամրոցների մեծ մասը պատկանում է Միաց. Նահանգներին և Անգլիային։ «Ծովերի ազատությունը» կիրականանա միայն այն ժամանակ, յերբ կվոչընչացնվեն այդ ամրությունները և նեղուցները կհայտարարվեն միջազգային։

Հիշեցեք Անգլիայի ծովային-ռազմական բազաները և ամրությունները։

Ծովային ջրանցքներ:

Ծովային ճանապարհը դեմ առնելով ցամաքին, ստիպված է յերբեմն պտույտ գործել այդ ցամաքի

շուրջը։ Որինակ. շոգենավը Լոնդոնից Հնդկաստան գնալու համար առաջ շուրջը։ Որինակ. շոգենավը Լոնդոնից Հնդկաստան գնալու համար առաջ ստիպված եր պտտել Աֆրիկայի շուրջը։ Շատ վաղուց մարդիկ ձգտում եյին վերացնել ամեն տեսակի խոչընդոտ, վոր աշխատում է յերկարացնել ծովային ճանապարհը։ Դրա համար նրանք յերկու ցամաքներ միացնող պարանոցի վրայով անց են կացնում ջրանցք։ Այդպիսի ջրանցքներից յերկուսը՝ Սուեզի և Պանամայի ջրանցքները՝ ունեն համաշխարհային նշանակություն։

Սուեզի ջրանցքն անցնում է այն պարանոցով, վոր միացնում է Ասիան Աֆրիկայի հետ։ Նա սկսվում է Պորտ-Սայիդի մոտ և վերջանում է Սուեզով. ընդհանուր յերկարությունն է 168 կիլոմետր, վորից 38 կիլոմետրն անցնում է լճերով։ Իր ամբողջ յերկարության վրա ունենալով միևնույն բարձրությունը, Սուեզի ջրանցքն ազատ է շլյուզներից, Այս հանգամանքը հեշտացնում է նրա վրայով անցնելը։ Սուեզի ջրանցքը տնտեսական տեսակետից ակցիոներական ընկերություն է, վորի ակցիաների մեծ մասը պատկանում է Անգլիային։ Անգլիան, այժմ յուր ձեռքում ունենալով Սուեզի շուրջը գտնվող յերկրները, ինչպես և Ջիբրալտարը, այդ ջրանցքի տեր ու տնօրենն է։

Սուեզի ջրանցքի նշանակությունը շատ մեծ է ծովային տրանսպորտի համար. նա զգալի չափով կրճատեց այն ճանապարհը, վոր անցնում է Յեվրոպայից դեպի հարավային Ասիան և հեռավոր Ասիան, ինչպես այդ ցույց է տալիս աղյուսակը.

Աղյուսակ № 59.

Լոնդոնից մինչև	Տարածությունը կիլոմետրերով հաշված		Սուեզի ջրանցքով ճանապարհի մեջ տնտեսվում է
	Սուեզի ջրանցքով	Բարեհուսո հրվանդանի մոտով (Հար. Աֆրիկայում)	
Բոմբեյ	11.350	20.140	43,5%
Կոլոմբո	12.160	19.640	38 %
Րանգուն	14.360	21.680	33,5%
Սինգապուր	14.930	21.860	31,5%
Յոկոհամա	20.240	27.000	24 %

Պանամայի ջրանցքը կտրում է համանուն պարանոցը Կոլոն և Պանամա նավահանգիստների միջև։ Ունի ընդամենը 80 կիլոմետր յերկարություն, այսինքն մոտ յերկու անգամ կարճ է Սուեզի ջրանցքից, բայց նրա կառուցումը տևեց ավելի քան 33 տարի (1882—1915 թ.)։ Ունենալով 91 մետր լայնություն և 13,7 մետր խորություն, Պանամայի ջրանցքը կարող է անցկացնել ծովային ամենամեծ նավերը։ Ջրանցքը պատկանում է Միաց.

Նահանգներին, վորը ձեռք է բերել նաև Ջրանցքի յերկարությամբ 8 կիլոմետր լայնություն ունեցող մի շերտ («Ջրանցքի զոնա»):

Պանամայի ջրանցքի շնորհիվ զգալի չափով կարճացան այն ծովային ճանապարհները, վորոնք անցնում են Ամերիկայի Ատլանտական և Խաղաղական յեզերքների միջև: Բայց ավելի կարճացավ այն ճանապարհը, վորը միացնում է Ամերիկայի արևելյան յեզերքը (Նյու-Յորք և այլն) արևելյան Ասիայի հետ, ինչպես այդ յերևում է աղյուսակից.

Աղյուսակ № 60.

Նյու-Յորքից մինչև	Տարածությունը ծովային մղոններով հաշված		Պանամայի ջրանցքի ոգտությամբ ճանապարհի մեջ անտեսվում է
	Հորն հրվանդանի մոտով	Պանամայի ջրանցքով	
Գվայաքիլ	10.420	2.850	72,6%
Վալպարայզո	8,340	4.630	44,5%
Սան-Ֆրանցիսկո	13.620	5.290	61,2%
Յոկոհամա	16.200	10.000	38,3%
Հոնգկոնգ	17.270	11.580	33 %
Սիդնեյ	12.740	10.150	24,1%

Համաշխարհային յերկաթուղային գծերը:

Ցամաքային ճանապարհներից ամենակարևորը յերկաթուղին է, վորը հնարավորություն է տալիս մեծ քանակությամբ ապրանքներ և մարդիկ բավական արագ կերպով փոխադրել մի տեղից մի ուրիշը: Մի յերկիր վորքան տնտեսապես զարգացած է, այնքան խիտ է նրա յերկաթուղային ցանցը: Յերկաթուղիները բացի տնտեսական նշանակությունից ունեն նաև քաղաքական և ռազմագիտական նշանակություն:

Առաջին աչքի ընկնող յերկաթուղային գիծը շինվել է 1830 թ. Լիվերպուլ և Մանչեստր քաղաքների միջև. նույն թվականներին յերկաթուղային գծեր կառուցվել են նաև Միաց. Նահանգներում: Մինչև 1850-ական թվականները յերկաթուղիներ կային միայն Յեվրոպայում և Ամերիկայում, իսկ հետո արդեն նրանք տարածվեցին նաև մյուս աշխարհամասերում:

Վերջին տեղեկությունների համաձայն յերկրագնդի բոլոր յերկաթուղիների յերկարությունը 1.200.000 կիլոմետրից անցնում է. մի յերկարություն, վոր մոտ 30 անգամ մեծ է հասարակածից և մոտ 3 անգամ ել՝ լուսնի՝ յերկրագնդից ունեցած հեռավորությունից:

Աղյուսակ № 61.

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհամասեր	Յերկարությունը կիլոմետրերով 1920 թ.	1.000 քառ. կիլոմետր տարածության ընկնում է	10.000 բնակչին ընկնում է
Ամերիկա	611.834	14,8	30,0
Յեվրոպա	362.587	37,8	8,3
Ասիա	123.404	2,9	1,2
Աֆրիկա	56.950	1,9	4,2
Ավստրալիա	48.664	5,4	58,6
Ընդամենը	1.203.439	9,3	6,7

Աշխարհամասերից վո՞րն ավելի խիտ յերկաթուղային ցանց ունի:

Ինչո՞վ բացատրել այն, վոր Ավստրալիայում 10.000 բնակչին ավելի մեծ յերկաթուղային գիծ է ընկնում, քան թե մյուս աշխարհամասերում:

Յերկաթուղային խիտ ցանց ունեն միջին և արևմտյան Յեվրոպան և Հյուս. Ամերիկա՛յի հարավ-արևելյան մասը, այսինքն համաշխարհային յերկու մեծ արդյունագործական կենտրոնները: Յերկաթուղային ցանցի խտությամբ առաջին տեղը բռնում է Բելգիան, ապա Շվեյցարիան, Անգլիան, Գերմանիան, Հոլլանդիան և Ֆրանսիան: Յերկարությամբ առաջին տեղը բռնում են Միաց. Նահանգների յերկաթուղիները, իսկ յերկրորդ տեղը՝ ԽՍՀՄ-ն:

Համաշխարհային տրանսպորտի համար կարևոր նշանակություն ունեն այն յերկաթուղիները, վորոնք աշխարհամասի մի ծայրից անցնում են մինչև մյուսը, կապվելով այն խոշոր նավահանգիստների հետ, վորտեղից բսկսվում են ծովային ճանապարհները: Այդպիսի գծերը կոչվում են **տրանսկոնտինենտալ ճանապարհներ**:

Աշխարհամասերից ամենաշատ տրանսկոնտինենտալ գծեր ունի Յեվրոպան: Այդ գծերն անցնում են հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, ինչպես և միջորեականի ուղղությամբ: Նրանցից շատերը հատվում են միջին Յեվրոպայում. այսպիսով Փարիզը, Բերլինը և Վիեննան դարձել են ամբողջ աշխարհի յերկաթուղային գլխավոր հանգույցները:

Ցույց տվեք Մուրմանսկ—Լենինգրադ—Վիտեբսկ—Կիև—Ոդեսսա, Արխանգելսկ—Վոլոգդա—Մոսկվա—Կուրսկ—Խարկով—Ռոստով, Համբուրգ—Բերլին—Պրագա—Վիեննա—Բելգրադ—Կոստանդնուպոլիս, Հավր—Փարիզ—Լիոն—Մարսել, Լիսաբոն—Փարիզ—Բերլին—Վարշավա—Մոսկվա—Չելյաբինսկ յերկաթուղային գծերը:

Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգներում այժմ գոյություն ունեն 9 տրանսկոնտինենտալ յերկաթուղային գիծ, վորոնցից յուրաքանչյուրի յերկարությունը կազմում ե 5-ից 6 հազար կիլոմետր: Այդ տարածությունն անցնելու համար պետք ե գործ դնել ընդամենը $4^{1}/_{2}$-ից վեց որ:

Միաց. Նահանգների տրանսկոնտինենտալ գծերը միացնում են Ատլանտյան ովկիանոսի և Մեքսիկայի նավահանգիստները (Նյու-Յորք, Նոր-Որլեան և այլն) Խաղաղ ովկիանոսի ափերի հետ, վորտեղ գտնվում են Ս.-Ֆրանցիսկո, Լոս-Անջելոս, Սիետլ նավահանգիստները:

Ցույց տվեք Նյու-Յորք—Չիկագո—Սան-Ֆրանցիսկո, Նոր-Որլեան—Լոս-Անջելոս գծերը:

Կանադայի վրայով անցնում ե յերեք տրանսկոնտինենտալ գիծ, վորոնցից ամենահինը Մոնրեալը միացնում ե Վանկուվերի հետ: Այս գիծը կազմում ե «յերկրագնդի բրիտանական գծի» մի մասը: Յերկրագնդի բրիտանական գիծը նշանավոր ե նրանով, վոր հնարավորություն ե տալիս պտտել յերկրագնդի շուրջը բացառապես անգլիական կալվածներով, անգլիական նավերով և անգլիական նավահանգիստներով:

Ասիայի յերկաթուղային ցանցը խիտ չե: Դա բացատրվում ե վոչ միայն ազգաբնակության կուլտուրայի ցածր մակարդակով, այլ և յերկրի ռելյեֆով (բազմաթիվ բարձրավանդակներ, լեռներ ու անապատներ): Խիտ յերկաթուղային ցանց ունեն Հնդկաստանը, Յավան, Յապոնիան: Հնդկաստանում յերկաթուղային գծերից նա, վոր անցնում ե մինչև Աֆղանստանի սահմանները, ունի խոշոր ռազմագիտական նշանակություն: Ասիական գծերից ամենայերկարը սիբիրական գիծն ե, վորով Յեվրոպան միանում ե Հեռավոր Արևելքի հետ: Լիսաբոն—Մոսկվա—Չելյաբինսկ—Վլադիվոստոկ 15.000 կիլոմետր ե: Բեռլինից մինչև Վլադիվոստոկ գնալը նորմալ պայմաններում տևում ե 13—14 որ:

Աֆրիկայի բնական և կուլտուրական պայմանները նույնպես նպաստավոր չգտնվեցին յերկաթուղային շինարարության համար: Յերկաթուղային համեմատաբար խիտ ցանց ունի Հար. Աֆրիկական Միությունը: Գծերից շատերը ափերից անցնում են դեպի յերկրի ներսը տնտեսական գրավումներ անելու նպատակով: Այն խոշոր տրանսկոնտինենտալ գիծը, վորով Կահիրեն պետք ե միանա Կապշտադտի հետ, դեռևս ավարտված չե:

Ավստրալիայի տնտեսական կյանքի զարգացման համար յերկաթուղիները կատարեցին նույն դերը, ինչ վոր Աֆրիկայում: Խիտ ցանց ունի յերկրի հարավ-արևելյան մասը, վորտեղ ազգաբնակությունն ավելի խիտ ե և տնտեսական կյանքն ել ավելի զարգացած ե, քան մնացած շրջաններում:

Քարտեզի ոգնությամբ ծանոթացեք բոլոր աշխարհամասերի գլխավոր յերկաթուղային գծերի հետ:

Կարդացեք «Ցամաքային տրանսպորտ» գլուխը (Խորրաբին, Պատմա-տնտեսակ. աշխարհագրություն, 77—91 յերես):

Գլխավոր յերկրների քաղաքական խմբավորումները:

Ծանոթանալով մի շարք յերկրների հետ, մենք ցույց տվինք, վոր այդ յերկրները տնտեսապես կախված են իրարից. մյուս կողմից՝ մենք տեսանք, վոր նրանցից յուրաքանչյուրը մյուսից բաժանվում ե քաղաքական սահմաններով: Այսպիսով ժամանակակից աշխարհը աչքի յե ընկնում տնտեսական փոխադարձ կախվածության և քաղաքական սահմանների միջև յեղած հակասությամբ:

Սակայն կապիտալիստների և իշխանություն ունեցողների հարստանալու ձգտումն այնքան մեծ ե, վոր այսոր քաղաքական սահմանները կապիտալի ճնշման տակ վորոշ չափով թուլացել են և իրենց դռները բաց արել կապիտալի առաջ: Այսպես, Անգլիան և Պորտուգալիան «սուվերեն» պետություններ են, բայց վերջինս կախված ե անգլիական քարածխից ու կապիտալից, ինչպես վորևե անգլիական գաղութ: Միաց. Նահանգների նման «սուվերեն» ե և Նիկարագուան, բայց վերջինս տնտեսապես կախված ե Միաց. Նահանգներից:

Հետպատերազմյան ժամանակվա ռեալ քաղաքական միավորները բնավ յերբեք ազգային պետություններ չեն, այլ ազգային պետությունների խմբեր, վորոնցից յուրաքանչյուրի առաջնորդը այս կամ այն հզոր արդյունագործական պետությունն ե և յուր մեջ պարունակում ե ավելի պակաս նշանավոր պետությունների և գաղութների մի շարք: Այդ պետություններից մի քանիսը պաշտոնապես (de iure) անկախություն են վայելում, բայց տնտեսապես (de fakto) նրանք կախված են ավելի ուժեղ պետություններից:

Պատերազմն ու խաղաղության պայմանները ցույց տվին, վոր յեվրոպական հողը յերբեք սրբություն չի հանդիսանում ժամանակակից իմպերիալիզմի համար, և վոր ազգային պետությունների սահմանները յերբեք այնքան ամուր և հաստատուն չեն, վոր դիմանան տնտեսական նոր հարաբերությունների առաջ:

Մեզ համար այժմ բոլորովին պարզ ե, վոր վաղ թե ուշ, զենքի ուժով լինի, թե խաղաղ ճանապարհով—այդ միևնույնն ե, այդ սահմանները նորից պիտի գծվեն և այնպիսի վիճակի մեջ պիտի դրվեն, վոր համապատասխանեն ժամանակակից տնտեսական փաստերին: Յեվրոպան փաստորեն դադարել ե աշխարհի «գերագույն» մասը լինելուց, վոր մինչև հիմա կառավարում եր աշխարհի մնացած բոլոր մասերը, վոր նվաճել ու շահագործում եր նրան: Յեվրոպայի սահմաններից դուրս, Նոր Աշխարհում և Հեռավոր

Արևելքում առաջ են յեկել և զարգացել նոր արդյունագործական պետություններ։ Ցեվ այժմ աշխարհի իշխանության «բեռը» այն յերկրի տիրող դասակարգերի ուսերին է ընկնում, վորը տնտեսական տեսակետից ամենից զարգացածը դուրս կգա և բնական միջոցներով ամենից հարուստը կլինի։ Իսկ կաշվի գույնը այլևս հաշվի չի առնվի։

Մենք ասացինք, վոր ռեալ փաստը — դա **խմբերն են**։

Ժամանակակից աշխարհը իրենց մեջ բաժանող այդ խմբերից յուրաքանչյուրի գլուխ է կանգնած այս կամ այն արդյունաբերական պետությունը (կամ մի այնպիսի պետություն, վոր կարող է դառնալ մի այդպիսի ուժ)․ դրանցից յուրաքանչյուրը ձգտում է ինքնուրույն և անկախ լինել, այսինքն ուղղակի կամ անուղղակի կերպով յուր ձեռքը ձգել՝

1. **Անհրաժեշտ հում նյութերի** բավականաչափ պաշար․ քարածուխ, յերկաթ, պղինձ, նավթ, բամբակ, բուրդ և այլն.

2. **Շուկաներ** յուր արդյունագործության պրոդուկտների համար և դեռ չզարգացած տերրիտորիաներ՝ յուր կապիտալի շահագործման համար.

3. **Ծովային և ցամաքային ճանապարհներ**, վորոնք անհրաժեշտ են հում նյութերի և պրոդուկտների տեղափոխության և բաշխման համար։

Չորս մեծ խմբեր։

Տեսնենք, ուրեմն, վորո՞նք են այն մեծ տնտեսական խմբերը, վորոնք նախկին սուվերեն ազգային պետությունների տեղն են բռնել և վորոնք, ընդարձակորեն ասելով, ամբողջ աշխարհը բաժանել են կամ, ավելի ուղիղ արտահայտելով, բաժանում են իրար մեջ։

Լավ հիշելով, վոր աշխարհի բաժանումը դեռ չի վերջացել, վոր դեռ պաշտոնապես գոյություն ունեն փոքրիկ պետություններ, վորոնք դեռ վերջնականապես չեն մտնում խմբերից վորևե մեկի մեջ, այսինքն լավ հիշելով, վոր այդ խմբերը ամենուրեք չեն սրացել ու խորացել, ինչպես հարկն է,— մենք այդ խմբերի թիվը չորսի կարող ենք վերածել․ դրանք են՝

1. Ամերիկա.
2. Բրիտանական կայսրություն.
3. Հեռավոր Արևելք (Չինաստան և Ցապոնիա).
4. Ֆրանսիա, «Միջին Յեվրոպա» և Հյուս. Աֆրիկա։

Մեր ժամանակվա միջազգային քաղաքականության բնական գիծն այն է, վոր այդ խմբերից յուրաքանչյուրն աշխատում է իրեն ուժեղացնել և մնացած բոլորին թուլացնել։ Այդպես է հետպատերազմյան աշխարհի քաղաքական դրությունը։

Նկատենք մի հանգամանք ևս, վոր յերբեք հարկավոր չէ ուշադրությունից թողնել։ Պետությունների այդ խմբերից յուրաքանչյուրի մեջ, բացի ԽՍՀՄ-ից, ռեալ կառավարությունը հանդիսանում է **կապիտալիստների** մի խմբակ, վորը միշտ միևնույնը չէ, բայց միշտ այս կամ այն կապիտալիստական խմբակն է, վոր տվյալ մոմենտում կառավարչական մեխանիզմի վրա մեծ ազդեցություն ունի (հաշվի առած և այն քաղաքագետներին, վորոնք կառավարության ղեկը պաշտոնապես իրենց ձեռքն ունեն)։ Այսպիսով, յերբ խոսում ենք «Միացյալ Նահանգների կառավարության» մասին, ապա իրոք նկատի ունենք «Ստանդարտ Օյլ»-ի նավթային ընկերությունը կամ Մորգանի խմբակը կամ «Ուոլլստրիտ»-ի*) մի վորևե բաժանմունքը՝ բավականաչափ ուժեղ և բավականաչափ շահագրգռված, վորպեսզի տվյալ մոմենտում կարողանա Ամերիկային թելադրել քաղաքականության այս կամ այն ուղղությունը։ Յերբ խոսում ենք «Ֆրանսիայի» մասին, իրոք մենք խոսում ենք յերկաթագործների կոմիտեյի մասին։ Իսկ «բրիտանական» կամ «անգլիական կառավարություն» դարձվածքի տակ կարելի յե հասկանալ յերբեմն խոշոր յերկաթարդյունաբերողների միավորումը, յերբեմն «Շել» նավթային ընկերությունը, յերբեմն հինգ գլխավոր բանկերի միությունը և կամ այլ ֆինանսիստների խմբակը․ (Խորրաբին, Պատմատնտ. աշխարհագրություն)։

Այդ չորս խմբից միանգամայն տարբերվում է ԽՍՀՄ-ն, վորը յուր տնտեսական սիստեմի, ինչպես և քաղաքական կառուցվածքի ուրույն կազմակերպության շնորհիվ բոլորովին այլ վերաբերմունք ունի դեպի «թույլ» պետությունները և գաղութային յերկրները։ Մինչդեռ 4 կապիտալիստական խմբերը ամեն կերպ աշխատում են իրենց ազդեցության տակ գցել զանազան յերկրներ ու շահագործել նրանց, ԽՍՀՄ-ն, ընդհակառակը, կողմնակից է բոլոր ճնշված ու հարստահարված ժողովուրդների լիակատար ազատության։

Խորրաբինի աշխարհագրության վերջում տեղավորված հավելվածը գաղափար է տալիս չորս մեծ խմբերից յուրաքանչյուրի գլխավոր կալվածների, ազդեցության շրջանների, հում նյութերի գլխավոր աղբյուրների, ռազմագիտական բազաների և շփման կետերի մասին։ Կարդացեք այդ հավելվածը և քարտեզի վրա ցույց տվեք խմբերից յուրաքանչյուրի բռնած տեղը, նրա մեջ մտնող յերկրները և այլն։

Կապիտալիստական յերկրների ուժերի ընդհարումները։ Նոր պատերազմի պատրաստություն։

Պատերազմից առաջ համաշխարհային իմպերիալիզմի շարքերում վեց ախոյան կար, այն է՝ Անգլիա, Գերմանիա, Միաց. Նահանգներ, Ցապոնիա, Ֆրանսիա և Ռուսաստան։ Պատերազմի հետևանքն այն յեղավ, վոր այդ ախոյաններից մեկը՝ Գերմանիան դուրս ընկավ, իսկ Ռուսաստանը դարձավ խորհրդային։ Այսպիսով մնացին չորս իմպերիալիստական պետություններ (Անգլիա, Միաց. Նահանգներ, Ֆրան-

*) Նյու-Յորքի այն փողոցը, վորտեղ կենտրոնացած են գլխավոր բանկերն ու տրեստների վարչությունները։

սիա և Յապոնիա) մի կողմից և Խորհրդային Միությունը՝ մյուս: Այս չորս իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրն աշխատում է իր ձեռքը ձգել բազմաթիվ յերկրներ, վորպեսզի շահագործի նրանց բնական հարստությունը և աշխատանքը: Նրանք մի շարք յերկրներ դարձրել են գաղութներ (օրինակ Հնդկաստանը, Կորեան, Ֆիլիպյան կղզիները, Աֆրիկան և այլն), մի շարք «անկախ» յերկրներ էլ նյութապես այնքան են կախված իմպերիալիստական աշխարհից, վոր համարվում են կիսագաղութային յերկրներ (Պարսկաստան, Չինաստան, Պորտուգալիա և այլն):

Այսպիսով պատերազմը կրճատեց իմպերիալիստական պետությունների թիվը և ընդհակառակը մեծացրեց շահագործվող յերկրների թիվը:

Վերսալի հաշտության պայմանագիրը չլուծեց բոլոր այն կնճռոտ հարցերը, վորոնցով շահագրգռված եյին իմպերիալիստները: Նա չլուծեց Խաղաղ օվկիանոսի պրոբլեմը, չլուծեց Չինաստանի հարցը և այլն: Պատերազմից հետո այս խնդիրները ավելի սուր բնույթ ստացան և այդ պատճառով իմպերիալիստական յերկրները սկսեցին ավելի մեծ թափով զինվել՝ ապագա պատերազմում հաղթող հանդիսանալու համար:

1913 թ. Ֆրանսիան, Անգլիան, Միաց. Նահանգները, Յապոնիան և Իտալիան «յերկրի պաշտպանության համար» ծախսել են 1132,7 միլիոն դոլլար, իսկ 1927 թվին՝ 2057,1: 1913 թ. ցամաքային րեգուլյար զորամասերում կար 1.753.000 մարդ, իսկ 1928 թ.—1.865.000: Դրան ավելացրեք և ռազմական տեխնիկայի զարգացումը—օդային նավատորմ, տանկեր և այլն:

Անգլիան յեվ Միաց. Նահանգները:

Պատերազմից առաջ Անգլիան համաշխարհային քաղաքական գերիշխանություն ձեռք բերելու խնդրում մի ախոյան ուներ, դա Գերմանիան էր, իսկ այժմ Գերմանիայի փոխարեն նրա դեմ կանգնած են Գերմանիայից ավելի վտանգավոր Միաց. Նահանգները: Լոնդոնն ընկավ և ներկայումս համաշխարհային դրամական և ապրանքային շուկաները կենտրոնանում են Նյու-Յորքում: Պատերազմից առաջ Միաց. Նահանգները դրամական պարտքեր եյին վճարում յեվրոպական յերկրներին, իսկ այժմ ընդհակառակը յեվրոպական յերկրներ են պարտական:

Բայց Միաց. Նահանգների տնտեսական գերիշխանությունը դեռևս չի կարելի ապահով համարել, վորովհետև Անգլիան դեռևս օվկիանոսների տերն է, ունի խոշոր ռազմական նավատորմ և բազմաթիվ ծովային ամրություններ*):

*) Ջիբրալտարը, Մալտան, Կիպրոսը, Սուեզը յեվ Ադենը պաշտպանում են դեպի Հնդկական օվկիանոսը տանող ճանապարհը. Սինգապուրը՝ Հնդկական օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոսը տանող մուտքը. Ֆալկլանդյան կղզիները, գտնվելով Հար. Ամերիկայի ծայրի մոտ, պաշտպանում են Ատլանտյան օվկիանոսից Խաղաղ օվկիանոսը տանող ճանապարհը և այլն:

Միացյալ Նահանգները պատերազմից հետո աշխատում են ստիպել Անգլիային, վոր վերջինս հրաժարվի ռազմական նավատորմով առաջինը լինելուց և համաձայնվի իր ռազմական ույժով հավասարվել Ամերիկային: 1927 թ. Ամերիկայի (այսինքն Միաց. Նահանգների) նախաձեռնությամբ Ժընևում կայացավ մի ծովային կոնֆերենցիա, վորին մասնակցում եյին Միաց. Նահանգները, Յապոնիան և Անգլիան: Անգլիան մերժեց Միաց. Նահանգների առաջարկները և կոնֆերենցիան հաջողություն չունեցավ: Այդ կոնֆերենցիայից հետո Միաց. Նահանգներն առանձին յեռանդով սկսեցին նոր նավեր շինել: Ռազմական նոր նավեր շինելու համար Միացյալ Նահանգները մոտակա 20 տարվա ընթացքում մտադիր են ծախսել 2.570.000.000 դոլլար:

Միաց. Նահանգներն ու Անգլիան շփման կետեր ունեն Կանադայում, Մեքսիկայում, Արգենտինայում, Չինաստանում և այլն:

Կանադան քաղաքականապես կախված է Անգլիայից, իսկ տնտեսապես՝ Միացյալ Նահանգներից: Կանադայի սննդամթերքը Անգլիայի համար անհրաժեշտ է:

Չինաստանը իր բնական հարստություններով և հսկայական ազգաբնակությամբ մի կովախնձոր է դարձել: Անգլիան դեպի Չինաստան շարժվում է Սինգապուրի և Հոնգկոնգի վրայով, իսկ Միաց. Նահանգները՝ Խաղաղ օվկիանոսի կողմից Ֆիլիպյան կղզիների վրայով:

Խաղաղ օվկիանոսի պրոբլեմը:

Չինաստանով շահագրգռված է նաև Յապոնիան, վորը իր ուժով թեև չի կարող համեմատվել Միաց. Նահանգների և, մանավանդ, Անգլիայի հետ, բայց ունի մի շարք առավելություններ. այն է՝ Յապոնիան բավական մոտ է գտնվում Չինաստանին և արդեն վորոշ գրավումներ է արել, (օրինակ՝ իր ձեռքն է առել Մանջուրիան):

Չինաստանով շահագրգռված է և Ֆրանսիան, վորի խոշոր գաղութներից մեկը՝ Հնդկաչինը սահմանակից է Չինաստանին:

Անհրաժեշտ է շեշտել և այն, վոր Խաղաղ օվկիանոսի պրոբլեմը շոշափում է և Խ. Միության շահերը: ԽՍՀՄ-ն այդ օվկիանոսի յեզերքին ունի հարուստ յերկրներ, վորոնք կենտրոնից բավական հեռու յեն գտնվում, սակավարնակ են և բավականաչափ լավ չեն պաշտպանված:

Անգլիան յեվ Ֆրանսիան:

Շփման կարևոր կետեր ունեն նաև Ֆրանսիան ու Անգլիան: Այդ մասին մենք արդեն խոսել ենք: Հիշենք Միջերկրական ծովի, Մարոկկոյի, Ասորիքի, Տանժերի, աֆրիկական գաղութների խնդիրները, անգլիական և ֆրանսիական կապիտալի մրցումը Միջին Յեվրոպայում և այլն:

Կապիտալիստական աշխարհը յեվ ԽՍՀՄ։

Մենք տեսանք, վոր կապիտալիստական յերկրները մրցում են իրար դեմ և նրանցից յուրաքանչյուրն աշխատում է այդ մրցման մեջ պաշտպանել իր շահերը, ճնշելով մյուսին։ Բայց միևնույն ժամանակ նրանք գիտակցում են, վոր ունեն մի ընդհանուր թշնամի ևս — դա Խորհրդային Միությունն է։ Խորհրդ. Միության մեջ չկան կալվածատերեր ու ֆաբրիկանտներ. հողը, գործարանները, յերկաթուղիներն ու բնական հարստությունները պատկանում են ամբողջ ժողովրդին, մինչդեռ բուրժուական յերկրներում դրանք պատկանում են մասնավոր անձանց, կապիտալիստներին։ Խ. Միության մեջ կառավարության ղեկը գտնվում է բանվորի և գյուղացու ձեռքում, իսկ բուրժուական յերկրներում այդ ղեկը պատկանում է կապիտալիստներին. դրան ավելացնենք և այն, վոր Խ. Միությունը չի ձգտում ճնշելու և շահագործելու զանազան թույլ յերկրներ, այլ ընդհակառակը, նա կողմնակից է գաղութային և կիսագաղութային յերկրների լիակատար ազատագրման։

Պարզ է, վոր այսպիսի կառուցվածք ունեցող յերկիրը բուրժուական պետությունների համար շատ վտանգավոր է։ Նա արդեն հանդիսանում է համաշխարհային հեղափոխության կենտրոնը։

Հակախորհրդային կամպանիայի գլուխ է կանգնած Անգլիան, վորն ամեն կերպ աշխատում է տնտեսական բլոկադայի յենթարկել Խ. Միությունը։ Ֆրանսիական և գերմանական բուրժուազիան վարում է ԽՍՀՄ-ի դեմ ընդհանուր, համաձայնեցրած պայքար։ ԽՍՀՄ-ի հետ առևտրական կապերի խզելու հետ, այդ յերկրներն աշխատում են զինել մեր հարևաններին—Լեհաստանին և Ռումանիային։

Բայց հակախորհրդային այդ կամպանիան հաջողություն չի կարող ունենալ, վորովհետև բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները և հեղափոխական տարրերը ամենայեռանդուն պայքար են վարում պատերազմի վտանգի դեմ։

ԶԱՆԱԶԱՆ ՉԱՓԵՐ

1. ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐ

1 մետրական տոննը=մոտ 61,048211 փթի
1 կվինտալը = » 6,1 »
1 ցենտները = » 3,1 »

2. ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐ

1 անգլ. մղոնը= 1,6 կիլոմետրի
1 յարդը = 0,91 մետրի
1 ֆուտը =30,48 սանտիմետրի

3. ՄԱԿԱՐԴԱԿԻ ՉԱՓԵՐ

1 հեկտարը =0,91 դեսյատինի
1 արը =մոտ 22 քառ. սաժ.
1 քառ. մետրը=1,97 քառ. արշ.
1 ակրը =0,4 հեկտարի

4. ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՅԵՎ ԸՆԴԵՂԵՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ՉԱՓԵՐ

1 հեկտոլիտրը = 8,1 վեդրոյի
1 լիտրը = 0,08 »
1 անգլ. բուշելը =36,3 լիտրի
1 ամերիկ. բուշելը=35,2 լիտրի
1 գալոնը = 4,5 »
1 կվարտան = 1,1 »
1 ռեգիստրային տոննը=2,83 խոր. մետրի

Ց Ա Ն Կ

ԱՌԱՋԱԲԱՆ

I ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Զոնային յեվ վոչ զոնային ֆակտորները յեվ նրանց նշանակությունը տնտեսական կյանքի համար 5—66 յերես

Կլիմա։ —Կլիմայի կախումը զանազան պատճառներից։ Բուսականություն և կենդանական աշխարհ։ Զոնային ֆակտորների ազդեցությունը ազգաբնակության տընտեսության գործունեյության վրա . . . . 5—18 »

Վոչ զոնային ֆակտորներ։—Ռելյեֆ։—Աշխարհագրական դիրքը։—Ներքին ջրեր։—Հանքային հարստություններ։ Յերկաթ. քարածուխ. նավթ։ . . . . 18—25 »

Մարդը և աշխարհագրական միջավայրը։ Յերկրագնդի ազգաբնակությունը։ Արտագաղթ։ Մարդկային ցեղեր։ Աշխարհի բոլոր մասերի մեջ յեղած տնտեսական փոխադարձ կախվածությունը . . . . 25—31 »

2. Գլխավոր յերկրագործական յերկրները

Շտեմարաններ։ Հացահատիկ ներմուծող յերկրներ . . . . . 25—36 »

3. Գլխավոր անասնապահական յերկրները

Անասնապահությունը Յեվրոպայում։ Անասնապահության արտայեվրոպական խոշոր կենտրոնները։ Կաթնամթերքներ, բուրդ։ . . . . 36—42 »

4. Յերկրի պլանտացիոն շրջանները

Արևադարձային և մերձարևադարձային գյուղատնտեսության պրոդուկտները։ Սուրճ. կակաո. թեյ. ծխախոտ. բամբակ։ . . . . 43—48 »

5. Համաշխարհային հանքային արդյունաբերություն

Հանքային արդյունաբերության նշանակությունը։—Նավթ. յերկաթ. քարածուխ։ . . . . 48—55 »

6. Համաշխարհային արդյունագործություն

Յերկրագնդի գլխավոր արդյունագործական կենտրոնները։ Արդյունագործության գլխավոր ճյուղերը . . . . . . 55—58 »

7. Աշխարհի գլխավոր պետությունները

Յեվրոպացիներն Աֆրիկայում։ Յեվրոպացիներն Ասիայում։ ԽՍՀՄ-ի հետպատերազմյան տնտեսության վերականգնման տեմպը)* . . . . 58—66 »

*) Աստղանիշ հոդվածները գրել է ընկ. Վ. Ծովյանը։

II ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԸ

1. ԱՆԳԼԻԱ

*Աշխարհագրական դիրքը։ Բնական պայմանները։ Մակարդակի մեծությունը և ազգաբնակությունը։ Գյուղատնտեսություն։ Ձկնորսություն։ Հանքային արդյունաբերություն։ Արդյունագործություն։ Հաղորդակցության միջոցները։ Արտաքին առևտուրը։ Անգլիայի առևտուրը ԽՍՀՄ-ի հետ։ Պետական կազմը։ * Դասակարգային փոխհարաբերություններ։ * Բուրժուական կուսակցություններ, պրոլետարական կուսակցություններ։ Գլխավոր քաղաքները* . . . . 67—80 »

Անգլիայի գաղութները։ Անգլիայի կալվածները Յեվրոպայում—Ազատ իռլանդական պետություն։ Ջիբրալտար, Մալտա։

Անգլիայի կալվածներն Ասիայում։—Իրակ։ Իրակի նշանակությունն Անգլիայի համար։ Մոսուլը—կովախնձոր։ Պաղեստին։ Բրիտանական Հնդկաստան։ Սինգապուր։ Հոնգկոնգ։

Անգլիայի կալվածներն Աֆրիկայում։—Յեգիպտոս։—Հար. Աֆր. Միություն։ Մնացած աֆրիկական գաղութները։

Անգլիայի գաղութներն Ամերիկայում։—Կանադա։

Ավստրալիա։ Նոր Զելանդիա։

Ազատագրական շարժումներն անգլիական գաղութներում։

Ծովային հզորությունը և ծովային ճանապարհները . . . 80—105 »

2. ՖՐԱՆՍԻԱ

*Ֆրանսիայի դիրքը և մակերևույթի կազմությունը։ Կլիմա։ Մակարդակի մեծությունը և ազգաբնակությունը։ Հանքային արդյունաբերություն։ Արդյունագործություն։ Հաղորդակցության միջոցները։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը։ Դասակարգեր *)։ Գլխավոր քաղաքները* . . . . 105—117 »

*Գաղութները։—Բերբերիա (Մարոկկո, Ալժիր, Տունիս)։ Ռիֆերի ապստամբությունը Մարոկկոյում *)։ Ֆրանսիական արևմտյան Աֆրիկա։ Կամերուն, Սահարա, Ֆրանսիական հասարակած. Աֆրիկա։*

Ֆրանսիական Հնդկաչին։ Սուրիք։

Ֆրանսիական գաղութներն Ամերիկայում (Գվադելուպա, Ֆրանս. Գվիանա, Սեն-Պյեր, Միկելոն)։

Ֆրանսիական գաղութներն Ովկիանիայում—Նոր Կալեդոնիա։ Տաիտի։

Ֆրանսիայի և Անգլիայի շահերի ընդհարումը . . . . . . 117—127 »

3. ԳԵՐՄԱՆԻԱ

Աշխարհ. դիրքը և սահմանները։ Մակարդակը և ազգաբնակությունը։ Բնական պայմանները։ Գյուղատնտեսություն։ Հանքային արդյունաբերություն։ Արդյունագործություն։ Վերսալյի դաշնագիրը և Գերմանիան։ Հաղորդակցության միջոցները։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը։ Դասակարգեր և կուսակցություններ*) . . . . 128—142 »

4. ԻՏԱԼԻԱ

Աշխ. դիրքը և բնական պայմանները։ Մակարդակը և ազգաբնակությունը։ Գյուղատնտեսություն։ Հանքային հարստությունները և արդյունագործությունը։ Հաղորդակցության միջոցները։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը։ * Ֆաշիզմը. կուսակցությունները։ Գաղութները . . . . 142—149 »

5. ՄԻԱՑ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

Աշխ. դիրքը և մակարդակի մեծությունը։ Մակերևույթի կազմությունը և կլիման։ Ազգաբնակությունը։ Պատմությունը։ Ազգաբնակության ցեղային կազմը։ Գյուղատնտեսություն։ Ֆերմերը և կապիտալիստը։ Հանքային հարստությունները։ Արդյունագործությունը։ Ամերիկական արդյունագործության առանձնահատկությունները։ Հաղորդակցության միջոցները։ Արտաքին առևտուրը։ Ամերիկական կապիտալի արշավանքը։ Պետական կազմը։ *Քաղաքական կուսակցությունները։ Գաղութները . . . . 149— »

6. ԲՐԱԶԻԼԻԱ

Աշխ. դիրքը և մեծությունը։ Ազգաբնակությունը։ Գյուղատնտեսություն։ Հանքային արդյունագործությունը։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը . . . . . . — »

7. ԱՐԳԵՆՏԻՆԱ

Աշխ. դիրքը։ Ազգաբնակությունը։ Գյուղատնտեսություն։ Հանքային հարստությունները և արդյունագործությունը։ Արտաքին առևտուրը . . . . — »

ԽՍՀՄ-ի սահման հարևաններ

8. ՃԱՊՈՆԻԱ

Աշխ. դիրքը։ Ափերի գծագրությունը։ Մակերևույթի կազմությունը։ Կլիման և բուսականությունը։ Ազգաբնակությունը։ Գյուղատնտեսություն։ Հանքային հարստությունները։ Արդյունագործություն։ Հաղորդակցության միջոցները։ Գլխավոր քաղաքները։ Պետական կազմը։ Ճապոնական իմպերիալիզմը։ Ճապոնիայի գաղութները. — »

9. ՉԻՆԱՍՏԱՆ

Դիրքը և բնական պայմանները։ Գյուղատնտեսություն։ Հանքային արդյունաբերություն։ Արդյունագործություն։ Ճանապարհները և տրանսպորտը։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը։ *Իմպերիալիստական պետությունների ու Չինաստանը։ Գլխավոր քաղաքները . . . . — »

10. ԹՅՈՒՐՔԻԱ

Աշխ. դիրքը։ Գյուղատնտեսություն։ Հանքային արդյունաբերություն և արդյունագործություն։ Երկաթուղիները։ Արտաքին առևտուրը։ Պետական կազմը . . . — »

11. ԻՐԱՆ

Պարսկաստան։ Բնական պայմանները։ Գյուղատնտեսություն։ Արտաքին առևտուրը։ Կապիտալիստական երկրները և Պարսկաստանը։ Աֆղանիստան . . . . . — »

12. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

Մոնղոլիա։ Արևել. Թուրքեստան . . . . — »

13. ԽՍՀՄ-ի ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Ֆինլանդիա։ Էստոնիա։ Լատվիա։ Լեհաստան։ Ռումինիա . — »

III ԱՇԽԱՐՀԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱՊԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային առևտուր։ Համաշխարհային առևտրական նավատորմ։ Գլխավոր օվկիանոսներն ու ծովերը։ Ծովային ջրանցքներ։

Համաշխ. երկաթուղային գծեր։

Գլխավոր երկրների քաղաքական խմբավորումները։ Հինգ մեծ խմբերը։

Կապիտալիստական երկրների շահերի ընդհարումները։ Նոր պատերազմի սպառնալիքը։ Անգլիան և Միաց. Նահանգները։ Խաղաղ օվկիանոսի պրոբլեմը։ Անգլիան և Ֆրանսիան։ Կապիտալիստական աշխարհը և ԽՍՀՄ . . . . — »

Զանազան չափեր 245

Ցանկ . . . . 246—249 »

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ...

Հայաստանի Ազգային գրադարան
NL0429602

20605